1868x

391.09
Г-35

2003

ՐԱՖՖԻ

ԽԱՉԱԳՈՂԻ

ՅԻՉԱՏԱԿԱՐԱՆԸ

ԵՐԲՈՐԴ ԵՒ ՉՈՐԲՈՐԴ ՄԱՍ

(Կէսը արտատպած է „Մշակէ“ լրագրէյ)

ԹԻՓԼԻՍ
Կովկասի Կառավարչի Գլխ. Կառավ. տպարանում
1884

Дозволено ценз. Тифлисъ. 2-го Марта 1883.

(Половина перепечат. изъ газеты «Мшакъ»).

ԵՐԵՈՐԴ ՄԱՍ

ԽԱՉԱԳՈՂԻ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Ա·

ՆՈՐ ՇՐՋԱՆ

Մի քանի րոպէից յետոյ սայլակը պատրաստ էր։ Քաւոր Պետրոսը հրամայեց քշել դէպի խաչագողների բնակարանը։ Նա լուռ էր, ինչպէս առհասարակ վիճակ էր, երբ պատրաստուում էր ընկեր մի նոր ձեռնարկութիւն։ Նա նոյնպէս լուռ էին, բայց նա ոչինչ ձեռնարկութեան մասին չէի մտածում. իմ միտքը պրաել էր պեղեցիկ Նէնէյս։

Խաչագողների բնակարանը յերեկով բոլորովին ուրիշ տեսք ունէր։ Թաղնուած պատատուկ բոյսերի մէջ, հալամատուած գարնան ծառերով, նա աւելի նմանուում էր պաղատների արջնին, որ պահուում է ժայռերի խոռոչների մէջ։ Նրա չուրջը

ընկած էին քարերի ահագին բեկորներ, որոնք պոկվելով միջձակայ լեռներից, ցած էին գլորվել, բոլորովին մերկ թողնելով ծառերի արմատները: Այծանօթ մարդը հազիւ կարող էր դուշակել, թէ այդ դեռնասիրտ տեղի մէջ բնակւում էին մարդիկ: Բայց ծուխը, այդ մարդկային բնակութեան ապրարար նշանը, միայն խուլ թմփերի միջից միացող ծուխը, յիշեցնում էր, թէ այդ ծառախիտ անտառների դարերոր լռութեան մէջ նա տիրում էր մարդու շունչը:

Բայց ինչ ծուխ էր այդ: Ծուխը բարձրանում էր գետնափոր կէտերից: Ձորի մէջ գետնափոր տներում ինչ-որ այրւում էր: Եւ բարձրացած ծուխը, միախառնվելով, կազմում էր թանձր, թխադոյն մառախուղ ամբողջ ձորի վրայ:—Այստեղ ապրում էին պարապատում:

Գիշերով նա տեսայ խաչապողներին թիւով տասի չաւ. իսկ այժմ երեք հոգի միայն գտանք նրանց բնակարանում: Նրանցից մէկը նստած կարկատում էր ջորիների փալաններ և ձիանների մաշված սայրը, միւսը մանր ատաղով մաքրում էր մի ժանգոտած հրացան, իսկ երրորդը դեռ քնած էր:

Թրեխիը ներսից բոլորովին նման էր ածխագործների անապին, որ դանւում է՝ անտառների մէջ: Այստեղ և այնտեղ ածած էին մրոտած տապրանկներ, փայտ կտրելու տապարներ, կրակ խառնելու երկաթեայ անթրոցներ, հող փորելու բահ և այլն: Այծեմի ան փուչին նստած էր թէ բնակիչների և թէ բնակարանի վրա: Բոլորը, բոլորը համապատասխանում էր ան արհեստի ան պարապմունքին:

Եւ իրաւ, այդ մարդիկը ածխագործներ էին, կապալով վեր էին առել անտառի մի մասը, ածուխ էին պատրաստում: Ծոլի ափի մօտ կանգնած էին նրանց մի քանի նաւակները, որոնք տանում էին ածուխը միջձակայ քաղաքներում վաճառելու համար: Մի քանի խուռը ջորիներ տանում էին նոյն մթերքը ցամաքի ճանապարհով դէպի շրջակայ գիւղերը և փոքրիկ քաղաքները, կամ հասցնում էին մինչև ծովեզրը նաւակների մէջ դնելու համար:

Մեր անակնկալ յայտնութիւնը նախ խառնութիւն պատճառեց նրանց, բայց երբ մեզ ճանաչեցին, էլ չափ չը կար նրանց ուրախութեանը: Գաւառ Պետրոսի մի քանի կախարդիչ խօսքերը բաւական եղան գրաւելու նրանց վստահութիւնը: Եւ ահա նրանց մէկի ձայն տալովը խրճիթի մի անկիւնում չորժվեցան մերկ յատակի վրա փռած ցամաք տերևները, տախտակամածից բարձրացաւ մի գռնակ և տապերկրեայ վիրապի միջից դուրս եկաւ մի գլուխ: Նա մի քննողական հայացք ձգելով մեզ վրա, դուրս եկաւ փոսից: Նրանից յետոյ յայտնվեցաւ երկրորդը, երրորդը: Այդ տորերի թէ հագուստի գռնատոր բծերից և թէ ձեռքերի ներկերից երեւում էր, որ նրանք այն տապերկրեայ

վիրապի մեջ ինչ-որ ներկելով կամ դոյնելով աշխատում էին: Դրանք ածխագործներ չէին:

Նրանք ուրախութեամբ ընդունեցին քաւոր Պետրոսին, համբուրվեցան նրա հետ և խնդրեցին նստել: Քաւոր Պետրոսը նկերկայացրեց և ինձ, մի քանի կարմիր խօսքեր ասելացնելով իմ ընդունակութիւնների մասին:

Ինձ ճանաչեցին իմ հօր անունով, որովհետև ինձ տեսել էին շատ փոքր հասակում:

Դրանք իմ հայրենակիցներն էին: Նրանց գլխաւորը, որ կոչվում էր Նաղար, դարձաւ դէպի քաւոր Պետրոսը, հարցնելով.

—Մենք վաղուց սպասում էինք ձեզ, Պետրոս եղբայր, ինչու այդքան ուշացաք:

—Երկար պատմութիւն է, պատասխանեց քաւոր Պետրոսը,—այդ մասին յետոյ կը խօսենք: Դուք այն ասեցէք, ինչպէս են ազերքը, լաւ են, առողջ են:

—Լաւ են, բայց...

—Ինչ է պատահել:

Նաղարը պատմեց, թէ իրանց ընկերներից մեկը մի յանձնարարութեամբ ուղարկված էր մի տեղ, հիմա նա անհետացել է, և նրա մասին խիստ անհանգիստ են:

Այդ պատմութեան միջոցին քաւոր Պետրոսը նայեց իմ երեսին, որ տեսնէ իմ դէմքի արտայայտութիւնը: Իմ մէջ ոչինչ խռովութեան նշան չը դուս: Պատմութիւնը Ղեկին սպանելու յանձ-

նարարութեամբ ուղարկված աւազակի մասին էր, որ հոգին տուել իմ տապարի հարուածների տակ: Բայց ես նրա մարմինը մի այնպիսի տեղում էի ամփոփել, որ ինքը սատանան չէր կարող գտնել:

Քաւոր Պետրոսը իրան ձևացրեց որպէս սասպիկ հետաքրքրված: Խաչապոզի ընկերի անհետանալը, իրաւ որ, սասպիկ անհանգստութիւն է պատճառում մնացածներին:

—Ո՞վ էր, ինչ յանձնարարութեամբ և որտեղ էր ուղարկված:

Նաղարը պատմեց, թէ նրան տուել էին մի աղջիկ, որ տանէ, անտառում «անհետացնէ», բայց աղջկայ հետ ինքն էլ անհետացաւ:

—Աղջիկը գեղեցիկ էր, հարցրեց քաւոր Պետրոսը:

—Գեղեցիկ էր:

—Իսկ տղան երիտասարդ էր:

—Երիտասարդ էր:

—Այսպիսի գործը երիտասարդին չեն յանձնում, շատ հասկանալի է, որ երկուսն էլ հաչուվել են միմեանց հետ և հեռացել են ոմի պիտէ որտեղ:

—Մենք արդէն մարդիկ ուղարկեցինք նրանց որոնելու, պատասխանեց Նաղարը:

—Ի զուր, պէտք էր նրանց թողնել իրանց քէֆին, ինչ որ ուզում են, թող անեն:

Նաղարը ասաց, կան ուրիշ պատճառներ, որ այդ անցքը խիստ վտանգաւոր են դարձնում, և

խոստացաւ, որ այդ պատճառների մասին յետոյ կը խօսի քառաւր Պետրոսի հետ: Իսկ մենք ճանապարհից նոր եկած լինելով, և մանաւանդ ճաշի ժամանակ լինելով, այժմ սկսեցին հոգ տանել մեր հանդստութեան մասին:

Մեր ձիանները և սայլակը տեղաւորեցին՝ ևս ինքս էլ չը հասկացայ թէ որտեղ. երեսում էր, անտառի մէջ ուրիշ խորշեր ևս ունէին: Մեր իրեղէնները բերեցին խրճիթը: Ճաշի տեղանը արդէն պատրաստ էր: Ամենքը բոլորեցին տեղանի չուրջը, մեզ ամենապատուաւոր տեղը տալով: Չը նայելով, որ նրանք բնակվում էին մի այնպիսի առանձնացած տեղում, լեռների մէջ, անտառների խորքում, բայց տեղանի վրա յայտնվեցան այնպիսի ուտելիքներ և այնպիսի ըմպելիքներ, որ այդ կողմերում հազուագիւտ էին: Երեսում էր, որ քաղաքների հետ խիստ յաճախ յարաբերութիւններ ունէին:

Խօսակցութիւնը սկզբում, ըմպելիքների զանազանների համեմատ, հետզհետէ կենդանանում էր զանազան հանաքներով և զուարճախօսութիւններով: Բայց դեռևս ուտելի ամբողջ կերպարանք ստացած, երբ նրանք սկսեցին հարցնել իրանց հայրենիքի և ընտանիքների մասին: Մենք Պարսկաստանից ուտելի յետոյ դուրս եկած լինելով, քան թէ նրանք, ունէինք շատ նորութիւններ նրանց համար:

—Մեր Մկրտիչը մեծացել է, հարցնում էր մէկը:

Մկրտիչը հարցնողի որդին էր, որին օրօրոցի

մէջ թողնելով, հայրը հեռացել էր հայրենի երկրից, և այն օրից ապրում էր պանդխտութեան մէջ:

—Մկրտիչը այժմ պատկած է, երեխայ ունի, պատրաստում է քառաւր Պետրոսը:

Հայրը ուրախանում է:

—Մայրս ինչ շատ չի պատառել, հարցնում է մի ուրիշը:

—Մայրդ կեանքը քիչ բաշխեց. արդէն եօթերորդ տարին է, որ պառկած է հողի տակ:

Որդին տխրում է: Մի քանի ձայներ լրկինում են՝ «Ատտուած հոգին լուսաւորեցէ»...

—Մեր խաչօի աղջիկը ինչ է անում, հարցնում է մի այլը:

Դա իր կնոջ մասին է հարցնում:

—Խաչօի աղջիկը հինա ուրիշ մարդու է գնացել:

—Ի՞նչպէս, գնում է զարմացած ամուսինը:

—Չեն հասկանում: Երկար սպասից քեզ, ոչ լաւ ստացաւ, ոչ փող ստացաւ, վերջը յուսահատվելով, պատկվեցաւ ուրիշ մարդու հետ:

Դժբախտ ամուսինը արձակում է խորին հառաչանք և լռում է...

—Մեր Աբէնաղը ինչ է անում, հարցնում է մի ուրիշը իր զառեր մասին:

—Աբէնաղին թուրքերը փախցրին:

—Ա՛խ, քօռանամ ես... բացականչում է հայրը:

—Երևի, շատ գեղեցիկ աղջիկ էր զարձել, հարցնում են միւսները:

—Տգեղին չեն վախցնի, պատասխանեց քաւոր Պետրոսը:

—Իր նմանը չը կար մեր գիւղում, մէջ մտաց նա:

—Իսկ մեր գասպարը, հարցնում է մէկը իր եղբօր մասին:

—Նա հիմա գիւղի քահանան է:

—Մեր այգու խնձորենիները լաւ բերք տալիս են, հարցնում է քահանայի եղբայրը:

—Բերքը լաւ է, բայց պտուղը օտարն է ուտում:

—Ինչպէս:

—Որ պարտքերի փոխարէն տիրեցին:

—Աիսոնս, այն խնձորենիները ես իմ ձեռքով էի տնկել, հէնց այն տարում, երբ հեռացայ մեր երկրից:

Խօսակցութիւնը ընտանեկան անցքերից անցաւ աւելի հասարակական գործերի վրա:

—Գիւղի տանուտէրը ով է հիմա:

—Ազգականը:

—Այն քօռ անիրաւը դեռ գիւղը քանդում է:

—Բոլորը տանջված են նրա ձեռքից:

—Երկրի կառավարիչն ով է:

—Ն... խանը:

—Անիծածը կաշառքից կշտանալ չունի...

—Մենք էլ նրա համար ենք վաստակում...,

—Փողի տոկոսը քանով էր:

—Թուխմանկն ամիսը մէկ կուտա:

Վերջին խօսքը սարսափ ձգեց չատերի վրա:

Նրանք այսպիսի ծանր տօկոսներով պարտքեր ունէին իրանց հայրենիքում: Ամառուան պարտամուրհակը կնոջը փոխել էին տալիս, և աանն տարի տոկոսը բարձրանում էր գրամադրի վրա: Վաչխառուն հարստահարում էր գրանց, իսկ գրանք հարստահարում էին անմեղ, միամիտ մարդիկներին:

Ընդհատված խօսակցութիւնը չարունակվեցաւ:

—Լուսին ինչ է անում:

Դա մեր գիւղի նշանաւոր գեղեցկուհիներից մէկն էր:

—Նա հիմա լաւ բաղար ունի... պատասխանեցի և:

—Ինչպէս:

—Չես հասկանում...

—Ամէն նրա տղամարդին, մի այսպիսի սիրուն կնոջը կարելի է տան տարիներով անտէր և քաղցած թողնել, ասաց նրանցից մէկը:

Կարծես, իրանց կնիկները տան տարիներից աւել չէր, որ անտէր ու քաղցած էին մնացած:

Մի ուրիշը հարցրեց.

—Մեր սև չոնը մնում է:

—Չէ, կեանքը առել քեզ:

Այդ լուրերը, որ քաւոր Պետրոսը հաղորդեց իր սովորական սառնասրտութեամբ, յարուցին ոմանց մէջ ուրախութիւն, իսկ ոմանց մէջ տրտմութիւն: Ինձ խիստ զարմանալի էր թւում, երբ նկատում էի, որ այդ հոգով և սրտով քարացած մարդիկն էլ զգացմունք ունեն, կարող են ուրախանալ և

պատմել: Բայց չատ-չատ ամեն ինչ մոռացվեցավ, իրր թե ոչինչ չէին լսել:

Ես չէի կարողանում դադարել իմ վրդովմունքը, երբ նայում էի այդ անվոյժ, անհոգ մարդկանց վրա, որոնք օտարութեան մէջ մոռացել էին ամեն ինչ, որ իրանց համար ամենաթանգագինն էր: Ուզենայ կին, որդիներ, ազգականներ, և նրանց երկար տարիներով թողնել անխնամ, զերի թափքերի և պարսիկների ձեռքում, իսկ ինքը անհոգ անցնել պանդխտութեան մէջ,—դա վերջացած հօր ամենաանպատկելի անտարբերութիւններից մէկն է: Այդ մարդիկը, մտածում էի ես, ամենևին գութ չունեն, նրանց մէջ մեռել է ծնողական սիրտը. նրանց զգալի չէ ոչ երեխայի ժպիտը և ոչ կնոջ արտասուքը,—երկուսն էլ կատարվում են նրանց աչքերից հեռու...

Մինչև ես էլ նոյն դրութեան մէջ չէի գտնվում...

Ես շատ լաւ էի հասկանում, որ աղքատութիւնն էր ստիպել դրանց թողնել իրանց հայրենիքը, թողնել իրանց ընտանիքը, և նոյն աղքատութիւնը իմ ձեռքս տուեց պանդխտութեան գաւազանը: Հայրենի երկրում չը կարողանալով հայթայթել իրանց ապրուստը, նրանք հարկադրվել էին օտարութեան մէջ բախտ որոնել:

Արդար վաստակի նրանք ոչ միայն սովոր չէին, այլ և անընդունակ էին. չը գիտէին որ և իցէ արհեստ, չէին վարժված տոկուն աշխատանքի: Նրանց միտքը, նրանց ընդունակութիւնները բնա-

կանաբար սրվել, կատարելագործվել էին խարխափումների մէջ, այն չափով, ինչ չափով որ զարգացել էր նրանց մէջ արծաթի որսալու անյագ ախորժակը, որի համար ներելի էին համարում ամեն միջոցներ, որքան և անազնիւ լինէին:

Մի անգամ քաւոր Պետրոսը խիստ իրաւացի կերպով նկատեց, թէ «արծաթը ազի ջուր է, որքան խմես, այնքան կը ծարաւես»: Նոյն ծարաւը զգում էի և ես: Ահա, թէ ինչ էր, որ ինձ առժամանակ բաժանեց Ղէնէից և ձգեց այդ անբարոյական հասարակութեան մէջ:

Ինձ խղճմտանքն զգուելի էր թւում այդ նոր շրջանը: Զարմանալի է, թէ որքան վայրենանում է մարդը լեռների և անտառների աւանձնութեան մէջ. կերպարանքը, բնաւորութիւնն անգամ ամենափոքր ձևեր են առնում: Նրանց կաշառած դէմքը, խառնուած մազերը, երեսների անախորժ արտայայտութիւնը, ճչամարիան ատած, ինձ վրա սարսափ էր բերում: Թէև մեզ, որպէս իրանց հայրենակիցին, ցոյց էին տալիս հիւրասիրութեան բոլոր պատրաստականութիւնները:

Ամենազարհուրելին այն էր, որ այդ մարդիկը ածխացրծի սև փոշու տակ ծածկված, կատարում էին մի այլ աւելի սև արհեստ...

Ո՞վ մաղրից իմ մէջ այդ փոփոխութիւնը:—Ես պարտական էի Ղէնէին, որ զարթեցրեց իմ մէջ զգուանք դէպի այդ մարդիկը, և ստիպեց սիրել գեղեցիկը ու լաւը...

Բ.

ՔԱՋԱՂՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիշերը ի պատիւ մեր պատրաստուելուս ճոխ ընթրիք։ Ըմպելիների քանակութիւնը աւելի շատ էր։ Խաչագողները աւելի խմում էին, քան թէ ուտում էին։ Այժմ հաւաքուել էին և այն ընկերները, որոնք ցերեկով մնացած գանազան տեղերում ծածուկ էին պատրաստում։ Բոլորի թիւը տասից աւել էր։ Երբ բաւական խմեցին, նրանցից ամէն մէկը սկսեց պատմել իր կատարած քաջագործութիւններից մի անցք։ Ատուածծ իմ, ինչեր չէին պատմում նրանք. բոլորը, բոլորը չը լսած և չը տեսած բաներ էին...։ Ես, որպէս քաւոր Պետրոսի յաւաջադէմ աշակերտներից մէկը, նոյնպէս շատ գործեր էի կատարել, բայց նրանց հետ համեմատելով, դեռ կատարեալ համրակ էի։

—Ի՛հ, տասում էր մի ծերունի խաչագող արհամարհական ժպիտով,—այդ ինչ գողութիւններ են, որոնցով պարծենում էք դուք։ Երբ ես երիտասարդ էի, գողացայ հնդկայ ատուծու աչքերը։

Ամէնքը ծիծաղեցին. ծերունու տասը չատերին անհաւատալի երևաց։

—Երեխաները ու չմարները ծիծաղում են ամէն բանի վրա, երբ չեն հասկանում, պատասխանեց ծերունին, որին, ինչպէս երևում էր, վիրաւորել ընկերների արհամարհանքը։—Չեզ անհաւատալի է թուում իմ ասածը, ականջ դրէք, ես կը պատմեմ։

Նա սկսեց իր պատմութիւնը այսպէս.

«Հնդկայ ատուածները մեր Ատուծոյ նման չեն. մերը աչքի չէ երևում. իսկ նրանց ատուածները միշտ կանգնած են տաճարների մէջ, ամէն մարդ տեսնում է, հարցմունք է անում և պատասխան է տանում։ Ես մտայ այդ տաճարներից մէկի մէջ, ուր կանգնած էր պղնձաւոր ատուածներից ամենամեծը՝ սկեզբն հազուստով։ Թէև ոսկին չատ սիրուն բան է, բայց ինձ աւելի գրաւեցին նրա գեղեցիկ աչքերը։ Գեղեցիկ էին, անհնման գեղեցիկ, ես խելագարի նման սիրահարուեցայ այդ աչքերի վրա։ Նրանք կազմուած էին երկու հատ խոշոր ալմաստներից և ճրագի նման վառուում էին։ Ալմաստների խրաքանչիւրը տղաւնու ձուի չափ կը լինէր։ Այո՛, իմ սիրտը գրաւեցին այդ փայլուն ատուղերը և ես կատարեալապէս սիրահարուեցայ նրանց վրա։ Ե՛կ, մտածեցի, քեզ նուիրէ այդ ատուծոյ սպասաւորութիւնը, որ այդպիսի գեղեցիկ աչքեր ունի։ Ես ընդունելեցայ այնտեղ, ինչ էք կարծում, ոչ թէ իբրև հասարակ սպասաւոր, այլ իբրև,—այսպէս են կոչում նրանց քահանաները։ Ես կատարում էի իմ

պաշտօնը ամենայն ջերմեռանդութեամբ, ամենայն անձնանուիրութեամբ, այնպէս որ, փոքր ժամանակում գրաւեցի ոչ միայն իմ աստուածոյ չնորհը, այլ և ժողովրդի յարգանքը: Ինձ յանձնեցին տաճարի բանալիները և նրա հսկողութիւնը: Այդ անեց մի քանի ամբողջ տարիներ: Վերջը բրամինական կեանքը, անընդհատ աղօթքները, խիստ ճգնութիւնները ձանձրացրին ինձ: Ես վըճռեցի վերադառնալ իմ հայրենիքը: Բայց յանկարծ ինձ ունենալ մի յիշատակ այն աստուածուց, որին այդքան տարիներ ծառայել էի: Ես ընտրեցի աչքերը, որոնց վրա միշտ սիրահարված էի: Մի բարի պիշերում կատարվեցաւ այդ գործը: Բայց դրանից պէտք էր պահել խոշոր ալմաստները: Սրունքներիս կաշին ծակեցի, ալմաստները դրեցի վէրքի մէջ, յետոյ լաւ փաթաթեցի: Այժմ աստուածն էլ չէր կարող գտնել: Մնաք բարեաւ ասեցի իմ աստուածուն և հեռացայ: Հնդկաստանի աստուածները խիստ հիւրընկալ ծոց ունեն փախստականների համար, եթէ տաճարների և վաղրների ճանկը չընկնիլ մարդ: Բայց իմ աստուծու օրհնութիւնը ինձ հետ էր, վտանգ չը պատահեց: Ես իմ բրամինի հագուստը փոխեցի, և հալածված պարիայի հագուստով չարունակեցի իմ ճանապարհը: Պարիային ոչ ոք չէ մօտենում»...

Ծերունին վերջացրեց. ամէն կողմից լսելի եղան զովաստանական ձայներ. մի քանիսը ծափահարեցին:

Մի այլ խաչագող ասաց.

—Ես մի օր գողացայ մի մոխրագոյն ատամակ, և սև գունով նկարելով, ծախելի զարձնել իր տիրոջը. նա չը կարողացաւ ճանաչել իր ատամակին:

—Կարծեմ նկարը աւելի թանգ արժեց քեզ, քան թէ այն փողը, որ դու ստացար, նկատեց նրան մէկը ծիծաղելով:

—Իրաւ է, նկարը աւելի թանգ արժեց, պատասխանեց նա,—բայց ես ընկերիս հետ գրազ էի բռնել:

—Ես դու կնքեցիր մեր ճակատին «էշ նկարող» անունը, վրայիրեց առաջինը:

Բոլորը ծիծաղեցին:

Մի ուրիշը պատմեց, թէ իր կեանքում փոխել է տասն դանազան կրօնքներ և դանազան դաւանութիւններ: Շիրազում ընդունել է մահմեդականութիւն և ամուսնացել է մի սէքսի գեղեցիկ աղջկայ հետ: Ախլիկիայի մէջ ընդունել է կաթոլիկութիւն և պսակվել է կաթոլիկ աղջկայ հետ. յետոյ մի կաթոլիկ գերապայծառից ստացել է ժողովարարութեան թուղթ, պտրտել է Իտալիայում, Սպանիայում, և Ֆրանսիայում, հաւաքել է ահագին հարստութիւն, այլ նա չի վերադարձել իր կնոջ մօտ. Կիևում ընդունել է օրթոդոքս եկեղեցու դաւանութիւնը, մի գնդապետ նրա կընքահայր է դարձել, և ընծայելով մի նշանաւոր գումար, ամուսնացրել է իր աղջիկի հետ: Իսկ Կ. Պօլսի մէջ ընդունել է բողոքականութիւն, ուղղիչ միաբօնարների խղճով գնացել է Ամե-

րիկա, փողեր է հաւաքել և ամերիկացի կին է ունեցել և այլն:

Այդ մարդուն չըվայրկին, որովհետև խիստ հատաքակ բան էր պատմում, որովհետև նրանց մէջ չը կար մէկը, որ տան անդամ կրօնը փոխած չը լինէր:

Մի երիտասարդ խաչագող, բաւական պեղեցիկ դէմքով, չնորհալի, և աչխարհային կեանքի սովրած մարդ, պատմեց, թէ եւրօպական մի մայրաքաղաքում նա իրան ձևացրեց իշխան Արաբաճիճման էր գալիս թանգագին ակնեղով զարդարած խէնջարով և նոյնպէս գոհարներով զարդարած, ոսկեայ քամարով. նրա կառապանի մօտ միչտ նստած էր վնտում մի սեամորթ արաբ: Մի պարահանդէսի ժամանակ նրա վրա սիրահարվեցաւ մի հարուստ կոմսի աղջիկ. խոստացաւ նրա հետ պսակվել, իսկ օրիորդի ծնողները խոստացան մեծ օժիտ տալ: Օժիտի կէսը նա ստացաւ և վատնեց, բայց օրիորդի հետ չամուսնացաւ: Խեղճ աղջիկը մնաւ բարեկացավից, կրը սիսատ իր վիճակին անյայտացած:

Այդ պատմութիւնը, որ չատ հետաքրքրական էր և չատ պեղեցիկ կերպով նկարագրեց երիտասարդը, նոյնպէս անցաւ խիստ անհչան կերպով, իսկ մի քանիսի մէջ առաջացրեց արհամարհանք: Որովհետև սիրային յարաբերութիւնները առհասարակ մի սովոր թուլատրութիւն էր համարվում ամեն մի խաչագողի համար, և մինչև անդամ ամօթ էր բերում նրան: Խաչագողը կարող

էր սերը ընտրել որպէս միջոց մեկին կողոպտելու համար, իսկ ճշմարտապէս սիրել անվայել էր: Երիտասարդի պատմութիւնից երևաց, որ ինքն ևս սիրահարված է եղել կոմսուհի օրիորդի վրա: Այդ պատճառով մեկը նկատեց նրան.

—Դուք այն ժամանակ արժան կը լինէիք պովատանութեան, երբ փոխանակ չնայելով վատնելու այն օրիորդի փողերը և փոխանակ նրա հետ սէր-բերի անելու, կը պահվէիք նրա հետ, կը ստանայիք ամբողջ օժիտը և յետոյ բաց կը թողնէիք, կը հեռանայիք:

Այդ նկատողութիւնը ընդհանուր հատութիւն առացաւ:

Մի ոգևորված խաչագող, որին ասել անունով կոչում էին «էշի ականջ», պատմեց, թէ իր ընկերի հետ մի անգամ մտան մի աղքատ վերցրու տունն: Երկուսն էլ իրանց ձևացրել էին վաճառական արևելցի: Տանը ոչինչ չը գտան, բայց մի կացինից, որ դրած էր դուռն մօտ: Սկսեցին մաղթանք կատարել, երգելով հետևեալ երգը.

Աբևտան երգեց.

«Էդտա կացին, դուռն տակին,

«Վեր ած կոխ. մէջ տօպրակին.

«Ալէլուիա, ալէլուիա:

Ընկերը պատասխանեց.

«Պոչն էրկէն ա անիրաւին,

«Չի պարտկվի մէջ տօպրակին.

«Ալէլուիա, ալէլուիա:

Աբեղան շարունակեց.

«Վեր ամա, զնրկ ի դա քարին,
«Պոչը կոտրէ անիրաւին,
«Որ պարտկվի մէջ տօպրակին.
Ալէլուիա, ալէլուիա»:

«Էշի ականջի» պատմութիւնը, թէև մի քանիսի մէջ ծիծաղ չարժեց, բայց չատերի մէջ զղուանք պատճառեց, որովհետև խաչագողը չը պիտի այն աստիճան տարացնէ իրան, որ աղքատ գիւղացու խրճիթից մի կապին գողանայ:—Խաչագողը պէտք է մեծ որսերին հետամուտ լինի, ասեցին նրան:

Այդ պատմութիւնները, որքան և անհամակրութեամբ լսում էի ես, բայց զարձեալ զրգռեցին իմ ինքնասիրութիւնը, և ես պատմեցի իմ հերոսութիւններից մէկը, թէ որպէս քաջը Գետրոսը թագրեց ինձ մեղուկի մէջ, և որպէս ես կողոպտեցի հրէայ սեղանաւորի կրպակը: Ես ապատում էի, որ իմ քաջագործութիւնը կը զարմացնէր բոլորին: Բայց մի խաչագող պատասխանեց ինձ ծիծաղելով.

—Դա մի հասարակ խաղ է, որ ամենքս խաղացել ենք: Բայց ես կը պատմեմ դրա նման մի բան, որ դուք դուցէ լսած ես չէք: Ես պատմեց.

«Հարաւային Ֆրանսիայի քաղաքներից մէկում մենք մտանք մի եկեղեցի: Այդ քաղաքի կաթոլիկ ժողովուրդը այնքան կրօնասոր էր, որ կարծես, ապրում էին և գործում էին միմիայն եկեղեցու համար: Քահանաները հոգու փրկութեան անու-

նով առել էին ժողովրդի հարստութիւնը և նրանով զարդարել էին իրանց տաճարները: Արծաթեայ խաչերը, աչտանակները և զանազան սուրբ անօթները թիւ և չափ չունէին: Մենք երեք ընկեր էինք, մտածեցինք, թէ ինչ հնար գործ դնենք, որ այդ հարստութիւնից մի լաւ բաժին վեր առնենք: Մեր ընկերներից մէկին ձեացրինք մեռած, դրեցինք դագաղի մէջ և տարանք եկեղեցին: Այդ քաղաքում սովորութիւն կար, որ մի պիշեր մեռելը պէտք է մնար եկեղեցում: Գիշերը մեր մեռելը յարութիւն է առնում իր դագաղից և հատաքում է իր մօտ խաչերից և անօթներից որը ամենալի թանգագինն էր: Միւս օրը մենք վեր առնում դագաղը, տարանք թաղելու: Այդ քաղաքում գտանի պակասութեան պատճառով աղքատ և պանդխտ ենթնեցեաներին տեղ չէին տալիս հասարակաց գերեզմանատեղում, այլ դնում էին առանձին զամբարանի մէջ, որ յատկապէս աղքատների համար պատրաստված էր: Ընկերիս դագաղը դրվեցաւ նոյն տեղը, որ ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի տասերկրեայ մթին այր: Բայց նա երկար չը մնաց ենթնեցեաների ամբարում. հէնց առաջին գիշերը դուրս եկաւ դագաղից, իր հետ բերելով և իր կողոպտածը: Հասկանալի է, որ մենք ևս օգնեցինք նրան այդ վերջին յարութեան մէջ»:

—Երեկ, այն օրից սկսեցին մեզ կոչել «խաչագող», որովհետև դուք կողոպտեցիք սուրբ տաճարի խաչերը, նկատեց մէկը:

Բոլորը ծիծաղեցին:

Քաւար Պետրոսը, որպէս միշտ սովորութիւն ունէր այսպիսի խօսակցութիւնների ժամանակ, լուռ էր: Նա, երեւի, աւելի ուրիշ բաների վրա էր մտածում, քան թէ լսում էր: Նա չէր սիրում երբ մարդիկ պարծենում էին նրա առաջ: Նա իր մեծագործութիւնների մէջ խիստ համեստ էր...

Ընթրիքը վերջացաւ մեր կենաց համար առաջարկված բաժակներով: Բոլորը յայտնեցին իրանց ուրախութիւնը, որ բախտ ունեցան ընդունելու մեզ իրանց ընկերութեան մէջ...

Գ.

ԱՆԲԱՅԱՏՐԵԼԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Երբ առաջ լսում էի այդպիսի խօսակցութիւններ, ես ոգեւորվում էի, իմ սիրտը լցվում էր կատաղի նախանձով, իմ եւանդը աճելի և աւելի բորբոքվում էր, և ես մտածում էի. «Երբ կը լինի, որ ես էլ պարծենալով պատմեմ իմ քաջագործութիւնները»... Իսկ այժմ ինչու այդպէս սառեց իմ սիրտը, ինչու այդպէս անզգայացաւ նա: Այլ ես ինձ չէր պատում խաչազողի փառքը, այլ ես ես չէի հրապուրվում չար գործի քաղցր մոլութիւնով: Կարծես թէ, իմ զօրութիւնը թուլացել էր, կարծես թէ, իմ մէջ հանդիպել էր այն կրակը, որի առաջին վառողը եղաւ մի երեւելի չարագործ... Ինձ սիրել էր մի տեսակ վհատութիւն, մի տեսակ հիւանդոտ ձանձրոյթ: Ես փախչում էի գործից, փախչում էի աշխատանքից...

Որտեղից ծագեց այդ փոփոխութիւնը:

Ես ինքս չը գիտէի, բացատրել չէի կարողանում, միայն զգում էի, որ իմ մէջ դեռ ճնացել էր աշխոյժ, եռանդ, բայց ոչ դէպի խաչազողի գործունէութիւնը: Ես բոլորովին ոգով ընկած

չէի։ Իմ սիրտը լցված էր ինչ-որ ուրիշ բանով, որը հետզհետէ այնքան աճում էր, ընդարձակվում էր, որ արտաքսում էր այնտեղից բոլորը, ինչ որ առաջուց մտցրել էր քաւոր Պետրոսի սոսկալի դատախարակումիւնը... Բայց ինչ էր այդ, —ինքս էլ չէի հասկանում։

Երբ առաջ ինձ աջողվում էր կատարել մի ևղեռնագործութիւն, որքան սարսափելի լինէր նա, որքան խառնված լինէր արիւնով, այնքան ուրիշ բերկրութիւն էր բերում ինձ։ Իսկ այն օրից, երբ սպանեցի այն չարագործին և ազատեցի Նէնէին, զգում էի, որ այդ սպանութիւնը այն չէր, ինչ որ ինձ շատ անգամ պատահել էր գործել։ Առաջինների զարհուրելին բոլոր կողմից էր, չուսով անցնում էր, իսկ այդ վերջինի ուրախութիւնը քաղցը էր և անազական։ Ես սպանելով, ազատել էի մի անմեղի կեանքը...

Առաջ ինչ որ անում էի, պարձեալ ուզում էի անել, չէի կշտանում, ոչ մի բանի մէջ բաւականութիւն չէի գտնում։ Կարծես թէ, սիրտս միշտ և միշտ դատակ էր ուզում։ Իսկ այժմ զգում էի, որ ունէի ուրախ հոգի, սիրտս հանգիստ էր և գոհ, որպէս թէ, նա լցացած լինէր անսահման երջանկութիւնով...

Ո՞րտեղից ծագեց այդ փոփոխութիւնը։

Երբ խաչագողները քնացին, ես ամբողջ գիշերը քնել չը կարողացայ։ Իմ աչքերի առջեւն էր Նէնէն, նրա պատկերը ինձանից չէր հեռանում,

միշտ նրան էի տեսնում և նրա մասին մտածում։ Ինչ էր, որ իմ սիրտը կապել էր այդ թշուառ աղջկայ հետ։ Մարդու հոգերանական դաղտնիքները դեռ անհասկանալի էին ինձ։ Ես Նէնէի վերաբերութիւնը ունեցած իմ զգացմունքը բացատրում էի խիստ պարզ և հասարակ պատճառներով, թէ կեանքի մէջ մարդ իր արդիւնաբերութիւնը ունի է սիրտում, ինչպէս նա խիստ ախորժակով է ուտում այն նրի մասը, որ ինքն է պատրաստել, իսկ բազարից գնածը այն համը չունի։ Մարդ խնայզութիւնով է ծախսում այն արծաթը, որ իր քրտինքի վաստակն է, իսկ ժառանգական հարստութիւնն հետ չատ անգամ չուայլաբար է վարվում։ Այնպէս էլ քաղցր է մարդուս համար իր ձեռքով անված, հասցրած ծառի պատուղը։ Արդեօք այդ համեմատութիւնները ճիշդ էին, գրանցով կարելի էր բացատրել Նէնէի վերաբերութիւնը ունեցած իմ զգացմունքը...

Կեանքը ամեն բան սովորեցնում է մարդուն, իսկ դէպքերը նրա վարժապետն են դառնում։ Քաւոր Պետրոսը ինձ սովորացրեց առել, ոչնչացնել, կողոպտել, յափշտակել, մի խօսքով, ուրիշին պատկանածը իրան սեպհականացնելու համար չը խնայել ոչ մի միջոցներ։ Աւազակութիւնը ամենամեծ զուարճութիւն էր ինձ համար, որի մէջ ես զգում էի բախտի քաղցրութիւնը։ Ուրախութիւն էր պատճառում ինձ առանց քրտինքի պարպել ուրիշի քսակը։ Բայց այն օրից,

կրը եւ իմ քաակը առաջարկեցի ծերունի ձկնորսին, և խնդրեցի նրանից պահել, պահպանել Նէնէին,—այդ օրից ես վայելում էի մի առէլի մեծ բաւականութիւն, որ երբէք ճաշակած չէի:

Քաւոր Պետրոսը ինձ սովրացրեց առել, ուշադրացնել, բայց Նէնէին սովրացրեց սիրել, բարիք գործել:

Մրքան գեղեցիկ բան է սէրը:

Ես Սառային էլ էի սիրում. այժմ նոյնպէս սիրում եմ իմ մանկութեան բարեկամին: Բայց հանգամանքները բաժանեցին մեզ, տարիները անգին անցուդարձ փոխեցին մեր մէջ. մենք անջատուեցանք: Մրքան ժամանակ էր, որ չէի տեսել նրան. այժմ իմ յիշողութեան մէջ մնացել էր նրա մեայլ պատկերը միայն, թէև սրտիս մէջ տակաւին չէր հանգել նրա սէրը: Սառան ինձ երեւում էր այն բանի նման, որպէս երեխային երազումը կը տայէն մի խաղալիկ և նա կուրծխանաւոր, բայց հէնց որ զարթնում է քնից, սկսում է ախրել, որ այն խաղալիկը այլ ևս չունի...

Առաւօտեան խաչագողները զարթնեցան խիստ վաղ: Որպէս զորձի մարդիկ, դեռ արեը չը ծագած, նրանք ոտքի վրա էին: Մի քանիսը վերառին կացիններըը, գնացին անտառը, փայտ կտրելու և ածուխ պատրաստելու, իսկ Նազարը, նրբանց գլխաւորը, մնաց խրճիթում իր երկու բանուորների հետ:

Ինձ երեւում էր, որ նրանք խիստ ուրախ էին

քաւոր Պետրոսի յայտնվելով, և յարգում էին նրբան, որպէս իրանց պատրիարգին: Իսկ ինձ դեռ մարդու տեղ չէին դնում. ինձ վրա նայում էին, որպէս մի անփորձ հասկակի վրա: Նազարը մեղ ցոյց տուեց իրանց տորներկրելու վիրասը, այնտեղ էր նրանց գործարանը: Կեղծ թղթադրամը ահագին կապոցներով դարսված էր զանազան խորշերում: Մեքենաները, մամուլները, ներկերը բոլորովին չշլացրին իմ աչքերը: Նազարը, գործարանի կառավարիչը, որ երկար ժամանակ Լօնդոնում սովորել էր այդ արհեստը, և այդ բոլոր պարագայքը բերել էր այնտեղից, մի առ մի ցոյց էր տալիս մեղ իր պատրաստութիւնները և նրբանց գործածութեան ձևերը: Իսկ այնօր չէին բանում, որովհետև գլխաւոր մեքենապետը, որը մի հրէայ էր, գնացել էր քաղաքը մի մեքենայի խանգարված մասը չինել տալու համար: Հրէան մի և նոյն ժամանակ վարպետիչ էր. ընկերութեան մէջ դա էր միայն, որ օտարազգի էր:

Քաւոր Պետրոսը արեց մի քանի նկատողութիւններ, յետոյ հարցրեց, թէ ինչպէս էին ծախսում այդ թղթերը: Նազարը պատասխանեց, թէ թղթերը ծախսելու համար ընտրել են կայսրութեան ամենախոշ կողմերը, ուր ժողովուրդը դեռ գեհկութեան մէջ է,—ասաց, որ զանազան տեղերում ունեն գործակատարներ, որոնք փոխարինում են թղթերը գիւղացիների հետ, ստանալով նրանցից հում բերքեր, որպիսի են ալիւր, քա-

թան, կամ տնային անասուններ և այլն: Այդ մթերքը վաճառվում է քաղաքներում:

— Այդ ես տեսնում եմ, որ դուք գործ ունեք միայն գիւղացիների հետ, ասաց քաւոր Պետրոսը, — դրա համար էլ ձեր թղթերը մանր տեսակներից են: Բայց պէտք է ընդարձակել գործը:

Թէ ինչպէս պէտք էր ընդարձակել, այդ մասին քաւոր Պետրոսը ոչինչ չը յայտնեց: Նա առհասարակ սովորութիւն ունէր խոհուն չը յայտնել իր միտքը: Բայց նրա նկատողութիւնը ճիշտ էր. թղթերի տեսակները հասնում էին մինչև տասն բուլլիանոցի միայն, որովհետև նրանք գործ ունէին մանր առևտրականների հետ:

Խաչագողները հէնց նոյն օրից ընդունեցին մեզ իրանց ընկերութեան մէջ: Եւ որովհետև բոլորի պաշտօնները որոշված էին, քաւոր Պետրոսին, որպէս հմուտ և փորձված մարդ, կարգեցին ընկերութեան տեսուչ: Իսկ ինձ, դեռ մանուկ և անվարժ հաշուելով, պարապմունք տուեցին ածխագործների մասնում: Իմ գօրեղ բազուկները սակի յարմար էին փայտ կարկլուռ համար: Ես գոհ եղայ այդ պաշտօնով, որովհետև մտածում էի, որ դա միջոց կը տայ ինձ բացակայ լինել նրանց բնակարանից, և անտառը գնալու պատրուակով չուտ չուտ տեսնվել Ենէնի հետ: Խմանալով, որ ես մի և նոյն ժամանակ լաւ որորդ եմ, նրանք յանձնեցին ինձ և այդ պարապմունքը: Մարդկային բնակութիւններից հեռու գտնվելով, նրանք խիստ

հաղիւ անգամ կարողանում էին միս գնել, և ապրում էին ըստ մեծի մասին որսի մսով:

Հետեւեալ օրից ես մտայ պաշտօնիս մէջ: Վաղ— առաւօտեան առի ինձ հետ մի հրացան, մի որսորդական շուն և ճանապարհ ընկայ: Ա՛խ, որքան ուրախ էի, որքան չառապում էի: Երկու օր էր, որ չէի տեսել Ենէնին: Ես խոստացել էի ամեն օր այցելել նրան: Այժմ որքան անհանգիստ կը լինէր նա, ինձ չը տեսնելով, և որքան կատաղած, երբ կրկին կը տեսնէր ինձ,— ճանապարհին միշտ այդ էի մտածում:

Դեռ ձիւնորսի տնակին չը հասած, ծովի ափի մօտ հանդիպեց ինձ պառաւը, որ ապրում էր ձկնորսի հետ:

— Որդի, ասաց նա մի առանձին ցաւակցական եղանակով,— այդ ինչ արեցիք մեզ հետ. այն աղջիկը ցաւով լեցրեց մեր սիրտը...

— Ինչ կայ, հարցրի ես սարսափելով,— հիւանդ է... մեռել է... ինչ է պատահել...

— Չէ, պատկա, Աստուած մի արասցէ, որ այդպէս բան լինի, պատասխանեց պառաւը այժմ առնլի հանդիստ կերպով:— Նա այնքան լաւ աղջիկ է, որ ես կը ցանկանայի, որ իմ աչքերը կուրանային, բայց նրան մի չար չը հանդիպէր: Նա այնքան բարի է, այնքան սիրուն է:

— Ապա ինչ է պատահել, հարցրի ես անհամբերութեամբ:— Ասեցէք, ինչու էք ծածկում:

— Հիւանդ ասես, հիւանդ չէ, որդի, բայց ամ-

բողջ գիշերը չէ քնում. հէնց ախ ու վախ է քաշում և լաց լինում: Ինչն է այդպէս տանջում խեղճ աղջկան, Աստուած գիտէ, բայց միշտ տրխուր է և տխուր. պատառ հաց բերանը չէ դնում: Պատահում է, կամ կատուն է անցնում դռան մօտով, կամ թռչունն է թռչում, կամ տերևն է չարժւում,—նա իսկոյն դուրս է վազում, ժամերով նստում է դռան մօտ, նայում է և նայում դէպի ճանապարհը, կարծես, մէկին սպասում է:

Մինչ ես պառաւի հետ խօսում էի, յանկարծ յայտնվեցաւ Ղէնէն. նա երեխայի պէս քարշ ընկաւ իմ պարանոցից, և երկար բաց չէր թողնում:

—Ի՞նչու լինձ խարեցիր, հարցրեց նա:

—Ցնծում ես, որ եկայ, պատասխանեցի ես:

—Այդպէս ուշ:—Ախ, որքան ես լաց եղայ...

—Ի՞նչու էիր լաց լինում:

—Կարծում էի, որ դու էլ չես գայ լինձ մօտ:

Մենք մօտեցանք խրճիթին: Ղէնէն նայեց իմ պարզական հագուստի ու ղէնքերի վրա, և ուրախացաւ:

—Դու հրացան էլ ունես, ես էլ չեմ վախենայ...

—Ո՞ւմից պէտք է վախենաս:

—Ա՛խ, այն աւազակները...

Դարձեալ մտաբերեց չարագործներին:

—Մոռացիր նրանց, Ղէնէ, նրանք քեզ էլ ոչինչ չեն կարող անել:

Այդ զաղանների վարմունքը այնպիսի վատ տպաւորութիւն էր թողել խեղճ աղջկայ վրա, որ նա աւանդ ապրտափիլու չէր կարողանում մտաբերել նրանց: Ես միշտ աշխատում էի հեռացնել նրանից այդ յիշողութիւնը, մանաւանդ երբ անհնում էի, որ նա ամբողջ մարմնով դողում էր և գունաթափվում էր նրանց միտ բերելու ժամանակ:

Ղէնէն սկսեց վայելել իմ պատրգական չանը, որ խիստ մանրամասր քննվում էր նրա չորս կողմով:

—Այդ չանը քոնն է, հարցրեց նա:

—Իմն է:

—Ո՛րքան լաւ չուն է: Նա կծում է, այնպէս չէ. ումը որ ցոյց տալու լինես, կը կծէ:

—Կը խնդրէ, եթէ ես հրամայեմ:

—Նա քեզ սիրում է: Աստ թող ինձ էլ սիրէ:—Գնանք խրճիթը, ես նրան կը կերակրեմ: Ինչպէս է անունը:

—Մուխթար:

Ղէնէն սկսեց կանչել չանը իր անունով և տաբատ դէպի խրճիթը, որը մի քանի քայլով միայն հեռու էր մեզանից: Մենք նստս մտանք, ծերունի ձկնորսին տանը չը գտանք. նա գնացել էր ծովի ափի մօտ ձուկ որսալու: Ես նստեցի ճիւղերից հիւսած մահճակալի վրա: Ղէնէն իմ մօտից չէր հեռանում: Նա երեխայի նման ձեռքը դրել էր իմ ուսի վրա, նայում էր իմ երեսին և չարունակ խօսում էր առանց լռելու:

—Դու, երևի, նախաճաշիկ չես արել, սոված կը լինես, հարցրեց նա,—ես քեզ համար ուտելու մի բան կը պատրաստեմ: Տես, այդ ելակները ես եմ քաղել անտառից, պահեցի քեզ համար: Դու լաւ սիրում ես ելակներ:

—Ես քեզ պատուիրեցի, որ անտառը չը գնաս, Ենէկ:

—Հեռու չեմ գնացել, նայիր, այդ մօտիկ տեղից քաղեցի: Նա վազեց դէպի լուսամուտը, բակից ցոյց տալ ինձ:

—Ոչ, այնտեղ էլ չի պիտի գնաս:

—Դրանից յետոյ չեմ գնայ:

Ենէկն հագցնից մի սարդ նախաճաշիկ, որ պատրաստված էր տատական ձկնկրից և անտառային բանջարներից: Սեղանի վրա նա ասաց ինձ.

—Ա՛խ, որքան լաւ մարդիկ են այդ ձկնորսները. ես հիմա շատ եմ սիրում նրանց: Պառաւը ինձ իր մօտ է պահելիս, և դիշերը տանն անդամ նայում է, որ չը բացվեմ, չը մրսեմ: Ցովից դիշերը սառնիկ քամի է փչում, ցուրտ է լինում:

—Ես հիմա ձերունի ձկնորսին «պապա» եմ կոչում. նա ինձ շատ է սիրում. երէկ համբուրեց ինձ, ասաց «պաւակս»:

Նախաճաշիկից յետոյ ես պատրաստվեցայ հեռանալու: Իմ պատրաստութեան առաջին օրն էր, պէտք էր աշխատել մի բան որսալ, որ ընկերներիս մօտ ամօթով չը մնայի: Ենէկն հարցրեց.

—Դու էլի գնում ես: Ո՞ւր ես գնում:

—Անտառը, մի բան որսալու:

—Ես էլ կը գամ քեզ հետ:

Յանկարծ մտաբերեց իմ պատուէրը և խօսքը փոխեց.

—Չէ, ես չեմ դայ. դու ասեցիր, որ անտառը չը գնամ:

—Հա, այսպէս, սիրելիս, զգոյշ եղիր, որ այն աւազակներին կրկին չը հանդիպես, նրանք չի պիտի սեանձն քեզ, հասկանում ես:

—Հասկանում եմ: Բայց դու չունա կը վերադառնաս:

—Երևակայեմ: Ամբողջ դիշերը քեզ մօտ կը մնամ:

Նա ուրախացաւ և մի առանձին զգայմունքով խնդրեց ինձանից.

—Թոյլ տուր, մինչև այն ծառը գամ քեզ ճանապարհ դնելու. տես, մինչև այն եղևինը, շատ հեռու չէ:

—Մինչև այն եղևինը,—կարող ես գալ:

Ենէկն եկաւ ինձ հետ քանի քայլ միայն, որովհետև այդքան էր ցոյց տուած ծառի հեռաւորութիւնը: Նա գրկեց ինձ և դարձեալ արտասուքը աչքերում ադաչում էր, որ չուտ վերադառնամ նրա մօտ: Խնդճ ադջիկ, որքան ջերմ էր նրա մէջ սէրը, դեռ մաքուր բարեկամական սէրը: Ես հեռացայ: Պառաւը իմ հետից ձայն տուեց.

—Զը թողնես Ենէկին մենակ, նա մեղ հանդստութիւն չի տայ...

Դ.

ԿՈՐԱԾ ՀԱՅՐ

Իմ այն օրվայ որսորդութիւնը անցաւ յաջող կերպով. ես ապանեցի մի նորահաս եղջերու և մի քանի հատ վայրենի աղաւնիներ: Բայց քաւոր Պետրոսի մօտ չը վերադարձայ, որովհետև Նէնէին խոստացել էի այն գիշերը անցկացնել ձկնորսի խրճիթում: Ընկերներս իմ մասին անհանգիստ չէին լինի, որովհետև կը մտածէին, թէ որս չը գտնելու պատճառով ես մնացել էի անտառում: Բացի դրանից, ընկերութեան մէջ ես միայն կըտրողների և ածուխ պատրաստողների բաժնումն էի. իմ պաշտօնակիցները ըստ մեծի մասին գիշերները անց էին կացնում բացօթեայ, անտառի մէջ, ածուխի խարոյկների մօտ, մանաւանդ որ ամառ էր, եղանակը տաք էր:

Արեգակը դեռ նոր սկսել էր թեքվել դէպի իր գիշերային մուտքը, երբ ես վերադարձայ ձկնորսի խրճիթը: Ձանապարհին մտածում էի, թէ Նէնէն չատ կուրախանայ, երբ կը տեսնէ իմ որսերը: Ես նստած էր խրճթի դռանը, սպասում էր ինձ: Երբ հեռուից տեսաւ, մինչև եղնի ծառի մօտ

վազեց իմ առաջը: Այդ ծառը նրա սահմանն էր:

Նա նկատեց եղջերուին, որ քարշ էր ընկած իմ ուսից և աղաւնիները, որ կրած էին իմ որսորդական մահակի մէջ:

—Ա՛խ, ինչու ապանեցիր դրան, ասաց նա ցաւալի ձայնով.—խեղճ եղջերու, ով գիտէ, գուցէ մայր ունի... հիմա լաց է լինում դրա մայրը...

—Եղջերուն լաց չէ լինում, Նէնէ, պատասխանեցի ես, հանգստացնելով նրան:

—Ինչպէս լաց չէ լինում, չէ որ նա էլ աչքեր ունի, ասաց նա և սկսեց վեր բարձրացնել իմ սպանած եղջերուի գլուխը և նայել աչքերին:

—Դրա աչքերը խփած են, դա մեռել է... ասաց նա տոսկալով և յետ քաշվեցաւ:—Դրանից յետոյ էլ չես սպանի, այդպէս չէ՞:

—Այո՛ ինչ որսամ:

—Գայլեր սպանիր, նրանք այնպէս չար են, որպէս այն աւազակները... Ա՛խ, էլի մարքիս եկան անիրաւները... դու ասեցիր, որ մոռանամ նրանց...

—Հա՛, սիրելիս, մոռացիր նրանց:

Մենք մտանք խրճիթը: Պառաւը դեռ նոր էր վառել ճրագը: Պետրոսի ձկնորսը վերադարձել էր ծովի ափից: Նա այս երեկոյ աւելի լաւ որսամաղրութեան մէջ էր գտնվում, թէև էր ընկած ճիւղերից հիւսած մահճակալի վրա, և մի առանձին բաւականութեամբ ծխում էր: Երեսում էր, ծովի վրա նրա որսորդութիւնն էլ յաջող էր անցել:

երբ տեսաւ ինձ, գլուխը վեր բարձրացրեց, և առանց չարժվելու իր տեղից, խիստ ջերմ բարեւուտխմամբ ողջունեց: Ես նստեցի նրա մօտ, իսկ Նէնէն տեղաւորվեցաւ իմ կողքին: Նա գարձեալ առանց լռելու խօսում էր, միշտ նոր և նոր հարցեր էր առաջարկում: Իսկ Ծերունին լսելով նրա անմեղ հետաքրքրութիւնը, ժպտում էր, ուրախանում էր: Նա ասաց.

—Եթէ Նէնէի լեզուն կապես, աչքերովը կը խօսի, եթէ աչքերը փակես, ձեռներովը կը խօսի: Ամեն ինչ դրա մօտ խօսում է:

—Այդպիսի կրակոտ բնաւորութիւնները չեն կարող լուռ մնալ, պատասխանեցի ես:

Նէնէն գլուխը քարշ դրեց, և իրան վիրաւորված ձևացնելով, ասաց.

—Ես էլ չեմ խօսի:

—Լաւ, տեսնենք, ասաց Ծերունին,—կարող ես համբերել առանց խօսելու:

Նա մի քանի րոպէ լուռ մնաց, յետոյ սկսեց ծիծաղել:

—Չեմ կարող, չեմ կարող, բացականչեց և վազեց Ծերունու մօտ:

Ծերունին գրկեց նրան և սկսեց իր կոշտացած ձեռքով փայփայել նրա սև գիսակները:

Պատաւը զբաղված էր ընթրիքի պատրաստութիւնով: Նէնէն թողեց մեզ, գնաց նրան օգնելու: Նա արդէն այն աստիճան ընտանեցել էր այդ տան մէջ, կարծես թէ, այնտեղ էր ծնված և այնտեղ էր մեծած: Նա գիտէր ինչ բան ինչ տեղ էր դրած, գիտէր տան բոլոր ծակուծկռտիները:

Անտառների խոր առանձնութեան մէջ, ծովից աւելի մօտ, ձկնորսի անչուք խրճիթը, լուսաւորված իւղային ճրագով, մի գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Թվում ամեն ինչ նրանում կրում էր իր վրա խորին չքաւորութեան կնիքը, բայց պոհանութիւնը և խաղաղութիւնը թագաւորում էր բոլորի վրա: Այդ բարի ձկնորսները երջանիկ էին, —երջանիկ էին, որովհետև ոչինչ չունէին և ունենալու ցանկութիւն ևս չունէին: Ինչ աւելի մեծ հարստութիւն կարող է լինել քան թէ այն, երբ մարդ իր ունեցածովը գոհ է:

Այդ մտածութիւնները զարթեցրին իմ մէջ իմ անցեալի սարսափելի յիշողութիւնները և երևան հանեցին սոսկալի պատկերներ: Ես արիւնոտ ձեռքերով, քանի քանի սարիներ չարունակ, անդադար ոսկու ամբարներ էի դիզում, բայց իմ անյագ սիրտը ոչինչ բանից գոհանալ չէր կարողանում: Ես միտմէի միշտ աղքատ, միշտ թշուառ, որովհետև ունեցածովս չէի բաւականանում:

Ծերունին, այն անտառների պատրիարքը, կը լինէր ոչ աւելի քան յիսուն տարեկան, բայց նրա երկաթի կազմուածքը կորցրել էր իր ամրութիւնը: Նա ծերացել էր աւելի վաղ, քան թէ նեղում էր նրա հասակը: Երևում էր, որ նա իր կեանքում շատ զրկանքների էր հանդիպել, շատ տանջանքներ էր կրել, որոնց հետքերը

դեռ մնում էին նրա տխրամած ճակատի վրա: Առանձնութեան մէջ, հեռու աշխարհից, բնակվելով լայնատարած ծովի ափի մօտ, երեխ, նրա աչքերի մէջ նա կամեցել էր թափել իր անցեալ կեանքի դառնութիւնները:

Բայց ինչ որ ասելի էր ինձ զարմացնում, դա էր նրա արտասանութիւնը: Մենք խօսում էինք ռուսաց լեզուով: Ես այդ լեզուով այնքան վարժ էի խօսում, որ ոչ ոք չէր կարող կասկածել, որ ես ռուս չեմ: Բայց նրա ինչ ազդից լինելը դեռ ես չը գիտէի. նրա արտասանութիւնը ինձ բոլորովին խորթ էր թւում: Նոյն կասկածը, որպէս ես նկատում էի, ունէր ծերունին և իմ վերաբերութեամբ: Իմ վարժ խօսակը չէր կարող նրան համոզել, թէ ես ռուս եմ: Իմ դէմքը, իմ գծագրութիւնը, իմ սև մազերը, բոլորովին հակառակ վկայութիւն էին տալիս իմ մասին:

Ընթրիքը արդէն պատրաստ էր. մենք բոլորեցինք սեղանի չորջը. Ենէնն նստեց իմ մօտ, իսկ պառաւը նստեց ծերունու մօտ: Իմ որսորդական սրտակի մէջ մնացել էր բաւական արագ, եւ սրունքի ծերունուն, նա խմեց: Պառաւ ուղեղը սաքցաւ. նա սկսեց ասելի և ասելի կենդանանալ: Բայց բոլորովին առաւօտեան մի երեսփ էր ներկայացնում այդ ծածկամիտ ալեորը: Նա իր մասին ամենևին չէր խօսում, և երբ իր վրա խօսք էր լինում, միշտ աշխատում էր խոյս տալ, կամ հարևանցօրէն անցնել, առանց մի որոշ միտք

յայտնելու: Բայց ես նրա երեսի խորշոմների մէջ նկատում էի մի զաղտնիք, որ ամենայն զգուշութեամբ թաղցնում էր:

Ես խմացրի նրան արագի մնացորդը ևս:

Սկզբում խօսակցութիւնը խիստ հասարակ բաների վրա էր. ծերունին խօսում էր ծովի վրա, ձկների տեսակների վրա, խօսում էր, թէ որքան իր «պառաւը» օգնում է իրան, չորացնում է, պատրաստում է ձկները, և ինքը տարիներ մի քանի անդամ կարողանում է քաղաք գնալ, իր ձկնեղէնները վաճառելու համար և այլն: Բայց ով էր այդ պառաւը, արդեօք նրա կինն էր, աղգականն էր,—այդ մասին ոչինչ չէր խօսում:

Ենէնն և պառաւը չատով հեռացան ընթրիքի սեղանից. մեր խօսակցութիւնը նրանց չէր զրաղեցնում: Պառաւը քաչվեցաւ մի անկիւնում, ըսկսեց նիրհել, որովհետև չատ յոգնած էր, իսկ Ենէնն մօտեցաւ ճրագի լոյսին, սկսեց մի բան կարել: Նրան այնօր պառաւը ընծայել էր իր լաւ հագուստներից մէկը, որ ինքը չէր գործածում, և Ենէնն այդ հագուստը ձևում էր, յարմարացնում էր իր հասակին:

Ես և ձկնորսը մնացինք մենակ:

—Շատ ժամանակ է, որ դուք այդ ծովի ափի մօտ էք բնակվում, հարցրի ես.

—Ասելի քան վեց տարի:

—Միշտ ձուկն էիք որսում:

—Այո:

—Իսկ առաջ:

—Այդ մի հարցրու...

Մկչ մտաւ Նէնէն, իր կարը բերելով և ինձ ցոյց տալով.

—Տէ՛ր, Մուրադ, ինչպէս լաւ կարնցի. այստեղ չատ լայն էր, նեղցրի. այստեղ երկայն էր, կարնցի. այդ կոճակները էլ սիրտ փոխեմ. այն ժամանակ աւելի լաւ կը լինի:

Ես գոհացի Նրա աշխատասիրութեանը, նա ուրախացաւ, և դարձեալ գնաց նստեց ճրագի մօտ:

Բայց Նէնէի հետ խօսելու ժամանակ, ես չէի նկատել, թէ որպիսի խառվածքան մէջ էր գտնվում Ծերուհին, երբ նա լսեց իմ անունը՝ «Մուրադ»:

—Մուրա՛դ... կրկնեց նա խորհրդաւոր ձայնով և գլուխը դէպի ինձ, հարցնելով.

—Դա ռուսի անուն չէ:

—Ապա ինչ ազգի անուն է:

—Այսպիսի անուն կրում են հայերը:

—Ես էլ հայ եմ:

—Միթէ... ասաց նա և խորհեց մտածութեան մէջ ընկաւ:

Ոչինչ հարկ չը կար առաջինի Ծերուհու մօտ թաղցնել իմ ազգութիւնը. ես այդ անում էի միայն այն ժամանակ, երբ սիրտը էր խորհում մէկին: Բայց այդ իրքմի մէջ վերին աստիճանի անապատութիւն կը լինէր, եթէ ես անկեղծ չը լինէի: Ծերուհին աւելի հետաքրքրութեամբ հարցրեց.

—Ո՞ր կողմից էք:

—Պարսկաստանից:

Նրա հետաքրքրութիւնը աւելի և զգալուեցաւ:

—Ձմռանը էք ասում:—Ո՞ր գաւառից:

—Սալմաստից:

—Ո՞ր գիւղից:

—Սաբա գիւղից:

Այժմ սիրտս Նրան մի տեսակ խռովութիւն, մի տեսակ տակնուվրայ, որպիսին սիրում է այն մարդկանց, որոնք անդիտաբար ընդունում են իրանց տանը մի անծանօթ հիւր, որին սկզբում լաւ մարդ էին համարում, իսկ յետոյ յայտնվում է, որ նա անպիտանի մէկն է: Երեսում էր, որ Ծերուհին տեղեկութիւններ ունէր Պարսկաստանի կամ Սաբայի հասարակութեան մասին: Նա հարցրեց.

—Ինչպէս է ձեր հօր անունը:

—Սաֆար:

—Իսկ ձեր մօր անունը:

—Նազանի:

—Ո՛ւմ ազգիկն էր ձեր մայրը:

—Նրա հայրը կոչվում էր Բարսեղ, իսկ մօր անունը Եղիսաբէ էր:

Ծերուհին բաղդատիչ գանգատութիւնց:

—Ինչպէս էր կոչվում ձեր պապը:

—Ալօ, և մեր տոհմը նրա անունով կրում է Ալօեան ազգանունը:

—Որդիս... գոչեց ծերունին և մարեցաւ կոպծքիս վրա:

Վերջին բառը նա արտասանեց հազիւին լսելով:

Ես բոլորովին ապշած էի, կարծում էի, թէ տեսածս երազ էր: Մի՞թէ դա իմ հայրն էր: Այդ ինչ անակնկալ դէպք էր, մի այնպիսի խուլ, մոռացված տեղում, ձկնորսի մենաւոր խրճիթի մէջ, գտնել նրան, որը վաղուց արդէն մեռած կամ կորած էր համարվում իր ընտանիքի համար:

Իմ առաջին հոգսը եղաւ նրան ուշի բերել: Խեղճը ամբողջ կէս ժամ մնաց իմ գրկում անմռունչ, լեզուն կապվեցաւ, միայն աչքերը բաց էր անում, նայում էր իմ վրա, իսկ երբեմն արձակում էր խուլ հառաչանքներ, և դարձեալ ուշաթափ էր լինում:

Վառարը, որ այդ միջոցին նկրտում էր խրճիթի մի անկիւնում, զարթնեց, և տեսնելով ծերունուն, սարսափելի ձիչ բարձրացրեց, և սկսեց լաց լինել: Ոչ սակաւ վախեցաւ և Ղէնէն: Նա թողեց իր կարը, վազեց իմ մօտ և անդադար հարցնում էր.—Տէր Աստուած, այդ ինչ պատահեց, ինչ եղաւ նրա հետ:

Ես նրանց հանդստացրի, թէ վտանգ չը կայ, թէ անվնաս ուշագնացութիւն է, չուտով կանցնի:

Ես դեռ պրկած ունէի հօրս ալեւոր գլուխը, և անբաւական որդու ուրախութեան արտասուքը թրջում էր նրա ճերմակ մազերը:

Յանկարծ նա ուշի եկաւ և սոսկալի կատաղութեամբ ինձ մի կողմ հրելով, ազաղակեց.

—Հեռու, անզգամ... դու խաբում ես... խաչագողները միշտ խաբում են... ինչ սատանայական նպատակ քեզ իմ խրճիթը բերաւ... ես չեմ ուզում տեսնել ձեր զարշելի երեսը... բաւական է, որքան տանջվեցայ... որքան չարիքներ կրեցի ձեր ձեռքից... ես չեմ հաւատում... Դու իմ որդին չես... դու սուտ ես խօսում... դու խաբում ես ինձ... հեռու այստեղից...

Նա կրկին մօտեցաւ, բռնեց իմ օձիքից և աչքաւորում էր բռնութեամբ դուրս ձգել իր խրճիթից: Այդ միջոցին մէջ մտան Ղէնէն և պառաւը, և դրկելով ծերունուն, տարան նստեցրին իր տեղը:

Նա գլուխը քարշ դրեց, երկու ձեռքով բռնեց իր աչքերը և արտասուախառն հեկեկանքով սկսեց ինքն իրան խօսել.

—Իմ Մուրադն ես չեմ տեսել... ես նրան մօր արգանդում թողեցի... այնուհետև հեռացայ հայրենիքից և կրկին չը վերադարձայ այդ ապականված երկիրը... Երբ իմ Մուրադը ծնվեց, մայրը գրեց ինձ. «ճիշտ քեզ նման է, քո օրինակն ու պատկերն է... աջ թևքի վրա մի սև խալ ունի, ինչպէս դու ունես»...

Վերջին խօսքերը լսելու ժամանակ ես մօտեցայ նրան, և աջ թևքս մերկացնելով, ցոյց տուի.

—Նայեցէք հայր, տեսէք այն խալը, որի մասին մայրս պրեղ էր ձեզ:

Նա աչքի լոյսից զրկված խռհակի նման սկսեց չօչափել իմ մեջքը. նրա վրա կար մի սև խալ արծաթեայ փոքրիկ դրամի մեծութեամբ:

—Մուրթազ... զաւակս... դու ես, դու՛ս... ձայն արձակեց նա և ընկաւ ինձ:

Երկար նա բաց չէր թողնում ինձ. իր թևքերի միջից, երկար նրա աչքերից հեղեղի նման հոսող արտասուքը թրջում էր իմ գլուխը: Վերջը, կարծես տեսան տալ դուրս լսխեցին նրա սրտից ճնշող խոսքերը.

—Ա՛խ, ինչպէս խարեցին ինձ...

Ո՛վ էր խաբել նրան, ասին էին վերաբերում նրա խօսքերը,—այդ մասին նա ոչինչ չը խօսեց: Ես էլ չը կամեցայ հարցնել, որ աւելի չը դժբուեմ նրա դառերը: Մի այսպիսի սարսափելի տանջանքի հաղիւ կարող էր դիմանալ նրա զառամեալ սիրտը: Անցեալի դառն և ահաւոր յիշողութիւնները, իսկ ներկայի անակնկալ ուրախութիւնը միօրինակ տանջում էին նրան: Ես չը կամեցայ աւելի վրդովել նրա բորբոքված զգացմունքները, թող առաւօտեան սակն ինչ կը պարզվիր:

Ընկնէն և պառաւը զարմացած նայում էին մեզ վրա: Մեր բոլոր խօսակցութիւնից նրանք ոչինչ չը հասկացան, որովհետև մենք խօսում էինք մեր մայրենի լեզուով: Նրանք կամ լաց էին

լինում, երբ տեսնում էին մեր արտասուքը, կամ ուրախանում էին, երբ նկատում էին մեր ուրախութիւնը:

Գիշերից բաւական անցել էր, երբ պառաւը իմ օգնութեամբ ծերունուն իր անկողնի մէջ դրեց: Բայց նա չը կարողացաւ հանգիստ քնել: Ամբողջ գիշերը անցկացրեց զառանցութեան մէջ. միշտ ինչ էր քաշում, արձակում էր զառն հառաչանքներ և լռում էր: Իսկ չատ անգամ նա լսում էի մի և նոյն խօսքերը. «Ա՛խ, ինչպէս խաբեցին հա»...

Ես նստած էի նրա անկողնի մօտ և չի սխալուի ժառանգութիւններով նայում էի անթարթ հօր տառապանքների վրա: Արդեօք ինչ մի զօրեղ ոյժ կէտ կար այդ ոգորմելի մարդու ճակատագրի մէջ, որ այնպէս խռովեցնում էր նրան: Ո՛վ գիտէ, ինչեր էին անցել նրա գլխով, ով գիտէ, իր կեանքում որքան դառն արկածներ էր հանդիպել նա, որ այնպէս տոկալի կերպով տանջվում էր, երբ յիշում էր զժբախտ անցեալը:

—Երեխ, գնա վառ լուրեր հաղորդեցիք նրան, հարցրեց պառաւը:

—Ընդհակառակն, իմ հաղորդած լուրերը խիստ ազդեցին էին:

—Արդ ինչու այդպէս խռովութեան մէջ ընկաւ նա:

—Չը գիտեմ:

—Այդպէս չատ անգամ պատահում էր նրա հետ,

խօսեց պառաւը։—Երբեմն ամբողջ օրերով պատառ հաց բերանը չէր դնում, և ոչ գնում էր ձուկն որսալու, այլ անշարժ նստած խրճիթի դռանը, ժամերով նայում էր ծովի վրա, նայում էր անցուդարձ անող նաւերին ու նաւակներին և մտածում էր։ Ինչ էր մտածում նա, ես այդ չը գիտէի. նա երբէք իր սիրտը ինձ մօտ չէր բացանում. բայց ես չատ անգամ նկատում էի նրա աչքերում արտասուք։ Լինում էին օրեր, որ նա ուրախ էր, խօսում էր, ծիծաղում էր և մինչև անգամ հանաքներ էր անում։ Բայց յանկարծ, կարծես թէ, մի չար ոգի անցաւ նրա մօտով, և նա մտաբերից մի ինչ-որ բան, և կրկին սիրտը մռայլը պատում էր նրա դէմքը, սկսում էր հառաչել, սկսում էր անիծել իր բախտը...

Ամբողջ գիշերը մենք անքուն մնացինք. Ենէնէն նոյնպէս չը պառկեց քնելու, երբ տեսաւ, որ ես նստած եմ։ Խեղճ աղջիկը չը գիտէր ինչով փարատել իմ տխրութիւնը։ Նրան յայտնի էր ղժբախտ հօր և նոյնքան դժբախտ որդու ցաւալի անցեալը։ Նա չը գիտէր, որ մենք աշխարհի ամենաթշուառ արարածներից մէկն էինք, անտուն, անհայրենիք, հալածված դառն հանգամանքների բռնութիւնից, թափառում էինք երկրէ երկիր, որպէս մի արմատախիլ եղած, չորացած բոյս, որին փոթորիկային հողմի անդիմադրելիութիւնը տարուբերում է իր կատաղի հոսանքի հետ...

Այո, Ենէնէն չը գիտէր ինչով մխիթարել ինձ։

Որդին հանգիստ էր կտրած, մոռացված հօրը, և փոխանակ ուրախանալու, տրտմում էր, որովհետև այդ հանգիստը պիտի բաց անէր նրա առջև կատարված պատահարների մի սոսկալի վիհ, որ մինչև այնօր նրան անյայտ էր...

Ենէնէն միայն հարցրեց ինձ.

—Դու առաջուց ճանաչում էիր այդ ծերունուն։

—Նա իմ հայրն է, պատասխանեցի ես։

—Անիծանք լինես դու... ինչպէս խաբեց ինձ...

Նա գարձեալ ցիշեց իր խարված դրամիները:

—Իսկ քոյրիդ, հարցրեց նա:

—Նոյնպէս առաջ են, մեծ քոյրս մարդի է գնացել, այժմ երկու երեխայ ունի. միջնակ քոյրս նշանված է:

Նրա չիջած աչքերի մէջ փայլեց ուրախութիւնն մեռայլ նչոյլը: Իսկ իմ հետաքրքրութիւնը աւելի զրաւում էր այն զաղանիքը, թէ ումն էր անիծում հայրս, կամ ով էր խաբել նրան: Երկար թախանձելուց յետոյ, վերջապէս յօժարվեցաւ նա պատմել:

—Գուցէ մայրդ ասած կը լինի, որ դու գեռ չէիր ծնված, երբ ես աղքատութիւնից ստիպված, Թազեցի հայրենի երկիրը և գիմեցի գէպի պանդխտութիւն, օտար աչխարհներում բախտ որոնելու: Բացի ծանր պարաքերից, ես ոչինչ չը Թազեցի իմ ընտանիքի ապրուստի համար: Մի քանի կտոր կալուածքներ ունէի, նրանք ես պարաքերիս վճարէն գրաւ էին գրված: Մի քանի տարի երկրէ երկիր Թափառում էի, բայց ոչ մի գործում յաջողութիւն չէի գտնում: Հայրենիքից ստացված տեղեկութիւնները միշտ տխուր էին լինում և անմխիթար: Վերջապէս հասաւ Պարսկաստանի սարսափելի ժանտախտի լուրը: Այդ միջոցին յայտնվեցաւ ինձ մօտ մի խաչագող, որ նոր էր եկել մեր երկրից և ունէր իր հետ մի նամակ իմ անունով: Նա պատմեց, Թէ որպիսի սոսկալի կոտորած կատարեց ժանտախտը և որպէս դառնա-

Ե:

ԳԱՂՏՆԻՔԸ ԼՈՒԾՎՈՒՄ Է

Առաւօտեան հայրս զարթնեց խիստ վազ: Առաջին բառը, որ արտասանեց, էր իմ անունը: Ես իսկոյն մօտեցայ նրան:

—Եկ պրկեմ քեզ, որդիս, Թոյլ տուր, արևի լուսով մի լաւ ուրախանամ քեզանով, ասաց նա ծնողական հոգեմտայուզմամբ:

Ես ընկայ նրա գիրկը:

—Ա՛խ, ինչպէս խաբեցին ինձ... զարձեալ կրկնեց նա գիշերվայ խօսքը, խորին կեղտով հոգուց հանելով:

—Դու ամբողջ գիշերը անհանգիստ էիր, հայրիկ, համարեա չը քնեցիր, շատ անգամ կրկնում էիր այդ խօսքը, պատմիր, ով խաբեց քեզ և ինչ բանում խաբեցին:

—Անցեալը մի յիշեցրու ինձ, որդի, պատասխանեց նա տխուր ձայնով,—դու ինձ այն ասա, մայրդ կենդանի է:

—Ես նրանց բոլորովին առաջ Թազեցի տանը և մի քանի անգամ նամակներ եմ ստացել. շատ ժամանակ չէ, որ նոր նամակ ես ստացայ. նա բոլորովին առաջ է:

կացաւ ամբողջ երկիրը: Խակ նամակի մէջ ասելիք մանրամասնութիւններ կային: Նամակը մեր գիւղի քահանայի գրածն էր: Նա սկսւում էր միխթարական խօսքերով, որպէս սովորաբար գրում են այն անբախտներին, որոնք կորցրել էին իրանց սիրելիներին: Նրա մէջ կար մի երկար ցուցակ, թէ մեր գիւղացիներից ով մնաւս, կամ ով աղատվեցաւ: Մեռելների թւում գրած էր քո մօր, քոյրերիդ և քո անունը: Իմ ամբողջ ընտանիքը ժանտախտի զոհ էր դարձել: Այդ անիրաւը բերանացի էլ պատմեց, թէ գրպիսի պատուհասի ենթարկեց Աստուած իմ ընտանիքը, և ասելացրեց, որ իմ թողած բոլոր կայքերը պարտքերիս փոխարէն տիրեցին...

Վերջին խօսքերի ժամանակ ծերունու ձայնը փոքր առ փոքր թուլացաւ և նա դժուարանում էր չարունակել իր պատմութիւնը: Ընկնէն առաւ նրան մի բաժակ կաթ խմելու: Նա փոքր ինչ կազդուրվեցաւ և չարունակեց.

—Այլ ևս ոչինչ չէր մնում, ես կորցրել էի այն բոլոր առարկաները, որ սիրելի էին ինձ, որ կապում էին իմ սիրտը իմ հայրենիքի հետ: Այդ տեղեկութիւնները այնքան ծանր և սպանիչ ազդեցութիւն ունեցան իմ վրա, որ ես մի քանի ամբողջ ամիսներ հիւանդ պառկեցայ: Նամակարերը չը հեռացաւ իմ հիւանդութեան մահճից և ամենայն հոգատարութեամբ խնամք էր տանում իմ վրա: Մինչև իմ առողջանալը նա բոլորովին ըն-

տանեց իմ բարեկամութիւնը, և ես իմ անձը չատ երախտապարտ էի համարում նրան: Ես ընդունեցի նրան իմ մօտ, և որպէս ընկեր գործում էինք միասին: Ես վճռեցի այլ ևս չը վերադառնալ մեր հայրենիքը, ուր պիտի գանէի սիրելի կնոջ, սիրելի զաւակներիս դերեզմանները միայն, և իմ դատարկացած տունը, այն ևս պարապատիրոջ ձեռքը անցած: Այնտեղ ինչ իմ մէջ պիտի գարթնեցնէր տխուր յիշողութիւններ: Հայրենիքը ատելի էր դարձել ինձ...

Նրա ձայնը դարձեալ սկսեց դողդողալ, դարձեալ դառն զգացմունքները խեղդում էին նրան: Ընկնէն առաւ նրան երկրորդ բաժակ կաթ, բայց այս անգամին չընդունեց, և միայն ինչ հանդստանալուց յետոյ չարունակեց.

—Ես այն ժամանակ հարուստ էի, ունէի մի քանի հազար պատրաստի ոսկիներ մնդուկի մէջ: Իմ նոր ընկերը այն առաջին գրաւել էր իմ համակրութիւնը, որ ես ամէն ինչ յանձնել էի նրա ձեռքը: Անցան մի քանի տարիներ, նա ինձանից չէր բաժանվում: Մեր գործերը օրըստօրէ լաւանում էին և օրըստօրէ այդ մարդը սիրելի էր դառնում ինձ: Բայց ինչ գիտէի, որ նրա բոլոր մտերմութիւնը կեղծ էր, խարէութիւն էր: Մի գիշեր, իմ քնած ժամանակ, նա յարձակվեցաւ իմ վրա, և որի մի քանի հարուածներ տալով, ես անզգայ և ուշաթափ մնացի, իսկ նա, ինձ արդէն ազանված համարելով, յափշտակեց իմ ոսկիները

և փախաւ։ Ահա այն ոսկիները, որ թողեց իմ վրա այն չարագործը...

Հայրս ցոյց առաւ մի քանի խորն ընկած վէրքերի նշանները իր մարմնի վրա և շարունակեց.

—Այդ պատաւը, որ դու տեսնում ես իմ խրճճի մէջ, ես իմ կեանքով նրան եմ պարտական։ Նա մի անբախտ այրի էր, ինձ վերառեց իր մօտ, խնամք տարաւ և առողջացրեց։

Հօրս տաղտի պատմութեան ժամանակ ես գտնվում էի մի տեսակ զարհուրանքի մէջ, թէ որքան դժբախտութիւնների պատճառ է դառնում առաքելութիւնը և ներքաշ մտերմութիւնը։ Հօրս խարված դրութիւնից առաջ էր եկել մեր ամբողջ ընտանիքի թշուառութիւնը։ Եթէ նա այդ պատահարներին չը հանդիպէր, եթէ նա իր ժամանակին վերադարձած լինէր իր հայրենի երկիրը և իր վրա առնէր իր ընտանիքի խնամատարութիւնը, ես երբէք սոխրված չէի լինի ոտքս դնել իմ հօր տունից, և անբարոյականութեան մէջ չէի ընկնի։

—Ո՞նչպէս էր այն չարագործի անունը, հարցրի ես, երբ հայրս վերջացրեց իր պատմութիւնը։

—Օհան, դու կարծեմ կը ճանաչես նրան։

—Կարապետի որդին, ինչպէս չեմ ճանաչում։

—Չէնց նա։

Ես սառած մնացի։ Այդ անիրաւը ոչ սակաւ ժպրտութեան մէջ էր գցել և ինձ և իմ մօրը և մեր բարեկամներին։ Ես այդ մեծքը պատուհի հօրս

—Լսիր, հայրիկ, թէ ինչպէս վարվեց նա մեզ հետ, այնուհետ, Պարսկաստանում, երբ վերադարձաւ պատգամաւորութիւնից։ Նա լաւ իմացել, թէ դու մնացած ես և իր հետ առնէր մի քանի խաչապղնեների նամականիներ, որոնք նոյնպէս հաստատում էին քո մասը։ Նա լսել էր և քո ոսկեայ մատանին, որի վրա փորագրված էր քո անուանական կնիքը։ Այդ յիշատակը յանձնեց նա իմ մօրը։ Մօրս մատնի էր այդ մատանին։ Մեր գրացի կընիկները հաճոյում էին նրան, որ թագէ մեր գիւղամատաղ մէջ, և քո անունով մի չիրիմ կանգնեցնէ։ Բայց նա չէր հետաքրքրում մեզ հետ տեղեկութիւններին, նրան բաւական յայտնի էին խաչապղնեների խարերայութիւնները։ Յետոյ Օհանը չատ անգամ գալիս էր մօրս մօտ, և իրան ցոյց էր տալիս որպէս մեր տան ամենամօտ բարեկամը։ Վերջը նա առաջարկեց պսակվել մօրս հետ, բայց մայրս մերժեց նրա առաջարկութիւնը։

—Աւազակ, գոչեց հայրս առանձինը կրճտացնելով,—այստեղ յայտնեց ոսկիները, իսկ այնտեղ աչխատում էր խլել կնոջս...

Մի քանի րոպէ միայց նա տխուր լռութեան մէջ, և ապա գարձաւ ինձ այդ խօսքերով.

—Ահա այդպէս են այդ չարագործները... գիտցիր, որդի, հետաս կացիր այդ մարդերից... Ընդունց համար այս աչխարհում ոչ մի տոպր բան չը կայ։ Ես էլ մի ժամանակ պատկանում էի այդ վչացած, անբարոյականացած հասարակութեա-

նր... եւ էլ չաս առներ եմ քանդել, չաս ընտանիքներ եմ անբախտացրել... իմ ձեռքերս էլ մաքուր չեն մնացել անմեղների արիւնից...: Թող այդ խրճիթը, հեռացիր, որդի, չարագործ հօրից, որովհետեւ Աստուծոյ անէծքը կայ նրա վրա...

Խեղճ հայր, նա դեռ չը գիտէր, որ որդին էլ ընկած է նոյն ցեխի մէջ: Նա հարցրեց.

—Իսկ քեզ, որդի, որ բախտը ձգեց այս հեռաւոր անկիւնում:

Նա համառօտ կերպով պատմեցի վարպետից դարչնացում պատահած անցքը, մօրս ինձ քաւար Գեւորգին յանձնելը, իմ կարծանաչութիւնը պանդխտութեան մէջ, և վերջապէս այն դէպքը, որ մեզ դէպի այդ անտառը բերեց և ձգեց դրամանենգների ընկերութեան մէջ:

Այդ բոլորը լսելու ժամանակ խչտաւ ծերունին տեղի և տեղը տարօրինակ էր, մինչև նա կլուծեց իմ պատմութիւնը, բացականչելով.

—Աղբանաս որդի, դու էլ կորած ես... և պատառոտը հեզեղի նման սկսեց թափվել նրա աչքերից:

Փոքր ինչ հանդարտուելուց յետոյ իր խռովութիւնից, շարունակեց նա.

—Լսիր, որդի, ամեն մի ապականած շրջանի ժահահոտութիւնը այնքան զօրեղ չէ լինում, երբ մարդ ապրում է նոյն շրջանի մէջ, որովհետեւ նրա զգայարանքները սովորում են, ընտելանում են այն օդին: Իսկ երբ դրսից, մաքուր օդ չնչելուց յետոյ, մտնում ես ապականած շրջանին, այն ժամանակ միայն զգում ես նրա թունաւոր ազդեցութիւնը: Դու այժմ այդ անմաքուր շրջանից, այդ փչացած հասարակութեան մէջ ես գտնւում, և զգալ չես կարող, թէ որքան քո անձը օրըստօրէ վարակւում է, և բարոյապէս փրոստում է: Մի օտար ձեռք պէտք է, որ քեզ դուրս քաշէ նրա միջից, և այդ թող լինի հայրական փարձակած ձեռքը: Աղաչում եմ քեզ, հեռացիր այդ չարագործներից, քանի որ բոլորովին ընկած չես... քանի որ բոլորովին կորած չես...

Նա իմ ձեռքը բռնել էր իր զզղոջուն ափերի մէջ: Վերջին խօսքերը արտասանեց արտասուքով և ծնողական սրտի խորին ցաւակցութեամբ: Ես խոստացայ կատարել նրա պատուէրը, բայց մտածում էի, թէ ինչ հնարքով պէտք է բաժանուել քաւար Գեւորգից: Այդ սարսափելի մարդը այն աստիճան կաշկանդել էր ինձ, որ նրանից անջատուելը չատ հեշտ չէր: Հայրս պատասխանեց.

—Ես լաւ եմ ճանաչում այն անիրաւին... նրա մէջ զութ կամ խիղճ կոչուած բանները չը կան: Ես գիտեմ նրա բոլոր արարմունքը... աշխարհի ամեն կողմերում եղել է նա, և որտեղից անցել է, թողել է իր եւսից արատաւոք և զժբախտութիւն...

—Այսու ամենայնիւ, նա ինձ հետ միշտ լաւ է եղել. նա մինչև անգամ որդու պէս սիրում էր ինձ:

—Հաւատում եմ: Բայց ինչ նշանակութիւն ունի խաչագողի համար սէրը, բարեկամութիւնը:

—Լսիր, որդի, իմ սիրոյ մարդիկը այդ չարագործների մէջ ճիզմակեցան: Նրանք չը գիտեն, թէ ինչ է ճշմարիտ բարեկամութիւնը: Որքան սերտ են նրանց ընկերական կապերը, որքան մտերմական է նրանց յարաբերութիւնները, այնքան զարհուրելի է լինում վրէժխնդրութիւնը, երբ ընկերը իր ընկերի մէջ նշմարում է մի սոնոտիորը կասկած: Բայց վհատածել նրանք միշտ կարող են, որովհետև ամէն խիղճը մաքուր չէ, նա կասկածաւոր է լինում:

Այդ րոպէը ուշիլ էր, եա առանց հօրս ասելու էլ գիտէի: Բայց ինչպէս հեռանալ քաւոր Պետրոսից առանց նրան կասկած պատճառելու,—դրա նուազն էր դլխաւոր հարցը: Ես հարցրի.

—Ինչպէս թողնեմ նրա մօտ իմ այդքան տարվայ վաստակը: Ես ունեմ մեծ հարստութիւն, և բոլորը նրա մօտ է:

Նա պատասխանեց վրդովված ձայնով.

—Զգիր այն ապականված արծաթը, նա թողնից աւելի մահարեր է: Խաչագողի հարստութիւնը մի փոսի մէջ քանուց հաւաքված ցանաք սերևնելի նման է. փչից հակառակ քամին, և ահա նա ցրիս եկաւ: Աւազակը երբէք չի հարստանայ. նա այսօր հարուստ է, վաղը աղքատ: Այսպէս են բոլոր խաչագողները: Շատ անգամ նրանք մեծ գումարներ են ձեռք բերում, շատ անգամ մի սև

փող չունեն ծախսելու: Որովհետև նրանք ոչ մի այն սովոր չեն ապրել աշխատանքից, այլ նրանց ծանօթ չէ ոչ փողի կանոնաւոր կերպով վաստակելը և ոչ նրա տնտեսապէս ծախսելը: Թէ առաջինը և թէ երկրորդը նրանց մօտ չափազանցութեան է հասնում և մէջ տեղում միշտ է միչտ ոչինչ, այսինքն աղքատութիւն:

Ես ոչինչ չը պատասխանեցի. հայրս չարունակեց.

—Լսիր, որդի, ով որ իր կեանքում մի որ և իցէ հետաղրութեամբ վարակված է լինում, երկար բժշկվելուց յետոյ, ինքը նոյն հետաղրութեան բժիշկն է դառնում: Ես այդ րոպէը փորձել եմ իմ կեանքում, իմ անձի վրա:—Փախիր, հեռացիր այդ մարդիկներից, որպէս ժանտախտից, ապատութեան ուրիշ հնար չը կայ...

Ես հարցրի հօրիցս, երբ նրանք այս աստիճան աւելի էին, ինչու էր նա իր խրճիթը հիմնել նրանց լեռակատարի մօտ:

—Նրանք նոր են սկսել, ալի ամիա չը կայ, որ նրանք լոյս են դրել այդ անտառների մէջ: Իսկ ես լեռնակոտ եմ այդ ծովի ափի մօտ աւելի քան վեց տարի: Երբ նրանք յայտնվեցան, ես պատրաստվում էի հեռանալ այստեղից, բայց հիւանդութիւնս արգելք եղաւ: Ես պառկած էի, և հիւանդ էի, մի քանի չարաթ հաղիւ կը լինի, որ փոքր ինչ կազդուրվել եմ:

—Բայց ինչը սոխակը քեզ առանձնանալ այդ ծովի ափի մոտ:

—Գուա լսեցիր իմ պատմությունը, թե որպես խաղվեցայ ես, թե որպես դառաճանեց և կողոպտեց ինձ հաւատարիմ ընկերը... Այն օրից ես ատեցի աչխարհը, հեռացայ մարդկանցից, և վրճռեցի այդ մուսացված խրճիթում, այդ ծովի ափերի մոտ, անցկացնել իմ դժբախտ ծերությունը...

Ես խոստացայ լսաժանվել քաւոր Պետրոսից, խոստացայ թողնել այն հարստությունը, որ անարդար միջոցներով էր հաւաքված, և սոսկի հօրա.

—Ես ընդունում եմ քո խորհուրդը, ես այլ ես չեմ վերադառնայ այն մարդկանց մոտ և կը մնամ այստեղ: Բայց դու ես, հայր, խոստացիր, որ մկրտված որդու հետ կը վերադառնաս մեր հայրենիքը, կուրախացնես կարօտ մօրս, կուրախացնես անուէր մնացած դաւակներիդ:

—Խոստանում եմ, պատասխանեց նա:—Ես հէնց այս օրից կը սկսեմ ճանապարհի պատրաստությունն տեսնել:

Այդ միջոցին Նէնէն և պառաւը մօտեցան մեզ: Հայրս դարձաւ դէպի պառաւը, ասելով.

—Գրկիր այդ երիտասարդին, գա իմ որդին է:

Նա ուրախությամբ սկսեց համբուրել ինձ: Ոչ սակաւ ուրախ էր և Նէնէն: Նա երևակայական հրճուանքով պարզում էր իմ չուքը, ծիծաղում էր, հանաքներ էր անում հօրս հետ, չնորհաւո-

րում էր նրան, որ բախտ ունեցաւ գտնել իր որդուն, և ասում էր.

—Ցնծա, պապա, եկէ՛ք ես չը լինէի, եկէ՛ք Մոսրաղը ինձ այստեղ չը բերէր, դու, կարելի է, չը տեսնէիր նրան:

Ջ.

ԸՆԿԱՑ ԾՈՒՂԱԿԻ ՄԷՋ

Ես վճռեցի երբէք չը վերադառնալ քաոսը Պետրոսի մօտ: Երկը օր էր, որ հօրս խրճիթից դուրս չէի եկել: Ես պատապարտված էի նոյն վիճակին, որպէս Նէնէն,—չերևնալ խաչադողներին մինչև այտուղից հեռանալիքը:

Բոլոր ժամանակը ես և հայրս զբաղված էինք ճանապարհի պատրաստութիւններով: Նէնէն չատ ուրախ էր, անդադար չառաջնորդում էր մեզ. «գընանք, գնանք, ասում էր, հեռանանք այտուղից»: Պառաւը նոյնպէս սխրտը չէր երևում. նա չուտով հաչտվեցաւ հօրս հետ բաժանվելու մտքի հետ, երբ իմացաւ, որ նա մի հեռու երկրում կին ունի, զաւակներ ունի, և յանկանում էր, որ ծերուկին գնայ իր ընտանիքը ուրախացնէ: Հայրս իր խրճիթը լոլոր պարագայքով թողնում էր պառաւին:

Ամեն ինչ պատրաստ էր ճանապարհի համար, մնում էր դրամներ վարձել, տեղափոխվել մինչև մերձակայ քաղաքը և այտուղից վոստայի առյլակներով առաջ գնալ: Չորրորդ օրը վաղ-առաւ-

ոտեան ես ուղևորվեցայ դէպի մօտակայ վիրը դրամներ վարձելու համար:

Դուրս գալով հօրս խրճիթից, զգում էի իմ մէջ մի անբացատրելի խաղաղութիւն. իմ սիրտը լցուած էր անսահման ուրախութեամբ. ես ինձ բախտաւոր էի համարում և գոհ: Կարծես թէ, ես ազատված լինէի խիստ ծանր չղթայներից, որ յարաժամ ճնշում էին, յարաժամ տանջում էին ինձ: Այո, ես ազատված էի քաոս Պետրոսի կապանքներից, ազատված էի մի անբարոյական չրջանից…

Ոլախս մի մարդ, որ դեռ հազիւ զբաղուացել է իր կառաւղ սրբեցութիւնից, ես մտաբերում էի իմ սարսափելի անցեալը… տեսնում էի այն խրթին անցուդարձը, լցված ամեն տեսակ ապականութիւններով, ուր բարոյապէս ընկած էի ես…: Ո՞վ դուրս հանեց ինձ այտուղից:—Նէնէն և հայրս: Հայրս սովորեցրեց լինել բարի, իսկ Նէնէն տվորեցրեց սիրել…

Նախախնամութեան մատն էր տեսնում այդ բոլոր դէպքերի մէջ, որ առիթ տուին ինձ ապաշխարել. Նէնէի կեանքը և հանգիստը հօրս: Թէ առաջինը և թէ վերջինը առաջնորդեցին ինձ դէպի ուղղութիւն: Եթէ Նէնէն չը լինէր, ես առիթ չէի ունենայ հօրս տեսնելու, իսկ եթէ հօրս չը տեսնէի, ես գուցէ միչա կը մնայի խաչադողների խումբի մէջ…

Դեռ արևը չէր ծագել, դեռ սիրամ էր վազում

գնան մեռյալը: Գնալով դէպի մօտակայ գիւղը, ես իմ գլխում կազմում էի մի գեղեցիկ ծրագիր մեր ապագայի մասին: Ես պատկերացնում է սիրելի հայրենիքը..., իմ և հօրս վերադարձը..., մօրս և քոյրերիս ուրախութիւնը... և մեր խաղաղ ու հանգիստ կեանքը հայրենական օջախի կողքում...

Բայց ինձ տանջում էր մի անհնազանդարին հարց, թէ ինչ պէտք էր անել Նէնէի հետ: Ես գիտէի, որ նա ինձանից չի բաժանվի. ես զգում էի, որ նրան թողնել չեմ կարող...: Այդ հարցը հեկաբ զրաղեցնում էր իմ միտքը, հեկաբ ես տարբերվում էի զանազան մտածութիւնների մէջ: Իմ սիրային տպաւորիւում միանգամ հետ մրցում էին երկու էակներ՝—Նէնէն և Սաուան: Որին պէտք էր ընտրել...

Ճանապարհը, որ տանում էր դէպի մօտակայ գիւղը, պէտք է անցնէր այն ձորի միջով, ուր գտնվում էր խաչագողների բնակարանը: Այդ պատճառով ես որոշել էի արևածագից առաջ, առաւօտեան մթութեան պահուն, անցնել այնտեղից, որպէս զի նկատելի չը լինեմ:

Գետ բաւական մութն էր, երբ հասայ այնտեղ: Բայց իմ ուշադրութիւնը գրաւեցին որոշման խառ ձայներ, կարծես թէ, արձակում էին տարաձանաձներից: Ես կանգնեցայ: Ձայները լսվում էին ուղիղ այն կողմից, որտեղ գտնվում էր նըրանց բնակարանը: Հետաքրքրութիւնը մղոցից

ինձ ինձ: Ես բարձրացայ մի բլուրի վրա, որտեղից այնտեղից նայել: Իմ առջև բացվեցաւ մի հրաշալի լճակ: Աջերագ ձորը վատվում էր կրակի մէջ: Հրդեհը խաչագողների բնակարանից տարածվել էր անտառի մէջ: Ամառնային տօթից ցամաքած ծառերը այրվում էին:

Կրակի բոցերը դուրս էին հոսում խաչագողների բնակարանից և տարածում էին նրա չորջը տարաւորի լուսաւորութիւն: Մխիթնները այրվում էին: Մի կողմում ածած էին թղթերի կիսատ կապոցները: Հրդեհը ոչնչացնում էր կեղծ գործի կեղծ արդիւնքը...

Հրդեհի լուսաւորութեան միջից երևում էին պինված մարդիկ, որոնք, կարծես թէ, խուզարկութիւններ էին անում: Ոմանք կալանաւորված էին, շղթաների մէջ պահված էին, ոմանք վախչում էին: Անտառի մէջ հետամուտ էին լինում, որոնում էին փախստականներին: Մթութեան մէջ ընդվզմաղրութիւններ էին կատարվում, այդ ժամանակ լսվել էր լինում տարբանակների ձայները:

Ինչ էր պատահել: Ինչ էլ որ լիներ, այդ տասկալի տեսարանը մի լաւ բան չէր գուշակում: Ես մտածելի հետևանք: Այդ միջոցին լուսաւորութիւնը սկսվի տարածվեցաւ, կարծես, ամբողջ հօրիզոնը վատվում էր կրակի մէջ: Այժմ միանգամից լսցավատվելով, այրվում էին չոր խոտի դէզերը, որ խաչագողները հատաքել էին իրանց ձիերների համար: Լուսաւորութիւնը հասնում էր

մինչև այն լուրը, որի զգացմունքն կանգնած էի ես: Իմ պատիկը մի անշարժ արձանի նման նրբարված էր լուրի բարձրութիւնն վրա: Յոտրոտից լսվի եղաւ մի ձայն:

—Դա էլ մեր ընկերն է...

Խոհն վրա հասան մի քանի զինված մարդիկ և կալանաւորեցին ինձ: Եղելութիւնը արդէն յայտնի եղաւ ինձ. ես ընկայ ծուղակի մէջ...

Խաչագողը, որ մատնեց ինձ, մի և նոյն անձն էր, որին կոչում էին «Էշի ականջ»: Նրան վախչելու ժամանակ ձանապարհից բռնել էին և յետ էին բերում: Այդ մարդը յայտնի էր ամբողջ խումբի մէջ իր վատութիւններով: Ես զարհայ նրան, ասելով.

—Ջեռ ամաչում...

—Դու պիտի ամաչես, պատասխանեց նա լրբաբար,—դու մատնեցիր մեզ, և կարծում էիր, թէ ինքդ ազատ կը մնաս...

—Ե՞ս մատնեցի ձեզ...

—Այո, դու, ապա ուր:—Դու խաբեցիր մեզ, դու հետացար մեզանից, դու թաղուեցար ծերունի ձկնորսի խրճիթում, որտեղ թագրրել էիր և այն աղջկան, որին յանձնել էին քեզ սպանելու համար...

—Այդ դու որտեղից գիտես:

—Ես երկու ամբողջ գիշերներ խաւարի միջից, ձկնորսի խրճիթի լուսամուտներից նայում էի ձեզ վրա... և այդ հրդեհը պիտի կատարվէր այնտեղ...

և ձեզ բոլորիդ պիտի այրէինք կրակի մէջ... բայց դու, անպիտան, ամէն ճարպիկ դանվեցար մեզանից... մի քանի համար մատնեցիր մեզ...

Ես այլևս չը պատասխանեցի. ինձ ամէն ծանր էր լսել նրա հայհոյանքները և անպատիժ թողնել նրան, քան թէ այն կապանքները, որ այդ րոպէում կաշկանդել էին ինձ: Սկսեցին մեզ տանել դէպի խաչագողների բնակարանի կողմը:

«Էշի ականջի» խօսքերից երևաց, որ իմ բացակայութիւնը կատածանքի մէջ էր ձգել ընկերներիս. նրանք սկսել էին պտնել ինձ և գտել էին ձկնորսի խրճիթում: Նկնկին կնոջական տեսնելը ամէն չէիմեցրել էր նրանց, մանաւանդ քաւար Պետրոսին, որին ես հաւատացրել էի, թէ սպանել եմ այդ աղջկան: «Էշի ականջին» յանձնված էր եղել գաղտնի հսկել իմ գործողութիւնների վրա, տեղեկութիւններ հաւաքել, մինչև ընկերութիւնը կը պարզէր այդ մթին և կնճռոտ հարցը և կը տար իր վճիռը իմ մասին: Բայց ես ինչով էի առիթ տուել նրանց մտածելու, թէ ես եմ մատնել նրանց,—այդ ես հասկանալ չը կարողացայ:

Արեգակը իր առաջին ճառագայթները խառնեց հրդեհի բոցերի հետ, երբ մեզ հասցրին խաչագողների բնակարանի մօտ: Երեսում էր, որ իրանք, խաչագողները, կրակ էին տուել այդ բնակարանին, որպէս զի մթերի մէջ անհետացնեն իրանց արհեստի նշանները:

Երբ բոլորովին մօտեցայ, տեսնում եմ՝ խաչագողներից մի քանիսը չղճայակապ պահվում են պինուսների ձեռքում: Ամբողջ ձորը շրջապատված էր բաղմաթիւ պահապաններով: Այստ ամենայնիւ, մի քանիսն յաջողվել էր փախչել, թէև ասիկանութիւնը վրա էր հասել այն ժամանակ, երբ բոլորը դեռ քնած էին:

Գաւոր Պետրոսը նոյնպէս կալանաւորների թիւում էր. նա խիստ անհոգով կերպով կանգնած էր իր չղճանների մէջ և նոյնպէս հպարտ էր, որպէս միշտ: Առաջին անգամը չէր, որ նրա հետ պատահում էին այսպիսի «խաղեր»: Նա իր կեանքում դուէ հարիւր անգամ գործ էր ունեցել ասիկանութեան հետ...: Երբ տեսաւ ինձ, խիստ զարմանս կերպով նայեց իմ վրա և ոչինչ չը խօսեց: Բայց ես նրա թունաւոր հայացքի մէջ կարդացի այդ խօսքերը. «դու էլ, Մուրադ, դատապարտեցիր ինձ...

Խուզարկութիւնը անտառի մէջ տեղ մինչև կէսօր: Խաչագողներից ոմանք, անակի աստղերկրեայ գաղտնի ճանապարհով դուրս էին եկել և անհետացել էին ծառերի ու թուփերի մէջ: Ներանց գտնել չը կարողացան: Կալանաւորների թիւը, բացի ինձանից, չորս հոգի էր:

Հրամանը արդէն բոլորովին լսելի էր այն ընակարանը, որ մօտ մի տարի եղել էր կենտրօն ապատաւելի չարագործութիւնների: Երբ ամէն ինչ վերջացած էր, մեզ սկսեցին տանել դէպի մերձա-

կայ քաղաքը: Մի բան, որ իմ կողմանէն այն դառն ճգնաժամում մտաբերելի եւ, էր Նէնէն: Խեղճ աղջիկ, դու զարձեալ մնացիր անուէր...

Երկիւղը և յուսահատութիւնը, որ այսպիսի դէպքերում սիրում են յանցաւորի սրտին, ինձ բոլորովին զգալի չեղան: Կարծես թէ, ես համոզված էի, թէ հարկաւոր էր որ այսպէս լինէր, թէ այն ճանապարհը, որ ես բռնել էի, ինձ պէտք է հասցնէր մինչև այստեղ, թէ ես պէտք է պատժվէի և իմ ոանջանքներով քաւէի իմ գործած մեղքերը...

Երեք օրից յետոյ մեզ հասցրին մերձակայ քաղաքը և փակեցին բերդի մէջ: Գիշեր էր: Բանտի մի անկիւնում, թեք ընկած յատակի վրա, հեռու իմ ընկերներից, ամուր մտածութիւնների մէջ ոանջվում էի ես: Հապա-հապ ինձ համար ծագեց կեանքի մի նոր առաւօտ, հապա-հապ ինձ ազատված էի համարում մի անպարոյական հասարակութիւնից, հապա-հապ սկսում էր ինձ համար արդար ապրուստի մի նոր եղանակ, և ահա ամուր հանգամանքները ինձ ձգեցին մի նոր գժրախտութեան մէջ: Ինչով կը վերջանար այդ, ես չը պիտէի, բայց համոզված էի, որ ես ընդհակառակ պիտի բաժանված մնամ սերելի ծնողներից, սերելի բարեկամներից, և ես դուէ միւս անգամ չի պիտի կարողանամ տեսնել Նէնէնին:

Այդ մտածութիւնների մէջ էի ես, երբ իմ ընկերները, բանտի մի այլ կողմում խաւխռով նըս-

տած, թուղթ էին խաղում, ծխախոտ էին, հանաքներ էին անում, կարծես թէ, իրանց անումը լինելին: Քաւոր Պետրոսը նրանց մօտ էր. նա չէր խաղում, բայց նայում էր նրանց խաղի վրա: Նա բաժանվեցաւ խումբից և մօտեցաւ ինձ:

Մի մարդու թէ բարոյական և թէ մարմնական ազնուաթիւնները այնքան նշմարելի չեն լինում, երբ նայում ես նրա վրա բարեկամի աչքով: Բայց երբ սկսեցիր առել նրան, այն ժամանակ միայն յայտնվում է նա իր բոլոր այլանդակութեամբ: Այսպէս ներկայացաւ ինձ քաւոր Պետրոսը, երբ մօտեցաւ իր սովորական առնուաթեամբ:

—Դու քեզ վնաս ես զգում, հարցրեց նա:

—Ոչ, պատասխանեցի ես:

—Ապա ինչու ես այդպէս ախոր:

—Բանտում ուրախ չեն լինում:

—Այդ իրաւ է, բայց տխրելն էլ թուլասրտութեան նշան է:

Նա նստեց իմ մօտ և սկսեց զանազան խրատներ տալ:

—Ջը վախենաս, Մուրադ, այդպիսի դէպքեր շատ են պատահում մեզ հետ: Լգուշ, շատ կարելի է, սկսվի մեր քննութիւնը. դու պէտք է չը յայտնես քո իսկական անունը, քո հայրենիքը և ինչ ազգի կամ ինչ դաւանութեան պատկանելը: Ընտրիր քեզ համար մի կեղծ անուն, ձևացրու քեզ ուրիչ ազգից և ուրիչ երկրից: Ուրացիր ինչ

մեղադրանք որ կը դնեն քեզ վրա. այնուհետև քո ազատվելը դժուար չի լինի:

Ես պատասխանեցի խորին զղջանքով.

—Որքան խորհեցի, որքան աւտա խոսեցի, բաւական է: Ես այսուհետև պէտք է ճշմարիտը խոսեմ:

Նա սկսեց զարմացած կերպով նայել իմ երեսին:

—Ի՞նչ է պատահել քեզ հետ, գժուել ես, ինչ է:

—Ես այժմ աւելի խելացի եմ, քան թէ երբէք:

—Դու կամենում ես կորցնել քեզ:

—Ես այն օրից կորայ, երբ սկսեցի հետևել քո խրատներին:

Այժմ նրա դէմքի վրա երևացին բարկութեան նշաններ: Բայց չուտով անցաւ բարկութիւնը և ցաւակցական եղանակով խոսեց նա.

—Ես չէի հաւատում, Մուրադ, և հիմա էլ չեմ հաւատում այն կասկածանքին, որ քո նոր ընկերները ունեցան քո մասին,—իրր թէ դու, առանց որ և իցէ պատճառի, հեռացար նրանցից և մատնեցիր նրանց: Բայց ես հաւատում եմ մի բանի, որ այժմ քո խելքը իր տեղումը չէ. ես նկատում եմ քո մէջ խելագարութեան նշաններ: Դու այլ ևս այն չես, ինչ որ էիր առաջ:

—Այդ իրաւ է, ես այժմ այն չեմ, ինչ որ էի առաջ, և այդ ապացոյց է, որ այժմ իմ խելքը իր տեղումն է, իսկ առաջ խելագար էի:

Նա կրկին զայրացաւ, ասելով.

—Ողորմելի, ով փչից վրաս պլխում այդ ցնորքները: Դու կարծում ես, որ ես այժմ չը պիտեմ, թէ ինչպէս մի թափառական աղջկայ համար խարեցիր ինձ: Նրա սէրը խելքից հանեց քեզ, և դու վճռեցիր բաժանվել քո բարերարից, որ այնքան տարի իր որդու պէս մնացել էր քեզ: Բայց Աստուած պատժեց քեզ քո ապերախտութեան համար. քո հանապարհը կրկին դարձրեց դէպի մեր կողմը, որ այդ բանտին, այդ չղթաներին մատնակից լինես և դու:

—Այդ բանտը, այդ չղթաները իմ հին մեղքերի համար է, պատասխանեցի ես:—Բայց եթէ ես գործել եմ իմ կեանքում մի բարի գործ, այդ այն է, որ ես խարեցի քեզ և չը կատարեցի քո պատուէրը՝ զրկել կեանքից մի անմեղ աղջկայ:

—Որին դու սիրեցիր:

—Այո:

—Որը մեր բոլորին մատնեց:

—Այդ սուտ է, այդ զրպարտութիւն է: Նա չէ մատնել ձեզ:

Նա պատասխանեց ինձ ամէնի յանդիմանական եղանակով.

—Ինչու ես խաբում ինձ, դու մի քանի րոպէ առաջ ասում էիր, որ այլ ևս սուտ չի պիտի խօսես: Միթէ քեզ յայտնի չէ, որ այն աղջիկը սպառնացել էր մատնել ամբողջ ընկերութիւնը, այդ պատճառով էլ վճռել էին սպանել տալ նրան: Մի դիպուածով դու նրա կեանքը ազատեցիր և դրանով միջոց տուեցիր նրան կատարելու իր վրէժխնդրութիւնը:

—Բոլորովին սխալ է ձեր ենթադրութիւնը, պատասխանեցի ես:—Ձեզանից բաժանվելուց յետոյ, եթէ դուք յանձնել էիք «էշի ականջին» լրտեսել իմ գործողութիւնները,—այն ևս պէտք է լաւ յայտնի լինի ձեզ, որ այն աղջիկը ձկնորսի խրճիթից ոչ մի տեղ չէ հեռացել, ուրեմն և չէր կարող մատնել ձեզ:

—«Էշի ականջը» գուցե քեզ ձկնորսի խրճիթում քո բացակայութիւնից երկու օր յետոյ. նա չէր կարող տեղեկութիւններ հաւաքել, թէ մինչև այնօր թէ դու և թէ այն աղջիկը ինչպէս էիք անցուցել:

Մեր վիճաբանութիւնը քաւոր Պետրոսի հետ տևեց երկար, ես դարձեալ չը կարողացայ համոզել նրան, թէ Նէնէն միզուր չէր մատնութեան գործի մէջ: Հանգամանքները ինքն ըստ ինքեան այնպէս էին կազմվել, որ Նէնէի կարծիքական վարմունքը հաւանական էին դարձնում: Այդ անբախտ աղջիկը ընկել էր խաչագողների ձեռքը. նրան չարչարել էին. նա սպառնացել էր, եթէ իրան բաց չը թողնեն, կը մատնէ նրանց. այդ երկիւղը աւելի էր ուժել խաչագողներին սպանելու նրան. ես ազատեցի նրա կեանքը. և մի քանի օրից յետոյ կատարվեցաւ մատնութիւնը, խաչագողներին կալանաւորեցին: Այլ ևս ոմ վրա կարող էին նրանք կասկած ունենալ, եթէ ոչ, կամ իմ,

կամ նվնեի վրա: Քաւար Պետրոսը թէև չէր հաւատում, որ ես կը դաւաճանէի նրանց, այնուամենայնիւ, նա ինձ բոլորովին արդար ես չէր համարում, յայտնելով նոյն միտքը, որ եթէ ես նրա հրամանը կատարած լինէի, և նվնեին սպանած լինէի, այնուհետև այդ դժբախտութիւնը տեղի չէր ունենայ: Նրա բարկութեանը չափ չը կար, թէ ինչպէս ես համարձակուեցայ խօսել նրան: Բայց այդ բարկութիւնը մասամբ մեղմանում էր, երբ նա ի նկատի էր առնում իմ սիրահարութիւնը, որը նրա կարծիքով միևնոյն խելագարութեան էր հասցրել ինձ: Բայց նա, որպէս երեում էր, դեռ չը պիտէր հօրս հետ իմ համոզիչը, եթէ յայտնէի, գուցէ բոլորովին կը փարատէի թէ նրա և թէ ընկերներիս կասկածը իմ անհատատարմութեան մասին: Քաւար Պետրոսը նեղող էր, երբ իրաւացի փաստեր էին ներկայացնում: Բայց ես այլ ես միջի չունէի իմ անձը արդարացնելու նրա առջև: Նա հեռացաւ, հետևեալ խօսքերը ասելով.

—Օրհնքի դաւաճանութիւնից աւելի հեշտ է ազատել քեզ, բայց ես չը գիտեմ, ինչպէս դու պիտի ազատես քո ընկերների վրէժխնդրութիւնից...

Այդ խօսքերը սարսափելի էին, սարսափելի էին աւելի այն պատճառով, որ գալիս էին մի խաչագողի բերանից: Բայց ես լսեցի խորին արհամարհանքով, և այդ աւելի վիրաւորեց նրան:

Այդ անգամ մարդը դեռ սիրում էր ինձ, թէև թաղցնում էր իր սէրը—դեռ մտածում էր իմ մասին, դեռ հոգ էր տանում իմ վրա: Ես տեսայ, թէ ինչպէս նա վշտացած կերպով հեռացաւ, ըզնաց նստեց բանտի մի մթին անկիւնում, և ըզլուխը քարշ գցած, տխուր մտածութիւնների մէջ ընկաւ: Մեթէ նա զգում էր, որ ես նրա դաւադրակութեան թշնամու դերն էի...

Երբէք չէր պատահել, որ ես այնպիսի համարձակութեամբ խօսէի քաւար Պետրոսի հետ, որպէս այն գիշեր: Կարծես թէ, յանցաւորի կապանքները մի տեսակ ազատութիւն են շնորհում նրան: Շղթաների մէջ թէ մնձասրը և թէ աստրակրնալը հաւասար իրաւունք են վայելում: Մեր վիճաբանութիւնը թէև խիստ տաք էր, բայց անցաւ հանդարտ կերպով, այնպէս որ, մեր միւս ընկերները, որոնք զբաղված էին թղթախազով, ոչինչ չը լսեցին: Այժմ նրանք վերջացրել էին իրանց խաղը և սկսել էին միմեանց հետ զանազան հանաքներ անել: Ինձ վրա ուշադրութիւն անգամ չէին դարձնում: Ես խորին զղջանքով լսում էի նրանց դատարհախօսութիւնները:

—Երդուց կը սկսվի մեր հարսանիքը, ասում էր մէկը, յիշեցնելով քննութեան սկսվելը:

—Տօ, Յարօ, այդ քանիերորդ անգամն է, որ ոտներիդ հագնում ես այդ զանգալակները, հարցնում էր մի մանկահասակ խաչագող ծերունի ընկերից, ցոյց տալով նրա շղթաները:

—Սատանան պիտէ, մոռացել եմ հաշիւը, պատասխանում էր Ծերունին ինքնաբաւական ժպիտով:

—Դու նրանից այդ հարցրու, թէ քանի անգամ փախել ես «կարմիր անից», մէջ մտաւ մի կարճահասակ խաչագող:

«Կարմիր տուն» կոչում էին նրանք Սիբիրը:

—Այդ հարցնելու հարկ չը կայ, պատասխանեց առաջինը.—չես տեսնում, հաշիւը ճակատի վրա գրած է. երկու գրչեմ, կը նշանակէ երկու անգամ:

—Այս անգամ երրորդ գրչեմը կը գրվի, պատասխանեց Ծերունի Յարօն, չարունակելով իր ժպիտը.—երեք գրչեմ, վատ չէ, խորհրդաւոր թիւ է:

Այդ ժամանակ դուռ դարձադրվում էր այն օբէկտը, որ աքսորականների ճակատի վրա գրչեմ էին դնում:

—Ապա դու ինչպէս փախար բերդից, հարցրեց մէկը իր ընկերից, որին կոչում էին Զաքօ:

—Այդ ինչ մի զարմանալու բան է, պատասխանեց Զաքօն,—չատ հեշտ կերպով: Ինձ գրեցին բերդը: Ընկերս, որ աւելի յանցաւոր էր քան թէ ես, չը բռնվեցաւ: Նա իր հագուստն ու կերպարանքը փոխեց, և իրան ձևացնելով իմ ազգական, թոյլ տուած օրերում գալիս էր ինձ տեսութիւն: Ամեն անգամ բերում էր իմ համար ապխտակ հաց և այլ ուտելիքներ: Վերջապէս հասաւ գաղտի ժամը: Այդ ժամը և կալանաւորների վրա թափում է իր աղտմութիւնը: Բարեպաշտ մարդիկ

իրանց ամեն պատրաստութիւնից նրանց համար բաժին են ուղարկում: Այդ ժամին չը մոռացվեցայ և ես: Ընկերս բերեց ինձ համար մի ամբողջ հաց և սաւը վրաս: Այդ երկրի հացերը, փառք Աստուծոյ, մեր բարակ և թափանցիկ լաւաշները չեն. նրանք այնքան ահագին են, որ ամեն բան կարելի է նրանց մէջ թաղցնել: Հացի մէջ դրած էր փոքրիկ սղոց և աբրեշումի երկայն պարան: Առաջինը բաւական էր բանտի լուսամուտներից մէկի երկաթեայ վանդակապատը կտրելու, իսկ երկրորդով այնտեղից ցած իջնելու:

—Իսկ պահապանները չը նկատեցին:

—Զաւակի ժամին մի քիչ կարելի է մի պահապան գտնել, որ հարբած չը լինի:

Այս տեսակ խօսակցութիւններ տևեցին մինչև կէս գիշեր: Ես այլ ևս լսել չը կարողացայ: Մի կողմից յոգնածութիւնը, միւս կողմից հոգեկան տանջանքը այն աստիճան թուլացրել էին ինձ, որ երկար արթուն մնալ չը կարողացայ:

Ե.

ՆԱ ԻՆՁ ՉԸ ԹՈՂԵՑ

Անցել էր աւելի քան մի տարի այն օրից, որ ես կալանաւորվեցայ, որ ես բանտում մաչվում էի:

Հէնց առաջին անգամ, երբ տարվեցայ քննիչի մօտ, ես պարզ կերպով խոստովանվեցայ բոլորը, ինչ որ գործել էի: Ես ոչինչ չը թագցրի, ես մինչև անգամ ցոյց տուի այն բանները, որ ինձանից չէին հարցնում: Ես մի ըստ միոջէ պատմեցի, թէ ինչպէս անմեղ սրտով դուրս եկայ հայրենիքից, ինչպէս ընկայ խաչագողների հասարակութեան մէջ, ինչպէս հետզհետէ ընտելացայ չարագործութեան, ինչեր արեցի, ինչեր կատարեցի, և վերջապէս ահպէս հօրս խրատով բաժանվեցայ այդ հասարակութիւնից, և պատրաստում էի բոլորովին հեռանալ նրանցից, բայց յանկարծ բռնվեցայ:

Ամեն ինչ անկեղծաբար պատմելուց յետոյ, ես յոյս ունէի, որ կարգադրեն ինձ, տեսնելով, որ ես բոլորովին անզիջակցաբար ընկած էի այդ յանցանքների մէջ, և ի նկատի առնելով, որ ես արդէն զղջացել էի իմ մեղքերը, հաւակացել էի

իմ մեղսագործութիւնները և զարձել էի չար ճանապարհից:

Բայց այնպէս չեղաւ, ինչպէս ես սպասում էի: Իմ անկեղծ խոստովանութիւնը աւելի ծանրացրեց իմ վրա իմ մեղքերը: Ես ինքս ինձ համար վկայ գարձայ և հաստատեցի իմ յանցանքները: Իմ զղջման վրա ուշադրութիւն չը գարձրին, մտածելին միայն ապաշխարութեան մասին:

Մի քանի ամսից յետոյ, քաղաքի բարձր պատարանում, կարդացին իմ դատապարտութեան վճիռը. «Զրկել ամեն իրաւունքներից, պատրել մինչև մահ տաժանական աշխատութիւնների մէջ»...

Ես չատ սիրեցայ, երբ լսեցի այդ վճիռը. չը նեղել յանցաւորին, որ արդէն զղջացել էր, որ արդէն ուղղվել էր: Բայց ով է քննում մարգու սիրտը. նա այնպիսի մի խորութեան մէջ թաղված է, որ ամենատաւտես դատաւորի աչքն անգամ այնտեղ թափանցել կարող չէ:

Իմ ընկերները նոյնպէս պատարանքի դատապարտվեցան, բայց նրանք այնպէս տխուր չէին, որպէս ես. նրանք աւելի զայրացած էին երևում, քան թէ տրտում:

Շրջապատած վնասուրներով, դատարանից կըրկին տարան ինձ բանտը: Երբ հասցրին բերդի դռանը, գիս ներս չը մտած, իմ հանից մի ձիչ, մի ցաւալի աղաղակ բարձրացաւ. «Ես սիրտ է տեսնում նրան... միթէ դուք դեռ չունէք... միթէ

դուք Աստուած չունէք... մարդիկ, ինչու էք ա
դելում ինձ... ես պէտք է տեսնեմ նրան... թո-
ղէք, որ տեսնեմ նրան»...

Ես յետ նայեցայ: Այդ խօսքերը լսում էին մի աղջկայ բերնից, որ պատառոտած հագուստով, հերթաձակ, այս կողմ և այն կողմ էր ընկնում, աչխատում էր պատառել վիճաբնների չարքը և մօտենալ ինձ: Պահապանները հրացանների սուին-ներով հետապնդում էին նրան, բայց նա զարհուրել առաջ էր մղվում:

Ուրքան և խռովութիւնն մէջ լինելի այն րո-պէում, որքան և իմ դլուխը և խելքը ինձ չէին պատկանում, այսուամենայնիւ, այն արտաչարժ պատկերի մէջ ես ճանաչեցի Նէնէին: Խեղճ աղ-ջիկ, ո՞րտեղից յայտնուեցաւ նա...

Նրա ազազակից դուրս եկաւ բանտապահը:

—Դարձեալ այն ցնորված աղջիկն է, ասաց նա և հրամայեց հետապնդել:

Երևում էր, որ Նէնէն առաջին անգամը չէր, որ խնդրում էր՝ իրան թոյլ տան բանտը մտնե-լու: Նրան արդէն ճանաչում էին: Նա խիստ ո-դորմելի ձայնով պատասխանեց.

—Պարո՛ն բանտապահ, ես ցնորված չեմ... ի սէր Աստուծոյ, դիմացէք իմ վրա, թոյլ տուեցէք, որ տեսնեմ նրան...

—Ո՞ւմ տեսնես:

—Այն կալանաւորին, որ տանում են...

—Դու ո՞վ ես:

—Ես նրա բարեկամն եմ... թողէք տեսնեմ նը-րան... մի՛թէ դուք Աստուած չունէք... մի՛թէ չը թողնէք, ես գաստաւորի մօտ կը գնամ... գատա-ւորի մօտ կը գնամ...

—Աւելի լաւ կը լինի, եթէ գժատունը գնաս, հեղնութեամբ պատասխանեց բանտապահը և հրա-մայեց հետացնել:

Նրա անդիտութիւնը աւելի վշտացրեց ինձ, քան իմ դատապարտութեան վճիռը, որ այնօր կարդացին գատարանում: Ինձ ներս տարան, դռները փակուեցան իմ ետևից, ես այլ ես ոչինչ չը լսեցի...

Ամբողջ օրը խելագարի նման էի: Ես բոլորո-վին մոռացել էի իմ թշուառ դրութիւնը, մոռա-ցել էի, թէ որպիսի սարսափելի ապագայ էր սպասում ինձ,—ես միայն մտածում էի անբախտ Նէնէի մասին: Միշտ իմ աչքերի առջեւն էր այն վրդովմունքով լի աղջիկը, տեսնում էի այն հե-րարձակ կոյտի վշտալի պատկերը, լսում էի նրա սպառը ձայնը... Արևը մտաւ, մութը պատեց, բանտի մէջ տիրում էր գիշերային խաւարը: Այդ մթութեան մէջ դարձեալ տեսնում էի նրան, լը-սում էի նրա ձայնը...

Առաջին անգամ ես զգացի չդիմանալիս ծանրու-թիւնը, առաջին անգամ բանտը ներկայացաւ ինձ իր սոսկալի կերպարանքով: Մինչև այնօր ինձ տա-նելի էր թուլորը: Իսկ հիմ տեսայ, թէ իմ պատ-ճառով տանջվում է մի անմեղ հոգի, այն ժամա-

նակ միայն հասկանալի եղաւ բոլոր զարհուրանքը իմ թշուառ դրութեան...

Ամենքը թողեցին ինձ. իմ հաւատարիմ ընկերները ինձ մատնեցին. ես կորուեցայ լոյս աշխարհից... բայց նա ինձ չը թողեց... Նա եկաւ իմ եռեից. նա որմնում էր ինձ, երկի, երկար որոնում էր, և գտաւ: Բայց գտաւ բանտի մէջ, դատապարտեալների մռայլ վերնզմանի մէջ...

Այդ վերնզմանի չուրջը պատռւում էր նա, դիշերային մենաւոր ուրուականի պէս պտըտւում էր նա, և խաւարի միջից մի մարդարէուհի մեռելահարցուկի նման կամենում էր դուրս կոչել իր սիրելիին...

Վա իրազրւթիւն էր, դա ցնորք չէր, ես լսում էի նրա ձայնը, նոյն արտաչարժ, ողբալի ձայնը, որպէս լսել էի կերեկով: Գիշերը խաղաղ էր. մարդիկ քնած էին. գրսում ամէն ինչ գտնւում էր խորին լռութեան մէջ: «Թողէք, տեսնեմ նրան»... այդ խօսքերը միայն հնչւում էին դիշերային լռութեան մէջ...

Բանտի պահապան զինուորը, հրացանը ուսին դրած, չափաւոր քայլերով անցուդարձ էր անում իր պահականոցի մօտ: Նա նոյնպէս լսում էր ողբալի ձայնը, և անհետաքրքրութեամբ ասում էր. «դա այն ցնորված աղջկայ ձայնն է»...

Գիշերը ես անցուցի անկողնային անհանգստութեան մէջ. ոչ քնած էի և ոչ արթուն: Առաւօտեան, երբ արեգակի առաջին ճառագայթները

նկրս ցոլացին բանտի նեղ լուսամուտներից, և ինձ համար ծագեց ուրախութեան լոյսը: Դուռը բացուեցաւ, խելագարի նման ներս վազեց Ելենէն: Նրա առաջին խօսքերը կցկտուր էին և անհասկանալի: Նա մօտեցաւ, գրկեց ինձ, և երկար մնաց իմ կուրծքի վրա անխօս: Նա նման էր մի սպանուածի, որի երեսի վրա բնաւ գոյն չը կար: Կենդանի մնացել էին դեռ չը մարած աչքերը միայն, այն լի կատաղութեամբ աչքերը, որոնք իրանց խաւարութեան մէջ ես գիտեցիկ էին:

Նրա խաւարութիւնը չատով անցաւ, անցաւ, որովհետև գտնում էր ինձ մօտ, որովհետև տեսնում էր ինձ: Նա սկսեց խօսել.

—Ա՛խ, սիրելիս, եթէ գիտենայիր որքան որոնել եմ քեզ... որքան մեռ եմ եկել...

Նրա ձայնը սկսվեց խեղդվել. փաթր ինչ հանգստացաւ և տպա չարունակեց.

—Անցնում էի քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, ամեն տեղ հարցնում էի քեզ... Ա՛խ, ինչու մարդիկ այսքան վատացել են... ամեն տեղ հալածում էին ինձ... ամեն տեղ հետացնում էին ինձ... չէին թողնում, որ բնակարանների մէջ մտնեմ... ասում էին՝ դա ցնորված աղջիկ է...

—Ապա որտեղ էիր անցկացնում գու:

—Փողոցների վրա, բայց երկնքի տակ... և ամէն հանգիստ էի, երբ գտնում էի անապատում, կամ թաքնվում էի անտառների ծառերի մէջ... Այնտեղ լաւ էր, այնտեղ մարդիկ չը կային...

—Ապա ինչով էիր կերակրվում դու:

—Շատ անգամ օրերով քաղցած էի մնում... չատ անգամ ուտում էի դաշտային բանջարներ կամ կերակրվում էի վայրենի պտուղներով... Երբեմն գտնվում էին բարի մարդիկ, որոնք ինձ հաց էին տալիս:

Եւ այդ բոլորը ձեզ համար, ինչի համար,—մի դատապարտեալ աքսորականի համար, որ պիտի մահվէր, պիտի ոչնչանար հանքերում...

Բայց ինձ ամենի զարմացնում էր այն, թէ ինչպէս Թոլլ տուին «խելագար աղջկան» մտնել բանտը, որի մէջ ես ամենևին խելագարութեան նշան չէի նկատում, միայն վերին աստիճանի անձնազոհութիւնը և թշուառութեան աստիճ կատարելութիւնը նրան բախտաւոր մահկանացուների աչքում խելագար էին ներկայացնում:

Նա պատմեց, թէ այն օրից, որ եկել էր այդ քաղաքը և տեղեկացել էր, որ ես այն բանտումն եմ գտնվում,—բանտի շրջակայքից չէր հեռանում. պիշերները անց էր կացնում նրա պատերի մօտ, իսկ ցերեկով կանգնում էր փողոցների վրա, աղաչում էր, պաղատում էր անցորդներին, պատմում էր նրանց իմ անմեղութիւնը, խնդրում էր, որ օգնեն ինձ: Նա դեռ այնքան միամիտ էր, որ կարծում էր, թէ ամեն մարդ իրաւունք ունէր ինձ դատաւոր լինելու: Իսկ այն առաւօտ, երբ բանտը մտնում էր մի երիտասարդ ակնյայտօր պատմն, նա վազեց, մօտեցաւ, և գրկելով նրա ոտները, խնդրեց, որ իրան էլ թոյլ տան բանտը մտնելու և իր «սիրելիին» տեսնելու: Ակնյայտօր պարոնը զիջացաւ նրա վրա, խոստացաւ, որ իսկոյն հրաման կառնի բանտապահից: Նա կատարից իր խոստումնքը, քանի րոպէից յետոյ նրան ներս թողեցին:

Որքան մելամաղական լինէր իմ զգեստաւորութեան տեսար ժամերում տեսնել իմ մօտ նէնէին, որքան սիրասիրան լինէր նրա ծայրայեղ անձնազոհութիւնը, այսու ամենայնիւ, ես մտածում էի. «Միթէ ես արժեմ դրան... ինչով է մեղաւոր այդ անմեղ աղջիկը, որ տանջվում է մի չարագործի համար... ինչու ես ձգտեցի նրա սրտում այն սըրբազան կայծը, որ այնքան բոցավառվեցաւ, որ այնքան բորբոքվեցաւ, մինչև խելքից հանեց նրան... ինչու ես խլեցի նրա հանգստութիւնը... Այդ բնութեան ազատ որդին, որի ցեղին վիճակված է կեանքի անհոգ և ուրախ բաժինը, զուգ ասելի բախտաւոր կը լինէր, եթէ չը հանդիպէր ինձ... ինչու ես թշուառացրի նրան... Ասելի լաւ չէր լինի, որ հէնց այն օրը, երբ ես նըրա կեանքը ազատեցի եղեռնագործի ձեռքից, բաց թողնէի նրան: Նա կը գնար, աշխարհը լայն ու արձակ է ցիգանուհու համար,—կը գնար և իր համար նոր բախտ կը որոնէր»...

Արդէն ուշ էր... այդ բոլորը պէտք էր անցած համարել... ես միայն հարցրի.

—Ինչու եկար դու, ինչու չը մնացիր հօրս

մօտ. նա բարի մարդ էր, կը պահէր, կը պահպանէր քեզ:

Դժբախտները ամէն մի դժբախտութեան դէպքերում այն քաղաքավարական ձևերը չը գիտեն, որ պահպանում են բախտաւորները միայն: Նէնէն բոլորովին պարզ կերպով պատասխանեց.

—Հայրդ մեռաւ, նա մեռաւ հէնց այն օրը, երբ խնացաւ, որ դու կալանաւորված ես:

Այդ բօթը սարսափելի ներգործութիւն ունեցաւ իմ վրայ: Նա մեռաւ իմ պատճառով, մոլորեալ սրդու պատճառով, ես նրա մահուանը պարտական էի...

Նէնէն չը նկատեց իմ խռովութիւնը, չարտնակեց պատմել:

—Այն առաւօտը, երբ դու հեռացար խրճիթից և խոստացար, թէ երեկոյեան կը վերադառնաս, մենք անհամբեր սպասում էինք քեզ: Արևը մտաւ, օրը մթնեց, բայց դու չը վերադարձար: Ամբողջ գիշերը չը քնեցինք, հէնց նստած սպասում էինք քեզ: Հայրդ մեր բոլորից աւելի անհանգիստ էր: Միւս առաւօտը մինչև ճաշ դարձեալ սպասում էինք քեզ: Յետոյ հայրդ ինձ իր հետ առնելով, գնացինք այն «ատաղձների» բնակարանի մօտ, տեսանք՝ նրանց տնակը այրված էր, ոչ ոք չը կար այնտեղ: Երբ յետ դարձանք, անտառում պատահեց մեզ մի խոզարած. նա պատմեց, թէ ինչ էր պատահել: Երբ հայրդ լսեց նրա պատմութիւնը, խնդրեց թուլացաւ և ցած ընկաւ: Ես և խոզա-

րածը հազիւ կարողացանք նրան ոտի բերել և հասցրինք մինչև խրճիթը: Նոյն գիշերը նա սաստիկ ջերմի մէջ էր. առաւօտեան նրա մարմինը գոռնդք բոլորովին ուռած: Ես և պառաւը թաղեցինք նրա մարմինը խրճիթից ոչ այնքան հեռու մի ծառի տակ: Յիշում ես այն եղևինը, որ դու մինչև նրա մօտ թոյլ էիր տուել ինձ հեռանալ խրճիթից:

—Յիշում եմ... պատասխանեցի ես բոլորովին սիքևնապար:

—Այնուհետև ես վճռեցի գալ քո հետից և որոնել քեզ: Ես հիմա ամէն տեղ կը գնամ. ես հիմա էլ չեմ վախենում: Պառաւը ինձ չէր ուզում թողնել, ասում էր՝ մնա ինձ մօտ, աչքիս լոյսի նման կը պահեմ քեզ: Նա ինձ շատ էր սիրում. նա քեզ էլ շատ էր սիրում, այնքան լաց էլաւ որ...

—Ո՞ւնչու չը մնացիր նրա մօտ:

—Քեզ ինչպէս թողնէի...

—Ես մի օր կը վերադառնայի, քեզ գարձեալ կը գտնէի... մենք գարձեալ միասին կը լինէինք...

—Չէ, ես գիտեմ, ես բոլորը գիտեմ... այնտեղից, ուր քեզ պիտի ուղարկեն, մարդիկ էլ չեն վերադառնում...

—Այդ դու որտեղից գիտես:

—Ես երէկ դատարանի դռանը կանգնած էի. ինձ չը թողնեին, որ ներս մտնէի, այնտեղ էլ

ասում էին, թէ ես խելագար աղջիկ եմ... Ծըրտում հարցրի, ինձ պատմեցին բոլորը...

Ես չը պիտի ինչ անել նրա հետ, ինչ խորհուրդ տալ. ես չունէի այս աշխարհում մի բարեկամ անգամ, որի պաշտպանութեանը յանձնէի այդ անբախտ աղջկան: Ես առանց երկար մտածելու կրկին ասելի նրան.

—Դու գարձեալ դնա պատաւի մօտ, այնտեղ ապահով ինձ: Նա բարի կին է. նա կը պահէ քեզ: Ո՞վ է իմանում, գուցէ Աստուած կը յաջողի, մի օր կը վերադառնամ քեզ մօտ...

—Ես քեզանից չեմ բաժանվի:

—Դու իսօ պիտես, թէ ինձ պատեղ պիտի ուղարկին:

—Գիտեմ: Ես էլ կը գամ քեզ հետ:

Սոյն միջոցին բանակի վերակացուներից մէկը ներս մտաւ, հրամայեց Ղէնէէին հետանալ:

—Ես այստեղ պէտք է մնամ:

—Այստեղ հիւանդոց չէ, օրիորդ, պատասխանեց վերակացուն դառն ժպիտով:

—Ես դրան մնամ չեմ թողնի:

—Բաւական է, որքան միասին էք եղել...

—Մի ատրուց ասէ չէ, որ մենք ճանաչում ենք միմեանց:

—Յաւում եմ, որ այդքան կարճատև է եղել ձեր սէրը... Այստ առնեսին, պէտք է հետանաք, նազելի օրիորդ:

Լսելով վերակացուի վերջին հպնոտիքանը, աբիւնս բորբոքվեցաւ:

—Եթէ դու կը չարաշահես այդպէս վերաբերել մի պատուաւոր աղջկայ, ես քո գլուխը կը ջարդեմ:

—Մտածիր, թէ որտեղ ես գտնվում... այստեղ քո իշխանած անասունները չեն... պատասխանեց նա սառնասիրտ:

—Պարոն վերակացու, մէջ մտաւ Ղէնէէն,—միթէ դու քոյր չունես, մայր չունես, միթէ դու չես հասկանում կնոջ սիրտը: Ի՞նչու ես տանջում ինձ: Իմ Մարդը վատ մարդ չէ. նա իմ կեանքը ազատեց մի եղեռնագործի ձեռքից... այնօրից ես սիրում եմ նրան...

—Ես այդ հասկանում եմ... պատասխանեց վերակացուն ամբի կոպտութեամբ:—Բայց բանակի մէջ չեն սիրում... Ձեզ մեզ տանելն մանկ այստեղ պարոն բժշկապետի խնդրելով: Բաւական է, որքան տեսնվեցաք, որքան խօսեցիք: Աւում են ձեզ, որ հետանաք այստեղից, եթէ չը կամիք, որ ձեզ դուրս քարշէին:

Ղէնէէն ամբի կամակորութեամբ:

—Ես կը մնամ այս բանտում:

—Ես ձեզ խրատ կը տայի, որ գժտանքը մնայիք:

—Անպիտան... բոլորը այդպէս են խօսում... ես ինչով եմ գիժ... բացականչեց Ղէնէէն արտասուքը սրբելով:

Վերակացուն ուշադրութիւն չը դարձրեց, կանչեց մի պինուոր, նրան դուրս քաշելին և բանտի դռները կրկին կողպվեցան։ Ես մնացի մենակ։ Մի քանի րոպէ լսելի էր լինում նրա ճիչը, աղաղակը, և չուտով նրա ձայնը անհետացաւ բանտի խուլ-գերեզմանական լռութեան մէջ։

Սարսափելի դրութիւն։ Ջո սիրած էակին հալածում են, վիրաւորում են, և դու սառն աչքով պիտի նայես այդ անիրաւութեան վրա և լռես։ Մինչ այդ է նշանակութիւնը այն խօսքերի, որ կարդացին ինձ դատարանում. «զրկել ամեն իրաւունքներից»...

Ինչ պէտք է լինի խեղճ աղջկայ վերջը,—ահա այդ էր ինձ տանջող միտքը, երբ դարձեալ մնացի մենակ, երբ սպանուածի նման տարածվեցայ իմ կալարանի խոնաւ յատակի վրա։



Ը.

ԳԱՆԱՀԱՐՈՒԹԻՆ

Լինում են այնպիսի րոպէներ, որ մարդ իրան բոլորովին մոռանում է։ Ես մինչ այն աստիճան զբաղված էի Նէնէի վիճակով, որ ամենևին չէի յիշում, որ մօտենում է այն սարսափելի օրը, երբ ես պէտք է կրկի մահուան տանջանքների առաջին փորձը։—Ինձ, բայց մշտական աքսորից, վճռել էին երկու հարիւր մտրակի հարուածներ։

Այն ժամանակ դեռ սիրում էր այդ օրէնքը, որ դատապարտեալին նախ քան աքսորելը, ենթարկում էին մարմնական դանահարութեան։ Ինչ սոսկալի բան է դահճի մտրակը։ Կարծես թէ, ֆուրիաները առաջին անգամ դժոխքից դուրս գալով, սովորեցրին մարդիկներին այնպէս տանջել իրանց նմաններին։ Ջարդել, խեղաթիւրել, անդամալուծել և ամեն զօրութիւնից զրկել մարմինը մի թշուառականի,—ահա այդ է այն մըտրակի նպատակը, որպէս զի, նրան սպասող դաժան աշխատութիւնները հանգերի մէջ աւելի սպանիչ լինեն։ Եւ այդ բոլորը կատարվում էր չարագործներին ուղղելու նպատակով։

Բայց չարագործները չէին ուզում: Նա տեսնում էի՝ որքան խիստ էր լինում նրանց պատիժը, որքան չարաչար կերպով վիրաւորւում էր նրանց անձնասիրութիւնը, այնքան աւելի յամառ էին դառնում նրանք, այնքան աւելի կամակորւում էին իրանց մոլորութիւնների մէջ: Եւ այդ շատ բնական էր: Ջանգատորը մորակների հարուածքների ներքոյ, վոխանակ ղջալու, արձակում էր կծու հայհոյանքներ, անէծք և աւելի ոչինչ:

Կեանքի մէջ, իմ անձնական փորձերով, ես հասայ այն համոզմունքին, որ ամենավայրենի գազանը անգամ ազնուանում է, ընտելանում է աւելի խաղաղ կեանքի այն ժամանակ միայն, երբ նրան սիրում ես, փայփայում ես, երբ նրան չես վիրաւորում:

Իմ ընկերների մասին նոյնպէս վճռել էին աքսոր և դատապարտութիւն: Բայց նրանց պատիժը աւելի թեթեւ էր քան թէ իմը, երևի նրա համար, որ նրանք ամէն ինչ ուրացան, ճշմարտապէս չը խոստովանելեան իրանց մեղքերը, բայց ես ոչինչ չը ծածկեցի, բոլորը յայտնեցի:

Այդ Նախաանակ քաւար Պետրոսը. նա աւելի փորձված մարդ էր քան թէ ես, և ղեկավարում էր ինձ՝ ուրանալ, ոչինչ չը խոստովանվել, որովհետև դրանով աւելի կը հեշտացնէի դատաւորների գործը, իմ մասին սատիկ վճիռ տալու: Այնպէս էլ եղաւ: Բայց իմ խիղճը հանգիստ էր, որ

գոնէ իմ դատապարտութեան յանցնելուս ոտս չը խօսեցի:

Վերջապէս հասաւ սարսափելի ճգնաժամը:

Քաղաքի բարձրութիւնը խռովելով դիմում էր դէպի պատժարանը: Նրանք չատապում էին հանդիսաւոր լինելու մի տոկալի գործողութեան: Ջարմանալի հետաքրքրութիւն ունի ամբոխը. նրան միօրինակ դուրեկան թիւն է պատճառում թէ քաղցր երաժշտութեան ներդաշնակութիւնը, և թէ դատապարտեալի դառն հառաչանքները, դահճի զանահարութեան ներքոյ:

Այժմ ինչ պատրաստ էր տոկալի հանդէսը սկսելու համար:

Իմ ընկերները բաւական քաջութեամբ տարան իրանց փորձութիւնը, կարծես թէ, նրանց համար չատ տաժանական լիներ այդ: Ես միևչև յիսունները բոլոր զարկը անցայ առանց մի ձայն հանելու, առանց իմ դէմքն անգամ այլայլելու: Մի այսպիսի արհամարհական վերաբերմունքը իմ կողմից, վիրաւորեց դահիճների անձնասիրութիւնը, զրկեց նրանց բարիութիւնը, և նրանք խստացրին հարուածների սաստկութիւնը: Նոյն րոպէում նրանց անգութ երևոյթը, կարծես, տաւմ լինէին ինձ. «մենք ձեռամբ ենք, որ ցաւեցնենք քեզ, երբ դու ցաւ չես զգում, զրանով վիրաւորում ես մեր կատարութիւնը»:

Բազմութիւնը վայրենի ոգեւորութեամբ նայում էր: Ջանկալի նրանց ուշադրութիւնը գարձաւ մի այլ ա-

ռարկայի վրա: Ամբոխի միջից լսելի էր լինում մի ցասալի հառաչանք. «Մարդիկ, ինչու էք կանգնած... միթե դուք Աստուած չունէք... սպանում են.. սպանում են... աղաղակեցէք... աղաչում եմ... աղաղակեցէք... Մարդ, սիրելիս... ախ, սպանում են... մարդիկ, դուք չէք անհանում... դուք չէք լսում... սպանում են... աղաղակեցէք... Ինչու են սպանում... Նա ասպակ չէ... Նա բարի մարդ է... Նա ինձ սիրում էր... Նա իմ կեանքը ազատեց... Մարդիկ, ինչու չէք լսում... Ա՛խ, Աստուած... չէն լսում... ամենքը խլացել են...

Այն սարսափելի րոպէում, երբ միևնոյն միսի ետևից յաջորդաբար չառաչում էին մարակների զարկերը, երբ արեան կաթիլները զուրս էին ցայտում իմ մերկ մարմնից,—այդ մահուան տագնապի րոպէում իմ ականջներին հասնում էր զժբախտ աղջկայ ձայնը... Այդ ողբալի ձայնը այնքան միսիթարական էր, որ ես այլ ևս չէի զգում հարուածների սաստկութիւնը: Ես երջանիկ էի, որ այս աշխարհում գոնէ կար մէկը, որ սիրում էր դատապարտեալին, որ գիտէր, թէ նա անմեղ է...

Բայց ամբոխը ծաղրից նրան: Ամէն կողմից լսելի էր լինում. «զա այն խելագար աղջիկն է»...

Թէ ինչով վերջացաւ իմ փորձութիւնը, թէ ինչ դրութեան մէջ ինձ յետ բերեցին պատժարանից, —ես չեմ յիշում, միայն այսքանը գիտեմ, երբ ա-

ռաջին անգամ աչքերս բացարի, ինձ քաղաքի հիւանդանոցի մէջ գտայ: Իմ մահճակալի մօտ կանգնած էր մի բաւական մաքուր հագնված, ակնոցաւոր երիտասարդ, որի խելացի դէմքի իւրաքանչիւր գծերից արտափայլում էր բարութիւն և ազնուութիւն: Նա ժամացոյցը ձեռին բռնած, հաշվում էր իմ երակի զարկը:

—Այժմ լաւ կայ... ձգնաժամը անցած պէտք է համարել... ասաց նա ինքն իրան մի առանձին բաւականութեամբ:

Երիտասարդ բժիշկ էր. նա մի քանի պատուէրներ տուեց իր օգնականին և հեռացաւ:

Մի քանի չաթաթից յետոյ բժիշկը գտաւ ինձ աւելի առողջ: Մարակների հարուածներից պիշատված մարմնիս վէրքերը այնքան բարւոքվել էին, որ ես կարողանում էի առանց չատ յաւ զգալու մի կողմից միսի վրա չուռ գալ: Իսկ ջերմը գեռ չէր անցել: Իմ երևակայութիւնը թէև արթուն էր, բայց գոնէում էր գեռ գրգռված դրութեան մէջ:

Գիտեցիկ բան է ուղեղի այդ դրութիւնը: Կանաքի բոլոր լաւ և վատ տպաւորութիւնները, որոնք նրա ծալքերի վրա մնացել էին անջնջելի, բայց որոնք բոլորովին չնչված, անհետացած էին համարեա,—յանկարծ կենդանանում են, կերպարանադործվում են և երևան են հանում վաղեմի մոռացված պատկերները...

Ես ինձ տեսնում էի իմ հայրենիքում, այն հա-

տակում, երբ դեռ պատանի էի, մի անմեղ և բախտաւոր պատանի, որի օրերը անցնում էին անհոգ զառարկութեամբ: Բախտաւոր էի նրա համար, որ դեռ միամիտ էի, դեռ չէի հասկանում աշխարհի չարն ու բարին: Մայրս խրատում էր ինձ, ցոյց էր տալիս կեանքի ամէլի ուղիղ ճանապարհը: Բարեսիրտ մայր, և այդ րոպէին տեսնում եմ քո միշտ արտասուքով լի աչքերը, քո միշտ տխուր դէմքը, որ երբէք չէր ժպտում: Աղքատութիւնից սպանված, ամուսնից զրկված, ընտանիքի հոգսերի տակ ճնշված, այդ դժբախտ կինը զարճնել չէր մոռանում իր զաւակների օրինաւոր դաստիարակութիւնը:

Ձեռոյ տեսնում էի ինձ վարպետիս դարբնոցում: Զառարկաւոր պատանին սոխորում է աշխատանքի: Գործը յոգնեցուցիչ է դառնում իմ ձեռքում: Աշխատանքը, երեսի քրտինքը օրըստօրէ ամէլի կազդուրում են իմ ջղերը, ամէլի բորբոքում են իմ եռանդը: Սիրտս ուրախ է, խիղճս հանգիստ է, որովհետև ես կարողանում եմ իմ արդար վաստակով օգնել ոչ միայն ինձ, այլ և այն անձինքներին, որոնք իմ օգնութեանը կարօտ էին: Մայրս, քոյրերս ապրում են իմ ձեռքի արդիւնքով:

Այժմեղ, այն զարդնոցի մէջ և ան փոչու մէջ ծագում է ինձ երանութեան առաւօտը... իր բոլոր վարդակարմիր դեղեցկութեամբ երևան է դալիս սիրոյ արեգակը..., նա տիրում է իմ հոգու

մէջ լոյս և ջերմութիւն... Մի նոպէլի օրիորդ հանդիսում է իմ սրտին իր կախարդական մասը, և իսկոյն նրա մէջ բոցավառվում են սիրոյ սրբազան կայծերը... Այդ ժամանակ երջանիկ էի ես, երջանիկ էին, որովհետև գործում էի, աշխատում էի և սիրում էի...

Ձանկարծ երջանկութեան արեգակը սկսում է խաւարել... չար դևը բարեպաշտ մարդու կերպարանքով մօտենում է ինձ, խելքից հանում է, մոլորեցնում է... ես չինում եմ աղետալի բանալին... այդ բանալին րոպէ է անում իմ առջև կորստեան ճանապարհը... Վարպետիս դարբնոցում կատարվում է սարսափելի բարբարոսութիւնը... ես փախստական եմ լինում...

Մի խումբ գլխից ձեռք վեր առած պատանիներ, թաղված անտառի անյայտութեան մէջ, ընդունում են ինձ իրանց զաղտնի ընկերութեան մէջ: Այստեղ, մարդկային բնակութիւնից հեռու, ծառերի և թփուրների ամայութեան մէջ, ես առաջին անգամ սկսում եմ ճանաչել և սիրել հրաշալի բնութիւնը: Առաջին անգամ հրապուրում է ինձ սահակի քաղցրիկ ձայնը, առաջին անգամ ծաղիկները գրաւում են ինձ իրանց անմեղ-ողջախոհական գեղեցկութեամբ: Իմ մանկահասակ ընկերները ուրախ և մշտաղուարթ հասարակութիւնը, նրանց անկեղծ բարեկամութիւնը, նրանց անճնաշնուէր մտերմութիւնը, առժամանակ հանգստացնում են սրտիս ցաւերը, առժամանակ մոռանալ

են տալիս ինձ այն սարսափելի դժբախտությունը, որին ենթարկված էի ես, և իմ պատճառով չարաչարը... Սիրելի ընկերներ, ծրտեղ է այժմ դուք, երանի թէ, բաժանված չը լինեի ձեզանից, երանի թէ, միշտ ձեր հասարակութեան մէջ մնայի: Դուք այնքան բարի էիք և ազնիւ, ես ցաւում եմ, որ կորցրի ձեզ, որ զրկվեցայ ձեզանից...

Մօրս վիճակը, վարպետիս թշուառութիւնը, ազգականներիս հալածանքը, որոնք բոլորը չարչարվում էին տեղային զանազան օրինազանցութիւնների պատճառով, բաժանեցին ինձ իմ մանկահասակ ընկերների հասարակութիւնից: Ես վերադարձայ դէպի իմ հայրենական օջախը, օգնելու նրանց, որոնք իմ պատճառով հալածանքի էին ենթարկված ..

Այդ ժամանակ կրկին դուռս է գալիս իմ առջև չար դէմը բարեպաշտ մարդու կերպարանքով, առաջարկում է ինձ իր հավանատրութեան ձեռքը: Ես կրկին խաբվում եմ... կրկին մոլորութեան մէջ եմ ընկնում...

Նա համոզում է ինձ, թէ հայրենիքի համար ես մի խոշոր արդի էի դարձել, թէ պէտք է թողնել հայրենիքը և օտար երկիրներում բախտ որոնել: Նա խոստանում է և առաջնորդել ինձ...

Մայրս, սխալ հանգամանքներից ստիպված, յանձնում է ինձ իմ նենգաւոր Մեհեաօրի ձեռքը: Ես թողնում եմ իմ հայրենի երկիրը, որը այնքան լաւ և վառ յիշատակներով կապված էր իմ սըր-

տի և հոգու հետ: Ձեռք եմ առնում պանդխտութեան դառնութիւնը: Այդ սխալը, ցաւալի զգացմունքներով լի անջատման րոպէում, որպէս մխիթարիչ հրեշտակ, յայտնվում է իմ սիրոյ առարկան —Սառան: Նա իր կուսական համբոյրներով կընքում է մեր ուխտը, խոստանում է մինչև իմ վերադարձը սիրել և սպասել ինձ...

Ազգութիւնը մղում է ինձ հետս և հետս, դէպի անծանօթ երկիրներ: Ինձ, բոլորովին անփորձ և միամիտ պատանիիս, առաջնորդում է մի հոյակապ մարդ, մի վիթխարի չարագործ, եփված և թրծված կեանքի քաղցր ամէն փորձութիւնների մէջ: Իմ բնական ձիրքերով հարստացած ընդհանուրութիւնը խիստ պաղարիւր հող է դառնում իմ առաջնորդի ձեռքում: Շուտով նրա ցանքը ընծայում է առատ և արդիւնաւոր հունձք, մի հունձք, ոռոգված բազմաթիւ զոհերի արիւնով և արտասուքով... Բոլորովին անմեղ և բարեսիրտ պատանին, զոհն հանգամանքների չարհիւ, վերջապէս պառնում է մի սարսափելի եղեռնագործ...

Ես ես տեսնում էի ինձ, որպէս մի քարաժայռ, դուռս կտրված անգնդին լեռան բարձրութիւնից, գլորվում է, գլորվում է դէպի ցած, դէպի անդունդը... Յանկարծ մթին անյայտութիւնից երևան են գալիս երկու ձեռքեր, աշխատում են կանգնեցնել գլորման արագ և ուժգին ընթացքը... բայց իզուր, ես արդէն հասած էի մինչև անդունդի յատակը...

Այդ հօր փրկարար ձեռքն էր, որ աչխատում էր ազատել ընկած որդուն... այդ Նէնէի կախարդական ձեռքն էր, որ աչխատում էր սովորեցնել նրան սիրել բարին և գեղեցիկը...

Իմ կորստեան խորին անդունդի մէջ յայտնվում է մխիթարական ոգին,—մի անարգված և հալածված ցեղի անմեղ զաւակը: Սիրոյ հրեղէն կայծակը փայլատակում է իմ սրտի խաւարի մէջ, և կարծես, երկնային կրակով զաւում, մաքրվում են իմ վառ կրքերը սանձ ախտերից: Ես սիրում եմ դարձեալ սիրել... սիրել այն ժամանակ, երբ իմ ոտներին կրում էի գառապարտական ծանր չղխաները, երբ իմ ճակատի վրա դրած էր ազատական սև կնիքը...

Ո՛վ սէր, ով դու երկնային զօրութիւն, որ ծաւալում ես թշուառականի հոգում կեանք և խաղաղութիւն, որ ամրացնում ես նրա կամքը, և լեցնում ես նրա սիրտը պայծառ յոյսերով,—և այնուհետև բանտի խաւարը, երկաթի կապանքների ծանրութիւնը այլ ևս զգալի չէ լինում նրան...

Աչխարհից կտրված, որպէս մի անպէտք մարմին ձգված եմ այդ գերեզմանի մէջ: Ինձ չէ տաքցնում արևը իր ջերմութիւնով. ինձ համար փակված է արտաքին կեանքը: Բայց մի արարած, անմարմին ուրուականի պէս, հետևում է ինձ... և այս րոպէիս նա կանգնած է իմ առջև իր գեղեցիկ արտասուալի աչքերով... Ա՛խ, որքան մխիթարական է այդ արտասուքը... նա թափվում է մի

թշուառականի համար, որին ամենքը ատում են...

«Նէնէ, նազելի Նէնէ, հետացիր ինձանից, մի մօտենար ինձ... իմ չունչը կարող է թունաւորել քեզ... մի մօտենար ինձ... ես չեմ կարող պրկել քեզ... իմ ձեռքերը արիւնատ են... Անմեղ երեխայ, ինչ է սոխակում քեզ կապվել մի թշուառականի հետ, որ արժան չէ ոչ քո սիրին և ոչ քո արտասուքին... Գնա, հետացիր, թող տուր ինձ... մեր բոլոր կապերը կտրվեցան այն րոպէից, երբ կարգային իմ գառապարտութեան վճիռը»...

«Գնա, ով դու բնութեան ազատ զաւակ, բայց աչխարհում քեզ է քո ատելին... գնա, թափառիր երկրէ երկիր, գաչակիր մարդիկների բախտը, քոյր նրանց չարն ու բարին, նրանք զուրկ հայ կը տան քեզ»...

Մինչ ես այդ զառանցութիւնների մէջ էի, մի ձեռք դիպաւ ճակատիս: Աչքերս բաց արի, տեսայ՝ մահճակալիս մօտ կանգնած էր ակնոցաւոր երիտասարդը: Ես ճանաչեցի, դա բժիչկն էր: Ետուում էր, նա երկար լսում էր իմ բացականչութիւնները:

—Ինչ եղաւ նա... հարցրի ես, գեռ ոչ բոլորովին սթափվելով իմ խռովութիւնից:

—Ո՛վ, հարցրեց երիտասարդը ժպտալով:

—Նա... այն ապչիկը... Նէնէն... որ հիմա այստեղ էր...

—Չա, խնամում եմ... պատասխանեց նա խոր-

հրդեհոր ձայնով։—Նա գնաց, խոստացաւ, որ շուտով կը վերադառնայ…

—Այո, նա կը վերադառնայ, նա ինձ չի թողնի… կրկնեցի ես ուրախանալով։

Երիտասարդ բժիշկը, որ մինչև այժմ ոտքի վրա էր, նստեց իմ մահճակալի մօտ և կարեկցաբար նայում էր իմ վրա։ Երբ նկատեց, որ ես փոքր ինչ հանդարտացայ, հարցրեց.

—Ո՞վ է այն աղջիկը։

Ես պատմեցի, թէ նա որբ գիպսանոցի է, պատմեցի, թէ ինչպէս ընկած էր նա չարագործների ձեռքը, որոնք վճռել էին սպանել նրան, պատմեցի, թէ որպէս ինձ հանդիպեց նա անտառում, որպէս ազատեցի նրա կեանքը և այնուհետև կապվեցաւ ինձ հետ։

Երիտասարդ բժիշկը հետաքրքրութեամբ լսում էր։ Ես նկատեցի նրա դէմքի վրա և ցաւակցութեան նշաններ։ Մխիթարվեցայ, տեսնելով, որ աշխարհում կան մարդիկ, որոնց մէջ չէն մնացած ամենևս զգացմունքները, որոնք կարող են խղճալ անբախտութեան վրա։

Բժիշկը, այդ մարմնաւոր խոստովանահայրը, միակ մարդն է, որ նայում է պատասխանելի վրա, որպէս մարդու վրա։ Նա միակ մարդն է, որի հետ կարելի է անկեղծ կերպով խօսել։ Այդ պատճառով ես պատմեցի նրան բոլորը, ինչ որ ծանրացած էր իմ սրտի վրա, ինչ որ տանջում էր ինձ։ Պատմեցի այն երազը, որ

մի քանի րոպէ առաջ պատկերանում էր ինձ, և ներկայացնում էր իմ կեանքի ճիշտ նկարագիրը, իր բոլոր պայծառ և մռայլ գոյներով։ Պատմեցի թէ որպէս անդիտակցաբար, փոքր առ փոքր չեզվելով ուղիղ ճանապարհից, անմեղութիւնից վերջապէս ընկայ անբարոյականութեան մէջ։ Նա ղլուխը խոնարհեցրած լսում էր։ Յետոյ իմ խօսքը կտրեց, ասելով.

—Այդ բոլորը ես գիտեմ…

—Ո՞րտեղից գիտէք։

—Նայեցէք իմ վրա, ծանօթ է ձեզ իմ դէմքը։

—Կարծես մի տեղում տեսած լինեմ ձեզ։

—Գննիչի մօտ։ Ես այն օրը ներկայ էի, երբ դատարանում ձեզանից հարցուփորձ էին անում։ Դուք խոստովանեցիք ձեր բոլոր յանցանքները։ Դուք նկարագրեցիք ձեր կեանքի պատմութիւնը սկսած ձեր մանկութիւնից մինչև ձեր կալանաւորութեան րոպէն։ Այդ պատմութիւնը սաստիկ հետաքրքրեց ինձ, որովհետև նրա մէջ գտնում էի այն բոլոր պատճառները, որոնք ստիպում են մարդուն հակառակ իր կամքի յանցաւոր լինել։

Բժշկի կարեկցութիւնը ոչ միայն շատ մխիթարական էր ինձ համար, այլ նա առիթ տուեց իմ վստահութեանը դէպի այդ ազնիւ երիտասարդը, ես հարցրի.

—Ուղիղն ասացէք, պարոն բժշկապետ, իրա՞ւ, նա խոստացաւ, որ շուտով կը վերադառնայ։

—Ո՞վ։—Հա… դուք, երևի, դարձեալ այն աղ-

ջկայ մասին է.ք հարցնում, մասնավոր նա ընդհանուր խոսակցությունը Նէնէի մասին:

—Այո, այն աղջկայ մասին:

—Դուք ձեր երազների մէջ է.ք տեսել նրան, նա այստեղ չէ եղել:

Ես հասկացայ, որ զրուցած երեսակայությունը խաբել էր ինձ: Նայեցայ չուրջս, կրկին նկատվեցան սխալ պատկերները իմ պատժական կեանքի և բանտային հիւանդանոցի մռայլոտ կամարները յիշեցրին ինձ իմ դրությունը...

—Ուրեմն ես բոլորովին զրկված եմ նրանից... էլ չեմ տեսնի նրան...

—Զրկված չէ.ք լինի... յոյս ունեցէ.ք, որ մի ժամանակ կը տեսնէ.ք նրան... պատասխանեց երիտասարդը խորհրդաւոր ձայնով:

«Մի ժամանակ»... արդեօք երկար պիտի տևէր այդ ժամանակը, մտածելի ևս:

—Միանգամ նրան թոյլ տալին մտնելու բանտը, ինձ ևօա, ասելի ևս:

—Գիտեմ, այդ ևս խնդրելի բանտապետից, որ թոյլ տան:

Նէնէն ինձ ասել էր, որ մի ակնոցաւոր երիտասարդ միջնորդել նրա համար և թոյլտուքիւն ստացաւ բանտը մտնելու: Ո՞վ կը մտածէր, որ այդ բարեսիրտ երիտասարդը լինէր նա:

Նրա բարեսրտութիւնը մի այնպիսի համակրութիւն ազդեց իմ մէջ, մինչ ևս վատահացայ ասել նրան.

—Ես գիտեմ, պարոն բժշկապետ, որ յանիտեան զրկված եմ նրանից: Բայց դուք այնքան բարի է.ք և ազնիւ, որ կը դիմաք մի որե, անտէր, անօգնական աղջկայ վրա, որը այս աշխարհում ոչ մի խնամատար չունի: Ամեն տեղ հալածում են նրան, ամեն մարդ խելագար է համարում նրան, և ոչ ոք չէ խղճում անպահպան...

—Նա խելագար չէ, ընդհիջեց բժիշկը:

—Աղաչում եմ, խղճացէ.ք նրա վրա, ընդունեցէ.ք ձեր պաշտպանութեան ներքոյ, նա շատ լաւ աղջիկ է:

—Ես առանց ձեր խնդրելու ևս այդ պիտի անեմ, պատասխանեց երիտասարդը և վերկացաւ:

Ես պատրաստվում էի բռնել նրա ձեռքը, յայտնել իմ անչափ, անսահման շնորհակալութիւնը, բայց նա ուշադրութիւն չը դարձրեց և շտապով հեռացաւ:

Թ.

Ա Ֆ Ս Ո Ր

Անցան մի քանի ամիսներ ևս: Մենք բոլորովին առողջ էինք, առողջ այն չափով, որ կարող էինք դիմանալ ճանապարհի ծանրութիւնը և ուղևորվել դէպի հեռաւոր հիւսիս:

Առաւօտ էր: Մի խումբ զառապարաւևների հետ, չրջապատված վինուորներով, մեզ դուրս էին տանում քաղաքից:

Այդ սխոր տեսարանը չատ նման էր գաղթների յուղարկաւորութեանը դէպի գերեզմանների լռութիւնը: Ծնողների, քոյրերի, եղբայրների լացը, նրանց հառաչանքը միախառնվում էր իրանց կորցրած բարեկամների չղթաների հնչիւնների հետ:

Այ, սխոր տեսարան էր և աւելի սխոր քան թէ մահը: Այդ դէպքում մարդը կենդանի է մեռնում, և դեռ կենդանի կտրվում են նրա յարաբերութիւնները աշխարհի և բարեկամների հետ: Բայց նրա զգայմունքները դեռ մեռած չեն. նրա վրա ազդում են չրջապատող երևոյթները: Իսկ դաղաղի մէջ դրած մարմինը աւելի բախտաւոր է.

նա չէ զգում, չէ հասկանում, թէ ինչ է կորցնում: Մի փոս և սառ հողը պարզևում են նրան յաւիտենական խաղաղութիւն:

Աքսոր, ինչ սոսկալի միտք է բովանդակում իր մէջ այդ բառը: Հազարաւոր մղոններ չափել չղթայակապ ոտներով, պատերազմել դառնաչունչ մրրիկների դէմ, որոնք հակայ եղևիններ խլում են արմատից, պատերազմել ցրտի հետ, որի սաստկութիւնից ահագին ժայռերը ճաքճքում են, պատառ-պատառ են լինում,—մաշվել, ուժասպառ լինել հանքերում տաժանական աշխատութիւններով,—այդ բոլորը այնպիսի տանջանքներ են, որոնց մարդը, միայն դառապարտված մարդը կարող է դիմանալ:

Բայց մի բան, որին չէ դիմանում նա, որի առջև փշրվում են նրա բոլոր զօրութիւնները,—դա է սիրած աղջկայ արտասուքը...

Ահա դարձեալ յայտնվեցաւ նա... Մազերը խառնված, լի կատաղի վրդովմունքով, որպէս մի խելագար հրեշտակ յայտնվեցաւ նա...: Ա՛խ, որքան սարսափելի է նրա զայրացած դէմքը...

Նա աշխատում է մօտենալ ինձ... վինուորները հետացնում են... նա դարձեալ առաջ է նետվում... նա չէ վախենում սուիններից... Ահա բռնեցին նրան... նա կրկին դուրս պրծաւ նրանց ձեռքից... վազում է դէպի ինձ... արգելում են... Ահա նա խլեց վինուորներից մէկի հրացանը... մուխը բարձրացաւ... հրացանը զոռաց... Բայց

զարկեցին նրան... նա ընկա... էլ չէ վերկենում...

«Վա՛յ այն ցնորված աղջիկն է»... լսելի եղաւ ամեն կողմից:

Իմ աչքերի առջև մթնեց, ես այլ ևս ոչինչ տեսնել չը կարողացայ, միայն ղողամ էի հրացանների կոթերի հարուածը, որով քչում էին ինձ դէպի իմ զառամյալ տատիկի օթևանը...

ԵՐԱՆ ԳՐԵՑԻՆ ՄԵՌԱԾՆԵՐԻ ԹԻՒՈՒՄ

Աքսորականների խումբը, որոնց հետ ես ուղևորվեցայ, բաղկացած էր տասն և երեք հոգուց, նրանց մէջն էին և իմ ընկերները:

Մինչև առաջին կայանը հասնելը, ես մինչ այն աստիճան խռովված էի, որ ամենևին չը նկատեցի, թէ մեր ընկերներից մեկը պակաս էր, այն ես մեր պլխաւորը—քաւոր Պետրոսը:

Մենք հասանք կայանը, երբ դեռ նոր էր լուսնում արևը: Այդ մի արքունի չինովնիկ էր փոստային կայարանի մօտ, մարդկային բնակավայրից հեռու, առանձնացած անապատի մէջ: Այնտեղից դուրս եկաւ մի տղոր աստիճանաւոր և ընդունեց մեզ: Մենք այժմ մարդ լինելուց դարձել էինք իրեր, նշանակված համարներով: Նայեցին մեր համարներին, տուզեցին թուերը, և ապա ածեցին մի նեղ նկուղի մէջ:

Գիշերը մեզ բաժանեցին մի-մի կտոր սև հաց և խմելու ջուր տուեցին: Ընկերներս սկսեցին ընթրիք անել, բայց ես ոչինչ ուտել չը կարողացայ: Դա այն ախտաւոր և ծանր դիչերներից մեկն

էր, երբ ամեն յոյս կորած էր, երբ ամեն ինչ վերջացած էր և մեզ, ամեն մեկիս, յայտնի էր իր թշուառ վիճակը:

Շուտով դատապարտեալներից ոմանք սկսեցին նիրհել, ոմանք տարածվեցան մերկ յատակի վրա, փորձում էին քնել, ոմանք վեռ նստած, խորին ինքնամոռացութեան մէջ մտածում էին: Նկուղի մէջ տիրում էր վերեզմանական լռութիւն: Միայն իւզային ճրագը ճրթրթալով մի առանձին չարագուշակ ձայն էր արձակում և իր շուրջը տարածում էր աղօտ լուսաւորութիւն: Սենեակի օդը ապտրված բորբոսային խոնաւութեամբ, անկարելի էր շնչել: Ճրագն անդամ դժուարանում էր վառվել նրա մէջ: Գրասեղանի մօտ նստած էր պահապան գինուորը և մենք լսում էինք նրա քայլերի ձայները:

Իմ ընկերները այժմ հաշտվել էին ինձ հետ: Նրանց կասկածը թէ իմ և թէ Նէնէի վերաբերութեամբ բոլորովին փարատված էր: Որովհետև քննութիւնների ժամանակ գործերից երևաց, որ ոչ ես և ոչ Նէնէն չէինք մատնել նրանց, որպէս կարծում էին, այլ մատնել էր մի հրէայ, որ նրանց վարագուրիչն էր: Հրէան նոյնպէս դատապարտութեան ենթարկվեցաւ:

Բայց ինձ պրաւել էր այն միտքը, թէ ո՞րտեղ մնաց քաւոր Պետրոսը, ո՞ր կորաւ այդ սատանան: Այդ միջոցին մօտեցաւ ինձ ընկերներիցս մեկը, որը հաւասկիից էր ինձ հետ: Այդ երի-

տասարդը յայտնի էր մեր մէջ իր դիւրեկան և ուրախ բնաւորութեամբ: Նա նստեց ինձ մօտ:

—Ո՞ւր մնաց քաւոր Պետրոսը, հարցրի նրանից:

—Նրան պրեցին մեռածների թուում... պատասխանեց նա:

—Ի՞նչպէս:

—Այնպէս:

—Ես ոչինչ չեմ հասկանում:

Երիտասարդը սկսեց ծիծաղել իմ միամտութեան վրա:—Գանահարութիւնից յետոյ, պատմեց նա, քաւոր Պետրոսը, ինչպէս մեզանից ամեն մեկը, բանտի հիւանդանոցը տարվեցաւ: Այստեղ նա գիտեմէք սկսեց երկարաձգել իր հիւանդութիւնը, մինչև առիթ ունեցաւ ծանօթանալու բանտապահի հետ: Շուտով կարողացաւ նա չօշափել այդ մարդու թոյլ կողմերը, և մանաւանդ մի դէպք հեշտացրեց նրան օգտւել քաղել նրա թոյլ կողմերից: Բանտապահը ծախսել էր արքունի փողեր և այդ պատճառով ոչ միայն դատի պիտի ենթարկվէր, այլ կը կորցնէր և իր պաշտօնը, եթէ մի տեղից փողի պակասը չը լրացնէր: Քաւոր Պետրոսը հասկանում է նրա անել դրութիւնը և մի օր ասում է նրան.—«Պարոն բանտապահ, ես ցանկանում եմ մի փոքրիկ ծառայութիւն անել ձեզ:»

—«Ի՞նչ ծառայութիւն, հարցնում է բանտապահը:—«Դուք, կարծեմ, փողի դժուարութեան մէջ էք, ես կարող եմ օգնել ձեզ»:

—Այս տեսակ սիրախօսութիւններ կալանաւոր-

նների և բանտապահի մէջ այնքան ռոմօրական են, որ վերջինս ոչ միայն չէ վիրաւորւում, այլ շատ հետաքրքրւում է, թէ քաւոր Պետրոսը որքանով կարող է օգնել իրան։—«Ո՞րքան է ձեզ հարկաւոր, հարցնում է քաւոր Պետրոսը։—«Երկու հազար րուբլ, պատասխանում է բանտապահը։ Քաւոր Պետրոսը խոստանում է վճարել նրան այդ դումարը։

—«Ի՞նչով կարող եմ երախտամտութիւն ձեր այդ օգնութեան համար, հարցնում է բանտապահը։

—«Ինձ ազատելով բանտից, պատասխանում է քաւոր Պետրոսը։

—«Ձեզ համար վճռված է ցմահ աքսոր։

—«Այդ ես գիտեմ։

—«Ձեզ կը պահանջեն ինձանից։

—«Այդ էլ գիտեմ։

—«Ի՞նչ կարող եմ պատասխանել։

—«Ձեր պատասխանը ես մտածել եմ, մի շատ հասարակ բան է։

—«Ո՞րպէս։

—«Ինձ կը գրէք մեռածների ցուցակի մէջ, կասէք՝ հիւանդանոցում մեռաւ, տարան թաղեցին։

—«Դրա համար զանազան պաշտօնական ձեևեր են պահանջվում։

—«Մատեաններում հեշտ է շինել այդ ձևերը։ Միթէ սակաւ մարդիկ անհետանում են հիւանդանոցներում, և նրանց մասին բնաւ հարցու-

փորձ չէ լինում։ «Մեռաւ»... և դրանով վերջանում է ամեն բան։

—«Այսու ամենայնիւ, մի դիակ պէտք է դնել ձեր տեղը։

—«Հիւանդանոցի մատանի մէջ անտէր դիակներ իսօ շատ կան, ընտրեցէք նրանցից մէկը։

Երիտասարդի պատմութիւնը խիստ հետաքրքրական էր ինձ համար։ Իրաւ, շատերը կորչում էին այդ հիմնարկութեան մէջ։ Փոռածներն դիակները չէին արժանանում մինչև անգամ թաղման. նրանց կորատում էին, այլանդակում էին և ձգում էին մեծ գետի մէջ, որ հոսում էր հիւանդանոցի մօտով։ Բանտը և հիւանդանոցը մի և նոյն շինութեան մէջ էին։

Գատաստանական վերանորոգութիւններից առաջ սարսափելի գեղծումներ էին կատարվում բանտերում, և շատ դժուարանալի չէր, որ քաւոր Պետրոսի նման մի մարդ կարողացել էր այդ խորամանկութեամբ գոբս պռծնել բանտից։ Իմ հիւրասարդ ընկերը պատմեց ինձ մի սարսիչ դէպք, որ ոչ սակաւ հետաքրքրական էր։

—Տիւռմում են այդ մարդուն, ասաց նա, որ կծկուած, կոլորված, նիհարում է այն անկիւնում, —այդ ազգանունը նոյնպէս գեղծումների մի անմեղ զոհ է։

Ես նայեցայ դէպի այն կողմը, տեսայ, մի նիհար մարդ, դատապարտ դէմքով, խորին թմրութեան մէջ նստած էր անկիւնում։ Գիշերվայ սարս-

բումիւնը փարատելու համար, ես մեծ յօժարութեամբ սկսեցի լսել երիտասարդի տեղեկութիւնները այդ թշուառ աքսորականի մասին: Նա պատէր բաւական ճշտութեամբ նկարել մարդիկների պատկերը:

—Այդ ողորմելի արարածը, ասաց նա,—որին կոչում են Սիզօր Սիզօրիչ, որի հետ ես խիստ մօտ ծանօթացայ, այն տեսակներից է, որոնք ոչ միայն զրկված են մարդկային ընդունակութիւններից, այլ կեանքի տխուր պայմանները խլել են նրանցից և այն սակաւ ընդունակութիւնները, որ ստացել են բնութիւնից: Դա մի առնական տեղի ստոր ծառայող է եղել, դրացրի պաշտօն է կատարել: Ցարատև կեանքը դրամատանի մօտ բոլորովին բթամտացրել է դրան, իսկ արաղի անչափ գործածութիւնը լրացրել է պակասը: Նրան արտաքսել են ծառայութիւնից և չը ձանձրանալու համար սկսել է ամէն անձնատուր լինել արաղին: Բայց Սիզօր Սիզօրիչը խիստ խաղաղ և հանգիստ արբեցող է եղել: Գինետներից դուրս գալուց յետոյ փողոցներում չըչելու և մարդկանց անհանգստացնելու սովորութիւն չէ ունեցել Սիզօր Սիզօրիչը: Նա ուղիղ կը դիմէր դէպի իր տունը, և ամբողջ օրը կը նկարագրէր մէկը այն անչարժ կարասիներից, որ վառարանի մօտից անպակաս են լինում: Նա կը նստէր այնտեղ, կամ կը նիրհէր, կամ կը յօրանջէր, մոռանալով իրան մի առանձին անհոգ, անդրաշ ապրութեան մէջ: Կինը նը-

րան յանդիմանում է, հայհոյում է, բայց Սիզօր Սիզօրիչը ոչինչ չէ պատասխանում, միայն յիմար կերպով ժպտում է, գլուխը քարչ է գցում և խուլ կերպով մրմրթում է մի քանի անորոշ խօսքեր: Կինը այն ժամանակ միայն կարող էր նրան դուրս դցել, երբ սէնեակը մաքրել և փոքր ինչ կարգի բերել: Այդ միջոցին Սիզօր Սիզօրիչը կը նստէր դրան մօտ, արևի ճառագայթներով կը տաքանար: Իսկ երբ սէնեակը մաքրեցին, նա դարձեալ վառարանի մօտ էր:

—Բայց լինում էին րոպէներ, երբ Սիզօր Սիզօրիչը դառնում էր ժիր և աշխոյժ: Դա այն ժամանակ էր լինում, երբ նրա կինը ընդունում էր մի յարդելի հիւր: Յարդելի հիւրը նրա նախկին մեծատուն էր: Երբ այդ մարդը յայտնվում էր, այն օրը Սիզօր Սիզօրիչի համար տօն էր: Նա խիստ եռանդով հեռանում էր իր նուիրական անկիւնից, երբ նրան փող էին տալիս, ուղարկում էին փողոցը, որ ուտելիքներ ու խմելիքներ գնէ: Ո՛րքան ուրախ էր լինում նա: Դէտ ճանապարհին, դէտ ըմպելիքները տուն չը հասցրած, Սիզօր Սիզօրիչը իր կոկորդը ըստ կարգին փափկացնում էր: Սենեակը պատրաստվեցաւ: Տիկինը յարդելի հիւրի հետ ուտում են, խմում են, զուարճանում են: Սիզօր Սիզօրիչը խիստ եռանդով պտրտվում է սեղանի չուրջը, աշխատում է ամեն տեսակ ապատաւորութիւն ցոյց տալ: Նա մեծ բաւականութեամբ խմում է յարդելի հիւրի կենացը, երբ բա-

ժակը նրա ձեռքն է համնում: Կերուխումը ավարտում է երկար: Բայց Սիզօր Սիզօրիչը մինչև ընթրիքի վերջը ապասելու համբերութիւն չունի: Նա օրօրվում է, գլուխը լաւ դրութեան մէջ չէ, կինը նրա ձեռքից բռնելով նստեցնում է հնոցի մօտ, այնտեղ սկսում է մրմնջել: Տիկինը չարունակում է յարգելի հիւրի հետ ժամանակ անցկացնել:

—Սիզօր Սիզօրիչը թէև ապրում էր հնոջ ազդումների, երբ կոչիկների տակ, և մոռացած իր բոլոր արժանաւորութիւնները, բայց մի բանով միշտ պարծենում էր նա, որ ինքը այր է, իսկ նա կին: Այդ ինքնահաւանութիւնը աւելի յայտնվում էր նրա մէջ այն ժամանակ, երբ կինը չարժում էր նրա բարկութիւնը: Եւ այդ պատահում էր խիստ յաճախ, երբ Սիզօր Սիզօրիչը առնից մի բան էր գաղտնում և ասում էր պինհաուզը: Կինը սկսում էր նախատել, հայհոյել նրան: Իսկ Սիզօր Սիզօրիչը միշտով, որ ինքը այր է, խլում էր պատահած առարկան և զարկում էր հնոջ գլխին: Երբեմն դրաման վերջանում էր արիւնով: Այսպիսի դէպքերից մէկն էր, որ առիթ տուեց Սիզօր Սիզօրիչին բանտի մէջ ընկնել: Կինը ափսոս էր, որ ազատվեցաւ իր անախորժ բնակից, իսկ Սիզօր Սիզօրիչը չաս չը տեսաւ, որ նրան մի այլ տան մէջ փոխադրեցին:

—Այսուհետ նա բոլորովին մոռացվեցաւ, թէ ինքը իր համար, և թէ իր ընտանիքի համար: Նա մոռացել էր մինչև անգամ, թէ արքան ժամանակով բանտարկել էին իրան: Հիմա նրան պէտք են ուզարկում. զարմանալ չը պիտի, թէ ինչու համար են ուզարկում, և զարմանալին այն է, որ հետաքրքրութիւն ևս չունի պիտանալու: Հրամայում են, նա խոնարհվում է: Խոնարհվելու ընդունակութիւնը սաստիկ զարգացած է նրա մէջ: Նա երբեմն յանդգնած էր միայն դէպի իր կինը, բայց հետ է դէպի ամեն մի ծառայ մարդ:

Իմ երիտասարդ ընկերոջ նկարագրութիւնը Սիզօր Սիզօրիչի մասին այն աստիճան գրաւեց իմ ցանկութիւնը դէպի այդ թշուառը, որ ես հարցրի նրանից.

—Ուրեմն դու որ և իցէ զեղծում ես գտնում այդ մարդու դատապարտութեան գործում:

—Այո, նոյնպիսի մի զեղծում, և նոյն մարդու ձեռքով կատարված, որ քաւար Պետրոսի անունը արձանագրից մեռածների ցուցակի մէջ:—Սիզօր Սիզօրիչը աքսորվում է մի ուրիշ յանցաւորի փոխարէն, որին վաղուց բաց են թողել:

—Իսկ եթէ մի օր նրա կինը կը մտածէ որոնել իր ամուսնին:

—Այն ժամանակ նրան էլ կը դրեն բանտում մեռածների ցուցակում:

Դատաստանական վերանորոգութիւններից առաջ այս տեսակ զեղծումներ շատ էին պատահում, և ես զարմանում էի, թէ ինչու քաւար Պետրոսը մտածեց միայն իր ազատութեան համար, իսկ իր ընկերների մասին հոգ չը տարաւ:

—Նա լրան ազատեց, որ ամէն դիւրութիւններ ունենայ մեր մասին հոգ տանելու, պատասխանեց երիտասարդը:—Նա կը գայ մեր եռևից և մինչև մեզ չազատէ, չի հանգստանայ:

Երիտասարդը չը ծածկեց ինձանից, յայտնեց այն ամբողջ ծրագիրը, որ խաչագողները կազմել էին իրանց մէջ. թէ ինչ միջոցներով պէտք է փախչեն կէս ճանապարհից, ապա հարցրեց.

—Կը միանանս մեզ հետ:

—Ո՛չ, պատասխանեցի ես:

Նա սկսեց զարմացած նայել իմ երեսին:

—Ուրեմն դու քեզ կորցնել ես ուզում:

—Ամէն լաւ է մաշվել հանքերում, քան թէ կրկին միանալ ձեզ հետ:

—Շատ կը փոշմանես... ասաց նա և վչտացած հեռացաւ ինձանից:

Մենք բոլոր ժամանակը խօսում էինք հայերէն, այն ևս խաչագողի բարբառով, և կասկած չունէինք, որ կը հասկանան մեզ:

Գիշերից բաւական անցել էր. յոգնած դատապարտեալները բոլորը խորին քնի մէջ էին: Բայց քունը, ախտաւոր սրտի միակ մխիթարութիւնը, ինձ մօտ չէր գալիս: Պարձեալ ինձ երևում էր Նէնէն, ինձանից չէր հեռանում անբախտ աղջկայ սգաւոր պատկերը...

ԺԱ.

ՓԱԽՈՒՍՏ

Սիբիր...

Սարսափելի ճանապարհորդութիւն է հարիւրաւոր մղոններ անցնել չղթայակապ ոտներով: Որքան հեռանում ես դէպի հիւսիս, աղզաբնակութիւնները հետզհետէ նօսրանում են, նօսրանում են, և այնուհետև դատարկ ու ձիւնապատ անապատներին վերջ ու սահման չը կայ: Խիտ հաղիւ են պատահում փոքրիկ քաղաքներ, որոնք ամէն նման են մեծ դիւղերի: Նրանց քնակիչները այն աստիճան սովորած են յաճախ աքսորականների խումբեր տեսնել, որ հէնց լսում են չղթաների հնչիւնները, անկից դուրս են թափվում, սառնասրտութեամբ նայում են նրանց վրա և ցոյց են տալիս իրանց երեխաներին: Ոմանք տալիս են թշուառներին մի կտոր հաց, կամ մի քանի դրօշներ:

Միշտ ախտաւոր և միատեսակ է չրջապատը: Նոյն անվերջ անապատները ամէն օր տարածվում են քո առջև, նոյն մառախլապատ հօրիզոնը ամէն տեղ միախառնվում է սպիտակ սառնով պա-

ած ամպամարկների հետ, նայն կողմ, խռնում և մթին իջևանները սպասում են քեզ ճանապարհների վրա, և չար աղեղ հանդիպում ես պաշտօնակատարների կոպիտ, անխիղճ վարմունքին: Ամեն տեղ, կայարաններում նախկին համբարքով սառնում են և ճանապարհ են դնում թշուառականների խումբը: Գնում ես, գնում ես... անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ... օր ըստ օրէ ուժամփսի ես լինում, նուաղում ես, թուլանում ես, բայց չը գիտես, թէ երբ պէտք է տեղ հասնես...

Երբեմն երևում են քեզ մարդկների երեսներ, սառն և անմիա, որպէս քնքը եղանակը: Ոաքիդ դղրդա հագնված մարթերի և մուշտակների մէջ, այդ գոհիկները հազիւ որոշվում են թաւամած արջևրից, որոնք չար անդամ ծռյլ և դանդաղ կերպով անցնում են դատապարտեալների խումբի մօտով, և մի առանձին հեգնական հայացք ձգելով նրանց վրա, կարծես, ուզում են ասել՝ «մենք աւելի բախտաւոր ենք, քան թէ դուք»:

Ցուրտ է: Ամեն տարած այստեղ մրսում է, սառչում է, քարանում է: Երկիրը զուրկ է լոյսից և ջերմութիւնից: Կարծես, արևն էլ այստեղ մրսում է, կարծես, նա էլ մուշտակ ունի հագած: Նրա դէմքի վէմքը չար չէ որոշվում նոյն գոհիկներին, նոյն արջևրի երեսներից: Նրա ճառագայթները կորցնում են իրանց ջերմութիւնը ընդհանուր սառնութեան մէջ:

Մեռած բնութիւնը բոլորովին ուրիշ կերպարանք է ստանում, երբ հանդիպում ես անտառների: Այստեղ երևում է կեանք, բուսական թըշուառ կեանք: Տարատեսակ այն եղանակում, երբ մեղ մօտ ծառերը բեռնաւորված են զանազան տեսակ անուշ պտուղներով, երբ խաղողը մեզրի համ է ստանում մեր այգիներում,—այստեղ սառը քամին փչում է, ծառերի ճիւղերը սարսափելով տատանվում են, ցած են խռնարհվում, դալկացած տերևները խշխշալով թափվում են, և նրանց տխուր հառաչանքներից դու որոշում ես այս խօսքերը՝ «մենք էլ աքսորված ենք այդ երկրում»: Եւ իրաւ, բնութեան խստութիւնը մինչև այն աստիճան ճնշել է այդ ողորմելի արարածներին, որ նրանք ազատ կերպով աճել և դարգանալ կարող չեն: Որքան առաջ ես գնում, ծառերի աճելութեան ուժը պակասում է, պակասում է, և նրանք հետզհետէ փոքրանալով, բոլորովին մանրանում են, մինչև թզուկ թուփերի կերպարանք են ստանում:

Ամեն ինչ այստեղ մօտ է երկրին, ամեն ինչ թեքված, խռնարհված է դէպի ցած: Լեռները և բլուրները անդամ չեն համարձակվում իրանց գագաթները չար վեր բարձրացնել, կարծես նրանց վրա ևս մի բան ճնշում է: Եւ երկրի ընդարձակ տարածութիւնը ստանում է տափակ, հարթ-հաւասար կերպարանք,—ձևացնում էր մի անսահման անապատ:

Չը նայելով եղանակների խստութեանը, չը նայելով մեր ուղևորութեան սպանիչ ազդեցութեանը, իմ ընկերները զարձեալ չէին կորցնում իրանց զուարթութիւնը: Նրանք իրանց սովորութեան համեմատ հանաքներ էին անում, ծիծաղում էին և չատ տեղ իջևաններում անճաշատուր էին լինում արբեցութեան:

Այդ երկրում լոյսի և ջերմութեան պակասութիւնից մարդը միշտ ցուրտ է զգում և ցնբտու: Պէտք է մի բանով տաքացնել սառած մարմինը, —և արագը հանդիսանում է որպէս փրկարար դարման: Նա թմրեցնում է ուղեղը, բթացնում է զգայարանքները, և դու ընութեան խստութիւնը այլ ևս չես զգում: Ես այդ է պատճառը, որ ոչ մի հիմնարկութեան այնքան չես հանդիպում, որքան գինետների: Նրանց թիւը հաղարապատիկ ասել է եկեղեցիների, դպրոցների և այլ կրթական հիմնարկութիւնների թւից: Համարեա բոլոր իջևաններում կարելի էր գտնել արագ:

Թէև արբեցութիւնը սաստիկ արգելված էր կալանաւորներին, բայց պահապանները այնքան բարի են գտնվում, որ չեն արգելում նրանց այդ միակ մխիթարութիւնից, մանաւանդ երբ նրանց էլ հրաւիրում են խմել իրանց հետ:

Իսկ այդ զուարճութիւնները այն աքսորականների համար են միայն, որոնք ունեն իրանց հետ փոքր ի չատէ արծաթ: Երևում էր, որ իմ ընկեր խաչագողները զուրկ չէին արծաթից. ամեն տեղ

գնում էին ծխախոտ, սպիտակ հաց, ուտելիքներ և արագ: Այդ բարիքներից նրանք մասն էին հանում միւս ազքատ դատապարտեալներին, և այդ պատճառով խումբի մէջ խաչագողները վայելում էին մի առանձին յարգանք:

Բայց ինձ խիստ անհաճոյ էր թւում նրանց մինչև յանդգնութեան հասցրած անհոգութիւնը: Ես զայրանում էի, երբ նկատում էի, որ նրանք առ ոչինչ էին համարում իրանց դրութեան բոլոր զարհուրանքը: Մարդիկ, որ կորցնում էին հայրենիք և ընտանիք, մարդիկ, որ իրանց անների մէջ անբաւական կին և անտէր զաւակներ ունէին, մարդիկ, որ յաւիտեան զրկվում էին այն բոլորից, որ միշտ սիրելի էր եղել իրանց,—այդպիսի մարդիկ, դեռ ևս սիրտ ունէին զուարճանալու, դեռ ևս նրանց երեսը ծիծաղում էր:

Մենք գիշերները ազատ էինք լինում միմեանց հետ խօսելու և խորհրդակցելու, երբ անասունների նման ածում էին մեզ մի սենեակի մէջ և դռները կողպում էին: Բայց իմ ընկեր խաչագողները վազուց արդէն սկսել էին ինձ հետ բաւական առն կերպով վարվել, երևում էր որ վատահութիւն չունէին դէպի ինձ և ամենայն ծածկամտութեամբ աշխատում էին թաղցնել ինձանից մի գաղտնիք: Ես էլ իմ կողմից ամենևին հետաքրքիր չէի լինում խորամուխ լինել նրանց խորհուրդների մէջ:

Այդ սառնութիւնը սկսվեցաւ մեր մէջ այն

օրից, երբ իմ երիտասարդ ընկերներից մեկը յայտնեց ինձ քաւոր Պետրոսի ամբողջ ծրագիրը, թէ արդեօք հնարաւոր էր նախապատրաստել նա, որ կէս ճանապարհից փախցնէր իր աքսորական ընկերներին: Ես այն ժամանակ մերժեցի երիտասարդի առաջարկութիւնը, վճռական կերպով պատասխանելով, թէ ամենևին չի պիտի մասնակցեմ նրանց ձեռնարկութեան մէջ, և աւելացրի, թէ լաւ է ինձ համբերութեամբ սպասել իմ ճակատագրի վախճանին, քան թէ ապստամբութիւն գոնել քաւոր Պետրոսի ձեռքով:

Այն օրից անցել էին երկու ամբողջ ամիսներ:

Մի գիշեր նոյն երիտասարդը մօտեցաւ ինձ:

—Մուրադ, ասաց նա,—դու դարձեալ միտքդ չես փոխել:

—Ինչ բանի համար, հարցրի ես:

—Գիշեր ես մեր մէջ մի քանի ամիս առաջ տեղի ունեցած խօսակցութիւնը:

—Գիշեր եմ:

Նրանց երեկոյեան պահուն պիտի կատարվի գործազութիւնը...

—Ինչ որ ուզում էք կատարեցէք: Ես չեմ փոխել իմ միտքը,—ես ամենևին չեմ մասնակցելու ձեր ձեռնարկութեանը...

Նա բռնեց իմ աջը և աղաչաւոր դէմքով աչքերը դարձրեց դէպի իմ երեսը:

—Լսիր, Մուրադ, յամառութեան ժամանակ չէ.

քո կամակորութիւնը կը կորցնէ քեզ: Մտածիր, որ դու դեռ երիտասարդ ես, քո առջև դեռ ընդարձակ ասպարէզ կայ գործելու և բախտաւոր լինելու: Քաւոր Պետրոսը իր որդու նման սիրել է քեզ, այժմ նոյնպէս սիրում է: Նա քեզանից ձեռք չի վեր առնի. նա կը զայ քո եանից, ուր որ տանում են քեզ, և մինչև չազատէ քեզ, չի հանգստանայ: Եթէ չես հաւատում, քեզ ցոյց կը տամ նրա նամակը:

Նա տուեց ինձ մի թղթի կտոր, որի վրա գրված էին մի քանի տողեր միայն. տողագրութիւնը և ձեռագիրը քաւոր Պետրոսինն էր: Այս նրա բովանդակութիւնը: «Սիրելի Մուրադ, հնազանդվիր, ինչ որ քո ընկերները կառաջարկեն քեզ,—մօտ է փրկութեան ժամը»...

Թէ ինչպէս էր հասել այդ թուղթը նրա ձեռքը, ես չը գիտեմ, բայց ես զգուշութեամբ յետ տուի, ասելով.

—Եթէ հազար այս տեսակ նամակներ գրելու լինի նա, ես դարձեալ իմ միտքը չեմ փոխի: Ես վճռել եմ, վաղուց վճռել եմ ընտա յարաբերութիւններ չունենալ խաչագողների հետ: Ես նրանց մատնութեամբ Սիբիր եմ գնում, բայց չեմ ցանկանայ նրանց ձեռքով ազատված լինել:

—Այդ ես հասկանում եմ, պատասխանեց երիտասարդը,—և մատաղ իրաւունք եմ տալիս քո դժգոհութեանը: Բայց ոչինչ չէ արգելում քեզ այդ

դրամիւնից ազատվելուց յետոյ կարել քո յարաբերութիւնները խաչագողների հետ:

—Բանը նրանումն է, որ նրանց ձեռքով ազատվելը ինձ համար անարդանք եմ համարում:

—Այդ խօսքը չատ վիրաւորական է, Մուրազ, ասաց երիտասարդը փոքր ինչ վրդովված ձայնով, —բայց ես ուշադրութիւն չեմ դարձնի և կը յիշեցնեմ քեզ մի ուրիշ բան, որը, որպէս երեւում է, մոռացել ես դու: Դու յիշում ես այն անբախտ աղջկան, որը սիրում էր քեզ, որին սիրում էիր և դու: Արդեօք չես մտածում վերադառնալ նրա մօտ, գտնել նրան, ուրախացնել նրան:—Գիտես ինչ դրամիևան մէջ թողեցիր նրան:

—Գիտեմ...: Բայց ինձ յայտնի չէ, արդեօք ողջ է նա, թէ...

Վերջին խօսքը ես չը կարողացայ արտասանել, դա դանակի պէս կարատում էր իմ սիրտը: Երիտասարդը հանդստացրեց ինձ, ասելով.

—Ողջ է: Նրա վերքը մահացու չէր: Մենք այդ մասին ճիշտ տեղեկութիւն ունենք:

Ընթերցողը յիշում է, որ ինձ դէպի աքսոր ճանապարհ դնելու առաւօտը յանկարծ յայտնվեցաւ Նէնէն և իր բարեկամների մէկի ձեռքից հրացանը և արձակեց: Թէև ոչոքին չը վնասեց նա, բայց նրա վարմունքը այն աստիճան հակառակ էր օրէնքի, որ մի պետական հրացանի սովինով վիրաւորեց նրան, և նա ընկաւ: «Խելագար աղջկայ» համա-

րումը և հոգեկան հիւանդութեան ապացոյցները միայն կարողացան ազատել նրան օրէնքի խիստ պատասխանատուութիւնից:

Նէնէի անունը յիշեցնելով, երիտասարդը չօշափեց սրտիս ամենազգայուն լարերը. իմ յանդուգնութիւնը մեղմացաւ, իմ կամակորութիւնը միանգամից փշրվեցաւ և ես պատրաստ էի ասել նրան. «Լաւ, համաձայն եմ, կը միանամ ձեզ հետ»,—բայց զարհուել չուտով և ոչրագոհեցի ինձ, կարծես, իմ կամքի զօրութիւնը կրկին վերադարձաւ, երբ մտաբերեցի թէ ինչ բան է խաչագողը կամ ինչ է նշանակում միանալ նրանց հետ:

—Ոչ, պատասխանեցի նրան,—երբէք, երբէք ձեզ հետ գործ ունենալ չեմ կարող:

Երիտասարդի դրութիւնը անտանելի դարձաւ: Նա գործ դրեց իր վերջին ուժը, աշխատելով Նէնէի յիշատակով գրաւել ինձ: Այդ փորձը անցաւ ապարդիւն: Այժմ ինչ ոլորտ անէր նա: Նա յայտնեց ինձ մի գաղտնիք, հատուցանելով, որ կը համոզէ ինձ, որ ես կը մասնակցեմ նրանց ձեռնարկութեան մէջ: Ես մերժեցի: Բայց գաղտնիքը մնաց ինձ մօտ: Այժմ կարող էր նա ապահով մնալ, որ ես նրանց գաղտնիքը չէի յայտնի ամ որ հարկն էր և արդէք չէի գնի նրանց պետաւորութեան կատարելուն: Խաչագողները սասանիկ կատաղած մարդիկ են: Ես նկատեցի այդ և բոլորովին անկեղծութեամբ միամտորէն ընդրան, ասելով.

—Թուք ինչ որ ցանկանում էք, արեցէք, ես ոչ մի կերպով չեմ խանգարի ձեզ, միայն ինձ հանդիսատես թողեցէք:

—Աղնիւ խօսք ես տալիս:

—Աղնիւ խօսք եմ տալիս:

Նա սեղմեց իմ ձեռքը և հեռացաւ:

Ես մնացի միայնակ, մեր կալարանի մի անկիւնում նստած: «Այդ մարդիկը պիտի փախչեն, մտածում էի ես, նրանց դեռ չը բռնված, ապատ մնացած ընկերները դրսից կօգնեն նրանց և անպատճառ կը յաջողեցնեն գործը, իսկ ես կը մնամ իմ կապանքների մէջ: Ինձ կը տանեն այնտեղ, ուր մարդիկ կենդանի թաղւում են հանքերի անձաւներում և խլուրդների նման աշխատում են սաորերկրեայ միջուկների մէջ»: Զը նայելով այդ բոլորին, իմ սիրտը հանդիսատես էր. ես հաւատացած էի, որ վերջ ի վերջոյ ինձ համար էլ կը բացվէր ազատութեան դուռը, բայց ամէն արդար, ամէն օրինաւոր ճանապարհով: Իմ մեղքերը ղէմացած, ճշմարտութեան չաւղի վրա կանգնած յանցաւորին պէտք է ներվէր, պէտք է նրա համար փրկութիւն լինէր: Ես եմէ մարդիկ այնքան սրատեսութիւն չունեն, որ քննեն սրտերի բոլոր խորքերը և որոշեն յամառ յանցաւորը ղեղջացածից, արդարը մեղաւորից,—բայց Աստուած, որի համար ոչինչ գաղտնիք չը կայ, որ գիտէ բոլորը, ինչ որ հասարակ մահկանացուին անհասկանալի և մութն է,—միթէ ամենաբարի Աստուածը

չէր օգնի ինձ: Իմ հաւատը այժմ այնքան ջերմ էր և իմ յոյսը այնքան հաստատուն էր, որ ես Նրա օգնութեանը հաւատում էի և սպասում էի:

Գիշերը անցաւ առանց որ և իցէ ազմուկի: Ամեն ինչ խաղաղ էր, ամեն ինչ իր սովորական դրութեան մէջն էր: Առաւօտեան մեզ զարթեցրին խիստ վաղ: Օրը բաւական ցուրտ էր: Իմ ընկերները ջերմացրին իրանց մարմինը արագով և չը մոռացան մեր պահապան զինուորներին նոյնպէս խմացնել: Մինչ ճանապարհ ընկնէք, մնաղեից իշխանչելուը իր ծանրութիւնները իր մէջքի վրա կրելով: Մեր հետից գալիս էր մի սայլակ, լծած միայն մի ձիով, որ բերում էր մեր և պահապանների ամենօրեայ ծանրութիւնները: Նրա վրա երբեմն նստեցնում էին աքսորեալներից նրանց միայն, որը հիւանդանում էին և չէին կարող ճանապարհը չարունակել: Իմ ընկերներից երկուսը, այն առաւօտ իրանց հիւանդ ձևացնելով, պառկած էին սայլակի վրա: Պահապանները հիւանդների վրա չատ ուշադրութիւն չէին դարձնում, ինչը հիւանդութիւնը հնկում էր նրանց վրա:

Երբ արեգակը բաւական վեր բարձրացաւ հօրիզոնից, օրը սկսեց տաքանալ: Աքսորականների խումբը առաջ էր ընթանում դանդաղ և ծանր քայլերով: Նրանց ոտնակապերի երկաթները անդադրում ներդաշնակ կերպով ձայն էին հանում:

Պահապանների և աքսորականների ուշադրութիւնը գարձած էր մի ծերունի հրէայի վրա, ո-

րը զանազան ծիծաղելի առակներով զուարճացնում էր նրանց: Հրէան մի փոքրիկ մարդ էր, որին կոչում էին Ժօզէֆ: Այդ խեղկատակը կատուի դէմքով, նեղ և խորամանկ աչքերով, բնիկ օդեսացի էր, որը սկզբում պարապվում էր մաքսանենգութեամբ, իսկ յետոյ մտնելով խաչագողների ընկերութեան մէջ, փորագրիչի պաշտօն էր կատարում և նրանց հետ կեղծ թղթադրամներ էր շինում: Դա մի և նոյն անձն էր, որ մասնեց ամբողջ ընկերութիւնը:

Ժօզէֆը ամբողջ խմբի զուարճութիւնն էր. նրա սրախօսութիւնները, հանաքները և հրէական խըլուատ լեզուով խօսակցութիւնը թուլացնելու չափ ծիծաղելի էին: Կարծես թէ, այդ բոլորը նըրա մէջ մի տեսակ կենսական պահանջ էր դարձել, և այդ պատճառով խեղկատակութեան ձիրքը աւելի զարգացել էր: Նայելով նրա վրա, ես բացատրում էի նրա ցեղի մի քանի ընդհանուր գծերը, որոնք առաջ էին եկել կեանքի զանազան պայմաններից: Խեղկատակութիւնը ծնունդ է հաճոյամոլութեան. դրանք երկուսն էլ ճնշված, հալածված ցեղերի յատկութիւններ են: Պատմական հանգամանքների խաղութիւնից հրէան այնքան տոր ընկած է հասարակաց կարծիքից, որ մի շրջանի մէջ զանվելու ժամանակ ուրիշ բանով չէ կարողանում գրաւել նրանց ուշադրութիւնը, բայց միայն ծաղրածութիւններով: Այդ մտնում է նրա բնաւորութեան մէջ և այն աստիճան ընտելա-

նում է, որ մինչև անգամ առանց վիրաւորվելու թոյլ է տալիս ուրիշներին ծաղրել իրան: Այդպէս էր և Ժօզէֆը:

Օրը սկսել էր երեկոյանալ: Դեռ տասն վերստից աւել էր մնում մինչև առաջիպայ իջևանը: Ճանապարհը ձգվում էր անտառի միջով, ուր ասեղնաւոր տերևներով պատած ծառերը այնպէս խիտ գրված էին միմեանց, որ մի քանի քայլ հեռուից ուրիշ ոչինչ չէր երևում, բացի ծառերից: Ճանապարհը նեղ էր. ծառերի ստուերը անդադար դիպչում էին մարդու երեսին և ծակոտում էին: Բայց այդ չէր արգելում լսել Ժօզէֆի մի հետաքրքիր պատմութիւնը, որը կէսօրից յետոյ սկսելով, դեռ չէր աւարտել: Պատմութիւնը հետզհետէ աւելի ծիծաղաշարժ էր դառնում. բոլորի ուշադրութիւնը լրված էր դէպի հրէան: Դա ամբողում էր և մեր յոգնածութիւնը: Խումբը դանդաղ կերպով առաջ էր գնում:

Մի տեղ ճանապարհը աւելի նեղ ձև ստացաւ. մի կողմից բարձրանում էր փոքրիկ բլուր, իսկ միւս կողմից մի ուղղաձիգ զառիվայր իջնում էր դէպի անտառախիտ ձորը և կորչում էր ծառերի մէջ: Ես լսեցի մի ձայն, որ շատ նման էր սև ագռաւի կռնչիւնին: Որքան և բնական կերպով հնչվեցաւ այդ ձայնը, դարձեալ ես չէի կարող չը հասկանալ, թէ դա խաչագողների սովորական նշանախօսութիւններից մէկն էր, որ նշանակում էր՝ «պատրաստ եղէք»: Ձայնը կրկնվեցաւ, բայց

ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց, միայն իմ ընկերները խորտրզաւոր կերպով նայեցին միմեանց երեսին: Ժօզէֆի պատմութիւնը այդ միջոցին աւելի հետաքրքրական էր դարձել:

Փոքր ինչ առաջ գնալուց յետոյ, ձայնը երրորդ անգամ կրկնվեցաւ: Այդ միջոցին մեր խումբի մէջ գտնված խաչադողները արագութեամբ դուրս եկան ճանապարհից, մտան անտառի մէջ և չուռով ծածկվեցան ժայռերի ետևում: Պահապաններից մի քանիսը փորձեցին հետամուտ լինել, բայց ժայռերի ետևից և ծառերի միջից սլացող գնտակները երկուսին գետին գլորեցին: Նրանք յետ գարձան, որ պահեն մնացածներին, որպէս դի չը փախչեն:

Այդ բոլորը կատարվեցաւ մի քանի րոպէի մէջ: Ամբողջ խումբին տիրել էր երկիւղ և խորին ապշութիւն: Հրացանները դեռ երկու կողմից ևս արձակվում էին, գնտակները սուլելով անցնում էին ծառերի միջից: Յետոյ ամեն ինչ լռեց, միայն անտառի խորքից լսելի էին լինում մուրճերի չռաթ-չռաթ զարկերը: Երեում էր, խորտակում էին փախստականների երկաթեայ ռանդակապերը:

Կռիւի խռովութեան ժամանակ յափշտակողներից ոչ ոք չերևեցաւ անտառի խորքից: Նրանք գործում էին իրանց թշնամու տեղից: Միայն վաւօղի ծուխի մէջ ևս նչմարեցի մի աղօտ պատկեր: Որքան էլ կերպարանափոխված լինէր նա, այնու ամենայնիւ, ևս չէի կարող չը ճանաչել

քաւոր Պետրոսին: Նա խորհրդաւոր կերպով չարժեց ղէպի ինձ իր մատը և ղեմ նման կրկին անյայտացաւ: Կարծես, պրանով ասել էր ուզում. «դիմար, ինչպես չը հետևեցիր իմ խրատներին»...

Երբ ամեն ինչ լռեց, հանդստացաւ, մենք դեռ նոր նկատեցինք, որ խեղճ Ժօզէֆը դիակների մէջ էր: Գնտակը, որ դիպել էր նրա դլխին, պատահական չէր, այլ նպատակով ուղղած: Այդ անպիտանը մատնել էր խաչադողներին, ոչնչացրել էր մի ամբողջ հիմնարկութիւն, որով նրանք միլիոններ վաստակելու յոյսեր ունէին: Խաչադողը մինչև մահ չէ մոռանում իր ընկերի անհաւատարմութիւնը, և սպասում է մի օր վրէժխնդիր լինել: Եւ այժմ Ժօզէֆը ստացաւ իր վարձը:

Սարսափած և երկիւղից խռովութեան մէջ ընկած պահապանները հրէայի և իրանց երկու ընկերների դիակները դրեցին սայլակի վրա, և մենք շարունակեցինք մեր ճանապարհը: Լուսինը բաւական հեռու էր, մենք հասանք այնտեղ, երբ արևը վաղուց մայր էր մտել և մութը բոլորովին պատել էր:

Միւս օրը մենք մնացինք նոյն իջևանում: Պահապանները երկիւղ կրելով, մի գուցէ մնացած աքսորականների հետ պատահէր մի և նոյնը, այն օր մեր գնացքը յետ ձգեցին, մինչև պատահած անցքի մասին տեղեկութիւն կը ստանին մերձակայ փոքրիկ քաղաքի կառավարութիւնից, և մին-

չև վախստականներին դանելու միջոցներ դործ կը դրվէին։ Ես չատ ուրախ էի, որ մեր ուղեւորութիւնը ընդհատվից, որովհետև փոքր ինչ կը հանդստանայի, փոքր ինչ կը կազդուրէի իմ ըսպառված ուժերը։

ԺԲ.

ՍԷՐԸ ԶԻՆ ՀԱՄԲԵՐՈՒՄ

Խաչագողների վախուստից յետոյ մեր խումբի մէջ մնաց մէկ քրիստոնեայ միայն ազգով վրացի։ Մնացեալները թուրք, թաթար և այլազգիներ էին։ Ազատվելով խաչագողների անտանելի հասարակութիւնից, ես սկսեցի որոնել յիշեալ վրացու բարեկամութիւնը։ Նա մի ուրախ, պարզամիտ և բաւական չնորհալի դէմքով երիտասարդ էր խմբութեան կազմից։ Նա խիստ չուտով մտերմացաւ ինձ հետ։ Նրան պատրել էին ոսկեմութեան համար։ Ես զարմանում էի, թէ ինչպէս մի այսպիսի բարեսիրտ տղան կարող էր ոսկեմութիւն գործել։

Այդ երիտասարդը օրըստօրէ աւելի և աւելի համակրական էր դառնում ինձ։ Նրա բնաւորութեան մէջ այնքան պարզութիւն կար, որ չէր կարելի չը սիրել նրան։

Մեզ արդէն տեղափոխել էին մերձակայ փոքրիկ քաղաքը։ Այստեղ ևս մի քանի օր պահեցին մեզ, որովհետև մեր խումբի հետ պիտի միացնէին մի քանի ուրիշ պատրականներ, որոնց նոյնպէս Սիբիր էին ուղարկում։

Վասօն—այսպէս էր վրացի երիտասարդի անունը—այնքան ընտելացաւ ինձ հետ, որ ինձանից չէր հեռանում: Գիշերները քնում էր իմ կողքին, և շատ անգամ, երբ քունը չէր տանում, ժամերով պատմում էր իր կեանքի այս և այն արկածները:

Մի գիշեր, նստած իմ մօտ, կարկատում էր իր մաշված կօշիկները և յանկարծ, հազիւ լսելի ձայնով չընդհատում էր մի երգ: Երիտասարդը բոլորովին յափշտակված էր իր զբաղմունքների մէջ և գործը համարեա մեքենարար էր կատարվում նրա ձեռքում:

—Վասօ, չես պրծնում, հարցրի նրանից:

—Է՛հ, խոզ անիծէ Աստուած այդ անպիտանները, սաղ տեղ չէ մնացել, կարում ես, կարում, էլի էն է ու էն:

—Մէկ հատը ինձ տուր, ես կօգնեմ քեզ:

—Շնորհակալ եմ, դու միայն ճրագը մօտ բռնիր, ես կը կարեմ:

Ես նկատեցի, որ Վասօի խնդիրը խիստ կարևոր էր. ճրագուն մասը, որ նա կպցրել էր յատակի աղիւսի վրայ, այնքան սպառվել և կարճացել էր, որ լոյսը կօշիկների վրա չէր տարածում և այսպիսով դժուարացնում էր նրան աշխատանքը: Ես վեր առի մասը, բարձր բռնեցի, նա չարունակեց կարել:

Բայց ինձ հետաքրքրում էր այն, թէ ինչ պատճառով աքսորեցին նրան:

—Ես սպանեցի իմ պարոնին, պատասխանեց նա:

—Ի՞նչու համար:

—Երկար է, շատ երկար, եթէ պատմելու լինեմ, մինչև լոյս չի պռծնի:

—Մի և նոյն է: Դու ինչ չես քնում, իմ քունն էլ չէ տանում. դու պատմիր, ես կը լսեմ. այսպիսով աւելի կարճ կը լինի գիշերը:

Նա սկսեց պատմել.

«Ես Ի... իշխանի ճորտերից էի: Նա շատ վատ մարդ էր, օրինակ քեզ՝ մի դարձու: Պատահում էր, կամ տանը կնոջ հետ կռուած է, կամ մի ուրիշը բարկացրել է նրան և կամ հարբած է, նա կատաղած դուրս է գալիս տնից, վոյ այն գիւղացուն, որ կը հանդիպի նրան: Նա իսկոյն մի առիթ կը գտնէր գիւղացուն ծեծելու, հայհոյելու և իր սիրտը հանգստացնելու: Օրինակ, պատահում էին այսպիսի դէպքեր. գիւղացին մի գոյգ նոր արեխներ է հագել: (Նա համբերել չէր կարող, երբ գիւղացին նոր բան էր հագնում և պարոնի նամանաւանդ էր սառնում:) Տեսար, կանչում է՝ «էյ, մարդ»: Գիւղացին մօտենում է, գլուխ է տալիս, կանգնում է:—«Այդ ինչ է», ցոյց է տալիս նա արեխները:—«Աղա ջան, ցաւդ առնեմ, գընում եմ տնտաւը», պատասխանում է գիւղացին դողալով:—«Տօ, անպիտան, եթէ առանց արեխների գնալու լինես, տաներդ կը մաչվին» և հրամայում է իսկոյն խլել նրանից արեխները: Մի

անդամ գիւղացու մէկը փոթիկաց նրա մօտ։—«Տօ, անչնորք աւանակ, համարձակւում ես փոթիկիդ քո պարոնի առջև», ասաց նա և հրամայեց ծեծել խեղճին։

«Մեր հարևան Գիօրգին մի աղջիկ ունէր, չափսնակից նա, նրա անունը Կէկէլօ էր։ Բայց ինչ աղջիկ, այնքան սիրուն էր, որ կարծես գիւղացու աղջիկ չը լինէր, այլ ուղիղ պարոնի տնից դուրս եկած լինէր։ Մի անգամ նա հանդիպեց ինձ դաշտումը, գալիս էր անտառից, չալաման փայտ էր բերում իրանց համար։ Գլուխը թաղված էր նրա երեսից, թշերը խնձորի նման կարմրել էին։ Հէնց որ տեսայ, իմ խելքը գնաց։—«Տուր, Կէկէլօ, ես կը տանեմ չալակդ» ասացի նրան։—«Շատ ծանր չէ, ես կարող եմ տանել» ասաց նա, աւելի կարմրելով։ Մենք սկսեցին խօսելով կամաց-կամաց դիմել դէպի գիւղը, երբ մօտեցանք, բաժանվեցանք միմեանցից, որ մեզ միասին չը տեսնեն։

Այդ միջոցին վաճառ այն աստիճան յափշտակված էր իր պատմութիւնով, որ ամենևին չէր նկատում, թէ ասեղը ընկել էր նրա ձեռքից և կօշիկները նոյնպէս ընկած էին նրա կողքին։ Նա չարունակեց.

«Ես մօրս յայտնեցի, որ Կէկէլօին նշան դնէ ինձ համար. նա էլ հօրս յայտնեց։ Հայրս գնաց Գիօրգիի տունը, խոստացաւ տալ մի այծ, հինգ թունդի գինի, մի քանի ասմար սիմինդր, կարճ

ասած, խօսեցին, բարիշեցան, նշանը դրեցին։ Ապատում էինք, որ աշունքը գայ, գինին պատրաստվի, որ հարսանիք անենք։ Այդ միջոցին, չեմ իմանում, ինչ սատանայ մտաւ իմ պարոնի գլխում, նա հրամայեց, որ Կէկէլօին վեր առնեն իր տանը որպէս ազախին։

«Աշունքը եկաւ, գինիները հասան, բայց հարսանիքը չը կատարվեցաւ։—«Այս տարի չի լինի» ասում էր մեր պարոնը։ Իմ սիրտը տրաքվում էր անհամբերութիւնից։ Բայց ինչ կարող էի անել, երբ պարոնը այսպէս էր հրամայում։

«Մի անգամ Կէկէլօն գաւ լինճ անտառում, տեսնում եմ, երեսին գոյն չէ մնացել, կասես թէ, սպանված լինէր։ Հարցնում եմ.—«Կէկէլօ, ինչ է պատահել քեզ հետ»։ Նա ոչինչ չէ ասում, հէնց լաց է լինում։ Գրկում եմ նրան, դարձեալ հարցնում եմ.—«Կէկէլօ, ինչու ես լաց լինում»։ Նա արտասուքի միջից լինճ պատասխանում է.—«Ա՛խ, վատ մարդ է... նա չատ վատ մարդ է... նա Աստուած չունի... նա»...խեղճ աղջիկը չը կարողացաւ վերջացնել իր խօսքը, բայց ես հասկացայ բոլորը...

«Արիւնը թռաւ գլուխս, ես խտակ կատաղեցայ։ Հէնց էն տխմարին վազեցի դէպի մեր տունը, խէնջարս վեր առի, թագցրի չէրքէզիս տակ, տնից դուրս եկայ։ Առաջ մտայ գինետունը, լաւ խմեցի, սիրտս պնդացրի, յետոյ գնացի պարոնի դրանը կանգնեցայ, սպասում էի, որ նա դուրս գայ։ Յետոյ, նա դուրս եկաւ, պատրաստվում էր որ-

սի դնալ: Առաջը կարեցի, ասելով.—«Ի՞նչու ես պահել իմ նշանածին»: Նա բարկացաւ, սկսեց հայհոյել և չորս կողմն էր նայում, աչքերով որոնում էր իր սպասաւորներին, որ հրամայէ ինձ բռնեն:—«Տնէր իմ նշանածը» կրկնում եմ ես և հէնց մօտ ու մօտ եմ գնում: Նա դարձեալ գոռում է.—«Գոռ, լիրը, անզգամ, համարձակվում ես... բռնեցէք այդ անիրաւին»: Ես ուշադրութիւն չեմ դարձնում, հէնց մօտ ու մօտ եմ գնում:—«Չիմա քեզ խեղդել կը ուամ» ասում է աւելի կատաղելով: Իսկ ես հէնց մօտ ու մօտ եմ գնում:—«Տնէր նշանածս, ասում եմ քեզ»: Նա էլ չը համբերեց մինչև ծառաները հաւաքվէին, յարձակվեցաւ իմ վրա: Ես խենջարը խրեցի նրա կողքը...

Այդ միջոցին ես նայեցի վասօի երեսին, նա այնպէս զուարճացած էր, նրա չրթունքը այնպէս զողզողում էին, որ կարծես, հէնց այն րոպէում նա իր արիւնոտ խենջարը դուրս էր քաշում բռնակալ սարոնի կողքից: Երբ նա փոքր ինչ հանդարտացաւ, հարցրի.

—Իսկ գոռ չը փախաւ:

—Փախաւ, բայց երեսին պիչերով յայտնվում էի մեր դիւղում, որ Կէկէլօին էլ կարողանամ փախցնել: Առուտուր չը յաջողեց, մի պիչեր րըռնելիցայ:

Վասօին ես աւելի սկսեցի սիրել, երբ իմացայ նրա կեանքի պատմութիւնը: Խեղճ ազան սիրոյ զոհ էր դարձել: Սէր... ինչ բան ես դու, ես մինչև այսօր չեմ կարողացել հասկանալ քեզ, թէև ինքս սիրել եմ... և այժմ սիրում եմ...

Վասօն և Կէկէլօն, որպէս ճօտաներ, որպէս սեպհականութիւն մի անզուխտ պարոնի, յօժարութեամբ նաւիրում են նրան իրանց աչխատանքը, իրանց վաստակը: Բայց երբ պարոնը դիալչում է և այն զգացմունքին, որը սարբ է իւրաքանչիւր անհատի համար, այն ժամանակ ճնչված, հլու սարուկն անգամ այլ ևս չէ համբերում...

Իսկ ես, ես թշուառականս, ինչ արեցի Նէնէի համար, ինչով ապացուցի, որ ճշմարիտ սիրում եմ նրան...

ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ ՎԵՐՋԸ:

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԹԱՋԱԳՈՂԻ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Ա·

ԱԻԱԶԱԿԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱՈՒԱՋԻՆ ԳԻՇԵՐ

Անցել էր երկու տարի այն օրից, որ ես ազատվել էի գառապարտեալի տաժանական կեանքից, բաւական տանել էր դարձել ինձ ծանր աշխատանքիս մէջ, բաւական սովորել էի այնտեղի կեանքին և կեցուածքառը խոնաւ, մթին կայարաններին մէջ։

Աշխարհից կտրված, կեանքի վայելչութիւններից զրկված գառապարտեալը իր շրջանի մէջ ոչինչ բաւականութիւն չէ գտնում։ Այստեղ ամէն մարդ յանդիմայից է գործում, որովհետև իր համար չէ գործում։ Ուր չը կայ շահ և շահերի միութիւն, շատ բնական է, որ այնտեղ չէ կարող կազմվել

ընկերական կեանք, սէր և միաբանութիւն: Եւ դուք այդ է պատճառը, որ այն անպզին խառնիճաղանճ բազմութեան մէջ մարդ չէ կարող գտնել մի լաւ բարեկամ, մի լաւ ընկեր:

Միակ բանը, որ երբեմն մօտենում է այդ թշուառներին և կապում է միմեանց հետ, է նրանց վիճակի միանմանութիւնը: Դժբախտութեան մէջ մարդը իր նման ընկեր է գտնում: Ես գտայ մի այսպիսի ընկեր, որի հետ բաժանում էինք մեր վշտերը:

Այդ երիտասարդը հէնց առաջին անգամից գրաւեց իմ ուշադրութիւնը, քանի դեռ նրա հետ ծանօթացած չէի: Նա մի բարեկազմ տղամարդ էր, բարձրահասակ, որի երեսի փոքր ինչ խաչոր գծագրութիւնը տալիս էր դէմքին խիստ այրական բնաւորութիւն:

Ես շատ էի հետաքրքրւում, թէ ինչ յանցանքի համար աքսորված էր նա: Բայց նա իր մասին ոչինչ չէր խօսում և միշտ ախորժութիւնը պատում էր նրա դէմքը, երբ խօսքը վերաբերում էր իր անձին: Ինձ ասկին, թէ նա եղել է մի նշանաւոր աւազակապետ: Հէնց որ այդ իմացայ, սկզբում իմ մէջ ծագեց սաստիկ հակակրութիւն դէպի այդ մարդը: Աւազակը իր գործունէութեամբ շատ չէ զանազանվում խաչագողներից: Իսկ խաչագողներին ես ատում էի: Բայց իմ հակակրութիւնը հետզհետէ անհետացաւ, երբ ասկի մօտ ծանօթացայ նրա հետ:

Աւազակապետը ծնիկ պարսկաստանցի էր Աղրպատականի կողմերից: Հայրենակցութիւնը առաջին բարեկամական կապը եղաւ իմ և նրա մէջ: Բայց երբ իմացայ, որ նա աղգով հայ էր, բողոքովին կապվեցայ նրա հետ:

Մի գիշեր, երբ երկար թախանձեցի նրան, յօժարվեցաւ հաղորդել ինձ իր կեանքի պատմութիւնը: Նա սկսեց այսպէս.

«Ինձ կոչում են Ջալլադ. դա իմ իսկական անունը չէ. դա իմ մականունն է, որ նշանակում է դահիճ: Այդ մականունը ստացայ ես ոչ թէ նրա համար, որ դահճի պաշտօն եմ կատարել, այլ նրա համար, որ շատ սրունն եմ թափել, բայց ոչ անմեղ սրունն... Իմ հայրը Ղարադաղ գաւառի հայ մելիքի մտաւոն էր: Մելիքը չափազանց հաւատարմութիւն ունէր դէպի նա և համարեա իր մտերմական բոլոր գործերը յանձնել էր նրան: Մելիքը միշտ պարսից խաների հետ գնանք վարելով, ընդունել էր նրանից շատ տուրքութիւնները: Նրա ընտանեկան կեանքը, բարքը, վարքը, կառավարել պարսկական էր. պարսկաց էր հարեմը միայն, պարսկաց էին ամամորթ ստրկները և նեռքինի ծառաները, որ նրա տունը մահմեդական ընտանիքի ճիշտ կերպարանքը տալիս:

«Շատ անգամ պատահում էր, որ հայրս մի որևիցէ բան էր գնում մելիքի տան համար, և տալիս էր ինձ տանել այնտեղ: Ես ասկի ուրախու-

թեամբ էի կատարում հօրս պատուէրը, երբ մի բան պէտք էր տանել մէլիքի կանանոցը: Ամէն անգամ, այնտեղ մտնելու ժամանակ, մէլիքի աղջիկները, աղախինները չրջապատում էին ինձ, «ինչ ես բերել» հարցնում էին, և ամէն կողմից վրայիս ծնկելով, սկսում էին խլխլել իմ տարած փարչաները: Իսկ երբ իմ տարած բաները աղջիկներին չէին պատկանում, նրանք հանաքներ էին անում, ծիծաղում էին իմ վրայ, ջիպրայնում էին ինձ, իսկ ես ամօթից քրանած, կարմրած, հեռանում էի նրանցից: Ես թէև արդէն հասակ առած պատանի էի, բայց ինձանից չէին քաշվում, ինձ վրայ նայում էին որպէս տան աղայի վրայ:

«Մէլիքը, մանկականների սովորութեանը հետևելով, ունէր մի քանի կնիկներ: Նրա առաջին կինը մեռած էր, որից ձնացել էր մի աղջիկ միայն, որին կոչում էին Սանամ: Խորթ մայրերը, որպէս սովորաբար լինում է, վատ էին վարվում Սանամի հետ և շատ բաներում խարութիւն էին դընում նրա և իրանց զաւակների մէջ: Սանամը զրկված էր մայրական սէրից, զրկված էր առհասարակ ընտանեկան քաղցրութիւնից: Ես շատ անգամ հանդիպում էի նրան արտասուքը աչքերում, բայց նա ինձ ոչինչ չէր ասում, նա վազուց սովորել էր իր վշտերը թաղցնել իր սրտում: Հայրը զբաղված լինելով իր գործերով, նրա վրա ուշադրութիւն չէր դարձնում: Պատահում էր, երբ աղջիկների հագուստի համար զանազան թանգա-

գին ճոխեր էի տանում, երբ Սանամը բաժին չէր տանում, նա իսկոյն լուսթեամբ հեռանում էր, առանձնանում էր մի տեղ, և անձնատուր էր լինում խորին տխրութեան:

«Այսպիսի դէպքեր, որ պատահում էին ոչ սակաւ անգամ, վիրաւորում էին Սանամի սիրտը, նա վշտանում էր, ոչ թէ այն պատճառով, որ նա զրկվում էր այն զուարճութիւններից, որ վայելում էին նրա միւս քոյրերը, ոչ,—Սանամը այդ մասին շատ հպարտ էր,—այլ նա վիրաւորվում էր ղեկուցուցանէս նրա համար, որ խորութիւն էին գնում նրա և միւսների մէջ և անդադար յիշեցնում էին, թէ «դու անբախտ ես, որովհետև մայր չունես»:

«Այդ հանգամանքները ծնեցրին իմ մէջ մի ջերմ կարեկցութիւն դէպի դժբախտ աղջկայ վիճակը:

«Անցան տարիներ, Սանամը արդէն հասունացած օրիորդ էր դարձել, իսկ ես նորահաս երիտասարդ էի: Այդ հասակում մարդիկ ամէն բան հասկանում են:

«Մի անգամ, երբ մօտենում էր զատկի տօնը, մէլիքի աղջիկները կարել էին տալիս իրանց համար նոր հագուստներ: Սանամի համար նոյնպէս ձևել էին տուել, բայց նա ամենևին չէր շտապում, որ չուտով կարվին և զատիկվայ համար պատրաստ լինեն: Ես հարցրի պատճառը, նա պատասխանեց.

—«Ի՞նչ կանեմ կարմիր չապիկը, երբ սիրտս միշտ սև ու սև է հագած...

«Նա այլ ևս չը խօսեց և հեռացաւ:

«Ես նկատեցի, որ Սանամը այժմ չէր տանջվում այն ցաւերով, որ երեխայութեան ժամանակ շատ անգամ արտասուք էին թորեցնում նրա աչքերից,—այժմ նրա տանջանքը բոլորովին հոգեկան էր...

«Սանամը մի առանձին մտերմութիւն չունէր ղէպի ինձ. նա նայում էր ինձ վրա, որպէս իր հօր տանը մեծացած սպասաւորի վրա: Ոչքան էլ ճնշված լինէր նրա դրութիւնը, այսուամենայնիւ, նա մէլիքի աղջիկ էր, իսկ ես՝—նրա հօր մօտ ծառայողի որդին: Ես շատ էի աչխատում չօշափել նրա սրտի խորքերը, բայց նա այնքան ծածկամիտ էր, որ երբէք իր սիրտը չէր բաց անում ինձ մօտ: Նա միայն համարում էր ինձ մի երեսատարդ, որ իր բոլոր չրջապատողներից աւելի համակրութիւն ունէր ղէպի նա, և որին պատահած ժամանակ կարող էր հաւատալ և ասել նրան մի քանի խօսքեր:

«Մի անգամ գոյ նրան սարսափելի խռովութեան մէջ. կարծես թէ, սպանված լինէր յուսահատութիւնից: Նա զարձաւ ղէպի ինձ այդ խօսքերով.

—«Աղաչում եմ քեզ, գնիր ինձ համար մի կատր աֆիօն. դա կը լինի իմ առաջին և վերջին խնդիրը քեզանից:

«Խոհդն հասկացայ նրա միտքը:

—«Ի՞նչ կայ, ինչ է պատահել, հարցրի ես ոչ սակաւ զարհուրելով:

«Նա ուշադրութիւն չը դարձրեց իմ հարցերի վրա, և կրկնեց իր խնդիրը աւելի հրամայական ձայնով.

—«Քո դիտնալու բան չէ... գնա գնիր, ինչ որ ասում են քեզ.., հէնց այսօր, հէնց այս րոպէիս... գնա, մի ուշացիր...

«Ես դուրս եկայ Սանամի սենեակից, նրան այն կոյսի մէջ թողնելով, թէ կը կատարեմ նրա խնդիրը: Բակումը ինձ հանդիպեց մէլիքի վաղեմի ձիապանը, մի ծերունի, որ ծառայում էր այդ տան մէջ նրա հօր ժամանակներից: Ծերունին չը լսելով, որ ես կանչեցի նրան, չարունակեց իր դանդաղ քայլերը և մոտ ախոռատունը: Ես հետևեցի նրան, պատմեցի, թէ ինչ դրութեան մէջ գտայ Սանամին:

—«Ամէն բան տակնուվրա եղաւ... ասաց նա, ինքն իրան խօսելով,—էլ ինչ մնաց... ամէն բան կորաւ... մնացել էր մեր սուրբ հաւատը, այն էլ կորաւ...

—«Ի՞նչ է պատահել, հարցրի ես, ոչինչ չը հասկանալով նրա մթին խօսքերից:

—«Ի՞նչ է պատահել... կրկնեց նա դլուխը չարժելով, բայց այդ միջոցին ոսկեզոյն նժոյդներից մէկը, տեսնելով իր ծերունի խնամատարին, բռնեց ուրախութեամբ խրխնջալ և առջևի սմբակ-

ները յատակին զարկել: Նա զարձաւ դէպի նժոյդը, ասելով.—«Սարի, խելօք կաց»: Սարին փոքր ինչ հանդստացաւ և նա կրկին դիմեց ինձ զարձնել նժոյդի վրա խօսելով.

—«Վինգ տարուց ասել է, որ աշխատում եմ այդ անդգամին խելքի բերել, բայց դա հէնց էն գիժն է ու էն գիժը:

«Ներսէնի Թունին սատիկ սիրում էր իր ձիանների մէջ կարգ պահպանել, և մանաւանդ ներել չէր կարող, երբ նրանք մի այլ մարդու ներկայութեամբ, չէին հետևում համեստաբեմեան կանոններին: Նա պատրաստվում էր ասելի երկար բացատրութիւններ տալ իր կարգապահութեան մասին, բայց իմ համբերութիւնը հատաւ, ես կրկին հարցրի.

—«Դու այն ասա, ինչ է պատահել:

—«Էլ ինչ լինի... ամէն բան փչացաւ... ամէն բան ծուռն է գնում»... Նժոյդը զարձեալ ընդհատեց նրա խօսքը:—«Սարի, սատանայի ծնունդ, քեզ են ասում, խելօք կաց»:

«Նա, մոռանալով իմ հարցմունքը, մօտեցաւ Սարիին, սկսեց հայրաբար փայփայել նրա դեղնցիկ բաշը, և նորից թրատներ կարդալ: Նժոյդը լսեց նրա խրատները, հանդստացաւ, իսկ ծերուկն էլ և, կրկին նստեց իմ մօտ:

—«Անցան, գնացին հին ժամանակները... խօսեց նա, խորին կերպով հոգոց հանելով.—«լինում էր, շատ անգամ հանդուցեալ մէլիքը մըտնում էր այստեղ. ձիանները մէկը միւսի կողքին

չարված էին յետևի չափ, չաղ, սիրուն, կատա թէ, ամէն մէկը մի ուրիշ լինէր: Հանգուցեալի սիրտը փառաւորվում էր, ձեռքով զարկում էր իմ քամակին, «չէ՞ որ ապրես, ասում էր, Թունի, ձիանները լաւ ես պահել»... ու այն րոպէում հանում էր իր հաղիցը կարան, ինձ խալաթ էր տալիս: Բայց հիմա... ոչ այն մէլիքը կայ, և ոչ այն ձիանները... Բոլորը պատիկ մէլիքը ընծայեց պարսիկ խաներին... Բայց առաջ... պարսիկ խաներն էին մեզ ձիաներ փիշքաչ անում, որ հանդուցեալ մէլիքը նրանց հոգին չը հանէր... տերևի նման դողդողում էին, երբ նրա չուաքն էին տեսնում...

«Մէլիքների տան վաղեմի փառքի յիշատակը և նրա թուլանալը ներկայ մէլիքի օրերում այն ատելիճան ցաւերով լցրին բարեսիրտ ծերուկու սիրտը, որ նա, կարծես, բոլորովին չէր նկատում իմ ներկայութիւնը, և խօսքս մոռացաւ այն հարցը, որով ես մի քանի անգամ դիմեցի նրան: Ես զարձեալ հարցրի.

—«Ես այդ բոլորը գիտեմ, դու այն ասա, ինչ է պատահել Սանամի հետ:

«Նա զարձեալ ինձ համբերութիւնից հանեց իր երկարաբանութեամբ:

—«Թեղճ աղջիկ, երանի թէ, բնաւ ծնված չը լինէիր... երանի քո մօրը, որ չուտ մեռաւ և աչքերով չը տեսաւ այդ նախատինքը... Բայց ալեւոր Թունին մեղաւոր էր, նա մնաց, չը մեռաւ և չը տեսած բաներ տեսաւ... Մի այդպիսի բան կա-

թող էր պատահել հանդուգնել մելիքի օրերում: Նրա ժամանակում Աստուծոյ բարեմիտնով լցված էր մեր կրկիրը. գայլն ու գառը միասին էին ապրում. մարդիկ խաղաղութեամբ ցանում էին, հնձում էին, ուտում էին, ուրախանում էին... Բայց հիմա,—հիմա մարդ ոչ իր գլխի տէրն է և ոչ իր ապրանքի տէրն է... ամեն բան փչացաւ... ոչ կարգ կայ, ոչ կանոն... ամեն մարդ իր սրտի ուզածն է անում... իսկ մեր մելիքը իր քէֆերից չէ արթնանում... Բայց այդ վերջինը... նրա այդ վերջին արարմունքը... ախ, Աստուած, այդ ինչ բան է...

—«Ինչ արարմունք, գոչեցի ես բարկութեամբ,—դէ ասա, ինչ ես սիրտս տրաքեցնում:

—«Ինչ արարմունք... դու ջեր չես լսել, հարցրեց նա զարմանալով:

—Ես ոչինչ չեմ լսել:

—«Մեր մելիքը (ախ, Տէր Աստուած, նրան մէքիչ խելք տուր) հա, մեր մելիքը ամեն բան ոսքի տակ առաց, ամեն բան տակնուվրա արեց... խանները նրա հօրից տերեի նման գողում էին, երբ գալիս էին նրա սալամին, ժամերով կանգնում էին դրանը, մինչև հրաման չէին ստանում, չէին համարձակվում ներս մտնել: Բայց թուլասիրտ արդին հիմա խանների ոտքերն է լիզում, խոնարհվում է նրանց առջև... Այդ բաւական չէր, իր հարազատ աղջիկը նրանց կնութեան է տալիս... մի լոյս հոգի է կորցնում...

—«Ամեամին է տալիս, հարցրի ես սարսափելով..

«Ամեամին, ապա ումը, պատասխանեց նա, իր մարած աչքերից արտասուքը սրբելով:

«Ես հասկացայ դժբախտ աղջկայ խռովութեան պատճառը և իսկոյն գուբս եկայ ախոռատնից: Աչքը արդէն մայր մտնելու մօտ էր: Ես սպասում էի, մինչև բոլորովին մթնի, որ յարմար ժամանակ գտնեմ Ամեամի հետ տեսնվելու:

«Բայց մինչև մեր տեսնվելը, հարկաւոր է ձեզ տեղեկացնել, որ այն ժամանակ Ղարադաղի գաւառում կային հայոց երկու նշանաւոր մելիքներ. մեկը մեր մելիքն էր, իսկ միւսը, նոյնպէս հին տոհմից, ասելի զօրաւոր էր քան թէ մերը: Ղարադաղի հայերի իշխանութիւնը բաժանված էր այդ երկուսի մէջ: Երկուսն էլ անմիաբան, հակառակ միմեանց, միշտ աշխատում էին սորացնել միմեանց, վնասել միմեանց, և այդ պատճառով նեղքին երկպառակութիւնը երկրից անպակաս էր լինում: Պարսիկ խաները, օգուտ քաղելով դրանց թշնամութիւնից, ասելի բորբոքում էին կռիւը: Եւ այդ, իհարկէ, ասելի ձեռնտու էր նրանց, երբ հայոց զէհաւորները չէին կարող միանալ, որ ընդհանուր ուժերով պատերազմէին երկրի արտաքին թշնամու դէմ:

«Վերջին ժամանակներում մեր մելիքը մտածում է բոլորովին ոչնչացնել իր հակառակորդին, և այդ նպատակին հասնելու համար, աշխատում է դէպի ինքը գրաւել Քուրդաշատի խանին, խոս-

ամնալով, որպէս բարեկամութեան առհաւատչեայ զգեցիկ Սանամին նրան կնութեան տալ:

«Մի այնպիսի մարդ, որպէս մեր մելիքն էր, պատրաստ էր իր փառասիրութեան համար զոհել ամեն ինչ: Նա նայում էր իր աղջկայ վրայ, որպէս իր նժոյգներից մէկի վրայ, որ չատ անգամ ընծայում էր այս և այն խանին, նրանց բարեկամութիւնը գրաւելու համար:

«Պարզ, մաքուր, անարատ մնացած ժողովրդի կրօնական զգացմունքը վիրաւորվում էր, տեսնելով, որ իր մելիքը մահմետական սովորութիւններին է հետևում, բայց նրա խուլ բողոքը լսելի չէր լինում:

«Դուք մի փոքր տեղեկութիւն ստացաք մեր երկրի այն ժամանակվայ դրութեան մասին, չարունակեց աւազակապետը, հիմա դառնանք դէպի օրիորդ Սանամը:

«Ախուռ-ասան բակից մի փոքրիկ դուռ տանում էր դէպի պարտէզը, որ կպած էր մելիքի ամրոցին: Սանամը սովորութիւն ունէր երեկոյեան պահուն պարտէզում պտրտելու: Ես մտայ այնտեղ, յուսալով, թէ կը դանեմ նրան: Երկար անհանգիստ կեցողով թափառում էի, բայց ոչքերին չը տեսայ: Արեը մտաւ, մութը սկսեց հետզհետէ թանձրանալ, Ես մտայ ամրոցը այն դռնով, որ ուղղակի տանում էր դէպի Սանամի սենեակը: Նախասենեակում ճրագ չը կար: Մօտեցայ նրա կացարանի դռանը, ներսից լսում էր մի այտպիսի սոսկալի խօսակցութիւն.

—«Լռեա կաց, անզգամ... ինչպէս ես համարձակվում... քեզ մորթել կը սամ... ինչ որ ասում եմ, պէտք է հնազանդվես...

«Այդ նրա հօր ձայնն էր:

—«Հողեմ քո սարսաղ գլուխը... էլ ինչ ես ուզում... կը գնաս խանի տանը, խանում կը դառնաս... միչտ դառ ու զրկանք կը հաղնես...

«Այդ նրա խորթ մօր ձայնն էր:

—«Թէ որ սպանէք, թէ որ կարատէք ինձ, էլի այն կասեմ՝—պարսկի կինն էր դառնայ, հոգիս չեմ կորցնի...

«Այդ Սանամի պատասխանն էր:

«Ես յետ քաշվեցայ, մի անկիւնում կծկվեցայ, երբ լսեցի մելիքի քայլերի ձայնը: Նա իր կնոջ հետ դուրս եկաւ, անցաւ իմ մօտից, բայց մութի մէջ չը կարողացաւ նկատել ինձ: Ես լսեցի հետեւեալ խօսակցութիւնը.

—«Այ մարդ, ասաց կինը,—դու ինչու ես մըտիկ անում այն քածի ասածներին, ինչ որ ուզում է, թող անէ. դու խանին խօսք ես տուել, խօ չես կարող խօսքիդ յետ կանդնել:

—«Ես նրա լաց ու սուգին մտիկ չեմ տայ, պատասխանեց մելիքը,—ես տղամարդ եմ, իմ թըքածը չեմ լիզի...

«Սանամի վիճակը արդէն վճռված էր: Այր և կին համաձայն էին: Դժբախտ օրիորդի ընդդիմա-

դրութիւնը կը մնար ապարդիւն, եթէ մէկը նրան օգնութեան չը հասնէր:

«Մինչ ես այն մտածութեան մէջ էի, թէ ինչ ելք պէտք է գտնել, նախասենեակում մտաւ օրիորդի դայեակը, ծրարը ձեռին: Պառաւը տեսնելով ինձ, կանգնեց.

—«Ախար այդ լաւ բան չէ... ասաց նա ցաւալի ձայնով,—ախար այդ ընդդէմ է մեր Տէր Աստծուն... ով է տեսել մի այդպիսի բան... ախ, այդ ինչ են ուզում անել, սուրբ Աստուածածին... Քանի քանի տարիներ կուրծքիս վրա պահել, մեծացրել եմ նրան... իմ աչքի լոյսի պէս պահել եմ... հիմա ուզում են տալ անօրէնին... ուզում են հողին, հաւատը կորցնել...

«Պառաւը նկատեց, որ ես համբերութիւն չունեմ նրան լսելու, հարցրեց.

—«Ո՞ւր ես գնում:

—«Սանտամի մօտ:

«Նա էլ էր ցանկանում մնալ օրիորդի մօտ, բայց երբ տեսաւ, որ ես այնտեղ եմ գնում, չը կամեցաւ խանգարել մեր տեսութիւնը, յետ դարձաւ, ասելով.

—«Գնա, մի ուշացիր, նա քեզանից խօսք կը լսէ, ասա, թող ականջ չը դնէ հօրն ու մօր խօսքին, ասա, թող չը կորցնէ լոյս հաւատն ու հոգին...

«Ես, հակառակ իմ ապաստածին, գայ Սանտամին բաւական խաղաղ դրութեան մէջ: Բոցավառ-

ված աչքերի կրակը, որ տեսել էի այնօր առաւօտեան, կարծես թէ հանգել էր, միայն գունատութեան դէմքի վրա երևում էին խորին յուսահատութեան նշանները:

—«Բերեցիր, հարցրեց նա անհամբերութեամբ:

—«Ի՞նչը, հարցրի ես:

—«Այն, որ առաւօտեան խնդրեցի քեզանից:

—«Այն, որ դու պահանջեցիր, այլ ես պէտք չի լինի... պատասխանեցի ես:

«Նա երեսը չուռ տուեց, ասելով.

—«Լաւ, հեռացիր, էլ չեմ ուզում...

«Ես անշարժ մնացի: Նա չարունակեց.

—«Ինչ մարդիկ են... չեն օգնում գտնել մեռնել ինձ...

«Նա կրկին նայեց իմ վրա, և տեսնելով, որ դեռ կանգնած եմ, ասաց միօրը ինչ հրամայական ձայնով.

—«Խնդրում եմ ինձ մենակ թողնել:

«Ինձ յայտնի էր օրիորդի հաստատամտութիւնը. ես չը հեռացայ. ես դիտէի, թէև ես աչիօն չը գնեցի նրա համար, բայց իմ հեռանալուց յետոյ նա մի այլ միջոցով անձնասպանութիւն կը գործէր: Ես մօտեցայ, ասելով.

—«Թէև աչիօն չը գնեցի, բայց ընկել եմ ձեզ համար մի այլ դարման...

—«Ի՞նչ դարման, հարցրեց նա հանդստանալով:

—«Ես ձեզ պէտք է ազատեմ...

—«Շնորհակալ եմ... պատասխանեց նա արհա-

մարհական եղանակով.—դու ինձ կազատէիր, եթէ կը ըներէիր իմ խնդրածը...

—«Ես ցանկանում եմ, որ դուք կենդանի մնաք և մի և նոյն ժամանակ ազատված լինէք:

—«Դա անկարելի բան է... ես ճանաչում եմ իմ հօրն ու մօրը...

—«Կարելի է, եթէ դուք կընդունէք իմ առաջարկութիւնը...

—«Ի՞նչ է ուզում ասել:

—«Փախչենք, հեռանանք այստեղից, եթէ ոչ, առաւօտեան ձեզ բռնութեամբ խանի ամրոցը կուղարկեն: Ամեն ինչ պատրաստված է ձեզ ճանապարհ դնելու համար:—Փախչենք, քանի որ դեռ ժամանակը կորած չէ: Հէնց այս գիշեր ես կը տանեմ ձեզ մի ապահով տեղ, որը ոչ ոք չէ կարող գտնել ձեզ:

«Մի քանի վայրկեան մտածելուց յետոյ, պատասխանեց նա.

—«Ոչ: Թող ես մեռնեմ. այդ աւելի լաւ է...

«Նա վախենում էր հասարակաց կարծիքից, յիմար ամբոխի դատապարտութիւնից: Մարդիկ կը ծաղրէին նրան, ասելով, թէ փախաւ իր հօր սպասաւորի հետ: Ես չգիտեի նրա սրտի, աղաչելով.

—«Սանամ, այս տան մէջ ես եղել եմ ձեր ամենահաւատարիմ սպասաւորը, նոյնպէս և կը մնամ այսուհետև: Մենք համարեա թէ մեծացել և ձեզ պէտք է յայտնի լինի, թէ

որ աստիճան յարգում եմ ձեզ: Ապաւինեցէք ձեր ծառայի օգնութեան վրա, որ յանձն է առել ամեն ինչ ձեր կեանքը և պատիւը պաշտպանելու համար:

«Երկար ես լաց չէի թողնում նրա ձեռքը, մինչև պատասխան չը ստանամ, երկար իմ արտասուքով լի աչքերը յառած էին դէպի նրա դէմքը: Նա տարուբերվում էր տարակուսելի անվճռականութեան մէջ: Նա այնքան կամքի զօրութիւն չունէր, որ մաքառէր ընդդէմ նախապաշարմունքների դէմ: Ես սկսեցի աւելի և աւելի թախանձել նրան, մինչև լսեցի նրա բերանից այդ ուրախալի խօսքը.

—«Համաձայն եմ...

«Ես կանգնեցի, ասելով.

—«Գնում եմ պատրաստելու, ինչ որ պէտք է մեզ ճանապարհի համար: Դուք պատրաստվում կը սպասէք ինձ:

«Իմ ուրախութիւնը չափ չը կար: Օրիորդի սենեակից դուրս գալը և ծերունի Թունիի մօտ մտնելը մի քանի րոպէի գործ եղաւ: Զիւանքը դեռ քնած չէր: Ես գտայ նրան խորին մտորութեան մէջ, երևի, նա էլ Սանամի վրա էր մտածում: Բոլորովին վստահ լինելով ծերունու բարեսրտութեան վրա, յայտնեցի նրան իմ դիտաւորութիւնը: Նրա խոր֊ծամած դէմքի վրա երևաց ուրախութեան նման մի բան, և ինձ գրկելով, ասաց.

—«Օրհնեալ լինիս, Աստուած զօրացնէ քեզ: Եթէ չը լիներ Թունին վամաուն տարեկան, նա ինքը կանչէր այդ բանը, նա չէր թող տայ, որ մեր Լուսաւորիչ հօր զաւը գայլերին տայինս... Բայց Թունեի մէջ այժմ առաջվայ ուժը չէ մնացել: Կար ժամանակ, որ ալեւոր Թունեն էլ մի ազամարդ էր, ատան, քան պարակին մարդ չէր ասի... Գնաց էն ժամանակը... Բայց դու դեռ ջահել ես. քեղանում արիւնը դեռ եռի է գալիս. դու կարող ես շատ բան անել...

«Նա ընդհատեցի նրան ասելով.

—«Դէ, չուտ, Թունեի ապէր, երկար խօսելու ժամանակ չէ. պէտք է թամքել ձիաներից երկուսը:

—«Հա, պէտք է թամքել, ի հարկէ, պէտք է թամքել, երկու ամենալաւը մեր ձիաներից: Թող առաւօտեան մէկիքը ջարդել տայ Թունեի ալեւոր պլանը, այդ ոչինչ, միայն թէ նա ազատված լինի... Թող ազատվի իմ հրեշտակը, նա իր հանդուցեալ մօր կտորն է, նրա նման բարի է... Աստուած հանպիտա, արքայութիւն պարգեւէ նրան: Հանդուցեալի պէս կնիկ չը կար մեր երիտում, այնպիսի լաւ սիրտ ունէր, որ ճանճին էլ չէր նեղացնի... Շատ անգամ մտնում էր նա աղքատ Թունեի խրճիթը, և երբ նրա երեխաներից մէկին մերկ էր տեսնում, հագցնում էր, երբ մէկին հիւանդ էր տեսնում, օգնում էր... Ոչ մի օր դարատակ ձեռքով նա իմ չէմքի վրա ոտք չէր կո-

խում, ամեն անգամ մի բան կը բերէր իմ երեխաների համար, կասէր, «Թունի, դու կին չունես, ես պէտք է պահպանեմ նրանց»... Այդ բոլորը ալեւոր Թունեն չի մոռանայ... Թէկուզ մեռնի, թէկուզ նրա գերեզմանի վրա խոտեր բուսնեն, դարձեալ չի մոռանայ...

«Մինչև ծերունին կը վերջացնէր իր հին յիշողութիւնները, ես ձիաներից երկուսը թամքեցի: Յետոյ նշանակեցի մի տեղ, խնդրելով նրան, որ ձիաները տանէ այնտեղ և սպասէ մեզ: Իսկ ես վազեցի դէպի մեր տունը, որ ղէնքերս վերառնեմ: Դիշերը խիստ մութն էր: Մարդիկ քնած էին: Փողոցներում ոչ ոք չէր երևում:

«Վերադառնալով մեր տնից, մտայ պարակը, ուղիղ դիմեցի դէպի այն կողմը, ուր պատուիրել էի օրիորդին սպասել ինձ: Ես գտայ նրան իր ծառայի հագուստով: Հաղիւ կարելի էր ճանաչել նրան, եթէ չասէր նա «այդ ես եմ»:

«Մէկիքի ամրոցի մէջ տիրում էր խորին լռութիւն: Լուսամուտներից ոչ մի ճրագ չէր երևում: Բոլորովին աննկատելի կերպով դուրս եկանք պարակից, և սկսեցինք դիմել դէպի այն կողմը, ուր Թունեն իր ձիաներով սպասում էր մեզ: Օրիորդը չնոտակալութեամբ համբուրեց ծերունու աջը և առեց նրա օրհնութիւնը: Ես օգնեցի նրան նստել ձին: Մենք հեռացանք:

«Ամեն ինչ խաղաղ հանգստութեան մէջ էր: Ոչ մի չնչաւոր արարած չէր երևում: Ես յետ նա-

յեցի, ծերունին դեռ անշարժ կանգնած էր իր տեղում, և որպէս մարմնացած բարեպաշտութիւն, ձեռքերը բարձրացրել էր դէպի երկինք, մեղ համար յաջողութիւն էր բարեմաղթում»....

Բ.

ԵՐԿԲՈՐԴ ԳԻՇԵՐ

Աւազակապետի պատմութիւնը այնքան զբաղել էր իմ ուշադրութիւնը, որ ամենևին չէի նկատել թէ գիշերը աննկատելի կերպով անցել էր: Երբ արեգակի առաջին շառաւիղները ներս ցոլացին մեր արդելանոցի նեղ լուսամուտներից, այդ ժամանակ դռները բացվեցան, և պահապանների կոպիտ ձայնը ընդհատեց հետաքրքիր պատմութիւնը: Մեզ խումբով դուրս քշեցին դէպի հանքերը աշխատելու:

Աւազակապետը ամբողջ օրը լուռ էր, նրա քաջասրտական դէմքը պատած էր մի խորհրդական մտայղով: Ես անհամբերութեամբ սպասում էի գիշերին, որ լսեմ նրա պատմութեան շարունակութիւնը:

Բայց ինձ ասելի զարմացնում էր նրա անճոռնութիւնը. այդ անունը «աւազակապետ» ամենևին սազ չէր դալիս նրան: Նրա մէջ կային շատ գեղեցիկ յատկութիւններ. նա ուժեղ էր, որպէս Հերքուլէս, և մեծահոգի ու բարի էր, որպէս մի աղնիւ հերոս: Նա ոչ միայն ունէր մի առանձին

սէր դէպի ինձ, այլ թշուառականների ամբողջ հասարակութեան վրա նայում էր խորին ցաւակցութեամբ: Այդ պատճառով բոլորը յարգում էին նրան:

Աւազակապետը անկիրթ ևս չէր. նրա բանական մշակված լեզուն և առողջ դատողութիւնները ցոյց էին տալիս, թէ ինքը դրագէտ ոմն էր: Ո՞րտեղից պիտը է ուսած լինէր, երբ նրա ժամանակ Վարդազուռ չը կար ոչ մի գպրոց: Այդ հարցին պատասխանել նա, թէ իր պատանեկութեան ժամանակ հայրը ուղարկել նրան Տաթևի վանքը, ուր մնալ նա ամբողջ վեց տարի: Այդ վանքում մեծ հռչակ էր ստացել մի վարդապետ որպէս քաջ հայկաբան, ճարտասան և աստուածաբան: Նրա մօտ ուղարկում էին զարազազկը իրանց զաւակներին: Նրա աշակերտների թւում ուսանում էր և ինքը:

Այնօր աշխատութիւնից արձակեցին մեզ ստվարականից խիստ վաղ, որովհետև հետևեալ օրը ուրբաթ էր: Մենք խումբով անցնում էինք մեծ փողոցի միջով, որի երկու կողմերում միմանց մօտ չարված էին փոքրիկ խանութներ: Այդ խանութներում ծախվում էին ըստ մեծի մասին այնպիսի վաճառքներ, որ պիտը էին աքսորականներին, պինդուղներին, տեղային պաշտօնատարներին, հանքային արհեստաւորներին, վարպետներին, և այլ ծառայողներին: Մանրավաճառների խանութների չարքում կային դարբնոցներ, հացթուխներ, դերձակներ, գինետներ, խոհարաններ և ուրիշ պիտոյքների կրպակներ:

Փողոցը լիքն էր մարդիկներով: Հետևեալ օրվայ ուրախ համար ամեն ոք գնում էր՝ ինչ որ իրան պէտք էր: Բայց իմ ուշադրութիւնը դրաւեց մի մուրացկան, որ մի խանութից միւսը անցնելով, ողորմութիւն էր խնդրում: Չնայած, պատառոտած, կիսամերկ ցնցոտիներից չատ տեղ երևում էր նրա մարմնի մերկութիւնը: Մի նոյնպիսի հնամաշ ուսպրակ ուսից քարշ էր ընկած: Գլուխը կուացած էր մինչև գետին, իսկ քամակից բարձրացել էր մէջքի անդին կուզը: Իր դողդողուն մարմինը հաղիւ-հաղ կարողանում էր ուրի վրա պահել, նեցուկ տալով կուծքին ձեռքի ցուպը: Նա կազկազալով քարշ էր գալիս մի խանութի դռնից դէպի միւսը և ցաւալի ձայնով մրմնջում էր. «ողորմութիւն արէք, պարոններ, հիւանդ, սոված աղքատին»: Ամեն մի անգութ սրտի վրա կարող էր ազդել նրա զառն հառաչանքը:

Երբ նա տեսաւ աքսորականների խումբը, մօտեցաւ: «Գութ ունեցէք թշուառ էքս, քան թէ ես» ասելով, սկսեց իր հառաչած պրօշները բաժանել նրանց: Նա դրեց և իմ ափի մէջ երկու հատ հինգ կօպէկնոց: Այդ ժամանակվայ հինգ կօպէկնոցները այնքան մեծ էին, որ կարող էին իշի նալի հետ մրցել: Նա նայեցայ մուրացկանի երեսին և չատրած մնացի...: Աւազակապետը իմ կողքին

կանդնած էր: Երբ մուրացկանը հեռացաւ, նա ասաց.

—Այդ գէմքը ծանօթ է ինձ...

Ես ոչինչ չը պատասխանեցի:

—Միթէ նա այժմ կաղ է դարձել և մէջքին կուզ ունի... ասաց նա ինքն իրան:

Տեսնելով, որ աւազակապետը ճանաչեց մուրացկանին, ես այլ ևս չը թագցրի նրանից, պատասխանեցի.

—Նրա ոսկերը քո և իմ ոսկերից աւելի ուղիղ են, մէջքն էլ նոյնպէս, միայն նա այնպէս ձևացրել է իրան: Այդ մարդիկը հարկաւորած ժամանակ գիտեն իրանց կոյր, կաղ, սաստառղ ձևացնել: Տեսար նրա խառնված մազերը, խճճված մօրուքը, ոզոմիլլի երեսը,—բոլորը չինծու էր:

—Այդ երեսը ծանօթ է ինձ... դարձեալ կրկնեց աւազակապետը:

—Ո՞րտեղ ես տեսել նրան:

—Յետոյ կը պատմեմ...

Խումբը անցաւ: Ես մուրացկանից ստացած երկու հատ հինդ-կօպէկնոցները ղրկեցի ղրպանս, այնտեղ մանրելով չօչափեցի, յայտնվեցաւ, որ հինդ-կօպէկնոցների մէջտեղում դրած էր բոլորակ ձևով ծալած թղթի կտոր: Առանց կարդալու, արդէն երևակայում էի, թէ ինչ պէտք է գրված լինէր այն թղթի վրա, որ խորհրդաւոր ծրարի մէջ հասցրեց ինձ մուրացկանը: Այստեղից, մի պատեհ ժամանակ էի որոնում, որ կարդամ թուղթը:

Երբ հասանք մեր տրգվանոցը, արդէն մութն էր, ճրագները վառվում էին: Ես աւելի դասդ թուղթը կարդալու: Նրա մէջ գրված էին հետևեալ տողերը. «Մուրադ, ամէն ինչ կարգադրված է քո վախուտի համար: Յուսով եմ, որ դու այժմ կը հետևես իմ խորհուրդներին: Դու երկրորդ անգամ ինձանից նամակ կը առնես և նրա համեմատ կը վարվես. Փետրա»:

Նամակը կարդացի ևս մի այնպիսի տեղում, ուր թոյլ են տալիս կալանաւորներին մենակ մնալ: Պատին կպցրած էր մի ճրագ. թուղթը բռնեցի ճրագի վրա և քաղաք Փետրոսի խորհրդաւոր աղդարարութիւնը մի վայրկեանում ոչնչացաւ:

Ինձ հետաքրքրում էր աւազակապետի այն խօսքը, թէ մուրացկանի դէմքը նրան ծանօթ էր: Ես համոզված էի, որ անպատճառ այդ ծանօթութեան հետ կապված կը լինէր մի ամբողջ պատմութիւն: Որովհետև քաղաք Փետրոսը այն պատուղներից չէր, որ նրա ճաշակելը միայն առանց հետևանքի:

Գիշերը, երբ մեզ տեղաւորեցին մեր կացարաններում, ես խնդրեցի աւազակապետից, որ պատմէ, թէ ինչ առիթով ծանօթ է եղել ծպտեալ մուրացկանի հետ: Նա համաձայնեցաւ կատարել իմ խնդիրքը:

«Դու գիշեր ևս, միանգամ պատմեցի քեզ, որ իմ պատանեկութեան հասակում հայրս ուղարկեց ինձ

Տաճիճի վանքը ուսում առնելու։ Այդ միջոցներում լուր տարածվեցաւ, թէ Որսոնայ վանքում յայտնվել է մի հրաշագործ ճգնաւոր։ (Որսոնայ վանքը հեռու է Տաճիճի վանքից կէս օրվայ ճանապարհով միայն)։ Ճգնաւորի մասին խօսում էին, թէ նա ոչ ուտում է, ոչ խմում է, այլ լիացած է սուրբ Հոգու շնորհով, թէ նրա կերակուրը մշտական աղօթքներն են։ Նրա մասին պատմում էին զանազան հրաշքներ, այդ պատճառով ամեն կողմից կոյրեր, կաղեր և զանազան տեսակ հիւանդներ գիմում էին վանքը ճգնաւորից բժշկութիւն ստանալու համար։

«Լսելով ճգնաւորի համբաւը, իմ հինգ տարի չարունակ անդամալոյծ մայրը հանգստութիւն չէր տալիս ինձ։ Անդադար մնից նամակ էի ստանում, որ գնամ, մօրս բերեմ ճգնաւորի մօտ։ Ես էլ յանկառում էր առաջնանալ և ամեր ոտների վրա մատ դալ։ Հայրս էլ նոյնն էր յանկառում։ Ես սահմռկեցայ առ ժամանակ ընդհատել իմ ուսումը, Տաճիճի վանքից գնացի մեր տունը մօրս բերելու համար։ Հայրս պրից մեզ հետ ամեն բան, ինչ որ արժան էր վանքին ընծայ տանելու համար։

«Որսոնայ վանքը հասնելուց երկու օրից յետոյ, մեզ թոյլ տուեցին այցելել ճգնաւորի մօտ։ Մենք գտանք նրան իր ձեռքով սպասուժի մէջ փորած մի քարանձաւում, ուր նա ապրում էր, ուր սովորութիւն ունէր աղօթելու և իր անձը

զանազան ճգնութիւններով տանջելու։ Անտանելի տարու մեղ վանքի արեղաներից մէկը։ Ճգնաւորը այդ միջոցին աղօթքով պրպրված չէր, այլ նստած էր իր խուցի մէջ, բոլորովին մերկ քարայատակի վրա, և թևքի արմունկը դնելով մի քարի կտորի վրա, որ նրան բարձի տեղ էր ծառայում, ձեռքը նեցուկ էր տուած գլխին, և կիսաթեք դրութեան մէջ, նրա բաց աչքերը անշարժ յառած էին դէպի քարանձաւի առաստաղը։ Այդ դրութեան մէջ, կարծես նրա միտքը վերապահել էր դէպի երկինքը և տիրել էր նրան խորին, սրբազան յափշտակութիւն։ Անդէպ որ, նա ամենևին չը զգաց, երբ մայրս մօտեցաւ և համբուրեց նրա հագուստի քղանցը։

«Հագուստը խիստ պարզ էր. կոշտ մազից գործուած սև բաճկոնը լիշնում էր մինչև ոտները, մէջքը պնդած էր նոյնպէս մազե սև չուանով։ Տրեխներ կամ հողաթափներ չէր հագնում, բոլորովին ոտներով էր մեզ գալիս։ Գլուխը բաց էր, բայց չը կտրված և չը սանրված մազերը այնքան երկարացել և աճել էին, որ պահպանում էին նրա գագաթը թէ ցրտից և թէ արևի տօթից։ Խճճված մօրուքը խառնվել էր գլխի մազերի հետ և ատլիս էր նրա դէմքին ահռելի կերպարանք։ Երեսը գունաթափ և հիւանդոտ էր»։

«Տեսնելով, որ ճգնաւորը ոչ չարժվում է, ոչ խօսում է և ոչ փոխում է իր նստուածքի ձևը, մենք կարծեցինք, թէ նա քնած է։ Բայց արեղան ասաց.

—«Նա քնած չէ, տեսնում է ք, աչքերը բաց են, միայն հոգով բարձրացել է երկինքը:

«Մայրս խնդրեց, թէ կը ցանկանար, որ ճըգնաւորը տեսնէր նրան: Աբելան պատասխանեց.

—«Մենք, մեղաւոր ազամարդիներս տեսնում ենք աչքերով, բայց նա տեսնում է հոգով:

«Յետոյ արեգան խարհուրդ տուեց մօրս, որ մօտենայ ճգնաւորին, բռնէ միայն նրա հագուստի ղրօշակը, և նա կասէ, ինչ որ ոդիները կը նկարչեն նրան:

«Եւ օգնեցի մօրս մօտենալ. նա կատարեց աքեղայի պատուէրը: Նոյն րոպէում ճգնաւորը մի տեսողոր չարժում գործեց, և չը փոխելով իր առաջվայ դրութիւնը, պատասխանեց մի քանի անկապ խօսքեր.—

«Խնկի ծառը բուսել է... ղևին պակ հիւսել է... տասերկու ճիւղ է արձակած... ամէն մի ճիւղի վրա... մի մի հրեշտակ է նստած... բայց բոլորից վերը... սուրբ Տիրամայրն է նստած... ղևրկին մանուկ է բռնած... լոյս մաղերով զարդարած... Մօր աչքերում արտասուք... սիրտը վշտերով լցված... մանկան ձեռին է մի խաչ... դէմքը պայծառ է դարձած... արտասուքը սրբուիլին... իսկ խաչը մեզ փրկուիլին... Մայրն ու Որդին խոստանում»...

«Ճգնաւորը լռեց: Աբելան բացատրեց մեզ նըրա պատգամախօսութեան իմաստը, թէ սուրբ Տիրամայրը և Որդին «փրկուիլին» են խոստա-

նում: Մայրս ուրախացաւ, կրկին համբուրեց ճըգնաւորի հագուստի պրօչակները, և մենք երկիւղածութեամբ հեռացանք:

«Այնուհետև անցան մի քանի ամիսներ, ճգնաւորի մասին չատ անգամ լսում էին այսպիսի խօսքեր, թէ նրա ժամանակը մօտեցել է, թէ նա երկար չէ մնալու երկրի վրա, թէ հրեշտակները նրան իրանց մօտ են կանչում, թէ նա մի օր կանհայտանայ, թէ նրա վախճանը Մովսէսի և սուրբ Լուսաւորչի նման կը լինի, որ ժողովուրդը նրա մարմինը չը գտնէ և պաշտելու առարկայ չը դարձնէ:

«Եւ իրաւ, ճգնաւորը անհայտացաւ: Ո՛ւր գնաց, —ոչ ոք չը գիտէր: Միայն ժողովրդի մէջ տարածվեցան զանազան կարծիքներ. ոմանք հաստատում էին նրան Ենովքի և Եղիայի նման երկինքը բարձրացած, ոմանք ասում էին, թէ նա առանձնացել է մի սարում, իր կեանքի վերջին օրերը խստակեցութեամբ անցկացնելու և իր անձը ըստորովին Աստուծուն նուիրելու համար: Ոմանք պատմում էին, թէ նրան տեսել են այս ինչ տեղում, լոյսի ճաճանչներով պատած, երբ մօտեցել են, նա անհետացել է: Վերջապէս, չատ այսպիսի խօսքեր էին ասում, իսկ նրանցից որն էր ճշմարիտ,— Աստուած գիտէ:

Ազգակապակի պատմութիւնը թէև չատ հետաքրքրական էր, բայց ինձ ամենևին չէր զարմացնում: Ես քաւոր Պետրոսին լաւ էի ճանաչում.

Նրա համար այս և այն կերպարանք ընդունելը, այս և այն ձևի մեջ մտնելը խիստ սովորական բան էր: Սկայն ինձ անհասանալի էր թվում մի բան, արդեօք քաւոր Պետրոսը մի և նոյն անձնաւորութիւնն էր, որին տեսել էր աւազակապետը ձգնաւորի քարանձաւի մէջ և ինչ ապացոյց ունէր այսպէս կարծելու: Դէմքի նմանութիւնը բաւական չէր. մանաւանդ քաւոր Պետրոսի դէմքը այն ժամանակից յետոյ պէտք է բաւական փոխված լինէր: Երբ այդ հարցերը առաջարկեցի, աւազակապետը պատասխանեց.

—Նրան կոչում էին «ականջը կտրած» ձգնաւոր, պատմում էին, թէ նա միանգամ գերի է ընկել անօրէնների ձեռքը, նրան տանջել են, սպիսպել են հատատրը ուրանալ, նա մերժել է, և այդ պատճառով ականջները կտրել են: Այդ չարչարանքի համար նրան համարում էին մի տեսակ նահատակ: Եւ ես նկատեցի, որ մեր տեսած մուրացկանի երկու ականջների ծայրերը կտրված էին: Բայի դրանից, ձգնաւորի բազուկների և ձեռքերի վրա Երուսաղէմի ուխտաւորների դրոշմը կար: Նոյնը ես նկատեցի մեր տեսած մուրացկանի ձեռքերի և բազուկների վրա:

Նշանները ուղիղ էին: Իրաւ է, Գաբակատունում մի փոքրիկ դաղութեան համար քաւոր Պետրոսի երկու ականջների ծայրերը կտրել էին: Այդ պատիժը տացել էր նա իր երիտասարդ հասակում: Եւ թէ նա Երուսաղէմի ուխտաւոր է եղել, —այդ նոյնպէս ուղիղ էր:

—Բայց ինչ նպատակով թափառում է այդ մարդը հեռաւոր հիւսիսում, խօսեց աւազակապետը,—և ինչ ողբալի դրութեան մէջ էր նա:

Ես չը պիտի ինչ պատասխանել. ես դժուարանում էի յայտնել աւազակապետին, թէ ճանաչում եմ նրան, թէ մեր մէջ եղել են երկար տարիների յարաբերութիւններ և թէ նոյն ձգնաւորի առաջնորդութեամբ ես մի այնպիսի ծանր ճանապարհի վրա դրվեցայ, որ վերջը բերեց, հասցրեց ինձ այնտեղ, ուր տանջվում են յանցաւորները միայն: Ես չը յայտնեցի նաև, թէ նա ինձ համար էր մտել այն ողբալի կերպարանքի մէջ և ինձ համար է թափառում պատապարտեալների բնակութեան միջավայրում: Ես ծածկեցի նրանից և այն, որ խորհրդաւոր մուրացկանը, մօտենալով մեզ, հինդ-կօպէկնոցների հետ տուեց ինձ մի թուղթ: Այդ բոլորը ծածկեցի իմ ամենալաւ ընկերից, որովհետև դեռ մտատանջութեան մէջ էի, դեռ չը գիտէի, թէ ինչ պիտի պատասխանեմ քաւոր Պետրոսի առաջարկութեանը:

Ի՞նչ պէտք է պատասխանէի: Մերժէի, ընդունէի,—ոչ մեկը վճռել չէի կարողանում: Նա եկել էր ինձ ազատելու, նա անցել էր հարիւրաւոր մղոններ, հազարաւոր վերստներ. նա դեռ չէր մոռացել ինձ, դեռ մտածում էր ինձ համար: Բայց ինչ նպատակով: Արդեօք աչխատում էր հանդո-

տացնել խղճի խայթը, որ ինձ մոլորութեան և դատապարտութեան մէջ ձգեց,—թէ կամենում էր ինձ նորից ձեռք առնել, որպէս մի գործիք, որ նրան պակասում էր: Մինչ ես այս մտատանջութիւնների մէջ էի, առաքելապետը ասաց.

—Ես նրան երրորդ անգամն է, որ հանդիպում եմ:

—Առաջին անգամ որպէս ճգնաւոր, վերջին անգամ որպէս մուրացկան, իսկ միւսը, հարցրի ես:

—Դա կապ ունի Սանամի անցքի հետ, յետոյ կը պատմեմ քեզ:

Գ.

ԵՐՐՈՐԴ ԴԻՇԵՐ

Երրորդ գիշերը առաքելապետը այսպէս սկսեց Սանամի ընդհատված պատմութիւնը.

«Դու յիշում ես, որ գիշեր էր, երբ ես և Սանամը հեռացանք մեզնից ամրոցից, մի մեծ և խաղ գիշեր, որ ընտրութիւնը ինքն էր նպատակ մեր փախստեան: Անցանք մի քանի մզոններ, գիշերային խաւարը սկսեց փոքր առ փոքր պարզվել: Ճանապարհին օրիորդը մի խօսք անգամ չը խօսեց ինձ հետ: Նա լուռ էր, որպէս երեսում էր, ծանր մտախոհութիւններ տանջում էին նրան: Նա ունէր հայ օրիորդի թէ հետաքրքրութիւնը և թէ նախապաշարմունքները: Առաջինի դէմ բազդեց նա, ընդդիմացաւ ծնողների բռնութեանը և չը կամեցաւ մահմեդականի կին դառնալ. իսկ երկրորդը, նախապաշարմունքը, մնաց: Նա մի նախատինքից աղատվեցաւ, բայց մի այլ նախատինքի ենթարկեց իր անձը: Նա փախաւ ծնողների տնից մի երիտասարդի հետ, որ ոչ նրա ազգականն էր և ոչ նրա բարեկամը:—Երևի, այդ մտածութիւններն էին տանջում նրան:

«Իմ ձին ընթանում էր առաջ, իսկ նա հետևում

ւսում էր լինե: Ես էլ իմ կողմից չէի խօսեցնում նրան, որովհետև չէի ցանկանում ամէնի վրդովել նրա հոգեկան խառնուածքը: Ես միայն հիացած էի նրա կերպարանքի բարեկազմութեամբ, թէ որքան գեղեցիկ էր նա աղամարդի հպարտաւոր, և որքան քաջալեղաբար ձիավարում էր նա, նստած իր սիրուն նժոյգի վրա: Նա ներկայացնում էր մի չնորհալի ձիաւոր, որի նմանը կարելի էր տեսնել ալ ոսից բարձր ազնուականների որդիների մէջ:

«Բայց նրա հայրը իր կեցութեամբ, իր սովորութիւններով, իր բարք ու վարքով նոյնպէս ներկայացուցիչ էր պարսից բարձր ազնուականութեան: Շրջապատված բազմաթիւ նօքարներով, որպէսզի նրանց շնորհ ու բազկերով, վատնում էր նա իր ժամանակի մեծ մասը զանազան զբօսանքների ու զարմանութիւնների մէջ, որոնք կատարվում էին ըստ մեծի մասին ձիանների վրա: Խիստ սակաւ անգամ էր պատահում, որ նրա ընտանիքը չը մասնակցէր այդ զբօսանքներին, և այդ պատճառով Սանամը մանկութիւնից վարժված էր ձիավարելու մէջ:

«Մելիքը, ինչպէս Ղարադաղի բոլոր խաները, ունէր բազմաթիւ անասուններ, որոնց ամառը ամնում էին լեռնային հովասուն տեղերում արածացնելու: Շատ անգամ մելիքի ընտանիքը ամբողջ ամիսներ անց էր կացնում ամարանոցում, իրանց հօտերի մօտ, հովիտների վրաններում: Սա-

նամին աւելի էր զբաղեցնում լեռնային կեանքը: Ղարադաղը սարում և անտառապատ երկիր է: Երբեմն ձի նստած, ամբողջ ժամերով թափառում էր նա ձորերի, անտառների և լեռների մէջ: Այստեղ աւելի ազատ էր չնչում, քան թէ հօր փակված մնում, ուր ամեն ինչ ճնշում էր նրան: Շատ անգամ նա լսել էի նրանից այդ խօսքերը. «Ես չեմ սիրում ձմեռը»: Երբ հարցնում էի պատճառը, պատասխանում էր. «Նրա համար որ, ձմեռը միշտ տան ծածքի տակ եմ մնում:»

«Երբ արեը ծագնից, չը պահում ինչ զգայմունքից զրկված, նա կանգնեցրից իր ձին, և մի քանի րոպէ լուռ նայում էր դէպի այն կողմը, ուր նրա հօր լայնատարած կալուածների սահմանները հետզհետէ անյայտանում էին մեր տեսութիւնից: Նա խնայեն երեսը չուռ տուեց, որ ես չը նկատեմ նրա արտասուքը: Նա գիտէր, հետզհետէ էր այն երկրից, ուր ծնվել, մնվել ու մեծացել էր: Բայց ուր էր գնում,—ինքն էլ չը գիտէր: Բայց ինչու էր թագցնում ինձանից իր արտասուքը: Նա այնքան հպարտ էր, որ չէր արժանացնում ինձ տեսնել՝ ոչ նրա ողբախութիւնը և ոչ արտասութիւնը:

«Ես մօտեցայ, երբ նկատեցի, որ ուզում էր խօսել ինձ հետ:

—«Մենք լաւ չարեցինք, ասաց նա,—որ այդ ձիանները վեր առինք հօրս ախոռատնից:

—«Ինչու՞ լաւ չարեցինք, հարցրի նա:

—«Դու պիտես հօրս բնաւորութիւնը. նա այսօր այն խեղճ թուխիին սպանել կը տայ, որ մեզ ձիաներ տուեց:

—«Ուրիշ ճար չը կար. որտեղից կարող էինք գտնել ուրիշ ձիաները:

—«Կարող էինք ոտքով փախչել:

—«Դա կը յոգնեցնէր ձեզ: Իսկ մեզ պէտք է, որքան կարելի է, չուտով հեռանալ այդ կողմերից:

—«Ինչու՞:

—«Մինչ դուք չը գիտէք, որ հետամուտ կը լինեն մեզ: Մինչ դուք չէք իմանում, որ հէնց այս առաւօտ, երբ կը նկատեն, որ դուք տանը չէք, ամեն ինչ կը յայտնվի, և ձեր հայրը դեպի ամեն կողմեր մարդիկ կուղարկէ, որ ձեզ որոնեն:

—«Թող ուղարկէ: Այդ մթին ձորերը, այդ անտառները, այդ լեռները կարող են տարիներով պահել մեզ իրանց ծոցում, և ոչ ոք գտնել չէ կարող մեզ: Այդպէս չէ՞:

—«Այդպէս է, բայց դժուարութիւն ևս հարկաւոր է:

«Ես չը կամեցայ օրիորդի վստահութիւնը թուլացնել, թէև մեր ձեռնարկութիւնը աստիճ վտանգաւոր էր: Մենք կարող էինք և իմանի մարդիկներին հանդիպել, որոնք իմանալով օրիորդի փախուստը, նոյնպէս հետամուտ կը լինէին: Այդ պատճառով չատպում էի, բոլոր անգամ չը կորցնել, և այնօր, որքան կարելի էր, երկար ճանապարհ կարել:

«Գիշերը մենք մնացինք անտառում, իսկ երկրորդ օրվայ երեկոյեան պատուն տասանը կամ տասներկու մղոն: Կրասիը այդ կողմերում ուսուցչ և պարսից հողերի սահմանապահն է: Ես մտածում էի անցնել գետը և ուսուցչ հողի վրա ապաստան գտնել: Այդ կողմերում միակ անցքը թուղա-ափերինի կամուրջն էր: Բայց կամուրջով անցնել անկարելի էր, նախ այն պատճառով, որ այնտեղ կարող էին մարդիկ դրած լինել մեզ բռնելու համար, երկրորդ, մեզանից անցագրեր կը պահանջէին: Իսկ մենք, վախճառականներս, անցագրեր չունէինք:

«Դժուարութիւնը մեծ էր: Ինչպէս պէտք էր անցնել գետը: Ուրիշ հնար չը կար, պէտք էր որոնել գետի ծանծաղուտներում մի ոչ այնքան խորին տեղ և մարդասէրների նման անցնել ջրի միջով: Բայց Սահամը կարող էր կատարել մի այսպիսի յանդուգն ձեռնարկութիւն: Ես մնացել էի չուարած, չը գիտէի, թէ ինչ պիտի անեմ: Երբ օրիորդը նկատեց իմ յուսահատութիւնը, հարցրեց

—«Ինչու՞ էք կանգնած:

«Ես բացատրեցի նրան, թէ տեղի ապահով դիրքեան մէջ լինելու համար, պէտք է անցնել ուսուցչ հողի վրա:

—«Անցնենք, էլ ինչ բանի ենք սպասում, պա-

տասխանեց նա:

«Ես ցույց տուի ահարկու գետը:

—«Անցնելիք գետը, կրկնեց նա մի առանձին վստահութեամբ:

—«Դուք չէք վախենում:

—«Ինչից պէտք է վախենամ:

«Ես յայտնեցի նրան, թէ այն տեղը, թէև գետի ծանծաղ տեղերից մէկն է, այսու ամենայնիւ, բաւական խորն է:

—«Ես, ճշմարիտ է, լողալ չեմ իմանում, ասաց նա,—բայց ձին իս իմանում է, լողալով կը տանէ և կը հանէ ինձ միւս ափի վրա:

—«Բայց դրա համար պէտք է բաւական քաջութիւն ունենալ, պէտք է սրտի և հոգու հանգստութիւն ունենալ, չը շփոթվել, չը մոլորվել և կարենալ իրան ձիու վրա պահել:

—«Կարող եմ, ասաց նա: Ցետոյ աւելացրեց.

—«Մի և նոյն չէ, ես իս ուզում էի սպանել ինձ: Եթէ Աստուած կամենում է, որ ես կենդանի մնամ, նա ինձ կօգնէ և ոչ մի վտանգ չի պատահի: Իսկ եթէ հասել է իմ կեանքի վախճանը, աւելի լաւ է, որ այդ մաքուր գետը լինի իմ գերեզմանը:

«Հաւատը, մի այսպիսի ջերմ հաւատը նախախնամութեան անօրէնութեան վրա, միակ և ամենահաստատ զրաւականն էր, որ ինձ առիթ տուեց մոռածելու, թէ օրիորդը չի կորցնի իր հոգու քաջութիւնը և երկիւղից չի շփոթվի: Եւ այդքանը

բաւական էր կատարեալ յաջողութիւն սպասելու համար: Բաւական էր, ասում եմ, այն պատճառով, որ եթէ նա կը կարողանար իրան ձիու վրա պահել, ձին այնքան ուժեղ էր և վարժված, որ առանց դժուարութեան կարող էր լողալով դուրս տանել նրան միւս ափի վրա:

«Այսու ամենայնիւ, սպասելիք վտանգը մեծ էր: Ես բռնեցի օրիորդի ձիու սանձը իմ ձեռքում և պատուիրեցի նրան, որ իր ձին կառավարելու համար ամենևին հոգ չը տանի, միայն երկու ձեռքով պինդ բռնէ թամբից և աչքաւոր, որ ոտները դուրս չը սրածնեն սապանդակներից: Իսկ ես իմ ձին առաջ քշեցի, նրա ձիուն իմ հետից քարշ տալով: Երբ նրա ձին առաջին ոտները ջրից ջրի մէջ, ես նկատեցի, որ օրիորդը խաչակնքեց իր դէմքը և լուռ աղօթում էր: Մենք ըսկսեցինք առաջ գնալ: Ջուրը հաղիւ հասնում էր մինչև ձիանների կուրծքը: Օրիորդը սկսեց մինչև անգամ ծիծաղել իմ վրա, թէ ինչու ես այնքան չափազանց օրէնս նկարագրեցի գետի ահաւորութիւնը: Բայց ես զգուշացնում էի նրան, թէ կարող են պատահել և աւելի խոր տեղեր:

«Երասխի ծանծաղուտները այնքան վտանգաւոր չեն, մանաւանդ ամառը, երբ ջուրը փոքրանում է: Գիւղացիները մինչև անգամ սէլխարների հօտեր են անցկացնում: Միայն պէտք է ճանաչել այն տեղերը, ուր նշանաւոր խորութիւններ չեն պատահում: Իմ ընտրած տեղը ամենաստորական

տեղն էր, ուսկից անց էին կենում այն տեսակ մարդիկ, որ չէին յանկանում սահմանապահ զարաուլների հանդիպել: Բայց ով կարող է նախազուշակել, թէ գետը ամեն ժամ, ամեն օր ինչ յեղափոխութիւններ է կատարում իր յատակում: Այնտեղ, ուր երէկ ծանծաղ էր, այսօր բացվում է մի անդունդ խորութիւն: Իսկ ջրի խորտակիչ մասկերևոյթը զարհնալ հարթ-հաւասար է ւնում:

«Մինչև գետի լայնութիւնն կէսը անցանք առանց որ և է զժուարութիւնի: Ես խորհուրդ էի տալիս օրիորդին, որ երբեմն աչքերը խուէ, չսա չը նայի ջրին: Ձիաները ջրի արընթացութիւնն հետ կռուելով, փռնչալով, առաջ էին գնում: Գետ նրանց ոտները հասնում էին յատակին և այդ օգնում էր իրանց պինդ պահել և չը գնալ հոսանքի հետ: Բայց երբ հասանք խորութիւններին, նրանք սկսեցին լողալ: Այդ ժամանակ ամենավտանգաւոր րոպէն էր: Ես անդադար ձայն էի տալիս օրիորդին, որ չը վախենայ, և իրան ամուր պահէ թամբի վրա: Բայց ջուրը արդէն հասել էր մինչև թամբը: Ձիանների վեր բարձրացած գլուխներն էլին միայն երևում: Այդ միջոցին գետի սրընթաց հոսանքը սկսեց իր հետ տանել օրիորդի ձիուն: Ես աշխատում էի կանգնացնել նրան, ձիպտալով սանձից, որ իմ ձեռքում բռնած ունէի: Բայց հնար չեղաւ, սանձը կտրվեցաւ, և նրա ձին բոլորովին հեռացաւ ինձանից: Վտանգը ակներև էր: Օրիորդը, այսու ամենայնիւ, չը

կորցրեց սրտի ամրութիւնը և քաջութեամբ պահում էր իրան ձիու վրա: Ես փութացնում էի իմ ձիուն, որ առաջանայ և բռնեմ նրան: Բայց խոկոյն սարսափը սիրեց ինձ, երբ տեսայ, որ օրիորդը իր ձիու հետ խորասուզվեցան ջրի տակ: Ուրիշ հնար չը կար, պէտք էր թողնել իմ ձին, և լողալով պրոնել նրան ալիքների մէջ: Նրա ձիու պլուխը կրկին յայտնվեցաւ, ջրի տակից, օրիորդը դեռ նրա վրա էր գտնվում, երկու ձեռքով պինդ բռնած ունենով նրա բաշից: Ես լողալով մօտենում էի: Մենք արդէն չեղվել էինք ծանծաղուտներից և ընկել էինք սարսափելի խորութիւնների մէջ: Ես չեմ կարող նկարագրել այն բոլոր զարհուրանքը, որ այս րոպէիս էլ սիրում է իմ սրտին, երբ մտաբերում եմ իմ անխոհեմութիւնը, թէ որպիսի յիմարութեամբ ես թոյլ տուի ինձ այնպէս անհոգութեամբ վերաբերվել դէպի կատարի Երասխը: Ես թէ այն ժամանակ և թէ այժմ դեռ չեմ կարողացել պարզ հասկանալ, թէ ինչ կատարվեցաւ, և ինչպէս եղաւ, որ երբ աչքերս բաց արի, ինձ ջրի խորութեան մէջ գտայ: Երևի, մի ուժգին պոռթկ, մի կատարի յորձանք ինձ ևս տարել էր ջրի տակ: Բայց երբ կրկին բարձրացայ ջրի մակերևոյթի վրա, նայեցի, օրիորդը այլ ևս չէր երևում: Երկար ես լողում էի, այս կողմ և այն կողմ, երկար որոնում էի նրան, բայց նա չը կար ու չը կար...

«Մի ձայն գետի հակառակ ափից վաղուց կան-

չում էր ինձ: Բայց ես իմ խռովութեան խորին տաքնապի մէջ սկզբում ոչինչ չէի լսում: Ես կանչում էր. «դուրս եկէք, դուրս եկէք... դէպի այս կողմը:»

«Իմ ուժերը բոլորովին սպառված չէին, միայն օրիորդի կորուստը մահուան չափ տանջում էր ինձ: Ես սկսեցի ալիքները պատառելով լողալ դէպի կոչող ձայնը: Երբ դուրս եկայ ափի վրա, իմ ուրախութեանը չափ չը կար: Օրիորդը այնտեղ նստած էր և կոչող մարդը կանգնած էր նրա մօտ:

—«Դու այժմ փրկված ես... մի առանձին բերկրութեամբ ասում էր նրան, որպէս մի մարդ, որ խորին բաւականութիւն էր զգում, որ ազատել էր մի կեանք: Յետոյ դարձաւ ես դէպի ինձ, ասելով.

—«Դու բաւական քաջութեամբ կռւում էիր ջրի հետ, ես հաղթված չէ, որ դու դուրս ես եկել, այդ պատճառով քո մասին հոգ չը տարայ:

«Արևը դեռ նոր մայր էր մտել, դեռ բաւական լոյս կար: Երասխի գետաձորի մէջ մշտական քամին սաստիկ սառն է լինում, մանաւանդ երեկոյեան պահուն: Օրիորդը թրջված հագուստի մէջ ամբողջ մարմնով դողդողում էր: Անծանօթ բարեբարը առաջարկեց ինձ, տանել նրան մերձակայ գիւղը տաքանալու և հագուստները չորացնելու համար: Սանամը ոչինչ չէր խօսում, նա զբաղված էր մի տեսակ տենդային դրութեան մէջ: Բայց անծանօթի առաջարկութիւնը ինձ անդործ-

նական երևաց: Մենք փախստականներ էինք, անխոհեմութիւն կը լինէր մեր կողմից մանել բնակութիւնների մէջ: Թէև այդ մասին ես ոչինչ չը յայտնեցի անծանօթին, բայց, կարծես թէ, նա մի բան նշմարում էր: Օրիորդը, թէև ծածկված էր տղամարդի հագուստի մէջ, բայց նրա գլակը ջրի հոսանքի հետ գնալով, գլուխը մնացել էր բաց, և մազերի երկայն հիւսերը թափվել էին թիկունքի ու կուրծքի վրա: Այդ կասկածանքի մէջ ձգիլ անծանօթին: Ես աշխատեցի փարատել նրա կասկածը, ասելով, որ նա այս ինչ խոշի «զուէն» է, մայրը ուխտել է, որ մինչև քսան տարեկան հասակը մազերը չը կտրվեն:

—«Այդ ինձ չատ չէ հետաքրքրում... պատասխանեց նա,—բայց դրան հարկաւոր է չուտով մի տաք տեղ, եթէ ոչ խոհոյն տենդ կը տանայ:

—«Ինչ տղոց են այն գիւղացիները, հարցրի ես:

—«Հայեր են, պատասխանեց նա:

Երբ պատրաստվեցանք գնալ դէպի գիւղը, ես նոր նկատեցի, որ մեր ձիանները կորած էին: Անծանօթը ասաց, որ նրանք դուրս եկան գետի միւս ափի վրա: Կորուստը չատ զգալի էր: Փախստականը առանց ձիանների ոտ կարող էր գնալ: Կրկին լողալով անցնել գետը և որոնել ձիանները չատ դժուար էր. նախ, այն պատճառով, որ ես չէի կարող մենակ թողնել օրիորդին, երկրորդ, ոչինչ հատանականութիւն չը կար, թէ կարելի կը

վնաէր գտնել նրանց: Ձիանները այնքան սովորած էին եկած ճանապարհին, եթէ մի օտար մարդ չը քաշէր նրանց, ուղղակի կը դիմէին իրանց սիրոջ տունը:

Երբ անծանօթը նկատեց իմ չտեսրված դրութիւնը, ասաց.

—«Գնանք, ձիանների մասին կը մտածենք յետոյ:

—«Ինչ կարող ենք մտածել, հարցրի ես:

—«Գիւղից ուրիշ մարդիկ կուղարկենք, որ ուրտնեն նրանց:

«Գիւղը շատ հեռու չէր. մօտիկ գնալ էր պատրաստ, երբ հասանք այնտեղ: Անծանօթը չը բաժանվեցաւ մեզանից, որպէս երեսում էր, նա իր առաքելութիւնը կամենում էր մինչև ծայրը հասցրնել: Իմանալով, որ մենք օտարականներ ենք, նա հոգ տարաւ մեզ համար պիտի ներելու օթևան եւ գտնել:

—«Ես էլ այստեղ օտար եմ, ասաց նա,—ձեզ կը տանեմ մի և նոյն տունը, ուր ես մի քանի օր կացել եմ: Նրանք բարի և հիւրասէր մարդիկ են:

«Օրիորդը հաղիւ էր չարժվում. սոսկալի դէպքը խլել էր նրանից ամեն զօրութիւն: Յենած իմ թևքի վրա, դժուարութեամբ փոխում էր նա իր դողդոջուն քայլերը:

«Տունը, ուր տարաւ մեզ անծանօթը, գիւղի նշանաւոր անձնաւորներից մէկի տունն էր: Մեզ

պատահած դժբախտութեան տեղեկութիւնը բաւական էր, որ հրաւիրէր բոլորի կարեկցութիւնը մեզ վրա: Այդ պատճառով մեր տախտակի մասին ոչինչ չը խօսեցինք:

«Օրիորդին պէտք էր հանգստութիւն, պէտք էր ջերմացնել սառած մարմինը: Խոհեմ մի տանտիկին անկողին պատրաստեցրեց: Նա խնդրեց ինձ օգնել իրան, որ հանէ թրջված հագուստը: Նա միւսներին հետացրի, որպէս զի չը նկատեն, թէ նա աղջիկ է և ոչ տղայ: Վիշապ, ցաւը, հիւանդոտ դրութիւնը խլել էին նրանից կանացի պարկեշտութեան այն զգուշութիւնները, որով կինը չէ ներում մի օտար տղամարդին չօշափել իր մարմինը: Բայց այն դրութեան մէջ նա նայում էր իմ վրա, որպէս իր ազատիչներից մէկի վրա: Եւ իմ զգացմունքները այնքան մաքուր էին, որ օրիորդը չէր սխալվում իր վերաբերմունքի մէջ:

«Նա անկողնի մտնելուց յետոյ ես չը հեռացայ նրա կշտից, մինչև տաքացաւ և ջերմ քրտինքը պատեց ճակատը: Քունը չոտով սիրեց նրան, բայց անդադրին և անհանգիստ քունը: Բորբոքված երեակայութիւնը դեռ արթուն էր: Երկար նա տանջվում էր սոսկալի երազներով, և երբեմն խօսում էր իսուն զառանցութիւնների մէջ: «Թէկուզ սպանէք, թէկուզ կտրատէք, պարսկի կին չեմ դառնայ»... այդ խօսքերը մի քանի անգամ լսելի եղան նրա բերնից:

«Գիշերը ևս մնացի նոյն սենեակում, ուր պառկած էր օրիորդը: Միանգամ միայն մտաւ ինձ մօտ անծանօթը և հարցրեց օրիորդի դրութիւնը: Տանեցիներից ոչինչ ոչ ոք չը խանգարեց նրա հանգստութիւնը:

«Առաւօտեան օրիորդը իրան լաւ էր զգում. վերկացաւ և առանց իմ օգնութեան հագնվեցաւ: Ես միայն ջուր տուի լուացվելու: Նրա վիճակը ինձ այն աստիճան զբաղեցրել էր, որ դեռ ուշադրութիւն չէի դարձրել, թէ որտեղ ինք գտնվում, կամ ով է մեր հիւրընկալը: Ես մինչև անգամ իմ հնարհակալութիւնը դեռ չէի յայտնել անծանօթին, որ օրիորդի կեանքը ազատեց խեղդվելուց, և դեռ չը գիտէի, թէ ինչ դիպուածով պատահեց նա գետի ափի մօտ, երբ մենք ենթարկվեցանք սոսկալի վտանգին:

«Առաւօտեան անծանօթը կրկին մտաւ մեզ մօտ: Մնծ եղաւ իմ զարմանքը, երբ նկատեցի, որ այդ մարդը ծանօթ էր ինձ: Դա մի և նոյն ճղնաւորն էր, որին իմ պատանեկութեան հասակում տեսել էի Որսոնայ վանքում: Այժ, նոյն ճղնաւորը, երկու ականջների ծայրերը կտրած, բաղուկները և ձեռքի երեսը դրոշմված երուսաղէմի ուխտաւորի նշաններով: Իսկ այժմ նա աշխարհականի հագուստ ունէր, թէև այդ հագուստի մէջ ևս պահպանել էր իր բարձր առաքինութիւնը:

«Տեսնելով օրիորդին առողջ, չափազանց ուրախացաւ նա, և մի առանձին կարեկցութեամբ մօտեցաւ, նստեց մեզ մօտ: Երևում էր, մեզ հետ առանձին խօսելիք ունէր, այդ պատճառով պատուիրեց ինձ սենեակի դուռը փակել և ոչ ոքին ներս չընդունել:

—«Ես այսուհետև չեմ, ասաց նա,—ես էլ ձեզ նման օտարական մարդ եմ այս դիւղում: Այսօր պէտք է հեռանամ այստեղից: Ես եկայ ձեզ մօտ հարցնելու, արդեօք այլ ևս հարկաւոր չեմ լինի ձեզ:

—«Ձեր կատարած գործը այնքան մեծ է, որ մենք իրաւունք չունենք ասելին պահանջել ձեզանից, պատասխանեցի ես:—Մեզ մնում է միայն հնարհակալ լինել ձեր առաքինութեան համար:

—«Այդ ասելիքդ է, ասաց նա համեստութեամբ:

—Ես արել եմ այն, ինչ որ ամեն մարդու պարտքն էր անել, երբ տեսնում է զժբախտութիւն: Բայց դուք այն ասեցէք, արդեօք մի որ և իցէ այլ բանում պէտք եմ ձեզ, թէ ոչ: Ես սիրում եմ պարզ խօսել. ասելի լաւ կը լինի, որ դուք ևս բոլորովին անկեղծ լինէք ինձ հետ...

«Վերջին խօսքերը ինձ կասկած պատճառեցին. երևում էր, որ նա փոքր ի շատէ տեղեկութիւն ունէր մեր գաղտնիքի մասին: Ես պատասխանեցի.

—«Մենք չենք կարող անկեղծ չը լինել դէպի մի բարերար, որ այնքան մեծ զոհաբերութիւն յանձն առեց ազատելու մի կեանք:

—«Մի օրիորդի կեանք... կրկնեց նա խորհրդաւոր ձայնով:

«Ես մնացի չուարած: Ո՞րտեղից գիտէր նա,

որ ազամարդի հագուստով ծպտեալ պատանին օրիորդ էր: Նա պատասխանեց.

—«Օրիորդին ջրից հանելու ժամանակ ես արդէն հասկացայ, որ նա ազամարդ չէ: Նրա մի այսպիսի ծպտեալ դրութիւնը առիթ է տալիս ինձ մտածելու, որ ձեր վարմունքի մէջ թաղված է մի գաղանիք: Դուք չէք սխալվի, եթէ այդ գաղանիքը կը յայտնէք ինձ: Գուցէ ես կարող կը լինեմ դարձեալ օգնել ձեզ:

«Օրիորդը, որ բոլոր ժամանակը լուռ լսում էր, ընդհատեց մեր խօսակցութիւնը, ասելով.

—«Ես գաղանիք չեմ պահի մի մարդուց, որը ազատեց իմ կեանքը: Ես սկսեց նա մի քանի միջէ պատմել, թէ ինքը ում աղջիկն է, պատմեց իր հօր անգութ վարմունքը, որ իրան ուզում էր բռնութեամբ մահմեդական խանին տալ, և ինքը այդ բարբարոսութիւնից ազատվելու համար, բանտիվեցաւ փախուստի մէջ փրկութիւն որոնել և այլն:

«Ընծաղօթը խորին ցաւակցութեամբ լսում էր: Երբ օրիորդը աւարտեց, ասաց նա.

—«Որքան ցաւալի է ձեր պատմութիւնը, յարդելի օրիորդ, այնքան զովելի է ձեր արիութիւնը, որով պատերազմեցիք կոպիտ բռնութեան դէմ և բարի օրինակ դարձաք չատերի համար: Հիմա աղջիկներ մահմեդականների խանդերին տալը այն սովորական կաչառքներից մէկն է համարվում, որով չարամիտ մարդիկ ձգտում են այս և այն նպատակին հասնել: Դա վատ է, դա չատ վնասակար է: Ձեր պատմութիւնը ամէն և ամէն պրատից իմ կարեկցութիւնը: Ես ուրախ եմ, որ դնե ես մի փոքրիկ ծառայութիւն կարող եմ անել ձեզ:

—«Բաւական է, ինչ որ արեցիք, պատասխանեց օրիորդը:

—«Ոչ, բաւական չէ, պատասխանեց Նա հանդարտութեամբ:—Դուք այժմ գտնվում էք ռուսաց հողի վրա, դուք փախստական էք պարսից երկրից, դուք անցել էք այս կողմը առանց անցագրի,—այդ բոլորը ձեզ խիստ դժուարին դրութեան մէջ է դնում: Ձեր հայրը այնքան ազդեցութեան տէր մարդ է, բաւական է, որ Նա գրէ այստեղի կառավարութեանը, ձեզ իսկոյն կը բռնեն և յետ կուղարկեն, որովհետև դուք փախստական էք, դուք անցագիր չունէք: Այդ լաւ է, որ դուք արգամարդի կերպարանքի մէջ էք մտել, բայց այդ բաւական չէ ձեր ապահովութեան համար: Դուք դեռ գտնվում էք պարսից սահմանի մօտ, պէտք է հեռանալ այստեղից և չատով հեռանալ: Բայց այդ դժուար կը լինի ձեզ, որովհետև դուք կորցրիք ձեր ամենակարևոր դիւրութիւնները,—ձեր ձիանները: Ես գիշերը այդ մասին մտածում էի, մի քանի լաւ լուացողներ ուղարկեցի, անցան գետը որոնելու ձեր ձիանները, բայց առաւօտեան լուր բերեցին, որ չը գտան նրանց: Դուք առանց ձիանների ոչ մի տեղ գնալ չէք կարող: Ձեզ պէտք է չատ ափով կերպով տեղափոխվել մի տեղից

միւս տեղ, իսկ այդ առանց ձիանների անկարելի է:

«Նրա նախաորոշումները ուղիղ էին: Մեր դրութիւնը խիստ դժուարին էր: Մենք զուրկ էինք ամէն միջոցներից, որ մեր պէտքերը հոգայինք: Մեր վախուտը այնքան անակնկալ և անպատրաստ կերպով կատարվեցաւ, որ ապագայ պէտքերի մասին ամենևին չը մտածեցինք: Մենք մինչև անդամ այնքան վոզ չունէինք, որ մեզ համար հաց պնէինք ուտելու:

—«Ես, չարունակեց նա,—բոլորը հոգացել եմ: Ես վարձեցի ձեզ համար երկու ձիաներ, որոնց տէրը կը տանէ ձեզ ուր որ կը կամենաք: Միայն խորհուրդ կը տայի, որ անցնէիք Վափանի կողմերը. այնտեղ ժողովուրդը բարի է, ամէն տեղ կընդունուեն, ամէն տեղ կը պահպանուեն ձեզ: Դուք ժամանակ չի պիտի կորցնէք, հէնց այսօր, հէնց այս առաւօտ պէտք է ճանապարհ ընկնէք: Օրիորդը այնքան առողջ է, որ կարող է չարունակել ճանապարհորդութիւնը: Ես հոգացել եմ լաչ որ պէտք է ճանապարհի համար: Ձեզ պակաս է մի բան, որ ամէն տեղ կը պահանջին ձեզանից: Ես անցագրի մասին եմ խօսում: Ես կը տամ ձեզ երկու անցագրեր: Օրիորդը թող մնայ իր ծպտեալ կերպարանքի մէջ, որպէս և է, միայն տղամարդ ձևանալով, պէտք է ընդունէ մի տղամարդի անուն: Իսկ դուք, դարձաւ դէպի ինձ,—նոյնպէս պէտք է փոխէք ձեր անունը:

«Վերջացնելով իր պատուէրները, հանեց նա իր ծոցից երկու պարսկերէն անցագրեր, մէկը տուեց ինձ, միւսը օրիորդին, յայտնելով, որ մենք կրնենք այնուհետև նրանց մէջ նշանակված անունները:

«Բոլոր ժամանակը խօսում էր նա մի այնպիսի եղանակով, կարծես, մեր վաղեմի բարեկամը կամ մտերիմ խորհրդակիցը լինէր: Գլուխը դէպի ցած խոնարհեցրած, կիսաձայն այնքերով խիստ հաղիւ անդամ նայում էր մեր երեսին: Բայց մի խորհրդաւոր վհատութիւն, առաքինական խիստ ազդու արտայայտութիւն նշմարվում էր նրա պատկառելի դէմքի վրա: Ես Աստուծոյ մի առանձին ողորմութիւնն էի համարում, որ մեր ճնշ ղրուժեան մէջ ուղարկեց մի այնպիսի օգնական: Բայց օրիորդը այնքան հպարտ էր, որ չատ դժուար եղաւ համոզել նրան, որ ընդունէ մի օտար և անծանօթ անձից այս տեսակ բարերարութիւններ: Բայց անհրաժեշտ կարիքը նրան ևս ստիպեց հաշտվել հանգամանքների հետ:

«Երբ ամէն ինչ պատրաստ էր, մենք սենեակից դուրս եկանք: Մեր հիւրնկալը բարեմաղթութեամբ ճանապարհ դրեց մեզ, իսկ անծանօթը բաւական տեղ եկաւ մեզ հետ: Օրիորդը նստած էր ձիու վրա, իսկ ես անծանօթի հետ գնում էինք ոտով: Իմ ձին բերում էր մեր հաւից չարվաղարը:

«Ինձ բոլորովին չէր զարմացնում այն միտքը, թէ ինչու կամ ինչ պատճառներից դրդված, այդ մարդը ընդունում էր այնքան խորին կարեկցու-

թիւն մեր դրամների մէջ: Բաւական էր, որ ես դիտէի, թէ նա մի ժամանակ ճգնաւոր է եղել, թէ Աստուծուն նուիրված մարդիկ միշտ պատրաստ են օգնել, բարիք գործել, երբ տեսնում են թշուառութիւն, երբ տեսնում են կարօտութիւն:

«Բայց ես տակաւին տարակուսութեան մէջ էի գտնվում, իմ կասկածը բոլորովին փարատված չէր, թէ արդեօք դա մի և նոյն անձնաւորութիւնն էր, որին իրրև ճգնաւոր մի ժամանակ տեսել էի Որսանայ վանքում, թէ ես սխալվում էի չափազանց ճիշտ նմանութիւնների մէջ:

«Բաւական տեղ մեզ ճանապարհ դնելուց յետոյ, երբ կամենում էր նա բաժանվել մեզանից, ես հարցրի.

—«Մենք չի պիտի դիտենանք, թէ ումից պէտք է շնորհակալ լինենք այսքան բարութիւնների համար:

«Նա առնութեամբ պատասխանեց.

—«Կարծեմ, մի առանձին հարկաւորութիւն չը կայ այդ դիտնալու:

—«Այսուամենայնիւ, ինձ շատ ցանկալի էր դիտենալ, թէ դուք ով էք:

—Եթէ այդ ձեզ որ և իցէ օգուտ կը բերէր, ես կասէի ձեզ:

«Ես ուզիղ նայեցի նրա երեսին, ասելով.

—«Եթէ իմ յիշողութիւնը ինձ չէ խաբում, կարծեմ, ես տեսել եմ ձեզ մի ժամանակ մի վանքում... մի քաղաքի մէջ... դուք ճգնաւոր էիք...

«Նրան սրտից մի վայրկենական խռովութիւն, բայց իսկոյն ծածկելով իր չիմաստութիւնը, պատասխանեց.

—«Գուցէ չէք սխալվում... այն ժամանակ ճգնում էի մի լեռան քարանձաւի մէջ, հեռացած մարդկիններից... իսկ այժմ ճգնում եմ կեանքի մէջ...

«Այս ասելով, նա տուեց ինձ իր քսակը:—«Ա՛ռ, ասաց, ճանապարհին ձեզ պէտք կը լինի, և իսկոյն բաժանվեցաւ մեզանից:

«Ես ապշած մնացի, մի խօսք անգամ չը գտայ նրան ասելու, միայն քարացածի պէս կանգնած, նայում էի նրա հետից: Նա էլ ճանապարհորդ էր, նա էլ մի տեղ էր գնում, բայց ուր էր գնում,—Աստուած գիտէ: Նա իր քսակը տուեց ինձ. ես հասկացայ էի, որ դա նրա վերջին ապրանքն էր: Իսկ ինքը գնում էր միայնակ, ոտքով, մի երկայն ցուպ ձեռին բռնած, աղքատ ուղեորի պարկը ուսին կապած:

Երբ աւազակապետը վերջացրեց, հարցրի նրանից.

—Այնուհետև միանգամայն չը հանդիպեցիք նրան:

—Ոչ: Այն օրից անցել են շատ տարիներ, կըրկին հանդիպեցի նրան միայն այստեղ, քեզ հետ միասին, մուրացկանի կերպարանքով, և այդ խիստ զարմացնում է ինձ: Այդ մարդը մի տեսակ հանելուկ է ինձ համար: Ես շատ կը ցանկանայի,

որ մէկ անգամ ևս տեսնէի և խօսէի նրա հետ: Իբրև մուրացկան նա նոյն բարի և առաքինի մարդը երևայ ինձ, որպէս էր առաջ: Դու տեսար, ինչպէս կարեկցութեամբ մօտեցաւ նա զառապարտեալների խումբին, ինչպէս բաժանեց մեզ իր հաւաքած գրօշները, ասելով. «Դուք աւելի ձշտաւ էք քան մէկ ևս...

Ես դարձեալ գազանիք պահեցի խարէբազար մուրացկանի մասին, այսքանը միայն ասելով իմ լաւ ընկերին.

—Գուցէ մէկ անգամ ևս կը տեսնենք... այդ մարդը չատով չի հեռանայ այստեղից...

Ես հաւատում էի, բոլորը հաւատում էին, ինչ որ պատմում էր աւազակապետը: Քաւար Պետրոսը այն տեսակ առասպելական արարածներից էր, որ ընդունակ էր հրեշտակից սատանայ լինել, իսկ սատանայից հրեշտակ: Թէ բարին և թէ չարը նրա մէջ մի և նոյն ուժով էին գործում: Միայն հանգամանքներից էր կախված, թէ երբ կամ ինչ դէպքերում պէտք էր որը գործ դնել: Նա աչխարհի մարդ էր, գիտէր, թէ ինչպէս պէտք էր վարվել աչխարհի հետ: Ես ինքս վկայ էի եղել չատ գործերի, որոնց մէջ նա ցոյց էր տուել թէ իր վերին աստիճանի առաքինութիւնը և թէ իր վերին աստիճանի անզգութիւնը: Ես տեսել էի նրան բարեսիրտ, որպէս ազատնի, և նենգաւոր, որպէս օձ: Այդ մարդը, որի հետ տարիներով ապրել էի, գործել էի, ինձ համար ևս մնացել էր որպէս մի

մթին հանելուկ: Ես հասկանալ չէի կարողանում, թէ ինչպէս չարն ու բարին, առանց միմեանց հետ հակառակելու, հաչտւում էին նրա մէջ: Բայց հաւատացած էի, որ նա ամենայն անկեղծութեամբ, ամեն տեսակ դոհարերութիւններ յանձն առնելով, նիւել էր ինձ ազատելու իմ թչնամու գրաւիչնից: Բայց ես կարող էի կրկին անձնատուր լինել մի մարդու, որը այդքան բարի էր, նոյնքան ևս չար էր:—Այդ հարցը դարձեալ մնաց իմ սրտում անվճիռ...

Գ.

ՁՈՐԲՈՐԴ ԳԻՇԵՐ

—Դու այն պատմիր, թէ ինչու են կոչում քեզ աւազակապետ և որպէս ընկաւ պատապարտեալների հասարակութեան մէջ,—հարցրի ես չորրորդ գիշերը, երբ կամաւոն հանդուրժել էինք ցերեկվայ ծանր աշխատութիւնից:

Աւազակապետը չարաճակեց.

«Մեր անծանօթ բարերարի վարձած ձիաներով անցանք Մեղրիի պատը: Այստեղ ճանապարհները այն աստիճան քարքարոտ են և լեռնային ելեւէջները այն աստիճան ոտրտուելի են, որ անկարելի է ձիով մանը դալ: Մենք ստիպված էինք մեր ձիաները փոխել և վարձել ջորիներ: Այդ խորամանկ անասունները սովոր են լեռնային քարքարոտներում մանդալ:

«Սկզբում Սանամը զժուարութեամբ յօժարվեցաւ ջորիի վրա նստել: Պարադայի մէկիկ ազջիկը, որ սովորած էր սիպտակած նժոյգների, կարծես, ամաչում էր, որ ստոր անասունների վրա հեծած տեսնէին նրան: «Ինձ այլ ևս ով է ճանաչում»... ասաց նա և մի աւանդին մոտերմելով իջաւ ջորուց և ինձանից օգնել խնդրեց, որ հեծնէ: Ես պատասխայ: Սանամը, որ ծալ նման ձիանների վրա թռչել դիտէր, ինձանից օգնութիւն էր խնդրում: Երբ վարը ինչ ասաջ գնացինք, ասաց նա.

—«Վերջին ժամանակներում չատ ուժասիսկ եղայ...

«Նրա ձայնի մէջ լսում էր խորին տխրութիւն և սրտի դառն կսկիծ:

—«Դարձ այս աշխարհում ոչինչ չը կեցաը, ասեցի նրան,—կարելի է քաղցածութիւնից լինի:

«Ոչ... պատասխանեց նա:—Շատ անգամ, սուրբ Սարգսի պատին, երկու կամ երեք օրով ծոմ էլ պահում, ոչինչ չէլ ուտում, բայց երբէք ուժասիսկ չէլ լինում:

—«Ելնենք, գնաը ձեզ վրա վատ ազատութիւն գործեց... Նկատելի է:

—«Ոչ: Այն մարդը չատ վրէժխնդիր, ես դեռ բոլորովին չըլի ասկը չէլ գնացել, որ ազատեց ինձ: Ա՛խ, երանի թէ գիտենայի՝ ով էր այդ մարդը: Երևում է, որ Աստուած մեզ հետ է: Նա ուզարկեց այդ մարդուն մեզ օգնելու համար:

«Վերջին խօսքերը մխիթարում էին նրան և աւելի ամրացնում էին նրա հաւատը, որը խիստ վառ էր օրիորդի մէջ:

«Ըը նայելով, որ ջորիները դանդաղ էին ընթանում, դարձեալ մենք այն օրը անցանք բաւական

ճամապարհ։ Գնալով լեռների միջով, չատ անգամ ստիպված էինք անցնել այնպիսի վտանգաւոր տեղերից, ուր անձնասատան որսորդները միայն ազատ են կոխում, այն ևս խիստ հազիւ անգամ։ Ջարդվայրների դժուարութիւնները երբեմն ստիպում էին մեզ ցած իջնել ջորիներից, և ազատամների վրայով մագլցելով, առաջ գնալ։ Սանամը բոլորովին յոգնած էր, հազիւ-հազ կարողանում էր իրան ոտքերի վրա պահել։ Ես մի քանի անգամ առաջարկեցի բռնել նրա ձեռքից, օգնել նրան, բայց ամեն անգամ մերժում առացաւ։ Նա դեռ խոչում էր ինձանից. նա այնքան հպարտ էր, որ դեռ նայում էր իմ վրա, որպէս իր հօր ատն ծառաներից մէկի վրա։ Ես դեռ նրա մտերիմ, անձնատուէր բարեկամը չէի։

«Երբ բարձրացանք սարերի վրա, արեը արդէն սկսել էր թեքվել դէպի իր երեկոեան մուտքը։ Սառոյցներում ոտքը խեղդում էր, իսկ այստեղ ցուրտը մրսեցնելու չափ զգալի էր։ Ջորիներից յած իջանք, նստեցինք փոքր ինչ հանգստանալու։ Ես առաջարկեցի օրիորդին փաթաթվել իմ վերարկուի մէջ. նա յօժարութեամբ ընդունեց, որովհետև վերարկու չէր առած իր հետ։ Ձեռաց առեցի նրան մի քան ուտելու. նա բոլորովին կազդուրվեցաւ և գանվում էր բաւական խաղաղ տրամադրութեան մէջ։

«Աբեը մռաւ։ Երեկոեան վերջալոյսը հետզհետէ զրկվում էր իր պարզ-ծիրանի չառաւիղներից։

Սարերի գագաթները պատած էին սպիտակ ձիւնափայլ մշուշով, որը միախառնվելով երկնքի կապուտակութեան հետ, ներկայացնում էր անսահման մանիշակագոյն ովկիանոս, որի մէջ լեռների ալիքաւոր բարձրութիւնները ձևացնում էին աբանչելի տեսարան։ Օրիորդը լռութեան սիրող էր։ Ես նրա առեցի՝ նայն ժամուն յափշտակված էր նա խորին հիացմունքով և նրա խոշոր աչքերը մի առանձին ոգեորութեամբ նայում էին դէպի գեղեցիկ լեռնային տարածութիւնը։ Ես նստած էի նրա մօտ։ Նա դարձաւ ինձ այս խօսքերով.

— «Նայիր այն նեղ հովիտին, որ հազիւ երեւում է թափանցիկ մառախուղի միջից. նայիր այն բաց-կանաչագարդ խոտերին, որ պատել են նրա սիրուն տափարակը, տես այն վտակը, ինչպէս չուապով վազում է դէպի ձորը. ականջ դիր, որքան քաղցր է լսվում նրա ձայնը։ Ա՛խ, որքան դեղեցիկ է այդ բոլորը։ Այնտեղ երեում են հովիւների տաղաւարներ։ Տե՛ս, ոչխարները վերադառնում են արօտից. ես լսում եմ նրանց ձայնը։ Ա՛հա խիվեցան նրանք տաղաւարների չուրջը։ Մեհիները դուրս եկան կթելու նրանց. փոքրիկ գառները, փոքրիկ ուլերը կռվում են կթողների հետ, թէ ինչու են խլում իրանց մնունդը։ Բայց նրանց մայրերը այնքան առատ են, որ բաւականութիւն են տալիս՝ թէ իրանց ախերին և թէ իրանց ձագերին։ Գնանք այդ հովիւների մօտ և վայելենք նրանց հիւրասիրութիւնը։

«Հավիտյան, որ այնքան ոգեւորվելուն, նկարագրում էր օրիորդը, չատ հետո չէր մեր նստած տեղից։ Երեկոյեան մի ուրիշներ սկսել էր խանդարանալ։ Շարունակել մեր հանդարտ զրույցները չէինք կարող, որովհետեւ թէ՛ մենք և թէ՛ մեր հանդիսականները սասիկ յոգնած էինք։ Վատ էր մի օրհներ դիշերվա համար։ Բայց նախ քան այդ հավիտների մասն հիւրասիրելը, հարկաւոր էր տեղեկանալ, թէ նրանք ինչ տեսակ մարդիկ են։ Այդ մարմ եւ մասնաւոր մեր ջոկերպանին, որ մեզանից փորր ինչ հետու պահպանում էր իր անհանգիստները։

«Ջորեպանի տուած տեղեկութիւնները հավիտների մասին խիստ նպաստաւոր էին։ Այդ խաչնարածները եկած էին Վասպանի կողմերից, ազգով հայ էին և յայտնի էին իրանց քաջութեամբ։ Այստեղ ժամանակաւորապէս գիտեզվել էին նրանք՝ ամառը անցկացնելու և իրանց անհանգիստները պահպանելու համար։ Վերջացնելով իր խօսքերը, ջորեպանը խորհրդով տուեց նրանց մօտ գնալ և ասելի բարեաւ էր համարում դիշերը անցկացնել նրանց տաղաւարների մէջ, քան թէ բացօթեայ մնալ։ Բայց միևնոյն ժամանակ ակնարկեց նաև, որ այդ հավիտները փոքր ինչ կասկածաւոր մարդիկ են, աւազակներ են։

—«Եթէ ուզում ես աւազակից անվնաս մնալ, պէտք է աւազակի աումը գնալ, պատասխանեցին նա։

«Ոչինչ հնար չը կար. դիշերը բացօթեայ դրսում մնալը կարող էր մեծաւոր ազդեցութիւն ունենալ օրիորդի առողջութեան վրա։ Մենք ոչինչ պատրաստութիւն չունէինք մեզ հետ, ինչ էլ որ ունէինք, կապած էին մեր ձիաների վրա, բայց նրանից անցկենալու միջոցին, պատահած վտանգի ժամանակ, ձիաները իրանց հետ տարած։ Ես վճռեցի գնալ հավիտների մօտ, մանաւանդ որ օրիորդի ցանկութիւնն էլ հենց այդ էր։

«Մութը բոլորովին պատել էր, երբ հասանք նրանց ամպատնակին։ Ոչխարները մտցրել էին բնակութիւնից հետու, առանձին հանդրուանների, իսկ տղաքների մօտ խմբվել էին ավելի խաչոր անասունները՝ ձիաներ, կովեր, եզներ և այլն։ Տեղ-տեղ վառվում էին խարոյկներ, որոնց շուրջը՝ խաւարի վրա՝ նստած էին ալեւոր մարդիկ, ծխում էին, խօսում էին, իսկ կիներները մի բան էին եփում ընթրիքի համար։ Խարոյկների ազօտ լուսով այդ լեռնականների կերպարանքները ասելի մեծ կերպով նշմարվում էին պիշերային մթութեան մէջ։ Երիտասարդները զրաղված էին իրանց նժոյգներով, քերում էին, մաքրում էին նրանց մարմինը և ծածկում էին թաղիքներով, որ պիշերը չը մրսեն։ Իսկ նրանց ծերունի հայրերը դեռ չէին ասարել իրանց երեկոյեան ազօթքը, բաց երկնքի տակ, մերկ գետնի վրա չոքած, լուռ աղօթում էին։ Տիրում էր ընդհանուր լռութիւն. երբեմն հետուից լսելի էին լինում խուլ

ձայներ. սրտում էին մի որ և իցէ կորած առնասուն:

‹Շները ահագին ամուր բարձրացրին, երբ մօտեցանք նրանց տաղաւարներին: Հովիւները խռովութեան մէջ ընկան, ամէն կողմից վազեցին, որ անանեն, թէ ինչ մարդիկ ենք: Մեր ջօրեպանը, որ ծանօթ էր նրանց սովորութիւններին, առաջ գնաց, յայտնեց, որ ճանապարհորդներ ենք, պիչերելու օթևան ենք խնդրում: Նրանք հանդարտացան և ամէն կողմից սկսեցին հրաւիրել մեզ իրանց տաղաւարները: Որպէս զի ոչ մէկին վիրաւորած չը լինենք, մենք իջանք առաջին հանդիպած տաղաւարի առջև: Այստեղ, կարծես, վազուց սպասում էին մեզ. երկու պատանիներ դուրս վազեցին, բռնեցին մեր ջորիները և մեզ ներս տարան:

‹Մեր բախտից տաղաւարը, որ վիճակվեցաւ մեզ, պատկանում էր խաչնարածների բաւական նշանաւոր և հարուստ ընտանիքներից մէկին: Ընտանիքի հայրը մի ծերունի էր, բայց դեռ ժիր և աշխոյժ, կարծես, տարիների բոլոր չարքերը իզուր էին անցել խլելու նրա մարմնի ամրութիւնը և սրտի զուարթութիւնը: Նա խիստ սիրով ընդունեց մեզ, յայտնեց իր ուրախութիւնը և հրաւիրեց նստել իր մօտ: Նա թնաւ հարցափորձ չարեց, թէ ով էինք մենք, որտեղից էինք գալիս կամ ուր էինք գնում: Դա նրանց սովորութեամբ մի տեսակ վիրաւորանք էր հիւրի համար: Բաւա-

կան էր, որ մենք նրա տաղաւարի ծածկի տակ էինք գտնվում, և այդ րոպէից նրա գերդաստանի անդամներից մէկն էինք համարվում:

‹Այդ լեռնաբնակները, դեռ պահպանված լինելով նահապետական պարզութեան մէջ, ազատ էին ինացել կրթված աշխարհի կեղծ քաղաքավարութեան ձևերից: Երբ իմացան մեր հայ-քրիստոնեայ լինելը, ուրախ մտերմացան մեզ հետ: Ամենայն բարեսրտութեամբ խօսում էին, ծիծաղում էին, և ամէն կերպով աշխատում էին պահպանել մեզ, որ ոչինչ պակաս չը լինի մեզ համար:

‹Մեր հիւրնկալը առանձին ուշադրութիւն էր դարձնում մեր ձիերի վրա. մէկ-մէկ վեր էր առնում, ճրագի լոյսի առջև գնում էր, և իր հմտութիւնը ձիերի ճանաչելու մէջ ցոյց տալու համար, ասում էր, թէ որը ինչ գործարանի կամ ինչ ժամանակի գործ էր: Հին ձիերը յարգի էին դրանց մօտ: Ձիերից նա գաղափար կազմեց մեր ինչ պրոֆեսիան կամ ինչ առեւծանի մարդիկ լինելու մասին: Հասարակ մարդիկ չէին կարող ունենալ այն տեսակ հարուստ պիերներ: Այդ րոպէից նրա յարգանքը ուրիշ ևս բազմացաւ մեր վերաբերութեամբ:

‹Ընթրիքը երկար չը տևեց: Լեռնաբնակները չուտ են ուտում, և կերակուրների տեսակները այնքան առատ չեն, որ շատ ժամանակ պահանջեն: Նա մտածում էի օրիորդի հանգստութեան մա-

ալին. նա սաստիկ յոդնած էր: Վերջնին նոյնպէս նկատեց, որ մեր խօսակցութեան միջոցին, նըստած տեղում, նիրհում էր նա: Բայց գերդաստանի հայրը երեակայել անգամ չէր կարող, թէ մի տրիչ արարած, որը հասակով փոքր էր իրանից, կարող էր հանգստութեան վրա մտածել, քանի որ ինքը տակաւին նստած էր, քանի որ ինքը գնա քնելու ախորժակ չունէր: Ամէն մարդ քնելու իրաւունք ունէր, երբ նա արդէն քնած էր. ամէն մարդ ուտելու իրաւունք ունէր, երբ նա արդէն կերած էր: Ամէն բանի մէջ պէտք է նա առաջինը լինէր, իսկ միւսները հետևողներ:

Ես նա տեսնում էի՝ ընթրիքի ժամանակ ծերանում բոլոր որդիքը ուրախ վրա սպասաւորութեան էին անում, կամ մի քան ներս էին բերում և կամ դուրս էին տանում: Նրանցից մէկը միայն, երէց որդին, հօրից թոյլտուութիւն ստացաւ մնալ հետ սեղանակից լինելու: Կնիկները ամենևին չէին երևում, նրանք փակված էին ուղտաւարի առանձին բաժնում: Երբ սեղանը հաւաքեցին, որդիները հեռացան, որ իրանք էլ մի բան ուտեն: Մենք ծերանու հետ մնացինք ուղտաւարում միայնակ:

«Որդիների թիւը հասնում էր չորս հոգու. բոլորը կարծես թէ սիրահարների սերունդից լինէին, առոյգ և ամուր կազմուածքով: Ամենքը ամուսնացած էին, ունէին բազմաթիւ զաւակներ, որոնցից չատերը նոյնպէս ամուսնացած էին: Տունը

լիքն էր ամէն հասակի երեխաներով: Աչառել ապրում էին մի քանի սերունդներ, որոնք սերտ կերպով միացած էին միմեանց հետ, որոնց գլխին կանգնած էր ալևոր պապը իր նահապետական մեծութեամբ:

Ե.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

«Ամառվի տկարությունը տիպից մեզ երկար մնալ մեր հիվանդի տաղտարում,—չարունակեց աւաղակապետը իր ընդհատված պատմությունը:— Օրիորդի լարված ուժերը հետզհետէ թուլացան, և նա վերջապէս չը կարողացաւ տանել այն բոլոր տանջանքները, որ կրել էր իր հօր անից բաժանվելուց յետոյ: Երեսս գետի մէջ պատահած սարսափելի անցքից յետոյ, նա արդէն իրան ոչ բոլորովին առողջ էր զգում: Բայց նա թագցնում էր ինձանից իր դրութիւնը, մինչև հիւանդութիւնը խիստ ծանր կերպարանք ստացաւ: Հիւանդի համար որոշել էին մի առանձին տաղտար և ոչ ոք չէր խանգարում նրա հանգստութիւնը: Բժիշկ չը կար. նրան թողել էինք բնութեան կամ ինը: Միայն երբեմն նրա մօտ մտնում էին զանազան պատասներ, ինչ դեղ ու դարմաններ էին անում,—ոչ իրանք էին հասկանում և ոչ ես: Ես նրա մահճի մօտից չէի հեռանում. ամբողջ գիշերը անքուն նստած, լսում էի նրա խուլ հառաչանքները, սկանջ էի դնում նրա ծանր հնչառութեանը, իսկ յերեկով նայում էի նրա գունաթափ դէմքին: Մի առաւօտ նստած էի նրա մօտ, և մի տխուր մտածմունքներով նայում էի նրա վրա: Այդ միջոցին քնած էր նա և, ասելի ճիշտ ասած, զգնվում էր մի այնպիսի ինքնամոռացութեան մէջ, որ չէր զգում իմ ներկայութիւնը: Այն զարհուրելի դէմքը, որ մի ժամանակ իր կանացի քնքշութեան հետ արտայայտում էր այրական վեհութիւն, այժմ թառամած էր, այժմ չունէր առաջվայ կենդանութիւնը: Այն խորասուզված աչքերը, որոնց մէջ ժամանակ այնքան կեանք, այնքան զորով և այնքան հոգևոր ջերմ զգացմունքներ կային,—այժմ այդ աչքերը չունէին առաջվայ կրակը: Այն ախորժակական չրմունքները, որոնցից լսել էի այնքան քաղցր, այնքան բարեկամական խօսքեր, որոնք միշտ միխիթարել և խրախուսել էին ինձ,—այժմ այդ չրմունքները թմրած էին անդադար ցնցումներով և իմ մէջ ազդում էին սոսկում ու զարհուրանք միայն: Յուսահատական խառն մտածմունքներ տանջում էին ինձ: Ինչ կը լինի մեր վերջը, եթէ երկար կը տևի նրա հիւանդութիւնը, մտում էի ես: Եթէ նա առողջ լինէր, նա այնքան ուժ և տոկունութիւն ունէր, որ ամէն տեղ կարող էր գալ ինձ հետ, և ես ամէն տեղ կարող էի տանել նրան: Կը գնայինք կը հեռանայինք մի անծանօթ աշխարհ և ոչ ոք չէր գանի մեզ: Բայց ինչ կարելի էր անել հիւանդի հետ, որ տանել նրան, որտեղ թագցնել,—այդ մտքերը տաստիկ խռովեցնում էին ինձ: Մենք

դեռ պարտից սահմանից չատ չէինք հեռացել. մենք դեռ բաւական մօտ էինք գանուում այն երկրին, որտեղ բնակվում էր նրա հայրը: Իսկ այդ անգամի հօր սառնասրտական հեռահարութիւններից անցայտ մնացել՝ հեչա բան չէր: Անկարելի էր, որ նա սառած չը լինէր, թէ մենք որ կողմը կամ ուր էինք գնացել:—Օրիորդը ընդհատեց իմ մտածութիւնները: Նա այժմ զառանցութեան մէջ արտասանում էր զանազան անկապ խօսքեր: Մի քանի անգամ արդ լսեցի իմ անունը: Նա խօսում էր ինձ հետ. երազների և ցնորքների աշխարհում խօսում էր ինձ հետ: Վտանգ պրսիւեան մէջ մարդը գաղանիք պահել չէ կարող, որովհետև աչխարհի պայմանները պղտչութեան մէջ չեն պրնում նրան: Նա խօսում է, նա գառում է, որպէս մտածում է: Նրա պայմանքները նոյնքան անկեղծ են լինում, որքան անկեղծ է նրա պրսթիւնը:—«Սիրում եմ քեզ... ասաց նա հեզութեամբ լի ձայնով,—քո զոհաբերութիւնը ուրիշ աչինչով չեմ կարող վարձատրել, բայց միայն իմ սիրով»... Այդ խօսքերը արտասանելու միջոցին նա իր սկարացած թևերը տարածեց, երևի, ինձ գրկելու համար: Բայց իմ չրթունքները արդէն սեղմված էին նրա տաքացած երեսի վրա, և նրա բազուկները անպատկառաբար փաթաթվել էին իմ պարանոցին: Երազների աչխարհում նա գրկած ունէր իմ ուրուականը, բայց իսկութեան մէջ ես գրկել էի հիւանդ մարմինը: Իմ արտասուքը թըր-

ջում էր նրա բորբոքված դէմքը: Որքան բարեթիւն, որքան առաքինութիւն կար նրա անմեղ խառնվածութեան մէջ: Միմիչ ես կարող էի ընդունել նրանից մի այսպիսի զոհաբերութիւն: Ես երևակայել անգամ չէի համարձակվում, որ նա իմ կինը լինէր: Միմիչ իր սիրով ալեաթ է վարձատրէր նա իմ մատուցած ծառայութիւնները,— այն սիրով, որ ունի բարձր, ունի արժանաւոր արարածների համար էր պահված: Ես ասում էի, որ այդ բոլորը կատարվեցաւ նրա քնած ժամանակ: Բայց իմ հաւատարութիւնը արդնացրեց նրան. մանչուտ աչքերը բացարեց, նայեց իմ վրա:—«Վա՜ այսաեղ էիր...»—եղաւ նրա առաջին հարցմունքը, յետոյ երեսը չուռ առաւ միւս կողմը, սկսեց դառն կերպով հառաչ հանել: Այդ ինչ տանջանք էր: Անտարակոյս, հիւանդութեան տանջանքը չի պիտի լինէր: Երևի, նրա ամենաւարն արիւնը յուզվում էր, որ երազի մէջ անգամ ինձ նման ոամկին արժանացրել էր իր սիրոյն: Քանի րոպէից յետոյ նա կրկին երեսը չուռ առաւ դէպի իմ կողմը: Արեը այդ ժամանակ դեռ նոր էր ըսկսել ծագել և նրա առաջին ճառագայթները չաղչաղում էին նրա վհատած դէմքի վրա: Նա հրամայեց յած թողնել տաղտարի մուտքի վարագոյրը, որ պաշտպի ճառագայթներից:—«Ուրախ եմ մոմի լինի... միչա մտի, որ ինձ ոչ ոք չը տեսնի»... Ես զարմացայ, թէ ինչն էր սիրտում նրան փախչել լոյսից, արդեօք ամօթը, որ նա քնի մէջ

արել էր մի անվնաս խոստովանութիւն: Այդ ենթադրութիւնը ամէն հաւանական երեսից ինձ, երբ հարցրեց նա.—«Շատ ժամանակ է, որ դու այստեղ ես»:—«Շատ ժամանակ չէ, կէս ժամ հազիւ կը լինի, լսեցի, որ քո քունը անհանգիստ է, ներս մտայ»:—«Այո, ես անհանգիստ էի»... ասաց նա և դադարեց, որ իրան միայնակ թողնեմ: Ես գնացի եկայ, նստեցի տազտարի մատքի մօտ: Այնտեղ քնում էի ես ամէն գիշեր, այնտեղ ամբողջ գիշերը հսկում էի նրա վրա, այնտեղից լսում էի նրա դառն հառաչանքները և իմ սիրտը լցվում էր կրակով: Բայց այն առաւօտ որքան երջանիկ էի զգում ինձ, որքան ուրախ էի ես. իմ հոգին վայելում էր անսահման բերկրութիւն: Այն մի քանի խօսքերը, որ արտասանեց նա անդիտակցութեան մէջ, ինձ բացում էին աչխարհի բոլոր փառքերը: «Երևի, նա մտածում է իմ վրա, որ ես նրա երազների առարկան եմ դարձել»—ասում էի ես, և այսքանով միայն ինձ բոլորովին բախտաւոր էի համարում: Բայց ոմ կը մտածէր, որ այդ բախտաւորութիւնը երկար չէր տևի...

«Այդ հոգեկան բերկրութեան մէջ էի ես, երբ մեր հիւրնկալի կրտսեր որդին մօտեցաւ, յայտնեց, որ իր հայրը կանչում է ինձ: Ես գնացի: Ծերունին առանձնացած էր և, որպէս երևում էր, պատրաստվել էր՝ իր մօտ ոչ ոքի չը թողնել: Նա հարցրեց օրիորդի առողջութիւնը, յետոյ խնդրեց, որ նստեմ իր մօտ: Նա ախուր, մի և նոյն ժամանակ

վրդովված էր երևում, կամենում էր մի բան խոսել, բայց դժուարանում էր: Վերջապէս ասաց նա.

—«Այն օրից, որ դուք առաջ էք կոխել իմ տան չէմքի վրա, ես ամենևին չեմ հարցրել ձեզ, թէ ով էք դուք, որտեղից էք գալիս, կամ ուր էք գնում: Ես այսքանով միայն ուրախ էի, որ իմ հայրը բաժանում եմ Աստուծոյ հիւրերի հետ: Բայց այժմ առանց հարցնելու ես, ես դիտեմ, թէ դուք ով էք, և ձեզ արդէն է ձեր մանկահասակ ընկերը, որի հիւանդութիւնը նայնքան ցաւ է պատճառում ինձ, որքան ձեզ: Մենք, այս լեռների բնակիչները, սովորութիւն ունենք, ոչ միայն հիւրասիրելու մի օտարականին, որ մեր տան ծածքի տակ օթևան է խնդրում, այլ վտանգի ժամանակ մեր պարտքն ենք համարում և պաշտպանել նրան ամեն չար պատահարներից: Մեր տունը մանողը, ինչ մարդ էլ և լինէր նա, ինչ յանցանք էլ որ գործած լինէր, դարձեալ մեր օգնութիւնն է վայելում: Այդ մասին կարող էք բոլորովին ապահով լինել...

«Վերջին խօսքերի միջոցին ծերունին զգուշութեամբ նայեց իր չորջը, մի գուցէ մի ուրիշը լսէր նրան: Ես արդէն նախազուշակում էի, թէ նրա յաւաչաբանը ինչով պէտք է վերջանար, և չը սխալվեցայ: Մեզ որոնում էին...

—«Այս րոպէիս ես վերադարձայ մեր տանուտէրի մօտից,—չարունակեց նա:—Ցանուտէրը նա-

ասել էր իր մօտ մեր չէնի բոլոր ծերերին և կարգաց գաւառապետի հրամանը: Նրա մէջ գրւած էր, թէ Ղալատպազի մէլիքի ազգիկը փախել է իր ծառայի հետ և անցել են մեր կողմերը: Հրամայված էր՝ որտեղ և գտնելու լինեն նրանց, յանձնեն կառավարութեան ձեռքը, որ յետ ուղարկեն Պարսկաստան: Հրամանի մէջ ծանր պատիժ և տուգանք էր նշանակված, եթէ մէկը կը համարձակվի թագցնել նրանց իր մօտ: Ես տրտկոյս չունեմ, որ դուք և ձեր ազգակիցը մի և նոյն անձնաւորութիւններն էք, որ ցոյց է տւած հրամանի մէջ:

— «Այո, մենք ենք,— պատասխանեցի ես, առանց որ և իցէ կասկածանքի, առանց թագցնելու:

— «Շնորհակալ եմ ձեր մտերմութեան համար,— ասաց Ծերունին,— հիմա պատմեցէք, այդ անցքը ինչպէս է պատահել:

«Ես Ծերունու անկեղծութեան վրա կասկած չունէի: Իր բարեսրտութեամբ նա այն աստիճան գրաւել էր իմ վստահութիւնը, որ ես պատմեցի բոլորը, ինչ որ գիտէի օրիորդի մասին,— պատմեցի նրա հօր փառասիրութեան մասին, թէ որպէս պարսիկ խանի բարեկամութիւնը գրաւելու համար՝ կամենում էր իր աղջկան կնութեան տալ նրան,— պատմեցի օրիորդի ընդդիմադրութեան մասին, որ չը ցանկացաւ մահմեդականի կին դառնալ,— պատմեցի մեր փախուստը և այն բոլոր

դժբախտ անցքերը, որ պատահել էին մեզ հետ ճանապարհին: Ծերունին խորին ցաւակցութեամբ լսում էր: Նրա խորչամած դէմքի վրա նշմարվում էին բարկութեան և դառն տխրութեան ցնցումները:

— «Ես չեմ պարտաւոր խեղճ աղջկայ հօր անդութեան վրա,— ասաց նա, երբ ես վերջացրի,— ես ճանաչում եմ նրա հօրը. նա իր փառասիրութեան համար ամեն բան կանէ, ամեն բան կը զոհէ: Ես զոհում եմ օրիորդի քաջութիւնը և ձեր անձնաւորութիւնը, որ յանձն էք առել ազատել նրան: Բայց այդ թագցնենք, խոսենք գաւառապետի հրամանի վրա:

«Ծերունու խօսքերից երեւաց, որ իրանց տանուտէրը, որին հրամայված էր որոնել մեզ, եթէ տեղեկութիւն տաներ իմ և օրիորդի մասին, խոպան կը մատնէր կառավարութեան ձեռքը:

«Իմ յայտնաւորվելը չարի չը կար. ես գրանվում էի ամենասանձելի դրութեան մէջ. չը գիտէի՝ ինչ հնար գտնել վտանգից ազատվելու համար. այդ պատճառով, երբ Ծերունին հարցրեց, թէ ինչ պէտք է անել, ես ոչինչ պատասխանել չը կարողացայ:

— «Եթէ օրիորդը հիւանդ չը լինէր, գործը չատ հեշտ էր,— ասաց նա փորր ինչ մտածելուց յետոյ:— Ես ձեզ՝ երկուսիդ էլ կուղարկէի Սիսիանի կողմերը, իմ բարեկամի մօտ, նա կը պահէր ձեզ, մինչև հրամանը կը հնանար և ամեն բան կը մո-

ռայվէր: Բայց օրիորդի հիւանդութիւնը ինձ դէ-
ժուարութեան մէջ է գտնում...

«Նա դարձեալ մտածութեան մէջ ընկաւ և
ապա չարունակեց.

—«Ինտայ սիրապետութիւնից առաջ մեր
կողմերի հայերն ևս մի և նոյն դրութեան մէջ
էին, ինչ դրութեան մէջ գտնւում են այժմ Պարս-
կաստանի հայերը: Պատահում էր, այս և այն
խանը, այս և այն բէկը մի գեղեցիկ հայ աղջիկ
էր տեսնում, խլում էր իր ծառաներին ուղարկում
էր և բռնութեամբ առնում էր իր տունը: Ոչ մի
ծնող համարձակութիւն չունէր հակառակելու:
Միանգամ մահմետականի տունը մտած աղջիկը,
այլ ևս այնտեղից դուրս չէր գալիս: Նրան կամ
ազախին էին դարձնում, կամ հարճ և կամ կին:
Ծնողները աչքառում էին ազատացնել իրանց
աղջիկներին, որ մահմետականների աչքին հա-
ճելի չը թվին: Այսպեղից սովորական դարձան
դլխի և երեսի այն այլանդակ փաթաթները, որ
այժմ կրում են մեր կանայքը: Բայց մի այլ պատ-
ճառ ևս երբեմն ազատում էր մեր աղջիկներին: Երբ
ծնողները հասկանում էին, որ մահմետականը
աչք ունի մեկի վրա, իսկոյն վեր էին առնում
աղջկան և պահում էին պատահած հայ ազգի
տեղ: Ամուսնացած կինը չատ չէին դիպչում,
նրան անպատում էին և բաց թողնում, որովհե-
տև կին դարձնելու համար բաւական դժուարու-
թիւններ կային: Մահմետական օրէնքը արգելում

է ամուսին ունեցող կնոջը, ինչ ազգից և կրօն-
քից լինէր նա, իրա կին դարձնել, քանի որ նա
չէր բաժանված իր ամուսնից և մահմետականու-
թիւն չէր ընդունած: Բայց ազատ աղջիկների վե-
րաբերութեամբ այդպիսի պայմաններ չէին պա-
հանջվում: Ազատ աղջիկը մի անգամ մահմետակա-
նի ձեռքը ընկնելուց յետոյ, դադարում էր կտրած
ամուն, նրան այլ ևս ոչ ոք չէր առնում. միևնոյն
անգամ գտնվում էին այնպիսի անտանելի ծնող-
ներ, որ հրաժարվում էին իրանց տունը ընդունել
«պղծված» աղջկան: Պատահում էր, որ նշանած
աղջիկներին ևս ուզում էին թաղել, առնել. այս-
պիսիներին խլում էին նշանած ազգի
տեղ: Բայց պատահում էր, որ ազգն բացակայ էր
լինում, մի ուրիշ երկիր գնացած էր լինում: Այս-
պիսի դէպքերում պատկը կատարում էին մի ա-
ռարկայի տեղ, որ մնացել էր այն ազգից: Ես
դեռ չեմ մոռացել մի այսպիսի դէպք. ազգն գրան-
վում էր հեռու երկրում, իսկ նրա նշանածին ու-
զում էին յափշտակել: Ժամանակ չը կար ազգին
կանչելու: Ծնողները աղջկան ծածուկ տարան և-
կեղեցի, կանգնացրին սեղանի առջև, իսկ խաչեղ-
բայրը նրա մօտ կանգնած, ձեռքին բռնած ու-
նէր փեսայի հին դդակը: Քահանան անդադար
դիմում էր այդ դդակին հարցնելով. «աՔ ես»,
«սիրում ես», և կատարում էր պսակի խորհուրդը:

«Ես մինչև հետաքրքրութեամբ լսում էի ծերու-
նու խօսքերը, բայց չը գիտեի, ինչու համար էր

այդ երկար պատմությունը: Նրա միտքը հասկացավ այն ժամանակ, երբ դարձավ դէպի ինձ հեռանալ հարցով.

— «Օրիորդը նշանած ունի:

— «Վաղո ոչ ոք նշան չէ դրել նրան,—պատասխանեցի ես:

— «Նա որ և իցէ մէկին սիրում է:

— «Չը գիտեմ...

— «Այդ մի և նոյն է, սիրում է, թէ չէ սիրում,—ասաց նա,—բայց պէտք է անպատճառ պահել մէկի հետ, ուրիշ հնար չը կայ ազատելու նրան:

— «Ո՞ւմ հետ:

— «Չէնց ձեզ հետ,—ասաց Ներսէսին ուրախ դէմքով:—Ձեր անձնազոհութիւնը օրիորդի վերաբերութեամբ այնքան նշանաւոր է, որ դուք արժանի էք նրա ամուսինը լինելու:

— «Դա անկարելի բան է,—պատասխանեցի ես,—այդ մասին խօսելն անգամ աւելորդ է: Դուք չէք ճանաչում օրիորդին, նա ուրիշ աղջիկների նման չէ, նա սեպհական կամքի և խելքի տէր աղջիկ է, նրան չէ կարելի զօրով եկեղեցի տանել: Մոռանանք ուրիշ հնարների վրա:

«Իմ խօսքերը չատ օտարոտի թւեցան Ներսէսին, որ աղջիկը ևս կարող էր իր սեպհական կամքը և խելքը ունենալ, բայց, թէև չատ դժուարութեամբ, այսուամենայնիւ, նա համաձայնվեցաւ ինձ հետ չը բռնադատել օրիորդին ամուսնութեան մասին և ուրիշ հնարների վրա մտածել: Մենք երկար խորհեցինք, վերջապէս Ներսէսին այն եզրակացութեանը հասաւ, որ օրիորդը պահվի իր տանը, իսկ ես առժամանակ հեռանամ:

— «Հիւանդին իմ տան ծածկի տակ թողնելը հնչում է, բայց ձեզ կարող են նկատել... ասաց նա:

«Բայց ես գրպէս կարող էի բաժանվել օրիորդից, ում հոգատարութեանը յանձնել նրան, միթէ կարող էի հանգիստ լինել, եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ նրան չը տեսնէի, կամ ինչ ապացոյցներ կանէր նրա հիւանդութեան վրա, եթէ այդ բոլորը յայտնվէր նրան:

— «Ուրիշ հնար չը կայ,—կրկնեց Ներսէսին:— Եթէ օրիորդը առողջ ևս լինէր, ձեզ դարձեալ հարկաւոր էր բաժանվել միմեանցից, որովհետև ձեզ երկուսիդ միասին տեսնելով, ամբողջ հնչում կարող էին ճանաչել:

«Ես իմ սրտի և զգայմունքների հետ կարող էի հաշտվել, բայց իմ բոլոր մտատանջութիւնը նրանումն էր, թէ ինչպէս յայտնում օրիորդին, որ նրան միայնակ եմ թողնում: Բայց մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրան հազարդեցի մեր անսահմանական վիճակը, նա խիստ ուշադրութեամբ ասաց ինձ:

— «Դու չատ արդիւր ինձ համար, աւելին պահանջել քեզանից իրաւունք չունեմ: Դու, ուր որ կամենում ես, գնա, հեռացիր, դլուխդ ազատիր, ես կը մնամ այստեղ: Այժմ ինձ համար մի

և նայն է... կեանքը զզուացրել է ինձ... Եթէ ինձ գանելու և սանելու ևս լինեն հօրս սուրը, դարձեալ չեմ վախենայ, որովհետև գիտեմ, որ մինչև այնտեղ հասնելը կենդանի չեմ մնայ: Աֆռոհետև իմ դիակի հետ ինչ որ ուզում են, թող անեն...

«Օրիորդի յուսահատական խօսքերը կրակի նման այրում էին իմ սիրտը. իմ լեզուն կապվեցաւ, ես մի բառ անգամ չը կարողացայ գանել նրան մխիթարելու: Ես ցանկանում էի գրկել նրա ծնկները, համբուրել և ասել, որ մինչև մահ քո ծառան, քո սարսափը կը դառնամ, քո ոտքերի տակի հողը կը լինեմ, և քեզանից չեմ բաժանվի: Բայց նա չը թողեց ինձ խօսել, ասելով.

—«Իմ բանը պռծած է... ես շատ չեմ ապրի... դու քո գլուխը ազատիր և իմ վրա մի մտածիր...

«Իմ աչքերը լցուեցան արտասուքով: Նա ափսոսում էր ինձ... արդեօք իմ մատուցած ծառայութիւնների համար, արդեօք երախտագիտութեան զգացմունքից դրդված, թէ մի այլ կիրք թելադրում էր նրան այդպէս խօսել:—Ես այդ հասկանալ չը կարողացայ, միայն նկատում էի, կարծես թէ, նա մինչև անգամ ուրախ էր, որ հանգամանքները փոխուեցան, կարծես թէ, ցանկանում էր առանձնանալ և առժամանակ անջատուած լինել ինձանից: Ինչ էր պատճառը: Ես այդ հասկացայ, բայց շատ ուշ հասկացայ, երբ նա արդէն այս աշխարհից հրաժարուել էր, և իր վշտերը իր հետ

գերեզման էր տարել... Հիւանդութեան մահճի մէջ երկու զգացմունքներ կռւում էին նրա սրտում, մէկը՝ սէրը, որ դեռ նոր բռնաւորւում էր նրա մէջ, միւսը՝ ամուսնական նպարտութիւնը, թէ ինչպէս կարող էր կին լինել մի ոռմկի—իր հօր սան ծառայի որդուն: Նա վախենում էր աշխարհի նախապաշարմունքից և ցանկանում էր օգուտ քաղել իմ բացակայութիւնից և խեղդել իր սրտի մէջ իրան տանջող զգացմունքը...

Աւազակապետը կանդ առել: Վաղեմի յիշողութիւնները չօչափելիօրէն նրա սրտի դեռ ոչ բոլորովին բուժված վէրքերը: Նա երեսը մի կողմ չուռ առել, որ ես չը տեսնեմ նրա արտասուքը:

«Ես բոլորովին չանդգնեցայ նրանից,—շարունակեց դժբախտը ցաւալի ձայնով:—Ես հեռացայ, բայց շատ հեռու չը գնացի: Յերեկով անհետանում էի մերձակայ անտառներում, թափառում էի մթին ծմակների մէջ, կենակցում էի ծառերի, ժայռերի և գազանների հետ, և իմ վըշտերը ցրւում էի որսորդութեամբ: Իսկ գիշերը մօտենում էի մեր հիւրնկալի տաղաւարներին, և եթէ միջոց էի գտնում, մտնում էի հիւանդին տեսնելու: Երբ նա իր պղտորված աչքերը բաց էր անում, տեսնում էր ինձ իր մահճի մօտ նըստած, միշտ կրկնում էր մի և նոյն խօսքերը.

—«Ինչու եկար, կարող են կալանաւորել քեզ»... Անցան օրեր, անցան շաբաթներ, անցաւ մի ամիս: Օրըստօրէ նրա հիւանդութիւնը աւելի վտան-

դաւոր կերպարանք էր առանում: Մի գիշեր, երբ մօտեցայ մեր հիւրնկալի տաղաւարին, նա արտասուքը աչքերում դարս եկաւ իմ առջև և խորին ցաւակցութեամբ յայտնեց.—«Նա մեռաւ»... Ես սարսափեցայ, որովհետև մի եղեռնագործ: Ինձ այնպէս թւեցաւ, թէ ես եմ եղել նրա մահուան պատճառը: Խղճի զարհուրանքը չանհանգստեց ինձ...

Աւազակապետը կրկին կանգ առնց, ձեռքը տարաւ դէպի հանդած չիբուխը, որ դրած էր նրա մօտ, կրկին վառեց և սկսեց ծխել: Ծուխը թանձր մէգի նման դարս էր հոսում նրա բերանից, նրա աչքերից, կարծես թէ, նրա սիրտը ճարակում էր մի սարսափելի հրդեհ:

«Ոչինչ յայտնել չը կարողացան ինձ նրա մահուան մասին,—առաջ տարաւ նա,—թէ նա իր կեանքի վերջին րոպէներում ինչ դրութեան մէջ է եղել կամ ինչ է խօսացել: Նրա մօտ այ ոք չէր եղել, որ գոնէ վկայ լինէր անբախտ հանգուցեալի վերջին խօսքերին: Երկու օր էր, որ նա մեռած էր, երկու օր նրա մարմինը պահել էին, որ ես տեսնէի: Այսօրուան պէտք է կատարվէր թաղումը: Ես այլ ևս չը գնացի անտառը, մնացի, որ կատարեմ իմ վերջին պարտքը: Իմ մտքին այլ ևս չէի մատծում, թէ ինչ կարող էր պատահել ինձ հետ: Նման կորցնելուց յետոյ, այլ ևս կեանքը իմ աչքում արժէք չունէր: Ես իմ ձեռքով պէտք է դերեզման իջեցնէի այն նազելի արարածին, որին իմ կեանքում միայն սիրել էի, և որը նոյնպէս սիրում էր ինձ: Նրա դերեզմանը փորվեցաւ հէնց նոյն լուսան վրա, հեռու մարդկային բնակութիւնից, ուր երբեմն հանդիպում են հովիւները միայն: Նրա դագաղը հազիւ ծածկված էր հողով, խաչտարածների քահանան կարդում էր վերջին աղօթքը: Ես սպանվածի նման կանգնած էի և լայ էի լինում: Այդ միջոցին երկու հասարակներ մօտեցան և ինձ կալանաւորեցին:—«Նա մեռաւ և ապառվեցաւ, բայց դու ապառվել չես կարող»...—լսելի եղան սանուտէրի խօսքերը: Ինձ տարան, բանտարկեցին սանուտէրի տաղաւարում, որ միևս օրը ուզարկեն գատաստանի մօտ: Օրէորդի կարասը ինձ այն աստիճան ապշած և խելագարված դրութեան մէջ էր դրել, որ ես հասարակ չէի զգում, թէ ինձ հետ ինչ է կատարվում: Այստահինայինս, հէնց նոյն գիշերը ինձ յայտնվեցաւ՝ իմ մօտ դրած պահապաններից մէկին սպանել, միևնոյն ատեակ վիրաւորել և փախչել իմ բանտից: Այնուհետև այլ ևս ինչ էր մնում ինձ անել: Իմ յանցանքները կրկնապատկվեցան. այստեղ դարձայ մարդասպան, իսկ իմ հայրենիքից փախցրել էի իմ մեծատոհմ աղջիկը: Իմ հայրենի երկիրը վերադառնալ չէի կարող, իսկ իմ գտնված երկրում դարձայ մի փախստական և միացայ փախստականների խումբի հետ: Ուխտեցի այնուհետև վրէժխնդիր լինել բոլոր այն մարդիկներին, որ կրում են խան, բէկ, մէլիք

և ամեուսեր անուններդ: Իմ նպատակին մասամբ հասայ... Բայց իմ ձեռնարկութիւնը այնքան սարսափելի էր և արիւնոտ, որ վերջը բերից ինձ այսահար...

Զ.

ՀԱՄԲԸ

Աւազակապետը ծանօթացրեց ինձ մի այլ երիտասարդի հետ, որին կոչում էին Համբ: Նրա իսկական անունը ոչ ոք չը գիտէր: Չը գիտէին նաև թէ ինչ ազգից էր նա: Նա միշտ լուռ էր և մտախոհ. միանգամ գոնէ չէին տեսել նրան խօսելիս, և այդ էր պատճառը, որ ընկերները նրան Համբ էին կոչում: Այդ օտարոտի խուլումունջը վտանգ պարունակել էր իմ ուշադրութիւնը: Նրանում կար մի խորհրդաւոր բան, որ իր լռութեան մէջ ևս աչքի էր զարկում: Բաւական բարձրահասակ էր նա, նիհար և ցամաք կազմուածքով. գեղեցիկ դէմքը գունաթափվելով, տացել էր թառամած տերևի գոյն, իսկ արագաշարժ աչքերը վառվում էին անդադար բոցով: Չը նայելով իր տկար, հիւանդոտ կազմուածքին, աչխատում էր նա չափազանց եռանդով, և այդ առիթ էր տուել վերակացուներին բաւական մեղմ վարվել նրա հետ, թէ և նրա հակողութեան վրա դարձնում էին առանձին ուշադրութիւն:

Դիշեր էր, երբ առաջին անգամ առիթ ունեցայ խօսելու նրա հետ: Խոնաւ պատերին կըպ-

ցրած ճրագալի մոմերը հապճեպ լուսաւորում էին դամասպատեալների մռայլոտ ու սառն օթեւանը: Մերկ յատակի վրայ, այստեղ ու այնտեղ, անկարգ կերպով պառկած էին ցերեկվայ սաժանական աշխատութիւնից յոգնած թշուառները: Քունը միակ մխիթարութիւնն է այդ ոգորմելիների, նա կազդուրում է նրանց ջարդված անդամները և մոռանալ է տալիս սրտի դառն վշտերը:

Ագիճան էր Համբը միայն: Նա մտքով, կարծես թէ, վերապատմել էր երկինքը, իսկ նրա խորասուրդ աչքերը մի սառնձին կարեկցութեամբ նայում էին քնած թշուառների վրա: Ես նրանից ոչ այնքան հեռու պառկած էի իմ յարդեայ անկողնի վրա, և իմ աչքերը յառած էին դէպի երիտասարդի սիրասուն դէմքը, որ կրում էր իր վրա հեռքերը մի դժբախտ անցեալի...

Նա լուռ էր, որպէս միշտ: Իսկ այն գիշեր մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրա ցամաք ու փակված շրթունքներից դուրս հնչեց մի խուլ հառաչանք այդ երկու բառի հետ՝ «Աստուած իմ»... Ես մինչև այնօր չը գիտէի նրա ինչ ազգից լինելը, բայց յանկարծ լսեցի նրանից հայկական բառեր: Ես չը կարողացայ զսպել իմ սրտի զեղմունքը:

—Դարձեալ մի հայ... բացականչեցի ես այնքան լսելի ձայնով, որ դէպի ինձ գլուխը Համբի ուշադրութիւնը: Նրա փակված լեզուն բացվեցաւ և պատասխանեց ինձ հետևեալ խօսքերով.

—Ինչու էք զարմանում, աշխարհի որ անկիւնում չը կայ հայ: Արմատից խլված և ցամաքած բոյսը տանում է քամին դէպի ամեն կողմ... Նա կրկին լռեց:

Կան անձնատուրութիւններ, որոնց մի բառը, մի խօսքը բաւական է, որ մարդ նրանց մասին գաղափար կազմէ: Համբի ասածը թէև շատ պարզ չէր, բայց բաւական յատկանիշ էր նրա մթին, ծածկամիտ բնաւորութեանը: Ես մօտեցայ, նստեցի նրա մօտ:

—Որեղեն գոք հայ էք, հարցրի նրանից:

—Ա՛յո... պատասխանեց նա:

Ես այն աստիճան գոհացեցայ, որ ձեռքերս տարածելով խնդրեցի նրանից.

—Թոյլ տուէք ձեր ազգակցին գրկել ձեզ:

—Կարծեմ, մեր գրութեան մէջ աւելորդ են այս տեսակ քնքշութիւնները, ասաց նա հրաժարվելով:

Նրա խօսքերը նոյնպան սառն էին, որքան նրա դէմքը, բայց ինչու այնքան ջերմ կերպով ազդում էին իմ սրտին: Ես աշխատում էի չարաշնակել նրա հետ խօսակցութիւնը, բայց դժուարանում էի կապը պահպանել:

—Գոք այս գիշեր չէք քնում,— ասեցի ես,— համարեա ամեն գիշեր նկատում եմ, որ գոք խիստ սակաւ էք քնում:

—Այդ իմ սովորութիւնն է:

—Երևի, մի բան ամպոտում է ձեզ:

—Մեզ ուղարկել են այստեղ հէնց առանջվելու համար:

—Այդ չեմ հարցնում, երեխ, մի ուրիշ բան կայ:

—Խնդրեմ չը մտնել իմ սրտի խորքը, ասաց նա և երեսը չուռ տուեց:

Ես փոշմանեցայ, որ թոյլ տուի ինձ մի դեռ ևս անծանօթ մարդու գաղտնիքները չօշափել:

—Ներեցէք, խնդրեմ, իմ անհամեստ հարցմունքի մասին:

Նա պատասխանեց ժպտելով.

—Յանցանքների այդ քաւարանում իմ ներողութիւնը աւելորդ է:

Ես չը կամեցայ այլ ևս ձանձրացնել նրան, բարի գիշեր ասելով, հեռացայ և կրկին պառկեցի իմ յարդեայ անկողնի վրա: Իմ աչքերը դեռ երկար նայում էին նրա վրա, իմ միտքը դեռ երկար զբաղված էր նրանով: Ո՞վ էր դա, որ երկրից և ինչ յանցանքի համար էր դատապարտված, —այդ հարցերը հետաքրքրում էին ինձ: Ամեն մի դատապարտեալ սովորութիւն ունէր անամօթաբար և միևնոյն անգամ պարծենալով պատմել իր գործած յանցանքները, բայց Համբը իր մասին խօսելու սովորութիւն չունէր:

Երբ առաւօտեան կրկին քշեցին մեզ հանքերի մէջ աշխատելու, ճանապարհին ես պատմեցի աւազակապետին իմ գիշերվայ խօսակցութիւնը Համբի հետ:

—Նա չատ հետաքրքիր մարդ է,—ասաց աւազակապետը,—ես քեզ կը բարեկամացնեմ նրա հետ:

Մենք հասանք հանքը, կրկին խլուրդների նման նեղ ապացինք մթին խորշերի և խոռոչների մէջ, կրկին մեր բահերը, բրիչները և մուրճերը սկսեցին գործել: Այն քարանձաւի մէջ, ուր մեր խումբը աշխատում էր, պատահեց մի ցաւալի անցք: Յանկարծ ժայռի մի բաւական մեծ կտոր, դուրսպոկվելով անձաւի պատից, ցած գլորվեցաւ և բանւորներից մէկին տակով արեց: Թէև չորս հոգի էինք այնտեղ՝ ես, Համբը և մի այլ տաժանակիր, իսկ չորրորդը հեծում և հառաչում էր ժայռի տակ: Համբը մեզանից փոքր ինչ հեռու էր. նա չը նկատեց անցքը, բայց լսեց դղրդիւնի ձայնը: Մինչև նրա մեզ մօտ վազելը, ես և իմ միւս ընկերը ամեն ճիգ թափում էինք, որ յետ մղենք ժայռը և նրա տակից դուրս բերենք թշուառին: Բայց անպսպի ժայռը ամենայն ծանրութեամբ նստած էր նրա ոտների ու ծնկների վրա, և չէր չարժվում տեղից: Վրահասաւ Համբը: Ես և իմ միւս ընկերը չը կարողացանք զսպել մեր ծիծաղը: Նա ուշադրութիւն չը դարձրեց մեզ վրա, վերաւոր երկաթեայ մեծ ձողը, նրա ծայրը դրեց քարի տակին, և այնպիսի մի ուժով չարժեց, որ քարը իսկոյն առաջ մղվեցաւ, և թշուառ դատապարտեալի ջարդված սրունքները դուրս եկան նրա տակից: Այդ գործողութիւնը, որ ամենի հնարագիտութեան արդիւնք էր, քան թէ մարմնական ուժի, զարմացրեց մեզ: Իսկ Համբը, պարծենկոտութեան մի նշան անգամ չը ցոյց տալով,

մնաց լուռ և սառն, որպէս մեզ շրջապատող քարանձաւը: Այդ դէպքը ազդեց իմ մէջ մի առանձին յարգանք դէպի համեստ և մի և նոյն ժամանակ վերին աստիճանի բարի երիտասարդը:

Երեկոյեան, մեր օթևանը վերադառնալու ժամանակ, ճանապարհին ես մի քանի անգամ փորձեցի խօսակցել նրա հետ, բայց միշտ առանում էի այնպիսի կարճ պատասխաններ, որ դժուարանում էի խօսակցութիւնը շարունակել: Այսպէս մօտեցանք այն փողոցին, ուր գտնւում էին մեր ֆերմայի կրպակները: Հեռուից նկատեցինք, մի տեղ խմբված էին մարդիկ և բազմութիւնը դէպի այն կողմն էր վազում: Մենք մտածեցինք, որ մի տարօրինակ բան պէտք է պատահած լինի, և շտապեցրինք մեր քայլերը: Երբ հասանք, անցքը շատ սովորական երևաց. երկու մարդիկ կռւում էին, և բազմութիւնը նրանց շուրջը հաւաքված զուարճանում էր, թէ որպէս նրանք վայրենի կերպով ջարդում էին միմեանց կողքերը: Ոմանք աչխատում էին բաժանել: Մէկին, որ աւելի ուժեղ էր երևում, բռնեցին, իսկ միւսը դուրս պրծաւ. նրա ճանկերից, հապաւեցէք... օգնեցէք»... գոչելով, փախաւ և մոլորվածի նման մտաւ մեր խումբի մէջ ապաստան գտնելու: Մեր պահապանները մօտ վազեցին, որ սաստիներով հեռացնեն նրան: Բայց նա արդէն կպած էր իմ կուրծքին, ինձ պինդ գրկած ունէր, այնպէս ձևացնելով, որ վախենում է իր հակառակորդից: «Նա ինձ կը սպանէ,

նա Աստուած չունի»... ասում էր անդադար: Այդ յանկարծակի դէպքից ես այն աստիճան չփոթմփեցայ, որ ամենևին չը հասկացայ, թէ ինչ փախաց նա իմ ականջին, միայն զգացի, որ նրա ձեռքը խիստ ճարպիկ կերպով սողաց իմ գրպանի մէջ: Մեր պահապանները հեռացրին նրան, նրա վարմունքը շատ բնական համարելով, որովհետև խեղճի հակառակորդը այնքան ուժեղ էր, որ կարող էր բոլորովին խեղդել նրան: Տեղային ոստիկանութիւնը վրահասաւ, խռովութիւնը հանդարտեց. ամբոխը ցրիւ եկաւ, իսկ մեր խումբը անցաւ:

Ամբոխի համար դա փողոցային սովորական անցքերից մէկն էր, իսկ խաչագողի համար դա նոր բան չէր: Ես ճանաչեցի, թէ ով էր այն մարդը, ես հասկացայ, թէ ինչ նպատակով էր սարքել այդ կռիւը, և վերջապէս ես դիտէի, թէ ինչու մեր խումբի մէջ մտնելու միջոցին ինձ միայն ընտրեց իր պաշտպան և ուղղակի ինձ մօտեցաւ: Խաչագողները շատ անգամ փողոցներում, հրապարակների վրա, սարքում են այս տեսակ կռիւներ: Բազմութիւնը հաւաքվում է, մարդիկ խառնվում են միմեանց, իսկ նրանք, օգուտ քաղելով ընդհանուր չփոթութիւնից, գողանում են դրա ու նրա ժամացոյցը, կամ շատ անգամ կողոպտում են հէնց իրանց բաժանողների գրպանները: Այդ մարդը նոյնպէս ձեռքը տարաւ իմ գրպանը, բայց այնտեղից ոչինչ չը գողացաւ, և գողանա-

լու բան էլ չը կար, բայց զգայի, որ մի բան դրեց այնտեղ: Առանց նայելու, ես գիտէի, թէ ինչ պէտք է լինէր այդ: Դա մի և նոյն անձնատուրմիւնն էր, որ մի քանի չաթախ առաջ, մարդկանի կերպարանքով մօտեցաւ մեր խումբին և բաժանեց մեզ իր հաւաքած գրօշները: Այն ժամանակ, երկու հինդ-կոպէկնոցների մէջ թաղցրած, տուեց ինձ իր խարտիզատար առմանը: Այժմ մի և նոյն անձնատուրմիւնը, այդ հնարքով մօտենալով ինձ, դրեց իմ գրպանում մի այլ առմանակ: Ի հարկէ, ոչ որ չը հասկացաւ նրա խորամանկութիւնը, և նա այն աստիճան կերպարանափոխ էր եղած, որ մինչև անգամ աւազակապետը չը ճանաչեց, որ այդ մարդը մի և նոյն ծպտեալ մուրացկանն էր:

Երբ հեռացանք, ձեռքս տարայ գրպանս, տեսայ, որ իմ ենթադրութիւնը սխալ չէր. այնտեղ կար մի թղթի կտոր: Առանց կարդալու, արդէն ինձ յայտնի էր նրա բովանդակութիւնը, այսուամենայնիւ, գիշերը միջոց գտայ ծածուկ կարդալու նրան: Նրա մէջ չտասղ ձեռքով գրված էին հետևեալ տողերը.

«Մուրթազ, մի չաթախից յետոյ գաակի ոտնն է: Դու գիտես, ինչ դրութեան մէջ ես լինում մարդիկ այդ ոտնի օրերում: Աբաղը կը յաջողեցնէ մեր գիտաւորութիւնը: Ում հետ, որ հարկաւոր էր, ես կարգադրել եմ: Գնդ բաց կը թողնենք: Դու կը գտնես ինձ եղևիններէի փոքրիկ անտառում, Կարմիր բլուրի մօտ: Այնտեղ ամէն ինչ պատրաստ կը գտնես քո վախտատի համար»:

«Պետրա»:

Է·

ԻՄ ՆՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Մօտեցան դասի ժամերը: Մեզ այլ ևս չէին աշխատեցնում, մեզ թոյլ էին տալիս փոքրիկ զբաղմունքներ, մեզ թոյլ էին տալիս և մեր հոգիների մասին մտածել, աղօթք կարդալ, խոստովանվել, հաղորդվել և այլն: Ի հարկէ, այդ բոլորը կատարվում էր վիճաբանների հսկողութեան ներքոյ:

Այդ օրերում ևս ամեի ընտելացայ Համլի հետ, մանաւանդ երբ աւազակապետը իմ մասին նրա ականջում մի քանի բաներ փսփսաց: Տարակոյս չունէի, որ վատ բան չէր խօսի իմ մասին: Այնուհետև այդ երիտասարդը, որ առաջ խորշում էր ինձանից, բաւական մտերմացաւ ինձ հետ:

Մի օր միասին նստած էինք մեր արդելանոցի բակում, տաքանում էինք արեգակի ճառագայթներով: Մեր առջև դատապարտեալները զանազան խաղեր էին անում, ծիծաղում էին, աղաղակում էին, հռհռում էին և լրբաբար բօթբրթում էին միմեանց: Ցածանակիրը իր թշուառութեան մէջ դառնում է կատարեալ սատակ: Աւօթը, պատ-

կառանքը և մարդկային բոլոր արժանաւորութիւնները կորցնում է նա: Օրէնքը զրկում է նրան ամեն իրաւունքներից, բայց նա ինքը զրկում է իրան բարոյական և հոգեկան բոլոր լաւ յատկութիւններից: Կարծես, նա հետզհետէ հաշտվում է այդ մտքի հետ՝ վճռած համար վճռեցին, որ ևս վատ եմ, անպիտան եմ, ես կը չարունակեմ մնալ անպիտան, որովհետև իմ ուղղվելը կամ լաւանալը երբէք չեն փոխի այն վիճակը, որին դատապարտված եմ»...

Ես նայում էի այդ մոլեգնած սատանկների վրա: Համլը ընկղմուած էր մտածութիւնների մէջ. նա տխուր էր, որպէս միշտ, ասեները չէին ուրախացնում նրան: Ես չը պիտի ինչ աւարկայի վրա խօսել նրա հետ: Այդ մարդուն հանդիպելիս, իմ լեզուն կապվում էր, ես նոյնպէս համր էի դառնում: Ես ուրիշ խօսք չը գտայ և յիշեցրի նրա մի քանի օր առաջ կատարած քաջագործութիւնը քարանձաւի մէջ:

—Ձեր արածը կատարեալ հրաշք էր, ասեցի նրան:

—Միթէ դուք հաւատում էք հրաշքներին, ժըպտելով հարցրեց նա:

—Հաւատում եմ: Բայց ձեր գործը մարդկային ուժից բարձր էր:

—Մարդկային ուժը շատ և շատ բարձր է, քան ձեր տեսածը:

Նրա համեստութիւնը վիրաւորվեցաւ: Ես ան-

ասյ, որ իմ նկատողութիւնները հաճելի չեն նրան, այդ պատճառով խօսքս փոխեցի, նրա ուշադրութիւնը դարձնելով մեր առջեւում զուարճացող թըչուառների վրա:

—Նայեցէք, ինչպէս զուարճանում են դրանք, կարծես թէ, խելագարներ լինեն, բոլորովին մոռացել են իրանց դրութիւնը:

—Ինչու չը զուարճանան, երբ թոյլ են տալիս նրանց վայելել այդ փոքրիկ միխիթարութիւնը:

—Մի քաղցր կամիլ դժբախտութեան անասհման ծովի մէջ,—ինչ նշանակութիւն ունի այդ մի կամիլը:

Նա ուղիղ նայեց իմ երեսին, կարծես, զարմանում էր, որ ես էլ դաւել պիտեմ, որ ես էլ իմ առանձին համոզմունքներն ունեմ:

Խաղը ընդարձակ էր: Մենք բաւական հեռու նստած էինք խաղացողներից: Մեր խօսակցութիւնը ոչ ոք չէր խանգարում:

—Մեծ նրանք մեղաւոր են, որ դժբախտ են, հարցրեց նա:

—Ի հարկէ, մեղաւոր են, պատասխանեցի ես:

—Այդ դժբախտներից մէկն էլ դուք էք, ասացէք խնդրեմ, դուք էք մեղաւոր, որ ձեզ այստեղ ուղարկեցին:

—Ասա ոմ է մեղաւոր. ես յանցանք գործեցի, դրա համար էլ ուղարկեցին ինձ այստեղ պատժվելու:

Նա ոչինչ չը պատասխանեց, միայն հետաքրքրվեցաւ իմ անցեալով, խնդրեց՝ մանրամասնութեամբ պատմել իմ կեանքի պատմութիւնը: Ա.ազատկապետից լսել էր, որ նա սովորութիւն ունի իր բոլոր ծանօթների կեանքը ուսումնասիրելու, այդ պատճառով ես ամեն ինչ պատմեցի նրան: Ես պատմեցի, թէ որպէս երեխայ ժամանակ հօրից դրկուելով, մնացի ազգատ մօր խնամատարութեան ներքոյ, թէ որպէս նա յանձնեց ինձ մի դարբնոցում արհեստ սովորելու, և միշտ խրատում էր, որ խաչագողների ճանապարհով չը գնամ, մի բան սովորեմ և իմ արդար աշխատանքով ապրեմ: Պատմեցի ազէատւոր բանալիի անցքը, իմ վարպետի դարբնոցի հետ պատահած դժբախտութիւնը և իմ փախուստը այնտեղից: Պատմեցի, թէ որպէս այնտեղ թափառական կեանք էի վարում, և որպէս միացայ մի խումբ մանկահասակ արիւնների հետ, որոնք ինձ պէս փախստականներ էին, և սկսեցի նրանց հետ մանր գողութիւններ անել: Պատմեցի, որ իմ երկրում ես հալածվեցայ, տանջվեցայ, փախստական եղայ օրէնքի և պատասխանի երեսից,—և այն մարդը, որ խաբել էր ինձ անմեղիս, և ես նրա թելադրութեամբ ականայ ու անպիտակցարար յանցանք էի գործել,—կրկին նոյն մարդը մօտեցաւ ինձ, և ես նրա առաջնորդութեամբ թողեցի իմ հայրենիքը, հեռացայ դէպի օտար աշխարհներ և մտայ խաչագողների հասարակութեան մէջ: Այստեղ ես գործայ մի կատարեալ եղեռնագործ. սովորեցի ամեն չարիքներ

դործել,—սպանութիւն, գողութիւն, բազմատեսակ խարեպայութիւններ, որոնցմով ահագին գումարներ էիք ձեռք բերում,—սովորեցի ուրիշի վաստակով ապրել: Վերջապէս, բանվեցայ և աքսորի դատապարտվեցայ:

—Այդ բոլորը չատ հետաքրքրական է,—ասաց նա, երբ ես վերջացրի:—Հիմա տեսնում էք, որ դուք սկզբից անմեղ էք եղել և արդար, բայց ձեզ յանցանքի մէջ ձգեցին այն հանգամանքները և այն կենսական պայմանները, որոնցմով սկսեալ մանկութիւնից շրջապատված էք եղել: Եթէ այն հանգամանքները և այն պայմանները ձեզանից հեռացնելին կամ իսպառ չը լինէին, դուք, անտարակոյս, կը մնայիք ձեր անմեղութեան մէջ, և դուք չատ օրինաւոր մարդ կը դառնայիք: Ընտանիքի մէջ ոչինչ չը սովորեցաք, ընտանիքը լաւ չը կըրթեց ձեզ: Ձեր վարպետի դարբնոցում կարող էիք արհեստ սովորել, և դա ձեր արդար ապրուստի հիմքը կը լինէր, բայց անիրաւացի պատճառներ այնտեղից ևս հալածեցին ձեզ: Ձեր պատանեկութեան փոքրիկ, սրիկայ ընկերները սովորեցրին ձեզ գողութեամբ ապրելու նախակրթութիւնը, իսկ խաչագողների ընկերութիւնը բոլորովին կատարելագործեց ձեր մէջ այդ արհեստը և դարձրեց ապրուստի միակ միջոց: Այդ բոլորը—ընտանիքը, սրիկայ ընկերները, խաչագողները, մի խօսքով, այն ամբողջ միջավայրը, որի մէջ ծլեցիք, աճեցիք և հասունացան ձեր ընդունակութիւնները,—կոչ-

վում է հասարակութիւն: Եթէ այդ հասարակութիւնը, կամ, որպէս ասացի, այդ միջավայրը, մաքուր լինէր, առողջարար լինէր և ձեզ վրա բարերար ազդեցութիւն գործէր, տարակոյս չը կայ, որ ձեր ընդունակութիւնները կը զարգանային դէպի բարին, դէպի լաւը և դէպի օգտաւէտը: Բայց եթէ դուք զարձաք մի չարագործ, դուք ծնունդ էք նոյն միջավայրի, այլ խօսքով, նոյն հասարակութեան, որը իր միջից արտադրել է ձեզ:

Ես նրա բացատրութիւնները հասկանալ չէի կարողանում: Նա չարունակեց, ձեռքը մեկնելով դէպի զուարճացող բազմութիւնը, որ խաղում էր բակի մէջ:

—Տեսնում էք այդ թշուառներին, դրանք նոյնպէս՝ հասարակութեան հիւանդոտ կազմուածքի արտադրած վէրքերն ու պալարներն են, որ կըտրել և այստեղ են ձգել, այն մտքով, որ կազմուածքը բոլորովին չը վարակվի: Բայց ծրտեղից առաջ եկան այդ վէրքերը, այդ թարախալից պալարները,—յայտնի բան է, նոյն կազմուածքի հիւանդոտ դրութիւնից: Եթէ մարմինը առողջ լինէր, դրանք չէին լինի: Փնտռեցէք դրանց իրաքանչիւրի կեանքի պատմութիւնը և դուք կը տեսնէք, որ դրանց գործած յանցանքների արմատը դրած է եղել այն հողի մէջ, որից դրանք բուսել, աճել և զարգացել են: Իւրաքանչիւրի յանցանքի ձևը, տեսակը, որպիսութիւնը տեղային բնաւորութիւն ունի: Եւ այդ կէտից նայելով, այդ թշուառների ա-

մեն մի կեանքի պատմութիւնը՝ նոյն հասարակութիւնների մտաւոր, բարոյական և հոգևոր հիւանդութեան պատմութիւնն է, որոնց միջից դուրս են եկել դրանք: Այսուհետ, այդ արգելանոցի մէջ, կարելի է ուսումնասիրել այն բոլոր կրթական, անձնական և հասարակական պայմանները, որ առաջ են բերել այս տեսակ հրէշներ:

Վերջացնելով իր խօսքը, նա կրկին դարձաւ դէպի ինձ, հարցրեց.

—Հիմա հասկացաք, թէ ով է մեղաւորը, որ դուք, ես և այդ բոլոր թշուառները այստեղ բերվեցան:

—Ճշմարիտ ասած, չատ վատը հասկացայ,—պատասխանեցի ես, ամաչելով իմ տգիտութեան վրա:—Դուք բոլորովին նոր բաներ էք խօսում:

Նրա սառն դէմքի վրա երևաց մի թեթև ժպիտ:

—Ձեզ այսպէս է թուում, ասաց նա,—բայց իմ խօսքերը նոր չեն, իեղևյի մարդիկ այսպէս են մտածում: Հիմա ես կը խօսեմ ձեզ հետ աւելի պարզ կերպով, հէնց ձեր լեզուով, որ դուք հասկանաք: Ես իբրև օրինակ կը վերառնեմ հէնց ձեր անձնաւորութիւնը, որովհետև դա աւելի մօտիկ և աւելի ծանօթ է ձեզ: Ասացէք, խնդրեմ, դուք ինչու սկսեցիք գողանալ, երբ ձեր պատանեկութեան հասակում ընկերացաք այն մանկահասակ սրիկաների հետ:

—Մենք քաղցած էինք մնում, այդ պատճառով գողանում էինք, որ սովից չը մեռնենք:

—Շատ լաւ: Բայց մինչ չէիք կարող դուք, կամ այն մանկահասակ սրիկաները, ձեր աշխատանքով հաց վաստակել և չը գողանալ:

—Մենք ոչինչ չէինք սովորած:

—Տեսնում էք, այստեղ կան պատճառներ, որ մարդուն անբարոյական են դարձնում, այն է՝ աշխատանքին անսովոր և անընդունակ լինելը:

Ես նա սկսեց երկար բացատրել, թէ ինչ բան է հայի խնդիրը մարդկային հասարակութեան մէջ, թէ ինչու մարդիկ հացի համար անբարոյական են դառնում, ասաց, որ ոչ միայն մի անհատը, գործելու անընդունակ լինելով և արդար աշխատանքի սովորած չը լինելով, դառնում է գող, աւազակ, խարեբայ,—այլ մի ամբողջ ժողովուրդ կարող է այսպէս դառնալ, եթէ աշխատանքի սովորած չէ: Նա օրինակ բերեց մի քանի ցեղեր, որ պարապվում են աւազակութեամբ և կողոպտում են իրանց հարևաններին: Ես հարցրի.

—Կան մարդիկ, որոնք աշխատանքի սովոր են, որոնք ընդունակ են գործելու, բայց դարձեալ գողանում են, խաբում են և իրանց վաստակի մէջ անազնիւ միջոցների են դիմում, օրինակ, Պարսկաստանի խաչագողները և հրէաները:

Նա պատասխանեց.

—Ասացէք խնդրեմ, ինչու ոչ մի այլ բարեկարգ երկիր, այլ միայն Պարսկաստանը արտադրեց խա-

չափոններ: Այդ խարխափները ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ, պարսիկների բռնակալութեան բնական արդիւնք: Մահմետական կրօնը սիրտ է համարում նրանց. օրէնքի առջև հաւասար իրաւունքներ չեն վայելում. նրանց կեանքը, նրանց կեանքը ապահով դրութեան մէջ չէ գտնվում. նրանց մշակութեան պատգները, մահմետականներից պիղծ համարվելով, չեն վաճառվում, և այսպէսով զրկվում են ապրուստի ամենահաստատ միջոցների մէկից, որ մատակարարում է նրանց հաղը,—ասելացրէք դրանց վրա պարսիկների ճնշումը, հալածանքը, կամայականութիւնը, հարստահարութիւնը և ձեզ հասկանալի կը լինեն խաչագողների գոյութեան բուն պատճառները: Սարսափելիը խաչագողների մէջ զարգացրեց նենգաւորութիւն, իսկ ճնշված, հալածված և հարստահարված դրութիւնը նրանց անբարոյական դարձրեց: Հալածանքը զարգացրեց այդ հալածեալների մէջ նոյնպէս հալածատրութեան ոգի, իսկ հարստահարութիւնը աճեցրեց նրանց մէջ անբարոյական բնազդումներ: Վերևից, այսինքն իրանից աւելի զօրաւորից, հարստահարվելով, սովորեցին նրանք հարստահարել իրանցից աւելի տկարներին: Այսպիսի ճնշումը արտադրեց խաչագողներին: Պարսիկները հարստահարում էին նրանց կոպիտ ուժով, իսկ նրանք սովորեցին հարստահարել պարսիկներին՝ կամ իրանցից աւելի տգէտ մարդիկներին՝ մեզմ խորամանկութեամբ և զանազան սատանայական խարեբայութիւններով:

Ազատ մրցութեան մէջ և իրաւունքների հաւասարութեան մէջ նրանք կարող էին ապրել կերպով մաքառել: Բայց տրօվեան իրաւունքները անհաւասար էին,—մի կողմում կանգնած էր բռնութիւնը, կոպիտ ուժը, իսկ միւս կողմում՝ անձայն հնազանդութիւնը, — այսպիսի չարաբաստիկ մէջ, շատ բնական է, որ մրցութեան համար նրանք կընտրէին անազնիւ միջոցներ: Միշտ այդ դրութեան մէջ են եղել և են Պարսկաստանի խաչագողները: Այդ ևս ինչու նրանք մեղադրում խաչագողներին, որ նրանք անբարոյական գործեն. չէ որ մահմետական աշխարհը փչացրեց նրանց:

—Դուք օրինակ բերեցիք և Պարսկաստանի հրէաներին,—առաջ տարաւ նա:—Չէ կարելի այդ ազգը անբարոյական կոչել, որ առել է մարդկութեանը երկու ամենաազնիւ և ամենաարժէքաւոր կրօնքներ, որոնք բարոյականութեան հիմունքն են կազմում: Բայց ինչու բարոյական փչացան հրէաները: Եթէ նրանց ազատ ապարելու տալին զբաղելու, եթէ նրանց չը հալածէին, նրանք երբեք սոխակած չէին լինի խարեբայութեամբ ապրել: Հրէան ցեղական հարուստ ձիրքեր ունի, նա խելքի, իմաստութեան, գիտութեան, ճարտարութեան և գեղարուեստի ասպարէզներում հանդէս է բերել ամենանշանաւոր հանճարներ: Օրինակ, Գերմանիայում նրա դրութիւնը փոքր ի շատէ ազատով է եղել, և նա միշտ նշանաւոր և օգտաւէտ է յայտնվել մարդկային գոր-

ծանեբմեան ամեն ճիգերում։ Իսկ մահմետական աշխարհում նրան ճնշել են,—նա դարձել է միասակար։ Սկսեալ Եղիազատի փարաւօնների օրերից, աշխարհի երեսին չիրաւյան եղած այդ ազգը հալածւում է։ Հալածանքը սովորեցրել նրան խաբեբայ լինել, խորամանկ լինել, նենգաւոր լինել։ Այդ յատկութիւնները, որ առաջ եկան նեղված կեանքի անխուսափելի անհրաժեշտութիւնից, դարձան բնաւորութիւն և ժառանգարար անցան սերունդից սերունդ։ Միայն ժխտական դրութեան բարեփոխութիւնը կարող էր մաքրել այդ վատ յատկութիւնները։ Եւ որտեղ նրանց դրութիւնը բարեփոխուեցաւ, այնտեղ նրանք լաւացան։ Իսկ Պարսկաստանում և առհասարակ մահմետական աշխարհներում նրանց դրութիւնը դեռ իր անխախտ ձանձրալի պայմանների մէջն է գտնւում։ Նրանց կայքը յափշտակում են, նրանց բարբարոսաբար չարչարում են, նրանց ամեն կերպ հարստահարում են,—նրանք էլ սովորեցին իրանց դէնքով խելքով հարստահարել իրանցից ուժի միամիտներին։ Այդ դէպքում խաչազողի նշանակութիւնը հրէայից ոչինչով չէ զանազանւում, տարբերութիւնը միայն նրանց գործունէութեան եղանակի մէջն է։

—Հիմա տասկացար,— չարունակեց նա, — որ մահմետականութիւնը ինքն է մեղաւոր, որ պատրաստում է իր միջից անպիտան մարդիկ։ Եւ Պարսկաստանի նման երկիրը միայն կարող էր

արտադրել խաչագողներ։ Որպէս չէ կարելի մի վատ, անարդաւանդ տոհից առաջ և պտղաբեր բոյսեր սպասել, այնպէս էլ չէ կարելի մի անբարեկարգ երկրից սպասել լաւ մարդիկ։ Վատ տոհը կարելի է մշակել և պտղաբեր դարձնել,—նոյնպէս և մի անբարեկարգ երկիր, որպիսին է Պարսկաստանը, հասարակական կազմակերպութիւնը կարելի է այնպիսի պայմանների մէջ դնել, որ եթէ վատերը, անբարոյականները բոլորովին չը սպառվելին, գոնէ նրանց թիւը համեմատաբար չատ փոքր լինէր։

Եւ նա երկար խոսում էր այն մասին, թէ ինչ միջոցներ է հարկաւոր գործ դնել, որ աղքատութիւնը և մարդիկների չարութիւնը վերացվի, որ բոլոր մարդիկ լինեն կրթված, բարի, գոհ և բախտաւոր։ Այդ ամենը բացատրում էր նա այնքան պարզ լեզուով, որ ես այժմ բոլորը հասկանում էի։

Այնուհետև ես հանարեա ամեն գիշեր խոսում էի նրա հետ և չատ բաներ էի սովորում։ Նրա հայացքները, նրա կարծիքները բոլորովին տարբեր էին իմ մինչև այդօր լսածներից և սովորածներից։ Օրինակ, մեր աչքերից չատ անգամ լսել էի, թէ գողութիւնը մեղք է, եթէ գողանալու լինես, մեռնելուց յետոյ հոգիդ կը տանեն դժոխքի կրակի մէջ կացրեն։ Բայց ես դժոխքի կրակից չատ չէի վախենում, որովհետև դեռ նորահաս երիտասարդ էի, մինչև մեռնելը չատ ժամանակ անելի, կարող էի հազար անգամ գողանալ, և նոյն աչք-

աչքի մօտ մեղքերս խոստովանվելով, նրանից թողութիւն առնում: Եւ այսպէս իմ գործը հեշտացրած էր: Բայց թէ այս աշխարհի, նեղկայ կեանքի, համար զղջումը ինչ ձեռս ունէր,— աչքաբէրը այդ մասին ոչինչ չէր խօսում, նա միայն սպառնում էր դժոխքի կրակով: Բայց Հաւրը, բացի դժոխքից, նաև ասում էր, որ զղջի համար հէնց այդ աշխարհը նեմանապէս դժոխք է, և եթէ ես առաջուց գիտենայի, երբէք չէի զղջանալ: Ես չատ էի գողացել, չատ էի խաբել, անպիտան գործեր էի ձեռք բերել, բայց երբէք բախտաւոր չէի եղել:

«Քո անձնական բարիքը պէտք է որեւէս ուրիշի բարիքի մէջ»— ասում էր Նա,— «կը յանկանայիր, որ ուրիշը անէ քեզ այն բանը, ինչ որ քեզ պարտաճէլի չէ, օրինակ, գողանայ քեզանից, խաբէ, հարստահարէ քեզ, անպատուէ քեզ, ճնշում գործ դնէ քեզ վրա և այլն»:— «Չէի ցանկանայ»,— պատասխանում էի ես:— «Ուրեմն դու էլ չի պիտի անես ուրիշներին»:— Յետոյ հարցնում էր.— «Դու կը ցանկանայիր, որ ուրիշները սիրէին քեզ, օգնէին քեզ, յարգէին քո մարդկային իրաւունքները, չը հարստահարէին քեզ»:— «Կը ցանկանայի»:— «Ուրեմն դու էլ և մի և նոյն կերպով պէտք է վարվես ուրիշների հետ»: Նա ասում էր.— «Մեր օգուտը ուրիշի օգուտի մէջն է, ձեռնհալով նրան, ձեռնում ենք մեզ»:

Բայց քաւոր Պետրոսը, իմ նախկին դաստիա-

րակը, բոլորովին հակառակն էր խօսում. Նա ասում էր.— «Մենք մեր անձի համար ենք ապրում. մարդը պէտք է հոգ տանի իր անձի և իր բարօրութեան համար միայն, բայց երբ մի ուրիշը արգելք է լինում իմ բարօրութեանը, ես պէտք է աշխատեմ նրան չնչացնել, որ իմ անձը լաւ ապրի»: Ես այժմ հասկանում էի, թէ որ ատելութեան անբարոյական նշանակութիւն ունէին այդ խօսքերը, թէ որքան վնասակար էին նրանք: Պիտք թէ, ես իմ անձի բարօրութեան համար չնչացնեի մի ուրիշին, ինձանից աւելի ախարին, չէ որ կը գտնվէր մէկը, ինձանից աւելի զօրեղը, նա էլ իր բարօրութեան համար ինձ կը չնչացնէր, և այսպէս, զօրեղը անզօրին սպառնալով, մարդկային հասարակութեան մէջ կը տիրէր ընդհանուր ամայութիւն, ընդհանուր գժբախտութիւն:

Հաւրը միշտ իր խօսքերի մէջ օրինակ էր առնում իմ անձը, կարծես, ես ամբողջ մարդկութեան ներկայացուցիչը լինէի: Ասում էր, թէ անձը քեզ աւելի մօտ է, դու նրա հետ աւելի ծանօթ ես, և քո անձի օրինակով կարող ես դատել բոլոր մարդերի վրա: Ինձ երեսում էր, որ ես գրաւել էի Նրա ուշադրութիւնը: Նա որքան ասէն էր, որքան ծածկամիտ էր գէպի իր ընկերները, այնքան եռանդոտ կերպով սկսեց հոգ տանել իմ զարգացման վրա: Միանգամ ասաց ինձ.

— Մարթա, դու այժմ գիտես (նա հիմա ինձ հետ դու-ով էր խօսում) թէ ինչ է պատճառը,

որ մարդիկ անթարմական և մի և նույն ժամանակ անթախտ են դառնում. դա պիտու նաև, որ մի մարդու անթախտության պատճառները հատկանալու համար, պետք է ծանոթանալ նրա կեանքի պատմության հետ: Եւ այսպէս, մի ամբողջ ազգի անթախտության պատճառները հատկանալու համար, պետք է նախ ծանոթանալ նրա պատմության հետ: Արդեհետև մի ազգ մարդկության մէջ նոյն տեղն է բռնում, ինչ որ մի անհատը հասարակության մէջ: Եւ նա ազգերի պատմությունից բացատրեց ինձ շատ կրթիչ բաներ:

Երկար նա խոսում էր կրօնքի, լեզուի և դպրության մասին, բացատրում էր, թէ մի ազգի դրականությունը ինչ ազդեցություն կարող է տալ նրա կեանքին և գործունեությանը, բացատրում էր մեր նոր դրականության սխալ ընթացքը և նրա վնասակար ազդեցությունը ժողովրդի վրա: Նրա առածները ինձ այն աստիճան դրաւեցին, որ ես վճռեցի, որքան կարելի է, լաւ սովորել հայոց լեզուն: Իմ լեզուն աւազ շատ կոշտ և ոսկրային էր: Թուրքերէն և պարսկերէն բառերով լի էր իմ խոսակցությունը: Ես աշխատում էի այնուհետև նրանց հայկական բառեր գործածել: Ես շատ շատ սովորեցի բառերը, օրինակ, մի գիտելիքի մէջ սովորեցի այդ բոլոր բառերի նշանակությունը. անհատ, ընտանիք, ցեղ, ազգ, հայրենիք, պետություն, քաղաքակրթություն, լուսաւորություն և ուրիշ շատ բառեր: Նա առում էր,

որ այդ բառերի վրա ամբողջ դրքեր են գրված, բայց նա մի քանի խոսքերով բացատրում էր ինձ դրանց իմաստը: Ախտա, որ թոյլ չէր սորված մեզ մօտ գիտք, թուղթ, գրիչ անունները, թէ չէ, ես շատ բան կը սովորէի նրանից:

«Գիտությունը և ուսումը միայն միջոցներ են մի ժողովրդի համար հասնելու բարօրության, բայց ոչ բարօրության առարկան»,—առում էր նա, և սկսում էր բացատրել, թէ ուրիշ ինչ պայմանների մէջ պետք է գրված լինի ժողովրդի կեանքը, որ կարողանայ լինել նա բախտաւոր: Երկար ու երկար խոսում էր հողի ու նրա մշակության պայմանների մասին, արհեստների կատարելագործության մասին, գրամատէրների գործունեության մասին և այլն: Աշխատանքը նա աւելի բարձր էր գնում, քան ամեն ինչ: «Աշխատանքը կեանք է, առում էր նա, իսկ անգործությունը՝ մեռելություն»:

Նրա խոսակցությունը այնքան հաճելի էր, որ ես ժամերով լսում էի նրան և չէի կշտանում: Ոչ մի անմիտ բառ չէր գալիս նրա բերանից: Նա գիտէր խիստ լաւ և խորին կերպով վերաբերվել դէպի ամեն մի հարց: Ես իմ կեանքում առաջին անգամ տեսնում էի մի այնպիսի երիտասարդ, որը անսահման բարեմիտության հետ ունէր և հմտությունների մեծ պաշար: Նա գիտէր մի քանի եւրոպական և ասիական լեզուներ և, որքան ասես, խելացի մարդ էր:

Իր մասին նա ոչինչ չէր խօսում: Մի քանի անգամ հետաքրքրվեցայ նրա անցեալով, բայց սառնում էր միշտ անորոշ պատասխաններ:

—Դուք բարի և ազնիւ մարդ էք,—մի օր ասեցի նրան,—դուք չէիք կարող ինձ նման եղեռնագործ լինել, պատմեցէք, խնդրեմ, ինչ յանցանքի համար աքսորեցին ձեզ:

—Այդ մի հարցրէք... պատասխանեց նա ոչ սակաւ յուզված կերպով:

—Գոնէ ասեցէք, դուք ով էք և որ տեղացի:

—Այդ ևս մի հարցրէք...

Ո՛րքան սիրուր գաղտնիք էր թագնված այդ անբախտ երիտասարդի ճակատագրի մէջ: Ինչ էլ որ լինէր, ես համոզված էի, որ նա ազնիւ մարդ էր, և նրա բարեկամութիւնը ինձ համար մեծ մխիթարութիւն էլ համարում: Այդ էր պատճառը, որ քաւոր Պետրոսի երկրորդ նամակը տասնապատկեց յուսոյ, ես ամենևին չէի մտածում օգուտ քաղել նրա օգնութիւնից և նրա ձեռքով ազատութիւն գտնել: Եկաւ գարնիքը, անցան գառնի տօները, բայց ես ամենևին չը գնացի եղեխնների անտառը, Կարմիր բլուրի մօտ: Նա, որ ինձ մոլորեցրել էր, նա, որ ինձ յոյս էր տուել չար գործի չար ճանապարհները, այժմ աշխատում էր փրկել ինձ: Բայց ինձ պէտք չէր փրկութիւնը նրա ձեռքից ընդունել: Ես արդէն բաւական էի փրկված համարում, սկսած այն օրից, որ իմ նոր դասատիարակի հնարքով մկրտվեցայ կրթութեան նոր աւազանի մէջ: Ես իմ չղթաների մէջ իմ անձը բախտաւոր էի համարում, որ միշտ կարող էի տեսնել նրան, միշտ կարող էի վայելել նրա բարեկամութիւնը և լսել նրա խնամատարից խրատները:

—

Աւազակապետի պատմութիւնը ինձ վրա խիստ տպաւորութիւն թողեց: Նա սիրել էր մէկին, նրան նուիրել էր իր անձը, իր հոգեկան բոլոր զգացմունքները: Նրա սիրոյ առարկան այլ ևս չը կար, բնակվում էր չատ հեռու, օվկիանի աչխարհում: Բայց այդ զգրախտ մարդը դեռ չարունակում էր սիրել նրան, դեռ նրան յիչելիս, նրա այրական դէմքը մռայլվում էր տխրութեան թախիծներով: Ես նոյնպէս սիրում էի մէկին, բայց իմ սիրոյ առարկան գտել դեռ կենդանի էր, գտել դեռ մտածում էր իմ վրա: Այժմ որտեղ էր անհայր, անմայր, անտուն, անտեղ և անօգնական որբիկը... Ես չատ անգամ մտաբերում էի նրան և իմ սիրտը լցվում էր անչէջանելի կրակով: Աչքերիս արտասուքը չէր պատում հանգչեցնելու այդ կրակը: Պատասպարեալը մոռանում է ծնողներ, ազգականներ, բարեկամներ, մոռանում է իր հայրենիքը, բայց սիրած կնոջ յիչատակը մնում է նրանից անբաժան: Սիրած կնոջ կորուստը ամենի ծանրացնում է նրա չղթաները, ամենի զգալ է տալիս իր թշուառ դրութիւնը...

Ա.ժամանակ Համլի բարեկամութիւնը ինձ մոռանալ տուեց Նէնէին, և սիրելի աղջկայ յիշատակը խիստ սակաւ էր խաւարեցնում իմ դժբախտ դրութեան րոպէները: Բայց դա երկար չը տևեց, ես կրկին անձնատուր եղայ այն տաղտկալի հոգեմաշ թախծութեանը, որ Նէնէից բաժանվելուց յետոյ մշտապէս տանջում էր ինձ: Միանգամ Համլը գոռաց ինձ այսպիսի տրամադրութեան մէջ:

—Ինչ է պատահել քեզ հետ,—կարեկցութեամբ հարցրեց նա:

Ես նրանից թէև ծածուկ ոչինչ չունէի, բայց իմ կեանքի բոլոր անցքերը նրան պատմելու ժամանակ, ոչինչ չէի յիշել Նէնէի մասին: Այժմ ինչպէս կարող էի թագցնել նրանից իմ սիրոյ և նրան մաշող ցաւերը: Ես պատմեցի նրան բոլորը, ինչ որ յայտնի է ձեզ Նէնէի մասին. թէ որպէս գոյ նրան անտառում, այն րոպէում, երբ մի չարագործ պատրաստվում էր սպանել նրան, որպէս ազատեցի նրա կեանքը և բերեցի քաւար Պետրոսի մօտ, թէ որպէս այդ վերջին չարագործը նոյնպէս հրամայեց ինձ սպանել նրան, և որպէս ես խաբեցի նրան, յայտնելով, թէ հրամանը կատարված է, բայց աղջկան թագցրի իմ հօր խրճիթում,—և վերջապէս, որպէս իմ վարմունքը ծնեցրեց անմեղ աղջկայ սրտում սէր դէպի ինձ, և այնուհետև նա չը բաժանվեցաւ ինձանից և այն ժամանակ, երբ ես կալանաւորվեցայ, բանտարկվեցայ և դատապարտվեցայ մշտական աքսորի:

Վնասջ սէրը, որպէս երևում էր, չատ դպալի չէր Համլին, նա իր կեանքում կամ երբէք չէր սիրել, կամ եթէ սիրել էր, կրակը վաղուց արդէն հանգել էր նրա սրտում: Այդ էր պատճառը, որ նա խիստ սառնութեամբ լսեց իմ պատմութիւնը, վերջը նկատելով.

—Այդ պատմութեան մէջ ես գովում եմ ձեր առաքինութիւնը, գոնէ ազատել էք մի թշուառի կեանք:

—Բայց նրան կորցնելը այժմ իմ կեանքը անտանելի է դարձրել:

—Այդ ես հասկանում եմ... այդպիսի հանգամանքներում մարդուն փրկում է մի բան միայն —աշխատանքը: Աշխատանքը մոռանալ է տալիս սրտի կսկիծները, որ առաջ էին հնչել սիրոյ սրբազնութից:

Նրա առն փիլիսոփայութիւնը այժմ ինձ չէր գրաւում: Ես տուեցի խիստ յուսահատական պատասխան-

—Այժմ մահը, միայն մահը կարող է հանգստացնել ինձ, աշխատանքից ես ձանձրացել եմ, մանաւանդ այսպիսի ապարդիւն աշխատանքից:

—Ոչինչ աշխատանք ապարդիւն չէ, երբ մարդկութեանը որ և իցէ օգուտ է բերում:

—Մեր աշխատանքը ինչ օգուտ է բերում:

—Ելեկ դու մոռացել ես, որ միանգամ ես քեզ ասեցի, որ մեր օգուտը ուրիշի օգտի մէջն է, և

նոյնը փոխադարձաբար: Եւ եթէ մենք ուղղակի կերպով չենք հանդիսանում մեր աշխատանքից, կը հանդիսանան, անտարակոյս, մեզ նմանները, այսինքն՝ ուրիշ մարդիկ: Մենք փորում ենք լեռների սիրտը և այնտեղից դուրս ենք բերում պղինձ, երկաթ, ոսկի և արծաթ: Այդ մետաղներով բացվում են գործարաններ, կառուցանում են արհեստանոցներ և այլ բարեգործական հիմնարկութիւններ: Նրանց մէջ ուսում են առնում, կրթվում են և լաւ մարդիկ են դառնում:

Ես այնքան գրաւեցայ այդ վիճաբանութեամբ, որ մոռացայ Ենկէին, մոռացայ և նրա սէրը, որի առիթով սկսվել էր վիճաբանութիւնը: Համրը, իր սառնասրտութեան հակառակ, աւելի տաքացած էր: Նա ուղիղ իմ աչքերի մէջ նայելով, ասաց.

—Դուք (նրբ բարկանում էր նա, սկսում էր դուք-ով խօսել) միշտ մոռանում էք մեր անցեալ խօսակցութիւնները, որոնց մէջ մենք միշտ համաձայնվել ենք միմեանց հետ: Ես կրկին կը դառնամ դէպի ձեր անձնատուրութիւնը և ձեր անձի օրինակով կը բացատրեմ իմ մտքերը: Ասացէք, խնդրեմ, եթէ ես այժմ մոռացմամբ իմ քսակը ձեզ մօտ թողնէի, դուք ինչպէս կը վարվէիք նրա հետ:

—Ես կը վեր առնէի, կը պահէի և կրկին ձեզ կը վերադարձնէի:

—Իսկ եթէ այդ պատահելու լինէր մի քանի տարի առաջ:

—Ձեզ կը սպանէի և կը խլէի ձեր քսակը:

—Այդ փոխոխութիւնը ո՞րտեղից ծագեց ձեր մէջ:

—Պատ լինձ սովորեցրէք, որ գողութիւնը վատ բան է:

—Հիմա տեսնում էք, ես ձեզ սովորեցրի, թէ գողութիւնը վատ բան է, չէ որ այդ իմ օգտի համար արեցի, որովհետև դադարեց ես ապահովացրի իմ քսակի դրութիւնը: Չէ որ բոլոր վատ մարդիկ ձեզ նման են. նրանք էլ մի և նոյն ուղղը, մի և նոյն նեարդային կազմուածքն ունեն, որպէս դուք: Եթէ մենք կը սովորեցնենք նրանց լաւ մարդիկ լինել, դրանով օգուտ կը բերենք մեզ—ինքներիս, որովհետև նրանք կը դադարեն մեզ չար գործելուց: Հիմա հասկանում էք, թէ ինչ եղանակով ենք օգտվում մենք մեր գաղափարած սկզբից և արծաթից:

—Հասկանում եմ. նրանցով մարդիկ կրթութիւն են ստանում և դադարում են իրանց նման մարդիկներին կողոպտել:

—Միայն կրթութիւնը չէ, ուրիշ շատ լաւ բաներ են կատարվում մեր աշխատանքի արդիւնքով:—Ես նա սկսեց երկար խօսել այդ առարկայի վրա և իր գաղափարները վերջացրեց հետևեալ ասացուածով. «Մէկը ամենքի համար, ամենքը մէկի համար»:

—Այժմ հասկացայ,—պատասխանեցի ես,—բայց ինչու դու մեր միւս ընկերներին ես չես սովորեցնում լինձ նման բարի լինել:

Նա պժռտարտաչաս պատասխանել, և բոլէական չիմթռվիմնից յետոյ՝

— Այդ թողնենք...— ասաց նա, խօսքը փոխելով,— լսիր, Մռաթ, միայն բարի լինելով չէ, որ մարդը կարող է ուրիշներին օգուտ բերել և ինքը բախտաւոր լինել: Մարդիկ հրեշտակներ չեն, որ միայն բարի լինելով կարողանան լաւ ապրել: Մարդը պէտք է գործէ, իսկ գործելու համար պէտք է մի քան ստիպած լինի: Այդ մարդիկը— նա ցոյց տուեց դատապարտեալներին,— եթէ անբարոյականացան, եթէ գժբախտացան, դրանում պատճառն այն էր, որ ոչինչ հիմնաւոր բան ստիպած չէին: Գոնէ այժմ ստիպուեցնէին...

Ը.

ՍՊԻՏԱԿ ՏՆԱԿԸ

Դատապարտեալների ճերմակի վրայ, պինտանոցից և զանազան արդունի չինուածներից յետոյ, աւելի աչքի էր զարկում մի սպիտակ տնակ, որը չատ մօտ էր հիւանդանոցին: Այդ առանձնացած բնակարանը միայն երկու սենեակներ ունէր, փոքրիկ լուսամուտներով և ներքին կողմում: Մի կողմում դանուում էր ծառաների կացարանը, որի մօտ էր խոհանոցը:

Երեսում էր, որ վաղուց մարդիկ չէին քնակուել այստեղ: Բակի փոքրիկ պարտէզը, որ զարդարած էր մրգաբեր ծառերով, մնացել էր անմշակ, հովանոցը քայքայուել էր, փայտեայ վանդակապատը չատ տեղ կոտրտուած էր, փշուած անդադրից յած էին թափուել մի քանի տախտակներ:

Սենեակների ներքին դասաւորութիւնը չատ նման էր փոստային կայարանի, ուր ուշ-գիշերով եկած ճանապարհորդը իր բոլոր ծանրութիւնները խոհեմութեան ածած է լինում այս կողմ և այն կողմ, ուշադրութիւն չը դարձնելով նրանց կարգի դնել, որովհետև առաւօտեան կրկին պէտք է ճանապարհ ընկնի, կրկին պէտք է նրանց կարգը խանգարուի:

Այժմեան բնակիչները նոյնպէս նոթեհներ էին, նրանք իջևանել էին այստեղ հենց նոյն գիշերը: Նրանց ծանրաբեռնուածները նոյնպէս խառնիխուռն ածած էին այս կողմ և այն կողմ, ճանապարհի փոշին դեռ նստած էր նրանց վրա: Բայց դրանք գիտալու չէին, դրանք պէտք է մնային այդ բնակարանի մէջ:

Առաւօտ էր, խնամ, մարախլապատ առաւօտներից մէկը: Փոքրիկ բնակարանում դեռ քնած էին: Միայն աննշանակներից մէկի դուռը կամաց բացվեցաւ և չէքի վրա յայտնվեցաւ մի բարձրահասակ օրիորդ: Նա նայեց իր չուրջը, հանդարտ քայլերով ցած իջաւ սանդուղքներից, անցաւ պարտէզի տատասքներով պատած ճեմելիքը, անցաւ կիսաձեր հովանոցի մօտից և մերձեցաւ փայտեայ վանդակապատին: Այստեղից սկսեց նայել դէպի շրջակայքը: Գիշերով եկած լինելով, նա դեռ ոչինչ չէր տեսել. այժմ առաւօտեան լուսով ցանկանում էր լաւ նայել այն աշխարհի վրա, ուր գուցէ ընդհրկար ապրելած կը լինէր մնալ:

Առաւօտեան թանձր մարախուղը հետզհետէ նօսրանում էր, բայց դեռ ևս ազօտ կերպով նկարվում էին հեռաւոր առարկաները: Օրիորդը նայում էր, խորին անձկանօք նայում էր և, կարծես, զայրանում էր, որ ոչինչ չէր տեսնում:

Նրան կարելի էր ոչ աղախին համարել և ոչ տան աղջիկ: Նա ոչ աղախնի անվստահ կայտառութիւն ունէր և ոչ տան աղջկայ նազելի վըս-

տահութիւնը: Նա աւելի նման էր տանտիկնոջ մի հեռաւոր ազգականին, որ ընկած էր ծնողներից, որին թէև սիրում են, փայփայում են, բայց դարձեալ զգում է, որ ինքը որբ է, որ իրան հազ համար են պահում: Նրա խոշոր դէմքը, սև, կրակոտ աչքերը, հարուստ, մշնագոյն գիսակները ամենևին չէին համապատասխանում հեռաւոր հիսախին, նա եկած էր հարաւից, ջերմ, արևմտեան հարաւից, ուր արիւնը մշտապէս եռ է գալիս, ուր դէմքերը ոտանում են մոյգ վարդի գոյն: Բայց որքան լոյս և կեանք կար այն մթին աչքերի մէջ, որքան հրապուրանք այն խոշոր դէմքի վրա: Նա ներկայացնում էր մի աչխոյժ, անառանձ բնաւորութիւն, պօղած սիրտ-խնդերով, խառնած դառն յուսահատութեան մէջ:

Նա շարունակում էր նայել:

Վերջապէս շոգայլին արեգակի առաջին ճառագայթները և երևան հանեցին շրջակայ տեսարանները: Ահա այն տեղ, հալոցների բարձր ծխանոներից, խոշոր ամպերի նման, դուրս էր հոսում խոշոր մուխը և նսեմացնում էր դեռ նոր լուսաւորված հորիզոնը: Մարդիկ, մրոտած հագուստով, մրոտած դէմքով, սև, որպէս սրուակներ, խառնում էին ծխային մթնոլորտի մէջ: Այդ տեսարանը սարսափ պղտեց օրիորդի վրա: Հալոցներից ոչ այնքան հեռու, հանքային քարերի կոյտերի մօտ, գետնի վրա նստած էին նոյնպէս մոայլոտ դէմքեր: Դրանք ծանր մուրճերով ջարդում էին,

մանրում էին քարի մէջ թաղված մեռածը, և պատրաստում էին հալելու համար: Օդը թնդում էր հարիւրաւոր կռանների հարուածներից: Ոմանք փոքրիկ սայլակներով մանրած մեռածը քարշ էին տալիս, սանում էին ու ածում առանձին կոյտերի վրա, որոնք բազմաթիւ բլրակների ձև էին ստացել: Այդ բլրակներից մի քանիսը ծխում էին: Ածուխը և ծծումբը այրւում էր նրանց մէջ, և ուտում, մաշում էր հանքային աւելորդ մասները: Օդը այստեղ խեղդում էր ծծումբի կծու հոտով:

Այդ կողմում ամէն առարկայ սև գոյն ունէր, կարծես, ամէն ինչ սուգ էր զգեցած: Մեռածի սև կղկղանքով պատած էին ճանապարհները, սև փոշին ծածկել էր գործարանների կտուրները, սեւացած էին և ճնճղուկները, որ բոյն էին դրել այդ չինուածքների ծածքի տակ:

Ամէն ինչ սև էր, ամէն ինչ մրոտած էր: Միայն կրակն ու բոցը, որ բորբոքւում էր հալոցների մէջ, ներկայացնում էր մի տոկալի հակապատկեր ընդհանուր նեմոլիեան մէջ: Այդ դժոգքում մարդիկ այրւում էին, բայց չէին խորովւում: Հալած մեռածը ծխում էր բովերի մէջ, որպէս հրեղէն լճակ: Երկաթեայ երկայն չերեփներով վեր էին առնում բաց-դեղնագոյն հեղուկը և ածում էին արուեստ կաղապարների մէջ: Քրտինքը յորդ վտակներով հոսում էր գործաւորների սարսափած դէմքից. բոցը խանձում էր նրանց կիսախարշ երեսները:

Օրիորդը դէմքը չուռ տուեց գարհուրելի տեսարանից:

Միւս առարկաները չէին հետաքրքրում նրան: Ահա այնտեղ, պաշտօնատարդ վիտուրի հաստլիկ կինը, փէչերը վերքաշած, բոլիկ ոտներով, ցեխը կոխ տալով, վերադառնում էր մերձակայ վտակից, և ուսի վրա դրած լծակի երկու ծայրերից թիթեղեայ սափրները քարշ տուած, ջուր էր բերում: Այնտեղ պառաւը մրմրթալով քչում էր դէպի դաշտը իր մի հատիկ կովը: Փոքր ինչ հեռու, մի սառնակ տղայ, առանց անտրամարտիքի, միայն չամլիկը հագին, նստած էր մերկ ձիու վրա, և նոյնպէս մերկ ոտներով նրա կողքերը ծեծելով, բոլոր ուժով վազեցնում էր իր նիհար եաբուն, Աստուած ոչ գիտէ, թէ դէպի ու՞ր: Բայց գլխի մազերը ծածանւում էին, սաստիկ չփվելով օդի հետ: Մի կողմում սագերի սպիտակ երամը, իրանց լայն թաթիկների վրա օրօրվելով, և մի առանձին բաւականութեամբ կչկչալով, դիմում էր դէպի մերձակայ ճահիճը: Փողոցում գիւղացու մանկահասակ աղջիկը, մի քանի գրօշներ ափի մէջ պինդ բռնած, վազ էր տալիս դէպի մերձակայ դուքանը քաւորդ ֆունտ չաքար գնելու: Նրան հանդիպեց մի գրագիր դեղին կօճակներով, ինչոր ասաց, աղջիկը հայհոյեց նրան և փախաւ:

Ուրիշ ոչինչ չէր տեսնում օրիորդը. միայն այստեղ ու այնտեղ երևում էին մռայլոտ չինուածք-

ներ հագիս նշմարելի լուսամուտներով, որոնք այնքան առանձնացած էին, կարծես, վախենում էին մօտենալ միմեանց: Պահապան գիշատիչները, չափազանց քայլերով, անցուդարձ էին անում դռների առջև: Օրիորդի արտասուքով լցված աչքերը յառած էին գետի այդ կողմը: Երկար նայում էր նա և, կարծես, աչքերով աշխատում էր ներս թափանցել այդ մռայլատես չինուածքների հաստ պատերից: Ծանր, երկաթապատ դռներից մէկը բացվեցաւ և դրսում յայտնվեցաւ մի մօրթագոյն խումբ: Շրջապատած գիշատիչներով, խումբը չարժվեցաւ դէպի այն կողմը, ուր կանգնած էր ապտակ անակը: Նրանք կրում էին բահեր, բրիչներ և փորելու գործիքներ: Բայց ինչու՞ հրամայուած նեռքոց էին տանում այդ թշուառ բանտարկեալին: Օրիորդի սիրտը սկսեց բաբախել: Նա պատրաստ էր վազել, գնալ, մերձենալ նրանց և մօտից, շատ մօտից նայել նրանց վրա: Բայց նրա ոտները չը հնազանդվեցան, ծնկները դողացին, գլուխը պտըտվեցաւ, աչքերի առջև մթնեց. նա թուլացաւ, ընկաւ պատեդի վանդակապատի վրա: Մօթրագոյն խումբը հեռուից անցաւ: Ուշքի գալիս օրիորդը ոչինչ չը տեսաւ, միայն նրա ականջներին, որպէս երազի մէջ, զարկում էին ծանր չղմծանների անդադար հնչիւնները...

Խորին ապշութեան մէջ նա ուշի եկաւ: Անջրպետին տեսիլքը անցել էր: Նրա առջև նկարվեցան մի և նոյն տեսարանները: Նա

դանդաղ, դողդոջուն քայլերով սկսեց գիմել դէպի այն սենեակը, որտեղից գալիս էր եկել: Պատեդի միջով անցնելու ժամանակ նրա չրջապտեան նեռքին եղբը բռնվեցաւ վարդենու փշից և պատառվեցաւ: Նա այն աստիճան յուզված էր, որ ոչինչ չը զգաց: Սենեակի դռան մօտ հանդիպեց նրան սպասաւորը, հարցնելով.

—Պատմները վեր են կացել:

—Չը գիտեմ:

—Սամօվարը եփ է գալիս:

—Իերեկէք:

Նա մտաւ սենեակը:

Սպասաւորը մի քանի րոպէից յետոյ սամօվարը նեռս բերեց, դրեց սեղանի վրա և լուռ գուրս գընաց: Օրիորդի արտասուքաթրիքը, կարծես, նրա վրա ևս ճնշում էր գործում:

Նա բացարից յատակի վրա ընկած սնդուկներից մէկը, միւսը, նայեց չամադանի մէջ, նայեց ճանապարհորդական զամբիւղի մէջ, որտեղ էր, թէ որտեղ է դրած թէյը: Շաքարն էլ անհետացել էր նրա աչքերից: Ցիշողութիւնը դաւաճանում էր նրան: Վերջապէս գտաւ մի և նոյն փոքրիկ արկղուկի մէջ, ուր տասն անգամ նայել էր: Սկսեց թէյ պատրաստել: Գործը փախչում էր նրանից. ձեռքերը չէին խոնարհվում. ջուրը վիթխարում էր, բաժակը ցած էր ընկնում, ադմուկ էր բարձրացնում: Հազիւ-հազ կարողացաւ նա տաք ջրով լցրած թէյամանը սամօվարի վրա դնել: Գլուխը

դարձնալ պատրաստ էր: Նա հեռացաւ, նստեց լուսամուտի պատուհանում, և ձեռքը նեցուկ տալով գլխին, սկսեց անխորտակ կերպով նայել դէպի պարտէզը: Պատասխը հեզգի նման թափ-վում էր նրա խոշոր աչքերից և զովացնում էր բորբոքած երեսը և աւելի ևս բորբոքած սիրտը...

Այդ սենեակում արդէն զարթնել էին: Մանկահասակ սիկիմը վեր էր կացել, իսկ նրա երիտասարդ ամուսինը դեռ պառկած էր մահճակալի վրա:

—Վէ վերկաց,—չափազնում էր նրան սիկիմը,—վերկաց, լուացվիր, հագնվիր, դու այս առաւօտ պէտք է ներկայանաս քո մեծաւորներին:

—Դա մի այնքան չտապելու գործ չէ,—պատասխանեց երիտասարդը, աւելի ամուր կերպով փաթաթվելով ամուսնոյ վերմակի մէջ:—Երեկ էլ կարող եմ ներկայանալ:

—Այստեղ մեծաւորները, երևի, խիստ պահանջողներ են,—նկատեց սիկիմը:

— Իսկ ես խիստ պահանջը հեշտութեամբ չեմ վճարում,—ասաց ամուսինը:

Տիկինը, կարծես, ամուսնի յամառութիւնը պատժելու համար, վառեց մի բարակ պապիրոս, ըսկսեց ծխել: Ամուսինը, այդ նկատելով, սկսեց աղաչել նրան.

—Թող տուր, ի սէր Աստուծոյ, քանի անգամ ասել եմ քեզ, որ թէյից առաջ չը ծխես: Դու

ամբողջ գիշերը անհանգիստ էիր, գարձեալ հազում էիր:

Տիկինը ուշադրութիւն չը դարձրեց և, ամուսնին աւելի չիրացնելու համար, մօտեցաւ նրա մահճակալին, ընկաւ նրա կուրծքի վրա, ասելով.

—Ես քո բժշկութիւնը չեմ հաւատում, չեմ հաւատում:—Այդ միջոցին նա աւելի սաստկութեամբ ներս քաշեց պապիրոսի ծուխը և ապա իր գունատ շրթունքների միջից փչեց երիտասարդի խիտ մազերի վրա, որոնք կորան մէջ:

—Այդ ինչ երեխայութիւն է,—ասաց երիտասարդը, գլուխը վեր բարձրացնելով, և իր մանկահասակ կնոջ անմեղ չարութիւնը վարձագրելով ջերմ համբուրելով:

Դրանք այն ամուսիններից էին, որ մինչև մահ, մինչև խորին ծերութիւն ապրում են իրանց ամուսնութեան մեղրամիսի մէջ: Աբդէն տիրոջ տարի էր, որ միասին էին ապրում, իսկ այսօր, կարծես, առաջուան առաջին գիշերվայ առաւօտը լինէր նրանց համար:

Երիտասարդը բժիշկ էր: Նա ընտրել էր ծառայութիւն կայսրութեան այդ հեռաւոր անկիւնում ոչ թէ այն նպատակով, որ ծառայութիւնը այսպիսի խուլ տեղերում առաւելութեամբ էր վարձադրվում, ոչ, այլ նա աւելի բարոյական վարձադրութիւն էր սպասում այստեղ: Նրան մի առանձին բաւականութիւն էր պատճառում բժշկել դատապարտեալներին,—այդ հօր, մօր, բարեկամ-

ների խնամասարութիւնից զրկված թշուառներին:

Նրա մանկահասակ կինը նոյն մարդասիրական զգայմունքն ունէր: Նա այն բարեսիրտ և խնայող կիներից էր, որոնց նմանները խիստ հազուագիւտ են լինում ամուսնական կեանքում,—որոնք չեն ձգտում հաճոյանալ ազամարդին միմիայն կանացութեամբ, որոնք չեն բաւականանում օգնել նրան, բաժանել նրա հոգսերը, միմիայն խնայող տնտես և լաւ տանտիկին լինելով,—այլ որոնք պաշտում են ազամարդի իդէալները, նպաստում են նրանց իրագործմանը, մաս և մշտապորպէս դրութեան մէջ են պահում նրա հոգին իր բարձր, մարդասիրական զգացմունքներով: Այսպիսի լծորդութեան մէջ կինը գտնում է այն գերագոյն ոգին, որից միշտ ներշնչված է լինում ազամարդը. այսպիսի լծորդութեան մէջ ազամարդի եռանդը երբէք չէ մեռնում:

Դեռ ևս օրիորդ էր նա, դեռ ևս նոր էր ծանօթացել իր ապագայ ամուսնացուի հետ, սկսեց բժշկական դրքեր կարդալ, յաճախել հիւանդանոցները և ներկայ գտնուել անդամահատական գործողութիւնների: Պատերազմի ժամանակ մտաւ նա «դթութեան քոյրերի» հասարակութեան մէջ, և գնդակների ու ռումբերի տարափի ներքոյ՝ փութաջոկում էր վիրաւոր զինուորների վէրքերը: Այսպէս նա նորից հանդիպեց իր ամուսնացուին, այսպէս սիրեց նրան և սիրվեցաւ:

Ոչ եկեղեցական և ոչ բազաքական ամուսնութեամբ կապված չէին նրանք: Նրանց կապում էր մտքերի, ձգտումների և գաղափարների համերաշխութիւնը: Բնութիւնը նոյնպէս պլացաւ օրհնել նրանց ամուսնութիւնը այն չափազանց, որ կոչվում է բնական կապ.—զաւակներ չունեցան նրանք: Զաւակը սիրոյ ամրի հաստատ պրաւականն է ամուսինների մէջ, մանաւանդ այն դէպքում, երբ օրէնքը չէ կապում նրանց:

Հետաքրքիր պատահարները պարզեցին նրանց մի զաւակ, թէև իրանց արիւնից չէր: Դա այն օրիորդն էր, որ, միւս անհետանում ենք, լոյս էր լինում: Օրիորդը պատկանում էր այն ցեղին, որ ասէն, տեղ, հայրենիք չունի, որի հայրենիքը ամբողջ աշխարհն է, որը թափառում է ամէն տեղ: Նա գնչու (ցիգան) էր. նա բնութեան որդի էր: Որպիսի ջերմ սիրով սիրվեցին ընդունեց իր մօտ այդ վայրենի այծեամին, որպիսի եռանդուռ հոգատարութեամբ սկսեց կրթել նրան, ուզել նրա վատ սովորութիւնները: Ամէն անգամ, երբ մի նոր փոփոխութիւն էր նկատում նրա մէջ դէպի լաւը, դէպի ազնիւը և դէպի մարդավայելը, առաքինի կնոջ սիրտը լցվում էր անսահման բերկրութեամբ: Նա իսկոյն վազում էր ամուսնի մօտ և պատմում էր իր որդեպատեհ նոր յառաջադիմութիւնը: «Նրա մէջ թագնված ձիրքեր և գեղեցիկ յատկութիւններ չատ կան»,—ասում էր ամուսինը, ոչ սակաւ ուրախանալով, և սիմնոջ յոյսերը աւելի

հաւանականութիւն էին առնում: Շատ օրեր, ժամերով նստած, պարապում էր նրա հետ. սովորեցնում էր գրել, կարդալ և զանազան ձեռագործներ: Շատ անգամ ինքը պառկած էր լինում դիւանի վրա, նրան նստեցնում էր իր մօտ, բարձը ձայնով կարդալ էր տալիս և մեծ բաւականութեամբ լսում էր: Վերջին ժամանակներում սկսեց պարապել նրա հետ մուզիկայով և նկարչութեամբ. վերջինի մէջ թէև մի առանձին ընդունակութիւն չէր ցոյց տալիս նա, բայց երաժշտութեան մէջ չափազանց ընդունակ գտնվեցաւ: Նրա բնականից գեղեցիկ ձայնը, մշակվելով, զարգանալով, աքանչացնում էր լսողներին:

Տիկնոջ դաստիարակութեան ոգին արտահայտեցաւ նրա աշխատասէր աշակերտուհու ոչ միայն մտաւոր և հոգեկան զարգացման վրա, այլ և նրա բնաւորութեան և բարոյական յատկութիւնների վրա: Օրիորդը նոյնպէս սիրում էր իր բարեբարների հետ այցելել հիւանդներին, մտնել աղքատ չինականների խրճիթը և իր հասի վերջին պատառը բաժանել կարօտեալների հետ:

Նա ինայ անբաժան իր խնամակալներից և այն բոլոր ժամանակներում, երբ նրանք պաշտօնի առիթով տարված էին մի քաղաքից միւս քաղաք, մի գաւառից միւս գաւառ անցնել: Իսկ երբ նրանք վճռեցին Սիբիր տեղափոխվել, այդ միջոցին նա աւելի ուրախ էր, աւելի բախտաւոր էր համարում իրան: Ի՞նչ էր, որ կապում էր խեղճ

աղջկայ սիրտը հեռաւոր հիւսիսի հետ. ինչ էր, որ քաշում էր նրան այդ կողմը:—Այդ գաղանիքը յայտնի էր սիկնոջը, յայտնի էր և նրա ամուսնին: Ամեն անգամ, երբ ասում էին նրան. «Կը գնանք Սիբիր, կը տեսնես Ն ր ա ն», —խեղճ աղջիկը հրճուանքից արտասուքը աչքերում էր, և ուրախութեան արտասուքը աչքերում, գրկում էր թէ սիկնոջը և թէ նրա ամուսնին, համբուրում էր, անվերջ կերպով համբուրում էր, և թափում էր նրանց առջև իր հոգու բոլոր շնորհակալութիւնները: Թէ սիկինը և թէ նրա ամուսինը՝ երկուսն էլ սիրում էին նրան, սիրում էին հարազատ զաւակի նման: Տիկինը սովորութիւն ունէր ասել. «Դա առաջ մի թանգագին, բայց անտաշ քար էր. ես ուրախ եմ, որ այդ դրութեան մէջ գտայ դրան, որպէսզի իմ ցանկացած թրաչը (դրան) և փայլը կարողացայ տալ»:

Իսկ այն առաւօտ ոչ սակաւ վշտացաւ նա, երբ դուրս գալով միւս սենեակը, գտաւ օրիորդին պատռտանում նստած և լայ լինելիս: Նա մօտեցաւ և, փայփայելով նրա գեղեցիկ գլուխը, հարցրեց.

—Ի՞նչ է պատահել քեզ հետ, սիրելիս:

—Ոչինչ... պատասխանեց օրիորդը, վերկացաւ տեղից և սկսեց սրբել աչքերի արտասուքը:

—Դու քեզ վատ ես զգում:

—Ոչ... գլուխս փոքր ինչ ցաւում է...

Տիկինը գրկեց նրան, ասելով.

—Հասկանում եմ... խնդճ աղջիկ, դու չատ տանջուեցար, երկար համբերեցիր... մի փոքր ևս համբերիր, այնուհետև վերջ կը դրուի քո արտասուքին...

Թ.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Աւելի քան մի ամբողջ տարի անցել էր այն օրից, որ ես Յանօթեացոյ Համբի հետ: Այդ ժամանակամիջոցը սկսած է իմ կեանքի ամենադեղեցիկ և ամենաբախտաւոր մասը համարել: Ես նրանից չատ բան սովորեցայ. նրա աղդեցութեան ներքոյ ես բոլորովին ուրիշ մարդ դարձայ:

Ես մէկն բարոյասէր ու մտաւորասէր զարգացում էի, բայց իմ մարմնական զօրութիւնները օրըստօրէ թուլանում էին: Ցաժանական աչխատանքը հանքերի մէջ իսպառ մաշել էր ինձ: Ինձ տարան հիւանդանոց:

Հիւանդանոցը աքսորականի համար մի դուռն է, որտեղից բացւում է ճանապարհ դէպի գերեզման: Ես ես ուրախ կը լինէի, եթէ ինձ վիճակուէր այդ ճանապարհով գնալ: Կեանքը ձանձրացրել էր ինձ:

Կեանքը ձանձրալի է դառնում աւելի այն ժամանակ, երբ հասկանում ես նրա նպատակը և չես կարողանում ցանկացածդ կատարել: Մինչև այնօր ես ոդէտ էի, ոչինչ չէի հասկանում, այդ

պատճառով էլ հանդիսատ էր: Բայց երբ չատ բան սովորեցայ, սկսեցի աւելի տանջվել: Եթէ անատոմներին բնութիւնը չատ խելք տուած լինէր, եթէ նրանք զգայուն մանէին, աւելի պահանջող կը լինէին և երբէք չէին յօժարվի կատարել այն բարբարոսական ծառայութիւնները, որ մարդիկ նրանց անել են տալիս:

Հիւանդանոցը դատապարտեալի ամենասիրելի օթևանն է: Այստեղ նա աւելի հանդիսատ է, այստեղ նրա հետ գոնէ մարդու պէս են վարվում: Այստեղ նրան մշտապէս չեն մտրակում, թէև երբեմն չարացած ֆելդշերը ծեծում է նրան, թէ ինչու չէր կատարել իր այս և այն պատուէրը, ինչու գեղը իր ժամանակին դուրս չէր ածել,—այստամենայնիւ, կրկնում եմ, հիւանդանոցը դատապարտեալի հանգստութեան տեղն է, և այդ է պատճառը, որ նա փափագում է, որ իր հիւանդութիւնը երկարատև լինի, և աւելի բախտաւոր է համարում իրան, եթէ հիւանդութեան մահիճը բոլորվին գերեզմանի կը փոխվի:

Բայց մեռնելը հեշտ բան չէ դատապարտեալի համար: Օրէնքը մարդասիրական դեղեցիկ ընկերքունքներ ունի: Կախաղանի դատապարտված թշուառականն անգամ, երբ պատժի նշանակած օրը հիւանդանում է, այդ դէպքում պատիժը յետաձգում են, նրան առողջացնում են, յետոյ են կախաղան բարձրացնում: Աքսորականը նոյնպէս մի յայտնի ժամանակամիջոց ունի տաժանական

աշխատանքների մէջ ձգնելու, ապաչխարելու և իր մեղքերը քաւելու: Այդ ժամանակամիջոցը պէտք է լրացնի նա: Ցն եթէ պատահում է նրան հիւանդանալ, աշխատում են առողջացնել, որ իր ապաշխարանքը վերջացնէ:

Ես տարվեցայ հիւանդանոց: Ո՛րքան ժամանակ մնացի այնտեղ, ինչ էր իմ հիւանդութիւնը,—չեմ յիշում, այնքան միայն չեմ մոռացել, որ ինձ առանձնացրել էին մեծ հիւանդներից և գտնվում էի սիփով հիւանդների բաժնում: Առաջին անգամ երբ աչքս բացարի, երբ փոքր ինչ ուշի եկայ, ինձ մօտ գտայ հիւանդանոցի ծերունի ապատատարներից մէկին, որը կանգնած, ինքն-իրան մրմրմրմում էր.

—Ինչպէս ամուսինն է, այնպէս էլ սիկինն է, ինչպէս սիկինն է, այնպէս էլ ազախինն է: Աստուած է վկայ, լաւ մարդիկ են, այսպիսի մարդիկ մինչև այսօր չէ տեսել մեր հիւանդանոցը:

Արդեօք ումի էին վերաբերում այդ խօսքերը,—ես ոչ հետաքրքրվեցայ և ոչ էլ հասկանալ կարողացայ, իսկ նա դեռ չարունակում էր մրմրմրալ.

—Ինչ բարի աղջիկ է, ձրքան խնամքով նայում է հիւանդներին, կարծես, իր եղբայրները և հօրեղբայրները լինեն:

—Ո՞նչ աղջիկ,—մեքենաբար հարցրի ես:

—Այն աղջիկը, որ հիմա այստեղ էր. չը տեսա՞ր,—զարմանալով հարցրեց նա:—Այնօրից, որ

դռ պառկած ես, ճակատիդ թրջած շալմանն ու սառույց էր դնում։ Ինչպես չը տեսար։

Այդ միջոցին մի օրիորդ դանդաղ քայլերով անցաւ կօրիդօրից և անհետացաւ միամիհան մէջ։

—Ահա այն աղջիկը,—ասաց ծերունին։—Ոմանք ասում են՝ մեր նոր բժշկապետի աղախինն է, ոմանք ասում են՝ նրա կնոջ ազգականն է։ Ով որ էլ լինի, Աստուած է վկայ, լաւ աղջիկ է։ Իսկ բժշկապետը, կատարեալ հրեշտակ է, մեղք է ընդան մարդ ասել։ Կը մտնէ հիւանդանոցը, կը նըստէ ամեն մի հիւանդի մօտ, կը խօսէ, կը հարցնէ, հանաքներ կանէ, սիրտ կը տայ, կը միխիթարէ։ Ցետոյ կը վերկենայ, ամեն բանի վրա կը նայէ, կը մտնէ խոհանոցը, կը մտնէ և այնտեղ, ուր մենք ղժռանքով ենք մտնում։ Իսկ սիկինը, կատարեալ հոգի է. օր չի լինի, որ հիւանդների համար թէյ, շաքար. սպիտակ պաքսիմաթ և զանազան քաղցրաւենիք չը բերէ։ Կը նայէ նրանց անկողիններին, կը նայէ սպիտակեղէններին, և վայ այն սպասաւորին, եթէ մի փոքր անմաքրութիւն տեսնէ։ Բայց առաջվայ բժիշկները ու նրանց սիկիները, Աստուած պատէ, այսպէս չէին. շատ սակաւ անգամ էր պատահում, որ հիւանդանոցը ոտք կոխէին։ Պատահում էր, գնում ես պարոն բժշկապետի մօտ, ասում ես. «Պարոն բժշկապետ, խեղճը մեռնելու վրա է»... կամ կոպիտ կերպով կը պատասխանէր, թէ ժամանակ չունի, կամ

եթէ չուզէր վշտացնել քեզ, ծիծաղելով կասէր. «Մոզ հանգստանայ»...

Ծերունի պատասխանի չտալուն վերջ չունէր։ Ես ձանձրացայ լսել նրան, թէև նրա խօսքերը դուրկ չէին չափազանց ջերմ և բարի զգացմունքներից։ Ցամիհան մի առանձին խօսք պէտք է տանարել, որ երբեմն այսպիսի կոշտ, կապիտ, անկիրթ սամիկների մէջ գտնում է քնքոյշ սիրտ։ Նա հին դիմատոր էր։ Դրանք են թշուառ հիւանդների միխիթարիչները, դրանք են պատասում նրան տանից և ծարաւից. դրանք են փակում նրա աչքերը մահուան վերջին րոպէներում։ Պատահել են շատ դէպքեր, որ հիւանդը բոլորովին մոռացել է, և մնացել է ոչ թէ հիւանդութիւնից, այլ քաղցից և ծարաւից։

Մի շաբաթ անցել էր վերոյիշեալ խօսակցութիւնից։ Իմ առողջութիւնը օրըստօրէ դէպի լաւն էր գնում. ուշք ու միտք տանարեա վերադարձել էր, աչքերս այժմ տանիմատարար աւելի պարզ էին տեսնում, թէև դեռ սաստիկ թոյլ էի զգում ինձ։ Մի օր նոյն օրիորդը ծերունի պատասպարի հետ մտաւ իմ տնակը։ Նա անցաւ, վերառեց իմ հիւանդութեան օրագրութեան թերթը, ուշադրութեամբ կարդաց, որ տեսնէ՝ ինչ փոփոխութիւն է արել իմ դրութիւնը։ Քանի օր էր, որ նա ինձ մօտ չէր եղել։ Ես նայում էի նրա վրա, գնահատելէ տասակը, դէմքը, աչքերը, ձայնը, և մի զարմանալի նմանութիւն էի գտնում... Կարծես, տասկանա-

լով այդ, նա երեսը չուռ տուեց, սկսեց խօսել ապաստաորի հետ: Որքան էլ նախանձած լինէր իմ տեսակիցը, զարձեալ ես նրա երեսի վրա նկատեցի մի նշան, որ ինձ շատ ծանօթ էր: Դա մի խալ էր, ուղիղ այն տեղում, ուր երկու ջնքերը ազդրանձև գալով, միանում էին միմեանց հետ: Դա բնութեան մի առանձին հրաշալիքն էր, որ խիստ հազիւ է գտնւում կանանց դէմքի վրա: Դա այն միջնակէտն էր, որ կենտրօնացնում է իր մէջ դէմքի բոլոր գեղեցկութիւնը: Նէնէն միայն ունէր Ալարչի այդ հարուստ պարգևը:

Նա կրկին երեսը դարձրեց դէպի ինձ, նայեց իմ վրա և, մի քանի պատուէրներ տալով ապաստաորին, պատրաստւում էր հեռանալ: Այո՛, նա էր, իմ սիրելի Նէնէն էր: Իմ մաչուած կուրծքից դուրս պրծաւ մի խոր հառաչանք, ես խելագարի նման նետւեցայ և փութ փութելի գրկել նրան: Ծերունի ապաստաորը բռնեց ինձ: Նա խնդրեց հեռացաւ, ասելով.

— Այդ հիւանդը իր խելքի առողջ դրութեան մէջ չէ...

Ես մնացի խորին ապշութեան մէջ: Ի՞նչ էր այդ, երազ էր, ցնորք էր, թէ խանգարված երևակայութեան պատրանք: Ի՞նչ էր այդ: Նէնէի գեղեցիկ դէմքն էր, նրա վառվռուն աչքերն էին, նրա նուրբ, բարձր հասակն էր, նրա արծաթի հնչիւններով ձայնն էր: Բայց միթէ կրակոտ, պարզամիտ, անեղկիւղ Նէնէն կարող էր իրան

այնպէս զգոյշ և առնաթափառ պահել: Ո՞րտեղից յայտնվեցաւ նա: Եթէ նա լինէր, չէր կարող զսպել իրան, անպատճառ կը նետվէր, կը գրկէր ինձ ու կասէր. «Տես ես գալս քեզ, ես այստեղ կը մնամ, էլ քեզանից չեմ բաժանվի»: Նա այսպէս կը վարվէր: Այսպէս վարվեցաւ նա, երբ մի անգամ մուտ լինէ մօտ բանտը: Այսպէս վարվեցաւ նա և այն օրը, երբ ինձ վարում էին դէպի աքսոր: Նա չէր ուզում բաժանվել ինձանից. նրան բռնութեամբ բաժանեցին...

Ահա այդ մտածմունքները պաչարեցին ինձ, գեղեցիկ տեսիլքը անցնելուց յետոյ:

Բայց միթէ չէր կարող պատահել, որ Նէնէն այնքան տարուայ մէջ փոխված լինէր: Բաւական տարիներ էին անցել այն օրից, որ անջատված էինք միմեանցից: Միթէ չէր կարող պատահել, որ այն, թէև կիսավայրենի, բայց աչքաչէ և ձիրքերով հարուստ բնաւորութիւնը, մի առաքինի հոգու ազդեցութեան ներքոյ, մեղմանար, ազնուանար և բարի կրթութիւն ստանար: Ես նոյնպէս մի վայրագ եղեռնագործ էի: Բայց ինչպէս փոխվեցայ: Չամրը ինձ բոլորովին այլ մարդ դարձրեց: Միթէ մի և նոյնը չէր կարող պատահել և Նէնէի հետ: Ծերունի ապաստաորի ասելով, նա գտնվում էր բժշկապետի ընտանեկան մէջ: Գուցէ այդ ընտանիքը ազդել էր նրա վրա. գուցէ հէնց նրանց հետ էր եկել, եթէ ոչ, ով կը բերէր նրան Սիբիր:

Վերջին ներքագրությունը ինձ ավելի հաճախական էր թվում: Բայց ես դեռ չէի տեսել այդ քաշվկապահին և ոչ նրա կնոջը, թեև շատ անգամ այցելել էին ինձ մոտ: Ես այդ միջոցներում քիչ տրամադիր կոպրած եմ եղել:

Խաչագողի արհեստը թողել էր իմ մեջ մի առանձին սրամտություն, այն է՝ չուտով ըմբռնել ամենանուրբ ակնարկությունները և խոհուն յարմարվել հանգամանքների հետ: Ես լիշեցի այն խորհրդաւոր խօսքերը, որ նա հեռանալու ժամանակ ասաց. «Այդ հիանդը իր խելքի առողջ դրության մեջ չէ»... Այդ խօսքերով կամեցաւ ծածկել նա, որ ես ճանաչեցի նրան, որ իմ և նրա մեջ եղել են հին յարաբերություններ: Այդ խօսքերով կամեցաւ արդարացնել իմ հոգու սառած յուզմունքը, որը համարեց նա՝ իբր իմ ուղեղի անառողջ դրության արտայայտություն:

Ես տարակոյս չունէի, որ նա գարձեալ կայցելէ ինձ, և մի քանի օր չարունակ սպասում էի նրան: Մի անգամ նախաճաշակից յետո եմ հետևեալ խօսակցությունը.

— Այժմ ինչ դրության մեջ է խելագարը:

— Բաւական հանգիստ է:

— Խնդճ տղայ... նա դեռ շատ ջահել է...

— Ես պատուական մարդ է:

— Երկիւղ չը կայ նրա մօտ մտնելու:

— Զգուշությունը վատ բան չէ:

— Ուրեմն կապեցէք նրան:

Ծերունի սպասաւորը ներս մտաւ, ինձ կաչխանդեց: Քանի րոպէից յետոյ ներս մտաւ և նոյն օրիորդը: Այդ Նէնէն էր, իսկ և իսկ Նէնէն:

Այժմ ես իմ կատարեալ դիրի մէջն էի, ոչ իբրև կեղծ խելագար, այլ իսկապէս ինձ տիրեց մի տեսակ խելագարություն: Ես մոռացայ բոլոր այն պայմանները, որով նա սկզբից նախազգուշացրել էր ինձ: Ես ամեն բան մոռացայ և միայն տեսնում էի իմ առջև սիրելի աղջկան, որին նախրել էի իմ սրտի ամենաջերմ զգացմունքները,—տեսնում էի, և կատաղությունը տիրում էր ինձ, թէ ինչու ես չէի կարող զրկել նրան, ինչու չէի կարող ասել. «Ահա մենք զարձեալ զանք միմեանց, ապրենք միասին և կեանք վայելենք»... Եթէ առաջվայ ուժս կորցրած չը լինէի, ես անպատճառ կը կատաղէի այն չղմնտները, որոնցմով կապած էին իմ ձեռքերն ու ոտները, և նրան կը սեղմէի իմ կուրծքին, ասելով. «Մենք այլ ես չենք բաժանվի միմեանցից»... Բայց ես միայն գոռում էի, գոչում էի, աղաչում էի արձակել ինձ, սպասուհիներ էի կարգում, այսկողմ ու այնկողմ էի նետվում, խնդրում էի Նէնէից, որ գոնէ ինքը մօտենայ ինձ: Նա քաշվելցաւ դէպի դուռը ասելով.

—Խղճալի դրությունը ամենևին չէ փոխվել...

—Նա միայն ձեզ տեսնելու ժամանակ այսպէս անհանգիստ է լինում... նկատեց ծերունի սպասաւորը:

—Այդ իրաւ է... պատասխանեց օրիորդը ա-

ռանց չվրդովվելու։—Խելագարները զանազան տեսակ ցնորքներ ունեն. դա, երևի, իմ մեջ գտնում է նմանությունը մի որ և իցէ կնոջ, որի հետ կապեր է ունեցել։

—Ճշմարիտ է, խելագարները զանազան տեսակ ցնորքներ ունեն,—համաձայնվեցաւ Ծերունի սպասաւորը։—Մենք ունենք մեկը, որը ամեն անգամ ինձ տեսնելիս, յարձակվում է իմ վրա, որ կարասէ ինձ։ Միւս սպասաւորները նրա մօտ մտնելու ժամանակ հանդիսաւ է։ Նա միշտ երևակայում է մի ինչ-որ ընկերին, որ նրան մատնել էր, և իմ մեջ նրա նմանությունն է գտնում։

Օրիորդը կոացաւ և հազիւ լսելի ձայնով ասաց Ծերունու ականջին.

—Ցեսէք, եթէ ես այժմ երեսս ծածկեմ և մօտենամ նրան, նա այլ ևս այնպէս չի անի։

Ես, իրաւ որ, այժմ հանդիսաւ էի, հասկանում էի նրա դիտաւորութիւնը, հասկանում էի, որ իմ անհոգեմ վարմունքով մատնում էր նրան։ Նա երեսի քողը ցած ձգեց և կամաց մօտեցաւ փոքրիկ սեղանին, որ դրած էր իմ դլխի մօտ։ Նրա վրա մի ամանի մեջ ջուր էր դրած և մի կտոր հաց։ Նա վերաւեց ջրի ամանը, հոտոտեց և, դառնալով դէպի սպասաւորը, ասաց.

—Այդ ջուրը բոլորովին թարմ չէ, պէտք է փոխել։

—Կը փոխեմ, օրիորդ,—պատասխանեց Ծերունին։

—Այս րոպէիս փոխեցէք։

Ծերունին վերաւեց ամանը և հեռացաւ։

Նա չբիժանքը մօտեցրեց իմ չբիժանքներին և հազիւ լսելի ձայնով ասաց.

—Կարդա այդ տումակը և սպասիր ինձ...

Նա դրեց իմ բարձի տակին մի թղթի կտոր։ Կօբիդօրից լսելի եղաւ Ծերունի սպասաւորի ծանր քայլերի ձայնը։ Նէնէն հեռացաւ ինձանից և մօտեցաւ դռանը։ Ծերունին բերեց ջուրը, դրեց իր տեղում։

Նա կրկին անգամ նայեց իմ երեսին և հեռացաւ։ Ա՛խ, որքան սրտաչարժ խօսքեր կային այդ լուռ նայուածքի մէջ... Դրսից լսելի եղաւ նրա սպասաւորին.

—Հիմա կարող էք արձակել նրան, միայն դռները կողպած պահեցէք։

Ծերունին նեղա մտաւ, բացարեց իմ ձեռքերն ու ոտները, և դուրս գնաց, իր հետից դուռը կողպելով։ Ես իսկոյն վերաւի բարձի տակում թողած տումարը և սկսեցի կարդալ։ Նրա բովանդակութիւնը խիստ կարճ էր, երկու տող միայն, բայց այդ երկու տողը պարունակում էր իր մեջ ինձ համար անսահման թախտաւորութիւն։

«Մարդ, կիրակի գիշերը, երկու ժամին, սպասիր ինձ, ես քեզ մօտ կը լինեմ։ Նէնէ»։

Հարիւր անգամ կարդացի այդ երկու տողը, հարիւր անգամ չբիժանքիս վրա սեղմեցի, բայց դարձեալ չէի կշտանում։ Նրանից, այդ անշունչ

թղթի կտորից, փափագում էի առնել սրտիս կարոտը: Նրա մատներն էին գրել. նրա սիրտն էր դրած նրա մէջ: Բայց ով տալորեցրեց նրան գրելը...

Հիւանդանոցի այն մասը, ուր այժմ գտնվում էի ես, բաժանված էր միւս մասներից. այստեղ պահվում էին միայն խելագարները և վարակիչ ախտերով հիւանդները:

Ընկերն այլ ևս չը յայտնվեցաւ: Մինչև կիրակի դեռ ևս չորս օր կար: Այդ չորս օրը ամենից երկարաձիգ էր թւում ինձ, քան թէ չորս տարի: Բայց աքսորականը տալորում է ոգևոր: Ես խոբին անձկանօք սպասում էի:

Բժշկապետը նոյնպէս չէր յայտնվում, երևի, նա ինձ բոլորովին առաջացած էր համարում: Միայն երբեմն մտնում էր ծերունի սպասաւորը և իր չտաճաճօսութիւններով զբաղեցնում էր ինձ: Այդ բարեսիրտ ծերունին այնքան երկար տարի ծառայել էր հիւանդանոցում, որ համարեա կէս-բժիշկ էր դարձել: Նա ծաղրում էր ֆելդշերների կատարած յիմարութիւնները, ծաղրում էր դեղապարի տգիտութիւնը, թէ ինչպէս նա չատ անգամ խառնում է դեղերը և թոյնը հասարակ քինայի փոխարէն է տալիս: Պատմում էր զանազան սարսափելի դէպքեր, որ առաջ էին եկել՝ կամ դեղերը խառնելուց, կամ նրանց չափն ու կշիռը չը հասկանալուց: Ուրախանում էր, որ նոր բժշկապետը առաջարկել է փոխել այդ բոլոր հան-

պիտանիները և դիետաւորութիւն անի նոր կարգեր մտցնել հիւանդանոցի մէջ: Նա հիացած էր նոր բժշկապետով և միշտ կրկնում էր մի և նոյն խօսքերը նրա տիկնոջ և մանկահասակ օրիորդի մասին:

Վերջապէս, եկաւ կիրակին: Ես սարսափելով մտածում էի, թէ ինչպէս պէտք է անցկացնեմ այդ օրը, թէ ինչպէս պէտք է սպասեմ մինչև դիշերվայ ժամի երկուսը: Իսկ այնօր, որպէս կարծում էի, ինձ համար այնքան ծանր չանցաւ: Հոգը թոյլատութիւն էր խնդրել ինձ տեսնելու, եկաւ և ժամերով մնաց ինձ մօտ: Թէև այժմ նրա փիլիսոփայութիւնները չատ հետաքրքրական չէին ինձ համար, բայց, այնուամենայնիւ, նրա այցելութիւնը բաւական մխիթարեց ինձ:

Հոգը ինձ մօտ եղած միջոցին ներս մտաւ բժշկապետը: Նրան ես ճանաչեցի, թէև այժմ փոքրիկ մօրուք ունէր: Ջարմանալի բան է կեանքի մէջ դէպքերի հանդիպումը: Այդ երիտասարդին ես պատահել էի իմ կեանքում մի քանի անգամ: Երբ ես կալանաւորվեցայ, երբ ինձ տարան քննչի մօտ հարցափորձ անելու, այդ երիտասարդը, իբրև քաղաքային բժիշկ, ներկայ էր: Երբ դատարանում քննում էին իմ գործը, և ես մանրամասնաբար պատմում էի դատաւորներին իմ կեանքի պատմութիւնը, որպէս զի նրանց կարեկցութիւնը և բարոյական համոզմունքը չարժեմ իմ անմեղութեան վրա,—այդ երիտասարդը գտնվել

այնտեղ էր: Երբ ինձ աքսորի դատապարտեցին, և տարատիպ դանահարումներից յետոյ, պիչաված մարմնով ընկած էի բերդի հիւանդանոցում,—այդ երիտասարդն էր ինձ բժշկում: Նա գիտէր իմ կեանքի բոլոր պատմութիւնը, նա հետաքրքրված էր այդ դժբախտ պատմութիւնով: Նա գիտէր, թէ որպէս հակառակ իմ կամքի, անխուսափելի հանգամանքները ձգեցին ինձ չարագործութեան մէջ: Եւ այդ գրաւել էր նրա կարեկցութիւնը դէպի իմ թշուառութիւնը:

Նա նախաճաշօք էր և Նէնէի հետ: Նա գիտէր այդ անբախտ աղջկայ պատմութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով: Նրա միջնորդութեամբ Նէնէն առաջին անգամ մտաւ ինձ մօտ բանտը: Նրա բարերարութեանը յանձնեցի ես անտէր, անօգնական աղջկան, այն ժամանակ, երբ մի քանի օրից յետոյ ինձ պէտք է վարէին դէպի աքսոր: Նա էր, որ բանտում մխիթարեց ինձ այդ խօսքերով. «յոյս ունեցէք, որ մի ժամանակ կը տեսնէք նրան»...

Այժմ ամէն ինչ ինձ համար պարզ էր: Ցիչեալ խօսքերը ասաց նա մի քանի տարի առաջ, և ես այս գիշեր պիտի տեսնէի Նէնէին: Այժմ ես գիտէի, որ երիտասարդը հէնց այն ժամանակ, երբ ես անջատվեցայ Նէնէից, առել էր նրան իր խնամակալութեան ներքոյ, և յետոյ, պաշտօնով այստեղ գալով, բերել էր իր հետ:

Ջը նայելով այդ բոլոր հին յարաբերութիւններին, բժշկապետը ծանօթութիւն չը տուել ինձ: Նա երկար խօսում էր Չամրի հետ, առանց ինձ վրա ուշադրութիւն դարձնելու: Նրանց խօսակցութիւնը ես չէի հասկանում, որովհետև խօսում էին գերմաներէն լեզուով: Այդ լեզուն ես չը գիտէի:

Բժշկապետի գնալուց յետոյ Չամրը առելի ուրախ տրամադրութեան մէջ էր գտնվում: Այդ մարդը այն բնաւորութիւններից էր, որ հազիւ կուրախանան, և եթէ ուրախ էր, այդ կը նշանակէր, որ մի նշանաւոր բան կայ: Ինչ կար, ինչ խօսեցին, ինչ էր, որ ուրախացնում էր այդ մշտամխոց երիտասարդին,—այդ մասին նա ոչինչ չը յայտնեց: Ես էլ իմ կողմից չը հարցրի պատճառը: Նրա ներկայութիւնը, որ սկզբում այնքան մխիթարում էր ինձ, այժմ ձանձրալի դարձաւ: Ես ցանկանում էի միայնակ մնալ և յագենալու չափ մտածել Նէնէի վրա: Ես չէի նեբում, որ մի ուրիշի ներկայութիւնը խանգարէր այդ զգեցիկ մտածութիւնները:

Չամրը երկար չը նստեց, նա գնաց, և ինձ ձեռք տալու միջոցին՝ ասաց այդ մխին խօսքերը.

—Չանգիստ կացէք, չուտով ձեզ փրկութիւն կը լինի...

Ես ուշադրութիւն չը դարձրի այդ խօսքերի նշանակութեան վրա, կարծեցի, թէ իմ հիւանդութիւնից փրկվելու մասին էր խօսքը: Բայց

այժմ ես չէի ցանկանում առողջանալ հիւանդութիւնից. այժմ ինձ խիստ ծանր էր թողնել հիւանդանոցը: Ես կամենում էի միշտ այնտեղ մնալ և առիթ ունենալ տեսնելու Նէնէին:

ԺՈ.

ՆԷՆԷԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կան այնպիսի դրութիւններ, որ մարդ բոլոր կեանքի զուարճութեան համար կորցնում է իր ամբողջ ազատան և մինչև անգամ կեանքը, բայց դարձեալ չէ հրաժարվում իրան զրկել ցանկացած վայելքից: Այսպիսի վսեմագոյն ձեռնարկութիւններից մէկն էր Նէնէի պիչերային այցելութիւնը: Ես անհամբերութեամբ սպասում էի նրան, սպասում էի, մէկ էլ կը զարկէ պիչերվայ երկու ժամը:

Վերջապէս, իմ օթեակի դուռը կամայ բացվեցաւ, ծերունի սպասաւորը նրան ներս տվեց և հեռացաւ, ասելով.

—Որքան կամենում էք, խօսեցէք, բայց ձայն չը բարձրացնէք:

Ինձ դժուար է նկարագրել այն սրտաշարժ տեսարանը, որ տեղի ունեցաւ մեր տեսակցութեան առաջին րոպէներում: Այո դժուար է նկարագրել այն բոլոր լացը, արտասուքը, այն անասմանն ուրախութիւնը, այն հոգեկան սաստիկ մրրիկը, որ փոթորկում էր մեր սրտերը՝ մեր գրկախառնու-

թեան լուռ ցնծութեան մէջ: Սէր մէջ խօսում էր հոգին, սիրտը, ճախրում էին և թռթռում էին, վաղուց նիրհած, թախծալի զգացմունքները: Իսկ լեզուն բառեր չէր գտնում սրտի թարգման լինելու:

Դատապարտեալի սէրն անգամ իր ամենքին չղթայ է կրում: Նա սիրում է՝ արտասուելով, նա սիրած կնոջը գրկում է՝ ապտակելով: Նա սիրում է, առանց սիրելու իրաւունք ունենալու: Սէրը նրա համար մի յանցանք է: Նոյն յանցանքի մէջն էինք գտնվում ես և Նէնէն:

—Ինչպէս յայտնվեցար այստեղ, ինչպէս եկար, —եղաւ իմ առաջին հարցմունքը, երբ Նէնէն, իմ ձեռքը առնելով իր ափի մէջ, նստեց իմ մահճակալի վրա, իմ կշտին:

—Ես քեզ այն ժամանակ ասեցի, որ կը գամ, և որտեղ էլ որ լինես դու, կը գտնեմ քեզ,—ասաց նա, սեղմվելով իմ կուրծքի վրա:—Տեսնում ես, եկայ ու գտայ քեզ:

—Ա՛խ, որքան տանջված կը լինես, որքան նեղութիւններ կրած կը լինես, Նէնէ:

—Այդ բոլորը ես մոռանում եմ քո գրկի մէջ: Իմ կրած չարչարանքները ոչինչ են այդ մխիթարութեան առջև, որ այժմ վայելում եմ:

Ես հիացման մէջ էի գտնվում: Մինչ այդ բարեսիրտ, նազելի արարածը առաջվայ կիսավայրենի Նէնէն էր: Ո՞ր աստուածային չունչը այսպէս մեղմացրեց, այսպէս աղնուացրեց նրա բնաւորութիւնը:

—Դու ում մօտ ես ապրում,—հարցրի նրանից:

—Բժշկապետի տանը: Նրա ամուսինը մի պատուական կին է, սաստիկ սիրում է ինձ: Գիտես, Մարտա, նա ինձ սովորեցրեց գրել, կարդալ, ես չատ գրքեր եմ կարդացել:

—Նրանք գիտեն, որ դու հիմա այստեղ ես:

—Գիտեն: Բժշկապետը ինքը պատուիրել էր ծերունի ապաստօրին, որ ինձ ներս թողնէ: Ես նրան չատ խնդրեցի, սկզբում չէր ցժտրվում, ասում էր՝ քո այցելութիւնը վատ ազդեցութիւն կանէ հիւանդի առողջութեան վրա, բայց երբ երկար ազաչեցի, ցժտրվեցաւ:

Ինձ ուժով հեռացրում էին Նէնէի հետ պատահած անցքերը, սկսեալ այն օրից, որ ես անջատվեցայ նրանից: Ես խնդրեցի պատմել բոլորը: Նա խիստ դժուարութեամբ յանձն առեց պատմել, ասելով, որ իր հետ պատահած արկածների մէջ կային այնքան դառն, այնքան ահռելի դէպքեր, որ չէր ցանկանայ՝ ես լսէի:

—Այսուամենայնիւ, ես պէտք է գիտենամ բոլորը:

—Ուրեմն կը պատմեմ:

Նա այսպէս սկսեց իր պատմութիւնը.

—Դու գիշեր ես, Մարտա, քո կատաղութիւնից յետոյ, ես միանգամ միայն կարողացայ տեսնվել քեզ հետ, այն ես բերդի մէջ: Այնուհետև ես ամեն օր գալիս էի, կանգնում էի բերդի դռան մօտ, լաց էի լինում, աղաչում էի, բայց ինձ

ներս չէին թողնում։ — «Գիւժ աղջիկը... անսէր, գիւժ աղջիկը»... ասում էին ու ինձ հալածում էին։ Երբ խաւարը պատում էր, երբ չար մարդիկ այլ ևս չէին երևում, ես դարձեալ մօտենում էի բերդին, պատում էի նրա շուրջը, և գիշերային լռութիւնը ազդում էր իմ հառաչանքներով։ Միայն առաւօտեան լոյսը ինձ հեռացնում էր այնտեղից։ Անցան օրեր, անցան շաբաթներ, անցան ամիսներ։ Մի առաւօտ բերդի դռան պահապան գինուորը ասաց ինձ.— «Խեղճ աղջիկ, այն որ դու պատում ես, էլ այստեղ չէ»... — «Ապա որտեղ է», հարցրի ես սարսափելով։ — «Յարան»... պատասխանեց նա, կարծես, ինքն ևս ախորժով չը գիտեմ իմ վրա, թէ ջեզ վրա։ — «Ո՞րտեղ տարան», հարցրի ես, ամէն մօտենալով նրան։ — «Սիբիր»... Ես խելագարի նման սկսեցի վազ տալ։ Չը գիտէի, թէ որ կողմը գնամ։ Նոյն գինուորը հետևից ձայն տուեց.— «Բռնեցէք փոսացի մեծ ճանապարհը»։

— Վերջապէս, ես հասայ։ Մի խումբ պատրաստների հետ ջեզ վարում էին։ Ինձ թոյլ չը տուին մօտենալ ջեզ։ Որքան խնդրեցի, որքան աղաչեցի, զարձեալ թոյլ չը տուին։ Ես կատաղեցայ, խելքս գլխից թռաւ, աչքերիս առջև մթնեց... Չը գիտեմ, այլ ևս ինչ արեցի, ինչ պատահեց ինձ հետ, միայն այսքանը յիշում եմ, երբ աչքերս բաց արի, ինձ գտայ քաղաքային գժատան մէջ։ Երբ խելքս գլուխս եկաւ, ես տեսայ մի և նոյն բժշկապետին,

որի առանը այժմ պարտական եմ։ Նա եկել էր ինձ նայելու։ Ես բռնեցի նրա ձեռքից և պատառաւոտի աչքերով սկսեցի նրան.— «Պարոն բժշկապետ, ես գիժ չեմ, ի զուր են չար մարդիկ ինձ գիժ կոչում։ Ինչու են բերել ինձ գժատունը»։ Բժշկապետը կարեկցմամբ ասաց ինձ.— «Խեղճ աղջիկ, ես գիտեմ, որ դու գիժ չես։ միայն խորհուրդ եմ տալիս, որ առժամանակ գժատունը մնաս։ — «Ինչու», — հարցրի ես զայրացած կերպով։ — «Այդ միայն կարող է ազատել ջեզ», — պատասխանեց նա ցածր ըսկի ձայնով։ — «Ինչ բանից», — հարցրի ես ահեղի վրդովմունքով։ — «Սիբիրից»... Ես սկսեցի ծիծաղել։ — «Ես էլ հէնց այդ եմ ուզում, որ ինձ ուղարկեն Սիբիր... այնտեղ կը տեսնեմ նրան... — «Ո՞ւմը», — հարցրեց նա։ — «Այն աքսորեալին, որ մի քանի օր առաջ տարան», — պատասխանեցի ես։ — «Դուք, պարոն բժշկապետ, կարծեմ, ճանաչում էք նրան, դուք բժշկում էիք նրան»։ — «Այո, ճանաչում եմ»... պատասխանեց նա, — «ես միանգամ խղճմտեցի բերդապահից, ջեզ թոյլ տուին նրա մօտ բանտը մտնել, յիշում ես», — հարցրեց նա։ — «Այո, յիշում եմ, ես մինչև այսօր դեռ չեմ յայտնել ձեզ իմ շնորհակալութիւնը»։ Այդ խօսքերի հետ բռնեցի նրա ձեռքը և ամուր կերպով սեղմեցի։

— «Ես այն աքսորեալին սիրում եմ, ես անկարող եմ չը սիրել նրան», — ասեցի ես, չը թողնելով բժշկապետի ձեռքը։ — «Նա իմ կեանքը ազատել

է մի սարսափելի սպառնալիքից, ինչպէս չը սիրել նրան:—Յետոյ պատմեցի, թէ արդէս ծնողներից որը մեռալով, իբրև անտէր, անպաշտպան մի աղջիկ, սկսեցի թափառական կեանք վարել. միակ արհեստը, որ ուսուցել էր ինձ իմ մայրը, էր կախարդութիւնը. ես մարդկանց բախտը գուշակում էի, նրանք ինձ հաց ու մի քանի դրօշներ էին տալիս: Պատմեցի, թէ արդէս յափշտակվեցայ աւազակներից, և արդէս նրանք ինձ երկար չարչարելուց յետոյ, վերջը կամենում էին սպանել, իսկ դու ազատեցիր ինձ: Մի խօսքով, պատմեցի բոլորը, ինչ որ մինչև այն օրը պատահել էր ինձ հետ: Թժկապետը հետաքրքրութեամբ լսելուց յետոյ, ասաց ինձ.—«Այդ բոլորը ես պիտեմ, այն աքսորեալը պատմել է ինձ»:

—Դուք պատմել էիք նրան, Մուրադ,—հարցրեց Ներսէն, կորելով իր խօսքի թելը և դիմելով ինձ:

—Այո, պատմել էի, պատմել էի այն ժամանակ, երբ ես բանտում էի: Ես խնդրեցի նրանից, որ քեզ առնէ իր պաշտպանութեան ներքոյ, և նա խոստացաւ կատարել իմ խնդիրքը, և, արդէս երևում է, կատարեց բարի մարդը:

—Այո, կատարեց,—կրկնեց Ներսէն մի առանձին զգացմունքով:—Ա՛խ, ինչով կարող ենք փոխարինել այդ ազնիւ երիտասարդի երախտիքը... Նա դիտաւորութիւն ունի դեռ ես շատ լաւութիւններ անելու մեզ...

Ներսէն ուրախութեան արտասուքը սրբելով իր աչքերից, չարունակեց.

—Ես հարցրի բժկապետից, թէ ինչ էր պատճառը, որ ինձ բերել էին գժատունը: Նա ասաց, որ այն գառապարտեալին, այսինքն քեզ, դէպի արտաք վարելու ժամանակ, ես խելագարի նման յարձակվել էի պահապան պիտառների վրա, խլել էի մէկի ձեռքից հրացանը և արձակել էի: Թէև ոչորին վնաս չէի հասցրել, բայց իմ վարմունքը օրէնքով հանցաւորում էր ծանր յանցանք: Այդ յանցանքը ունի խոստովանեմ էր պատժվում պղնաւորապէս այն պատճառով, որ կատարվել էր քեզ յափշտակելու նպատակով: —«Յետ երբ գործողութիւնը կատարված է ուղիղ անառաջ դրութեան մէջ» — ասելացրեց բժկապետը, — «պատիժը մեղմացնում են»: Ես պատասխանեցի. —«Մեծապէս չեմ ցանկանում, որ իմ պատիժը մեղմացնեն: Ես շատ ուրախ կը լինեմ, եթէ ինձ կատարկեն Սիբիր: Այնտեղ կը տեսնեմ նրան. այնտեղ տարան նրան, թող ես էլ նրա մօտ լինեմ»: —«Խեղճ աղջիկ,—ասաց բժկապետը,—դու դեռ այնքան անփորձ ես, որ չը գիտես, թէ ինչպէս են վարվում աքսորեալների հետ: Խելագարութիւնը միայն կարող է փրկել քեզ»... Ես գոչեցի պնդեցի, թէ երբէք չեմ ասի, որ ցնորված եմ եղել, այլ պարզ կը խոստովանեմ, որ կամենում էի ազատել սիրելիս, և այդ նպատակով յարձակում գործեցի: Թժկապետը, թէև չը կարողացաւ

ինձ համոզել, բայց գործեալ ոչինչ չատ խրատներ տալով, աւելացրեց, որ իմ վարմունքը խնդալէս «մինչև խելագարութեան հասած» սիրոյ ցնորք է եղել և ունայն ոչինչ:

—Բայց ես բժշկապետին չը հաւատացի, թէև նա ինձ զանազան խոստումնքներ արեց և զանազան յոյսեր տուեց: Ես հաստատ մնացի իմ կամքի մէջ, և երբ առաջին անգամ տարան ինձ զաւակները, ես պարզ ասեցի զաւակաւորներին.—«Պարոն զաւակաւորներ, ես խելագար աղջիկ չեմ, և չատ խելացի աղջիկ եմ: Խելագարութիւնը չէր, որի պատճառով ես յարձակում գործեցի պահապանների վրա: Ես սիրում էի Նրան, այն երիտասարդին, որին դուք Սիրիր ուզարկեցիք: Ես կամենում էի ազատել իմ սիրելիին: Ոչ, պարոն զաւակաւորներ, դուք մի հաւատացէք, որ ես խելագարված եմ եղել: Ես միշտ խելացի էի, ինչպէս այժմ: Այդ յանցանքները ես գործել եմ իմ առաջ զաւակութեանով: Ինձ ես աքսորեցէք Սիբիր, ես ցանկանում եմ սիրելիս հետ միասին լինել»:— Բայց զաւակաւորները ինձ չը հաւատացին: Ես չատ բարկացայ, երբ իմ վճիռը կարդացին: Փոխանակ Սիբիր ուղարկելու, վճռել էին՝ երեք ամիս նստացնել ազատխարութեան տան մէջ: Թէև ես վճռից գոհ չը մնացի, այնուամենայնիւ, ինձ տարան այնտեղ:

—Բայց գիտես, Մարտա, իմ սիրտը ինչումն էր,—հարցրեց Նէնէն, դառնալով դէպի ինձ:—Ես

չը պէտք է ասէի, թէ խելացի աղջիկ եմ և ամեն ինչ գործել եմ իմ կամքով, իմ յօժարութեամբ: Ես պէտք է ասէի, թէ խելագարված եմ եղել, չեմ հասկացել, թէ ինչ եմ գործել: Ես պէտք է աշխատէի արդարացնել իմ վարմունքը և խնդրել, որ ինձ չը պատժեն: Այն ժամանակ կը մտածէին, որ ես դիտմամբ եմ գործել և իմ ցանկացած պատիժը կը նշանակէին: Ինձ կուզարկէին Սիբիր: Բայց զաւակաւորի մէջ, երբ աշխատում ես քեզ արդար ցոյց տալ, միշտաւոր են համարում: Իսկ երբ ուզում ես քեզ պիժ ցոյց տալ, խելացի են համարում, և ընդհակառակն:

—Ազատխարութեան տան մէջ եղած ժամանակս,—չարունակեց Նէնէն,—բժշկապետը մի քանի անգամ այցելեց ինձ: Այնտեղ ես առաջին անգամ ծանօթացայ Նրա կնոջ հետ: Նա ինձ համար զանազան բաներ էր բերում և ամեն կերպով հոգ էր տանում, որ ես հանգիստ լինեմ: Թէ այր և թէ կին խոստանում էին, որ իմ ազատխարութեան ամիսները վերջանալուց յետոյ, ինձ կընդունեն իրանց տանը և կը պահեն ու կը պահպանեն իրանց զաւակի նման: Բայց ես իմ վրա չէի մտածում, ես միշտ քեզ վրա էի մտածում: Այդ էր պատճառը, հէնց որ վերջացաւ երեք ամիսը, ես փախայ այնտեղից, որ բժշկապետի անից ազատվեմ: Առանց որ և իցէ պատրաստութեան, ես ճանապարհ ընկայ քեզ մօտ գալու համար: Սիբիր, Սիբիր, այդ անունը կրկնելով, չարունա-

կում էի իմ ճանապարհը: Խիստ սակաւ էր պատահում, որ ես մի որ և իցէ բնակութեան հասնէի: Ըստ մեծի մասին գիշերները անց էի կացնում քաղցեալ: Մարդիկ, տեսնելով իմ պատառոտած հագուստը, խառնված ծամերը, ցրտից և արեից սևացած դէմքը, ասում էին՝ «դա ջադուկ է», և ինձ օթևան չէին տալիս:

Ենթէի նկարագրութիւնները ինձ սարսափեցնում էին: Մրքան ասնջվել էի, մրքան չարչարվել էր խեղճ աղջիկը մի կտրած, աշխարհից կըտրված դաստակարակի համար: Մեծ ես այժմ էի այդքան զոհաբերութեան: Ես խղդեցի նրանից՝ հանուռտակել իր պատմութիւնը և միայն այն ասել, թէ ինչպէս կրկին հանդիպեց քժշկապետին:

—Ես չուռում այդ տեղը կը հասնեմ,—պատասխանեց նա,—մի փոքր ես լսիր, եթէ չես ձանձրանում:

—Ես չեմ ձանձրանում, այլ ախորժում եմ... իմ սիրտը լցվում է ցաւերով...

—Շուռով կտրախացնեմ քեզ...—ասաց նա և չարունակեց.

—Միանգամ, երեկոյեան պահուն, հանում եմ մի գիւղ: Գիւղացիները հաւաքված էին պինտան առջև, զանազան դատարկաբանութիւններ էին անում: Ես հարցրի նրանցից.

—«Ո՞ր ճանապարհն է տանում դէպի Սիբիր»: Նրանք զարմացած նայեցին իմ վրա:

—«Սիբիր,—հարցրեց մէկը ծիծաղելով:

—«Այո, Սիբիր: Հեռու է:

—«Այդ սատանայական սև մարդերդ կը սիրատակի մինչև այնտեղ կը հասնես:

—«Ցոյց տուեցէք ինձ ճանապարհը,—կրկնեցի ես:

—«Ահա ճանապարհը, գնա, գուցէ տատասեան կը հասնես,—ասաց մի ուրիշը, ամեն լրբաբար ծիծաղելով:

—«Մեծ գայլերը չը պատառոտեն,—նկատեց մի այլը:

—«Մի ծաղրեցէք ինձ, բարի մարդիկ, ես Սիբիր եմ գնում,—ազաչեցի նրանց:

—«Գա խելագար է,—ասաց մէկը:

—«Չէ, անպատճառ անտառի գևերից մէկը կը լինի. տեսէք, ինչպէս վառվում են աչքերը,— ասաց միւսը:—Նայեցէք մարդերին...

Բոլորը խաչակնքեցին:

—«Ոտքերիցը արիւն է հոսում, խեղճ աղջիկ,—նկատեց մի պառաւ կին:—Երևի, փուչերը ծակոտել են:

—«Գուք չէք հասկանում, ես Սիբիր եմ գնում,—զայրացած կերպով ձայն տուի ես:—Ցոյց տուեցէք ինձ ճանապարհը:

—«Կորէք, թող սատանան տանի ձեզ,—ասեցին ինձ և երեսները չուռ տուին:

Ես բռնեցի առաջին պատահած ճանապարհը և հեռացայ: Գեռ գիւղից չէի դուրս եկել:

—«Մուրացկան, մուրացկան,—ձայն տուեց մի երեխայ:

—«Ես Սիրիր եմ գնում... պատասխանեցի նրան:

Ես անցնում էի փոստայի իշխանի առջևից: Այդ միջոցին ուզևորի սայլակը, փոշու ամպերի մէջ ծածկուած, փոթորիկի նման հասաւ իշխանը: Սայլակի միջից դուրս նետուեցաւ մի պարան, վազեց իմ ետևից, և իմ թևքից բռնելով, ասաց.

—«Վերջապէս գտայ քեզ...

—Այդ պարոնը բժշկապետն էր: Ես իսկոյն նկատեցի նրա բարի դէմքի վրա այն մեծ ուրախութիւնը, որ պատճառել էի գտնելը:—«Ուր ես գնում»,—հարցրեց նա, չը թողնելով իմ ձեռքը:—«Սիրիր»,—պատասխանեցի ես, աչխատելով դուրս պրծնել նրա ձեռքից:—«Այժմ ուշ է,—ասաց նա,—տեսնում ես, արեգակը մանելու մօտ է, տեղ չես հասնի, անապատումը կը մնաս:—«Ես միշտ անապատումն եմ պիչերում. մարդիկ ինձ տեղ չեն տալիս»:—«Մնա ինձ մօտ, այս պիչեր հանդստացիր, առաւօտեան կը շարունակես քո ճանապարհը:—«Ես դեռ ոչ բոլորովին յոգնած եմ, կարող եմ անցնել մի քանի վերստ ևս, մինչև արեգակը կը մանէր:»

—Վերջապէս նա համոզեց ինձ մնալ և տարաւ փոստայի կայարանը,—չարունակեց Նէնէն:—Անդամն առաջին ցրտերի ժամանակն էր: Իսկ իմ հնամաշ հագուստը հազիւ ծածկում էր իմ մարմինը: Ես դող էի զգում, թէ որքան մրսել էի: Երբ մտայ սենեակը, իմ առաձինները սկսեցին բաբախել: Իմ լեզուն դժուարանում էր չարժվել:

Նա իսկոյն փաթաթեց ինձ իր մուշտակի մէջ և նստացրեց մահճակալի վրա: Տաք թէյը կեանք առաւ ինձ, իսկ սպիտակ հացը կարագի հետ զօրացրին իմ ապուշված ուժերը: Ես այժմ միայն հասկանում էի, եթէ այն դրամիճան մէջ անապատում մնայի, անպատճառ կը սառչէի: Երբ ես բաւական հանդստացայ, երբ իմ պրպտված դրամիճանը մեզմացաւ, բժշկապետը ասաց ինձ, որ ինքը յատկապէս ինձ համար եկած էր: Նա պատմեց, թէ այն առաւօտը, երբ ինձ պէտք է արձակէին ապաշխարանքից անից, ինքը և իր կինը կատաղի եկան այնտեղ, որ ինձ առնեն և իրանց տանը տանեն: Բայց մինչև իրանց գալը, ես անյայտացած էի: Ցետոյ հարցափորձ անելով, տեղեկացան, թէ ես դէպի կողմն էի գնացել: Բժշկապետը առանց ժամանակ կորցնելու հետամուտ եղաւ և գտաւ ինձ:

—Առաւօտեան,—չարունակեց Նէնէն,—բժշկապետը յայտնեց, թէ ինքը նոյնպէս Սիրիր գնալու գործառնութիւն ունի և խոստացաւ, որ ինձ էլ կը վերառնի իր հետ: Կարծես, ամբողջ աչխարհը ինձ ուսումնին, ուրախանալիքից չը գիտէի թէ ինչ անեմ: Երեխայի նման քարշ ընկայ իմ բարեբարի պարտնոջից և սկսեցի համբուրել նրա աչքերը, երեսը, ձակատը, բոլորը:—«Կը տանեք, կը տանեք»,—անդադար հարցնում էի ես:—«Անպատճառ կը տանեմ»,—պատասխանեց նա, և աւելացրեց, թէ ինքը պէտք է պաչտօնով գնայ այնտեղ,

և այդ մասին արդէն առաջարկել են իրան, և ինքը ընդունել է։—«Ես ես կը տեսնեմ Ն ր ա ն»...—«Կը տեսնես, չատ անգամ կը տեսնես»,—պատասխանեց նա։ Ես կրկին գրկեցի նրա պարանոցը։

—Թժշկապետը,—առաջ տարաւ Ենովէն,—ինձ չատ խրատներ էր տուել, ինձ չատ խորհուրդներ էր տուել, բայց առաջ ես չէի հաւատում նրան։ Մարդիկ ինձ այնքան չատ խաբել էին, որ ես կորցրել էի իմ հաւատը դէպի ամէն մարդ։ Բայց երբ նա խոստացաւ, որ ինձ կը տանի Սիբիր, ես թողարուվին հաւատացի։ Այդ էր պատճառը, որ ես խնդրեցի հնազանդվելցայ, երբ առաւօտեան առաջարկեց ինձ՝ նստել ճանապարհորդական սայլակի վրա և վերադառնալ տուն։ Ըր նայելով, որ ես մինչև այն վայրը հասել էի երեք օրվայ մէջ, թայց նոյն օրվայ երեկոյեան պահուն մենք հասանք թաղաքը։ Թժշկապետի բնակարանը բաւական ընդարձակ էր. խնդրեցին մի առանձին սենեակ։ Նրա մանկահասակ կինը ասելի բարեսիրտ երևաց ինձ, քան թէ ամուսինը։ Նրա առաջին հոգսը եղաւ լուանալ իմ գլուխը, սանդրել, և փոխել իմ հագուստը։ Երբ ես ոտքից գլուխս հագնվեցայ, նա մի առանձին ուրախութիւնով նայեց իմ վրա, գրկեց, և համբուրելով, ասաց. —«Հիմա դու չատ սիրուն աղջիկ դարձար»։ Ես որպէս զի ես մի նոր ծանրութիւն չը դառնամ այդ ոչ այնքան միջոցներ ունեցող ընտանիքի վրա, հէնց երկրորդ օրը ես խնդրեցի տիկնոջից, որ

ինձ ցոյց տայ մի քանի գործեր, թէ ինչով կարող էի ծառայել նրանց։ Տիկինը ժպտաց և ինձ յանձնեց մի քանի մեծ գործեր։ Ես իմ պարտաւորութիւններդ այնքան ճշտութիւնով կատարում էի, որ նրանք, որ առաջ միայն խղճում էին ինձ, ընկեցին այնուհետև սիրել։ Տիկինը չափազանց գոհ ունէր ինձ վրա։ Նա մի առանձին հանդգնութիւն սկսեց դրսևորել իմ դաստիարակութիւնով. ամեն օր մի քանի ժամ պարապում էր ինձ հետ։ Ես սովորեցի գրել, հաշուել և գրքեր կարդալ։ Ա՜խ, որքան լաւ բան են այդ գրքերը։ Նրանց մէջ խօսում են խելացի մարդիկ. նրանք այն չեն ասում, ինչ որ մենք սովորաբար լսում ենք, կամ տեսնում ենք կեանքի մէջ։ Նրանք պախարակում են այդ մեր տեսածները, և ասում են, որ լաւ բաներ չեն, և ցոյց են տալիս, թէ ինչպէս մարդիկ կարող էին ապրել լաւ լինել։

—Ես դու լաւացար,—կրկնեցի ես Ենովէի խօսքը։

—Այո՛, լաւացայ,—պատասխանեց նա մի առանձին բաւականութիւնով։

—Դու հէնց սկզբից բարի էիր, Ենով։

—Իմ առաջվայ բարութիւնն և այժմեան բարութիւնն մէջ մեծ զանազանութիւն կայ։ Աղաւնին էլ բարի է, բայց եթէ նրան հարցնելու լինես, թէ ինչու համար է բարի, նա քեզ չէ կարող բացատրել պատճառը։ Նա բարի է, ինքն էլ չը գիտէ, թէ ինչի համար։ Այդպէս էր և իմ բա-

րի վիճակը: Ոչխարի բարեփոխմամբ, և ասելի ոչինչ: Բայց ես հիմա գիտեմ, թէ ինչու լաւ է բարին և ինչու վատ է չարը: Ջէ որ, ես առաջ սուտեր էի խօսում, խաբում էի մարդկանց, բայց չէի հասկանում, որ դա վատ է: Ես մի բոշայ աղջիկ էի, և մօրիցս սովորած կախարդութիւնը ինքս էլ հաւատում էի: Բայց հիմա գիտեմ, որ այն բոլորը խաբեպատմութիւն էր:—Այդ ճշմարիտ է,—խօսքը փոխեց Նէնէն,—բժշկապետը և նրա կինը կատարեցին իրանց խոստումները: Երբ նրանք պաշտօն ընացան Սիբիրում, ինձ ևս բերեցին իրանց հետ: Իմ յարաբերութիւնները քեզ հետ նրանք գիտէին, նրանց յայտնի էր և այն, թէ ես աստիճան ես սիրում եմ քեզ: Ցեսայ, թէև ինձանից գաղտնի, նրանք աշխատում էին, որ դու ազատուած լինես քո դատապարտութիւնից, և մեզ բախտաւորացնեն ամուսնական կեանքով: Այդ մասին ինձ հետ չէին խօսում, բայց ես նրանց ակնարկութիւններից և առանձին խօսակցութիւններից շատ բան էի հասկանում:

— Ինչ միջոցներով էին աշխատում,—հարցրի ես անհամբերութեամբ:—Արդեօք յոյս կայ... կարելի է... և բազմաթիւ հարցերով չփոթեցրի Նէնէին:

Կարծես, նա վախենում էր, որ միանգամից հաղորդած ուրախալի տեղեկութիւնը կարող էր վատ ազդել իմ առողջութեան վրա և, երևի, այդ մտքով բաւական հեռուից սկսեց իր պատասխանը:

—Դու պէտք է գիտենաս,—ասաց նա,—որ բժշկապետը ազգակցական և շատ ազգատ ծնողների որդին է եղել, ժողովրդի սուր դատակարծից: Նրա հայրը փողոչներում կօշկակարի վաճառոց է եղել, իսկ մայրը՝ մի լատացարար կին: Բայց սիկինը բարձր շրջաններից է, Ս. Պետերբուրգում նշանաւոր ազգականներ ու բարեկամներ ունի, որոնք նոյնպէս նշանաւոր պաշտօններ են վարում: Բժշկապետը, որպէս ազգատ ուսանող, նրա հօր տանը մանաւոր դասեր էր տալիս: Այստեղից սկսվեց նրանց ծանօթութիւնը, որը յետոյ սիրոյ փոխվեցաւ: Օրիորդի ծնողները, ի հարկէ, հակառակեցին նրա ամուսնանալուն մի բժշկի հետ, որ թէ իր դիրքով և թէ իր ծագումով չէր համապատասխանում նրանց կոչմանը: Բայց օրիորդը այնքան բնաւորութիւն ունէր, որ, հակառակ ծնողների կամքի, թողեց հայրենական տունը, և սկսեց սիրած երիտասարդի հետ ապօրինի ամուսնութեամբ ապրել: Այնուհետև ծնողները բոլորովին մերժեցին նրան, և միշտ անհաշտ մնացին նրա հետ: Բայց սիկինը ունէր մի ազգական, որ ծառայում էր մինիստրութեան մէջ: Այդ բարձր աստիճանաւորը աստիճ սիրում էր սիկինոջը և գնահատում էր նրա արժանաւորութիւնները: Նա մինչև անգամ մեզադրում էր սիկինոջ ծնողներին, որ այնպէս անդթաբար վարվեցան նրա հետ: Ահա այդ ազգականի հետ սիկինը սկսեց բանակցութիւններ անել քո ազատութեան մասին և, կար-

ձեմ, յաջողված է...

—Այդ դու ինչպէ՞ս պիտես, իմ աւետարեր հրեշտակ,—բացականչեցի ես և սկսայի անյագաբար համբուրել նրա ձեռքերը:

—Գիտեմ, մի քանի օր առաջ տիկինը ցոյց տուեց ինձ մի նամակ, որ նոր էր ստացել Ս. Պետերբուրգից, ու ասաց.—«Ննէնէ, քո բախտը վճռված է»...

—Բարեբախտ Աստուած, փառք լինի Քո գթութեանը,—կրկնեց բացականչեցի ես, յետոյ դառնալով դէպի իմ ազատիչը. ասացի նրան.—Այդ բոլորը քեզ եմ պարտական, քեզ, եթէ դու չը լինէիր, եթէ դու չը գտնվէիր բժշկարանի ընտանիքի մէջ, ով կը դարձնէր նրանց բարի ուշադրութիւնը ինձ վրա: Դու, միայն դու քո հրեշտակային բնաւորութեամբ գրաւեցիր քո տիկնոջ սիրտը և նրա ամուսնի ցաւակցութիւնը դէպի մեր թշուառ վիճակը: Եթէ դու չը լինէիր, ես յաւիտեան կորած էի, թէ աշխարհի և թէ քեզ համար...

Այդ միջոցին դուռը բացվեցաւ և ծերունի ըստասուրի երկայն կերպարանքը յայտնվեցաւ չէմբի վրա:

—Օրիորդ,—դարձաւ նա դէպի Ննէնէն,—օրը լուսանում է, լաւ չի լինի, եթէ քեզ տեսնին այստեղ:

Ննէնէն վերկացաւ և, ինձ հետ կրկին և կրկին համբուրվելով, հեռացաւ, ասելով.

—Շուտով դարձեալ կը տեսնվինք...

ԺԱ.

Ն Ե Ր Ո Ւ Մ Ն

Սպիտակ տունը այժմ բոլորովին ուրիշ տեսք էր ստացել: Պատշգամբի կոտրատված վանդակապատը նորոգվել էր և փայլում էր ձիւնի պէս սպիտակ գոյնով: Փխած տանդատ-քները նորոգված էին, և աջուձախ կողմից չորած էին ծաղիկների թագարներ: Պարտէզի ճամբէքները պատած էին մանրած սպիտակ ծիրանեզոյն փոշիով: Հովանոցը կանաչազարդ վրանի էր նմանում. արեգակի ճառագայթները անկարող էին թափանցել պատատուկ բոյսերի սաղարթախիտ հիւսուածքի միջից: Պարտէզի ցանկապատը, բոլորած կենդանի բոյսերով, ներկայացնում էր մի ծաղկազարդ պատնէշ: Ծառերը մանկացել էին, գեղեցկացել էին և տարածում էին իրանց չուրջը խիտ զովաբար տաւեր: Ծաղիկները թագուրացնում էին ամառնային առաւօտները անուշահոտութեամբ: Հին, աւերակ դարձած տունը այժմ փոքրիկ դղեակ էր դարձել: Նա ներկայացնում էր խիտ աչքի զարկող հակապատկեր իր ախտոր, միօրինակ չրջակայքի մէջ: Ննէնէն և նրա աշխատասէր

սիկնոջ ջանքերին էին պարտական այդ բոլոր նորոգութիւնները:

Երեկոյեան պահուն, երբ արեւը խոնարհւում էր դէպի իր պիչերային մատքը, Նէնէն, ցեցոտը ձեռին, սառն ջրով սրսկում էր ցերեկվայ տօթից թառամած ծաղիկները: Նրա ժպտուն սիկինը, կարճ շրջազգեստով, գոգնոցը կապած, կամ փոքրիկ բահը ձեռին փորում էր ածուները, կամ մկրատով կարատում էր թուփերի աւելորդ ճիւղերը: Նրա ամուսինը, հովանոցում նստած, գիրք էր կարդում և երբեմն, աչքերը բարձրացնելով, նայում էր գեղեցիկ կնոջ վրա և աքանչանում էր:

Այդ պարտէզում առաւօտները և երեկոյները հաւաքւում էին մի խումբ երեխաներ, աղայ, աղջիկ, դանազան հասակների: Այդ փոքրիկ չարաճճիները, աւելի քան երկեցիկ թռչունները, կենդանացնում էին գեղեցիկ պուրակը իրանց ուրախ ճլվլոցով: Քրտնած, փխրած, կարմրած թշերով, վազվզում էին նրանք ճեմուղիներում, ընկնում էին փափուկ աւազի վրա, վեր էին կենում, և կայտառ, անվասակնկալ բնաւորութիւնները դարձեալ չարունակում էին վազվզել: Նէնէի սիկինը զբաղում էր նրանց, համբուրում էր, թափ էր տալիս փոշոտած հագուստները, պատուիրում էր զգոյշ լինել: Նոյն պարտէզում սիկինը չլինել էր տալել փոքրիկ մանուկների համար զանազան մարմնամարզական գործիքներ, սովորեցրել էր

նրանց մի քանի կանոնաւոր խաղեր, կրթութիւններ, և չատ անգամ ինքն էլ մասնակցում էր նրանց զուարճութիւնների մէջ: Դրանք սիկնոջ աշակերտներն ու աշակերտուհիներն էին, որոնց հետ որոշեալ ժամերում պարապում էր նա: Դրանք թշուառ պարտեզների զաւակներ էին, որոնց ընտանիքով ուզարկել էին այնտեղ բնակութեան համար: Ցաղվայ բարեխառն ամիսներում սիկինը պարապում էր նրանց հետ պարտէզում, իսկ երբ սկսում էին ցրտերը, նրանց համար մի առանձին սենեակ էր որոշել իր տան մէջ: Նրա պատոյը փոքրիկ էր. աշակերտների ու աշակերտուհիների թիւը հասնում էր ամէն տոպռ, որոնք ամսում էին ձրի և նոյնպէս ձրի ուտում էին թէ դրքեր և թէ պատեան այլ առարկաներ: Տիկինը իր ծախքերից կազմել էր բարերարների մի չրջան, որոնք մասնակարում էին բոլոր ծախքերը:

Իսկ այնօր սովորական անակում ինչ-որ անսովոր չարժում կար, ինչ-որ պատարտուութիւններ էին լինում: Փոքրիկ չարաճճիները այլ ևս չէին վազվզում. նրանք, զարան մտած կատուների նման, հաւաքւել էին հովանոցի չուրջը և սպչած աչքերով նայում էին դէպի սենեակների լուսամուտները: Տիկինը այնօր խոստացել էր նրանց քաղցրաւենիք բաժանել: Նոր բուած զահլեի ախորժելի հոտը դեռ բուրում էր օդի մէջ: Սպասաւորը հագել էր իր ան սերմուկը, որ խիստ հազիւ ան-

գամ էր հագնում, և կրում էր սպիտակ ձեռնոցներ ու սպիտակ փողպատա: Նէնէն նոյնպէս հագել էր իր ոճնական հագուստները և պարտէզում ծաղիկներ էր փնջում սեղանի համար: Բացված լուսամուտներից երևում էին սենեակներում անցյալարձ անող հիւրերի ուրախ դէմքերը: Ինքը բժշկապետը այնօր կարել էր պլխի մազերն ու եղունգները, որ տարվայ մէջ հազիւ մի քանի անգամ էր պատահում, ժամանակ չը գտնելու պատճառով: Իսկ նրա մանկահասակ կինը հագել էր մետաքսեայ սև հագուստ, և պլխի չիկագոյն խիտ պիտակների մէջ երևում էր մի մեծ, սպիտակ վարդ:

Հիւրերի թւում գտնվում էին տեղային ծառայողներից մեծ և փոքր աստիճանաւորներ իրանց կանանց հետ: Սեղանի վրա պատրաստված էր նախաճաշիկ, դրած էին գտնազան ըմպելիներ: Հիւրերը ոտքի վրա ուտում էին, խմում էին, ծխում էին և չատախօսում էին: Տանտիկինը անդադար դիմում էր մէկից դէպի միւսը և ամենի համար նա պատրաստ ունէր մի քանի քաղցր խօսքեր: Բժշկապետը ուշադրութիւն չէր դարձնում նրանց վրա, այլ մի անկիւնում ոտանձնացած, տաք վիճաբանութեան մէջ էր մի լեռնային ինժիների հետ: Նա պնդում էր, թէ տեղային հանքային բալագործութեան եղանակը խիստ ապարդիւն է, և աչխատում էր ապացուցանել, որ արտասահմանում այժմ բոլորովին ուրիշ սիստեմներ են գործածում: Վիճաբանութեանը վերջ դրվեցաւ, երբ հիւրերի մէջ լսվի եղաւ. «կամենդանտը գալիս է»: Այդ ժամանակ միայն բժշկապետը բաց թողեց ոգէտ ինժիների ձեռքը, դուրս եկաւ իր անկիւնից և պատից դէպի սանդուղքները՝ յարգելի հիւրին ընդունելու համար: Տիկինը նոյնպէս մօտեցաւ դռանը:

Կամենդանտի գալուց յետոյ, ներս բերեցին սկուտեղների վրա չորած չամչամեայի պինու երկայն գաւաթներ: Սառուցի մէջ դրած չիչերը վաղուց սպասում էին այդ հանդիսաւոր րոպէին:

Կամենդանտը, բոլորի հետ բարեւելուց յետոյ, անցաւ սենեակի վերևի կողմը և տոքի վրա մնաց: Նրա կշտին կանգնած էր մի երիտասարդ, որին իր հետ էր բերել: Գանգրահեր, մաչված դէմքով այդ երիտասարդը այնպիսի ախուր տպաւորութիւն էր գործում, որ, կամ նոր էր դուրս եկել հիւանդանոցից, կամ նոր էին բաց թողել նրան երկար տարիների բանտարկութիւնից: Այդ թաւամած դէմքը, որը, երևի, չատ ժամանակ չէր ծիծաղել այժմ փորր ինչ զուարթացել էր, և նրա մռայլված աչքերում երևում էին ուրախութեան նշոյլներ:

Սենեակի մէջ ախորժ լռութիւն: Հիւրերը տոքի վրա սպասում էին. բոլորի աչքերը դարձրած էին դէպի կամենդանտը: Նա մի համառօտ յառաջաբանից յետոյ, հանեց ծոցից մի թուղթ, սկսեց կարդալ: Երբ վերջացրեց ընծեռցումը, ամբողջ

աննեակը թողաց ուրանների ազազակներով. «Կեցցէ Կայսրը», մի քանի անգամ լսելի եղաւ բոլորի բերանից: Ցնծայ ամենքը, չամպանիայի դաւաճները ձեռներին, մօտեցան գունավոր երիտասարդին և չնորհաւորեցին նրան:

Երիտասարդը Մարաքն էր. կարզացին նրան ներումն չնորհելու թուղթը: Նա ազատված էր պատրանքից:

Շամպանիայի դաւաճները դասակրկվեցան. ամենքը խնդին Կայսրի կենացը: Այդ ժամանակ առաջ անցաւ քժչկապետը և, առաջարկելով խմել մի նոր կենաց, խնդրեց նախապէս լսել իրան: Նա սկսեց մի փոքրիկ ճառ. խօսում էր հանդարտ, սահուն և առանց պատճառաբանների լեզուով: Ճառախօսը, որ բաւական ծանօթ էր դասապատրաստի անցեալի հետ, նկարագրեց նրա կեանքի նշանաւոր դէպքը, և պլիսատրատէս չնչում էր այն կենսական պայմանների վրա, որոնց անխուսափելի ազդեցութեան ներքոյ, այդ բնականից բարի և առանդաւոր երիտասարդը դարձաւ մի առանդաւոր չարագործ: Եւ յետոյ աւելացրեց, թէ ինչպէս նա, հանդիպելով մի օրինաւոր ընկերի, նրա ազդեցութեան ներքոյ ուղղվեցաւ, զարգացաւ և բարոյական մարդ դարձաւ: Նա վերջացրեց իր ճառը այդ խօսքերով. «Ելէկ ցանկանում ենք, որ մեր բանտերը, որ մեր աքսորատեղիները չը լցուեն յանցաւորների ահագին բազմութեամբ, պէտք է աշխատենք անհետացնել յանցանքների

պատճառները իրանց բուն արմատի մէջ»:

Բոլորը ծափահարեցին: Գաւաթները դատարկվեցան. խմելին ուղղված և ներումն ստացած դասապատրաստի կենացը:

ԺԲ.

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

Մի ամիս անցել էր այդ օրից: Մի կառք սահում էր Տարթի, փոսոտային ճանապարհով: Նրա մէջ նստած էին Նէնէն և Մուրադը: Երկուսն էլ ուրախ, երկուսն էլ բախտաւոր: Կառապանը սուլելով քշում էր ձիաները, կարծես, նա ևս ուրախ էր, որ տանում է մի զոյգ նորապսակ ամուսիններ:

Առջևում, երկայն կօշիկները հագին, ցուլը ձեռին, ուղևորի պարկը ուսին, դանդաղ քայլերով գնում էր մի ճանապարհորդ: Երբ նա հեռուից նշմարեց կառքի մօտենալը, կանգնեց:

Կառքը հասաւ ճանապարհորդին:

—Ձեր անունով նամակ ունեմ, պարոն,—ասաց նա և մի ծրար մեկնեց դէպի կառքը:

Մուրադը նայեց օտարականի երեսին և առկաց: Նա ձեռքը տարաւ դէպի ստրճանակը և, ուղիղ բռնելով դէպի օտարոտի նամակաբերը, ասաց.

—Հեռացէք, եթէ չէք ցանկանում մեռնել:

—Երդւում եմ երկնքի և երկրի բոլոր սրբու-

թիւններով, որ դէպի ձեզ ոչ մի չար նպատակ չունեմ,— ասաց նա, համոզիչ ձայնով:—Ընդունեցէք այդ նամակը:

—Միթէ կարելի է հաւատալ ձեր երդումներին:

—Ես կամենում եմ ապացուցանել, որ ես այնքան վատ չեմ, որքան դուք կարծում էք:

Այդ խօսակցութեան բոլոր ժամանակը Նէնէն կպած էր իր սիրելի ամուսնի կողքին և անդադար հարցնում էր.—Ինչ է ասում, ինչ է ուզում այդ մարդակնը:

Մուրադը հրամայեց կառքը կանգնեցնել, ձեռքը մեկնեց և առնց ծրարը: Նա խոշոր բաց տրեց նամակը, որ սկսում էր այդ խօսքերով.

«Մուրադ, կարդացէք, յետոյ ոչնչացրէք այդ նամակը: Մեզ յաջողվեցաւ ազատվել պատասպարտեալների ձեռքից: Մենք կը սպասենք քեզ Օ... քաղաքում: Ներկայէք նամակաբերին և մոռացէք անցեալը: Մեր ազատութեամբ նրան ենք պարտական»:

Սոսրագրված էին նրա երկու բարեկամների՝ Համիլի և Աւազակապետի անուանները:

Մի քանի անգամ Մուրադը կարդաց այդ տողերը: Նրա սրտին սիրելց անչափ ուրախութիւն և մի և նոյն ժամանակ կասկած: Միթէ այդ բոլորը կեղծ չէր: Երևի, նամակաբերը նկատեց նրա տարակուսութիւնը և խիստ սրտաչարժ ձայնով ասաց.

—Երդւում եմ այն ազու-հացով, որ չարաշահ

սանձեակ տարբեր միասին կերել ենք, և հաստատում եմ ձեզ, որ այդ նամակի մէջ կեղծ ոչինչ չը կայ:

Մուրադը կրկին ուշադրութեամբ նայեց նամակի վրա: Նրա մի անկիւնում հաղիւ նշմարվում էր մի խորհրդաւոր էմբլէմա, որ կազմված էր հայոց արուբենի աւագին և վերջին տառերից՝ Ա և Ք, իսկ այդ երկու տառերի միջտեղում գեամեղված էր մի խարիսխ, որ հովանաւորված էր սև ձեռքով: Դա նրա և իր երկու ընկերների մէջ մի պայմանական նշանարան էր:

—Հաւատում եմ,—ասաց Մուրադը, և, նամակը բաննելով վառած լուցկիի վրա, այրեց:

Նամակաբերը խօսեց.

—Իմ ձեռքով կատարվեցաւ քո անկումը, Մուրադ, ես ինձ բախտաւոր կը համարէի, եթէ քո ազատութիւնը նոյնպէս իմ ձեռքով կատարվէր: Դրանով ես իմ խիղճը հանգստացրած կը լինէի: Բայց զարձեալ ուրախ եմ, որ քեզ ազատված եմ տեսնում և բախտաւոր: Իսկ այն ծառայութիւնը, որ պատրաստել էի կատարել քո վրիժութեան համար, և որի մասին մի քանի անգամ դիմեցի քեզ,—այն ծառայութիւնը ես մատուցի քո երկու բարեկամներին: Ցաւում եմ, որ այդ էլ բաւական կը լինի, որ դու ներես ինձ և չը յիշես մեր անցեալը...

Մուրադը, ձեռքը տալով նրան, ասաց.

—Շնորհակալ եմ, մոռանում եմ բոլոր անցեալը...

Փոստայի իջևանը չատ հեռու չէր: Մուրադը իջաւ կառքից, սկսեց նրա հետ ոտքով գնալ: Նէնէն մնաց կառքի մէջ, որը կամաց-կամաց քշում էին պէսի իջևանը:

Այդ մարդը քաջ պետրան էր: Մինչև իջևանը հասնելը, նա պատմեց, թէ ինչ հնարքով կարողացաւ փախցնել Համբին և Աւազակապետին:

—Բայց դու ինչպէս կարողացար այդքան մօտ յարաբերութիւններ ունենալ պատասպարանների հետ,—հարցրեց Մուրադը:

—Քեզ յայտնի է, որ վերջին օրերում ահիմի հիւանդների թիւը սաստիկ բազմացաւ. օր չէր անցնում, որ մի քանի հոգի չը մեռնէին: Ցեղային միակ քահանան նոյնպէս հիւանդացաւ, այդ պատճառով քահանայի մեծ պահանջ կար: Ես, իբրև պատահական յոյն արհեստ, առաջարկեցի իմ ձրի ծառայութիւնը: «Փէչքէչի ձիու առումներին չեն մտիկ անում»: Ինձ նոյնպէս չը թողնելին: Ես ազատ մուտք ունէի թէ բերդում և թէ հիւանդանոցում: Այդ բաւական էր իմ նպատակին հասնելու համար:

—Դու նախապատրաստեցիր էիր Համբի և Աւազակապետի հետ:

—Ոչ: Այդպէսը միայն պիտի, որ նրանք քո բարեկամներն են: Բացի դրանից, այդ մարդիկները չատ հասարակ էին: Նրանք սովորական մարդկանց տեսակից չէին:

Կառքը հասաւ իջևանին: Մուրադը մօտեցաւ, վերցրեց Նէնէին: Աչտեղ պէտք է մի փոքր ճա-

չէին, յետոյ ճանապարհ ընկնելին: Նէնէն յայտնեց, թէ ուտելու ախորժակ չունի. նա մտածաւ, թէ քնելու դիւանի վրա և մի քանի րոպէից յետոյ նրա քունը տարաւ: Նա սաստիկ յոգնած էր: Ամուսինը ծածկեց նրան և թողեց հանգստանալ:

Մուրադը և քաւար Պետրոսը դուրս եկան միւս սենեակը և պահանջեցին նախաճաշիկ: Հասարակ կաղնեայ վայրից չհնած սեղանի վրա,— որի մակերեսյթը պատած էր բաղմաթիւ սև խորշիկներով, որոնք գոյացել էին ծակ սամօլարի տակից թափված կրակներից,—դրուեցաւ մի չոր գինի, պանիր, հաց և մի ամբողջ խարչած հաւ: Մուրադը իր հին դաստիարակի հետ նստեց այդ սեղանի մօտ:

Քաւար Պետրոսը ախոռ էր. նրա խախծալի դէմքը ցոյց էր տալիս նեղբին խռովութիւն: Մուրադը այժմ միայն ուշադրութեամբ նայեց այդ երկաթի մարդու վրա: Նա բաւական փոխուել էր: Նրա մօրուքի և գլխի մազերը բոլորովին ճերմակացել էին: Նրա ճակատի վրա առաջ կար մի մեծ սպի, որը գրված էր այն ժամանակ, երբ առաջին անգամ մի մեծ յանցանքի համար նրան Սիբիր աքսորեցին: Ցետոյ փախչելով այնտեղից, այդ ամօթալի նշանը նա ամենայն զգուշութեամբ միշտ ծածկում էր, որ չը ճանաչվի: Երբ նա իր մորթեայ թաղիքը գլխարկը մի կողմ դրեց, այժմ միայն Մուրադը նկատեց, որ այն դրուժի հետքերը բոլորովին եղծված էին, իսկ նրա փոխարէն

տարածված էր լայն ճակատի վրա մի սարսափելի սպի: Երևում էր, որ չիկացրած երկաթով ամբողջ ճակատը այրել ու խարել էին:

—Քո ճակատի վրա ես մի փոփոխութիւն եմ նկատում,—հարցրեց Մուրադը:

—Այդ ես արդէն քո համար,—պատասխանեց նա, գլուխը վեր բարձրացնելով:—Ես կորցրի այն ոսկի դրուժի հետքերը, որպէս զի չը ճանաչվեմ և աւելի վստահութեամբ կարողանամ մօտենալ այն բնակարանին, որտեղից մտածում էի առնել քեզ:

Այդ վերին աստիճանի զոհաբերութիւնը մի պարզ ապացոյց էր այդ հին չարագործի անկեղծութեանը դէպի իր սիրելի աներիկը, որը սաստիկ զգայնացաւ և լցնելով բաժակը, մեկնեց նրան ու ասաց.

—Խմիր, յոգեկոչ քաղցր: Ես քեզ կառնեմ իմ կառքի մէջ և կը տանեմ մեր հայրենիքը: Բաւական է, որքան թափառեցիր, բաւական է, որքան աշխարհից աշխարհ պարտեցար: Թող այժմ գոնէ ծերութիւնը ապրեցնէ քեզ հայրենի տեղի տակ անցկացնել կեանքի վերջին օրերը:

Նա խմեց բաժակը, պատասխանելով.

—Ոչ ես չեմ ներել ինձ նստել այն կառքի մէջ, այն ինոջ մօտ, որին մի ժամանակ ես հրամայեցի սպանել և գոհի պաշտօնը քեզ յանձնեցի, Մուրադ: Դու աւելի բարեխիղճ գտնվեցար, քան թէ ես, և խնայեցիր անմեղ կեանքը, և քո

բարութիւնը վարձատրվեցաւ... Այդ նազելի տիկնոջ մասին, երևի, չէ ճանապարհ ինձ, եթէ ճանապարհ, անպատճառ կը պղտէր ինձանից: Ոչ, ես իմ ներկայութեամբ չեմ պղծի մի սուրբ ամուսնութիւն: Գնացէք, Տէր ընդ ձեզ, և տարէք ձեզ հետ իմ օրհնութիւնը, եթէ Աստուած կընդունէ օրհնութիւնը մի եղեռնագործի չրխմունքներից: Իսկ ես կայենի նման կը թափառեմ աշխարհից աշխարհ, մինչև գժոդքը կը խղճայ իմ վրա և իմ առջև բաց կանէ իր դռները...

Նա գլուխը քարչ պցեց և նրա խիտ, ճերմակ ծամերը թափթփեցան սակալի ճակատի վրա, ծածկելին արտասուքը, որ գետի նման հոսում էր այն աչքերից, որոնք երբէք արտասվելու սովոր չէին եղել:

—Դու կարծում ես, որ ձեզ համար փրկութիւն չը կայ, դու կարծում ես, որ չես կարող մաքրել քո խիղճը,—հարցրեց Մուրադը խորին ցաւակցութեամբ:—Ապա ինչու համար է քրիստոնէական ներողամտութիւնը, որի հաշտեցնում է մեզ աստուծոյ սիրոյ ու խաղաղութեան Աստուծոյ հետ:

—Շատ անգամ փորձել եմ, բայց չէ յաջողվել... պատասխանեց նա առանց գլուխը վեր բարձրացնելու:—Մեղքը միացել է իմ հոգու, որպէս և ամբողջ մարմնի հետ: Նա ամէն րոպէ մնում է պահանջում: Չեմ կարող չը կերակրել նրան: Նա ինձ հետ պէտք է ապրէ, որպէս չարութիւն,

միայն չար գործելու համար: Չեմ կարող բաժանվել նրանից: Մի՞թէ կարելի է օձից խլել թոյնը և կարելին այնպէս դատարկակել, որ չը խայթէ...

Նա գլուխը վեր բարձրացրեց և ճակատի վրա թափված մազերը մի կողմ ձգեց: Այժմ նրա առնելի աչքերում, փոխանակ արտասուքի, նկատվում էր բարկութեան կրակը:

—Այո, չեմ կարող... կրկնեց նա:—Ես մի չար գեղ նման պէտք է պատժեմ մարդկանց անիրաւութիւնները միայն անիրաւութիւններով... Մարդիկ իրաւունք են տեղծել ինձ նման պատիժը իրանց համար... Ես նրանց մեղքերի հրէշաւոր ծառնդն եմ... Նրանց վատ օրինակներով ես էլ մեղաւորվեցայ:

—Հէնց այդ գիտակցութիւնը բաւական է, որ ազատ և փրկէ քեզ,—կարեց Նրա խօսքը Մուրադը:—Ես էլ այդ գիտակցութեանը հասայ և փրկվեցայ:

—Հասկանում եմ... Բայց այդ փրկութեան մէջ կը լինի և իմ մահը... Իսկ ես դեռ մնալ չեմ ուզում... Սահմանն պէտք է անմահ մնայ...

Նա միայն լսո՛ւմ էր, բայց ոչինչ չէր ուսում: Մուրադը պատուհանից մի նոր շիշ գինի ես դնել սեղանի վրա:

—Երբեմն քարեկ՛ն եմ գործում,—ասաց նա,—ինչպէս միգապատ երկնքի կամարի վրա ճեղքվում են թանձր ամպերը և րոպէապէս դուրս են ցոլացնում արեգակի կենսատու ճառագայթները

րը: Բայց այդ երկար չէ տեւում. կրկին անցնում են ան ամպերը, և ամեն ինչ կրկին նահանջում է, մթնում է...— Ես ուրախ կը լինէի, որ կատարեալ չարագործ լինէի և իմ մէջ գնաս բարեվիճակ սերմեր չը լինէին: Այն ժամանակ խղճմտանքի հանգիստ կը լինէր: Այն ժամանակ գուցէ ամենևին չէի ղողայ, որ ես չար եմ: Որովհետև, բարեվիճակն է միայն զրկել տալիս մեր չարութիւնը, ինչպէս ամպամած վրա աւելի պարզ կերպով նշմարվում է սերը: Կը ցանկայի, որ իմ սրտի մէջ ամեն ինչ մթագոյն լինէր, կամ սեւ, կամ սպիտակ, կամ բոլոր, կամ չար: Սատանաները նրա համար միայն բախտաւոր են, որ գոնա չար են: Այնպէս էլ բախտաւոր են հրեշտակները, որ գոնա բարի են: Իսկ ինչ եմ ես:— Մի այլանդակ խառնուրդ: Ինչով կարող եմ ես բախտաւոր լինել, երբ իմ սրտի մէջ միշտ պատերազմ կայ, և մանաւանդ, չարը աւելի զօրեղ է, քան թէ բարին...

Նա վերջացաւ, ասելով.

—Ա՛խ, ինչու եմ այդքան երկար խօսում: Դուք սէտք է ճանապարհ գնաք, իսկ ես ուշացնում եմ ձեզ:

Նա վեռնեցաւ իր ճանապարհորդական պարկին, և հանելով նրա միջից մի ծանր քսակ, մեկնեց Մուրադին, ասելով.

— Ես կը խնդրեի քեզանից, որ թեթևացնեիր իմ բեռը և ընդունեիր այդ, գուցէ քեզ հարկաւոր կը լինէր:

—Շնորհակալ եմ,— ասաց Մուրադը հրաժարվելով:— Թէչկապանը տոգացել է մեր ճանապարհի ծախքը:

— Գիտեմ... դու խորշում ես այդ ոսկիներից, որովհետև նրանք չաղախված են արիւնով... Բայց գիտես դու ասացած եռևոնն արծաթի մէջ նոյնպէս արիւն կայ: Այդ եռևոնն արծաթով գնեցին մի ագարակ, որ կոչվեցաւ «ագռաւատուն», որ նշանակում է արեան ագարակ: Աւետարանչին ասում է, որ այդ ագարակի վրա մշակվում էին Երուսաղէմի ամենաղտղտուկ ձիթենիները: Երբ դու կը հանես քո հայրենիքը, այնտեղ քեզ մեծ աշխատութիւններ են սպասում: Այդ ոսկիներով կը գնես մի ագարակ և կը սկսես նրա վրա մշակութիւններ անել: Թող այդ ագարակը կոչվի «արեան ագարակ», փոյթ չէ, բայց քո աշխատութիւնը կը բուսեցնէ նրա վրա հայրենիքի ամենագեղեցիկ ծաղիկները: Ես իմ բոլոր արժէքները նուիրեցի Համլին և Աւազակապետին: Այդ քո բաժինն էր, որ պահել էի քեզ համար: Այն թղթերը նոյնպէս մաքուր վաստակ չէին: Բայց նրանք ընդունելին, ասելով. «Հայը թող տանեզ վնաս, ինչ փոյթ, որ ջհուդի թխած կը լինի»...

Մուրադը ընդունեց ոսկիները: Քաւոր Պետրոսը չարունակեց.

—Դու կը հանդիպես Համլի և Աւազակապետի հետ Ո... քաղաքում: Նրանք այնտեղ կը ըս-

պատեն քեզ: Ձեռոյ միասին կը գնաք մեր հայրենիքը: Նրանք երկուսն էլ լաւ մարդիկ են. խորհուրդ եմ տալիս քեզ՝ չը բաժանվել նրանցից. միասին կը սկսեք գործել ու աշխատել: Քաղցր է աշխատանքը հայրենի հողի վրա...

Բոլոր այդ խօսակցութեան ժամանակ Մուրադը նկատում էր և մի աւելի մեծ փոփոխութիւն քաւոր Պետրոսի բնաւորութեան, հայացքների և բարոյական յատկութիւնների մէջ: Աւազ նա գործում էր չարը միայն չարութեան համար, թէև նրա գործողութիւնները կատարվում էին՝ որոշված, հաստատ և պիտակցական նպատակներով: Իսկ այժմ նա, կարծես, օրօրվում էր այդ երկու մըտքերի մէջ. միթէ աւելի լաւ չէր լինի, որ չարութիւնը բառնայինք բարութեամբ,—միթէ չարութիւնը չարութեամբ արմատախիլ անելը՝ դատարակութեան նոյն եղանակը չէր լինի, երբ վարժապետը աշխատում է կրթել և բան սովորեցնել անպիտան աշակերտին ծեծի և պատիժների ուժով: Քաւոր Պետրոսը հակված էր երկում դէպի ղէշում, դէպի ուղղութիւնը. բայց նրան կատաղեցնում էր այն միտքը, թէ ինչու ինքը առաջին քայլն անէ և ուղղվի, թէ ինչու ինքը ղիջումն անէ ուրիշների չարութեան դէմ, միթէ դրանով իրան մի անբախտ զոհի վիճակի մէջ չի դնի: Երբ մարդիկ խաբում են, նա էլ պէտք է խաբէ, երբ մարդիկ հարստահարում են, նա էլ պէտք է հարստահարէ:

Կառքի ձիանները փոխել էին, անիւները ձիւթով օծել էին, և պատրաստ էր իջևանի բակում: Նէնէն զարթնել էր, և յագնածութիւնից կազդուրված, վազեց նա կառքի մօտ, և առանց Մուրադի օգնութեան, ինքը ցատկեց, նստեց նրա մէջ:

—Նէնէ, ձեռք տուր այդ օտարականին, դա իմ վաղեմի բարեկամն է,—ասաց Մուրադը:

Նէնէն մեկնեց ձեռքը: Քաւոր Պետրոսը բռնեւով ասաց.

—Դուք երկուսդ էլ արժան էք միմեանց: Նախանձոտութիւնը, զանազան փորձանքների միջից անցկացնելով ձեզ, կրկին հանդիպեցրեց միմեանց: Օրհնում եմ ձեր ամուսնութիւնը և բախտաւորութիւն եմ ցանկանում:

Մուրադը ընկաւ նրա գիրկը, և արտասուքը աչքերում, երկար աղաչում էր, խնդրում էր ներքան, որ նստէ իրանց հետ կառքը և միասին վերադառնան իրանց հայրենիքը՝ Պարսկաստան: Բայց քաւոր Պետրոսը դարձեալ մերժեց, ասելով.

—Դուք գնացէք, Տէր ընդ ձեզ, ես դեռ բոլորովին չեմ վերջացրել իմ գործը... գուցէ հեռուից աւելի պիտանի կը լինեմ ձեզ...

Մուրադը նստեց: Կառքը չարժվեցաւ: Քաւոր Պետրոսը բաւական տեղ ոտքով գնաց նրանց հետ: Ձեռոյ կրկին ձեռք տալով Նէնէին, կրկին համբուրվելով Մուրադի հետ, բաժանվեցաւ: Նա երկար կանգնած, նայում էր նրանց հետից,

մինչև կառքը բոլորովին անհետացավ նրա աչքերից: Այդ ժամանակ միայն դժբախտ թափառականը ճանապարհը ձռնից և սկսեց դիմել դեպի մի այլ կողմ....


—

Երեք ամիս անցել էր այդ օրից:

Պարսկաստանի Սալմաստ գավառում, Սարա գիւղից ոչ այնքան հեռու (որը Մուրադի հայրենի գիւղն էր) տարածվում էին հին աւերակներ: Ա-րաբական ճաշակով կառուցված մի հոյակապ մինարէթ միայն կանգուն էր մնացել այդ տխուր աւերակների մէջ: Նրա բարձր կամարների ներքոյ թափառում էր մշտական ամայութիւն և խաւար: Զղջիկները և վայրենի աղաւնիները միայն երբեմն ազդում էին այդ անբնակ մինարէթի դերեզմանական լռութիւնը: Բայց մի գիշեր այնտեղ լոյս էր երևում: Յատակի վրա վառվում էր խարոյկ և նրա լուսատարութեան մէջ չափվում էին անորոշ տուներ: Եթէ մեր ընթերցողը համարձակութիւն ունենար և, գաղտնի կերպով մօտենալով մինարէթին, նրա կիսաւեր դռնից նայէր ներսը, անպատճառ կը տեսնէր նոյն դէմքերը, որոնք ծանօթ են նրան, որոնց ճանաչում է նա, սկսեալ նրանց պատանեկութեան հասակից: Այնտեղ էին Մուրադը և Ջալլադը (աւազակապետը) երկուսն էլ զբաղմունքից հագուստի մէջ կերպարանափոխ եղած: Այնտեղ էին Մուրադի մանկութեան երեք ընկերները՝ Քաջը, Ալանը և

Սագօն, մշեցոց ծպտեալ հագուստով: Այնտեղ էր պատանի Ֆարհադը, որ նոր էր ընկել այդ չրջանի մէջ: Այնտեղ չէր միայն Հաճրը:

Մինարէթը չատ հեռու չէր այն վայրերից, այն այգիներից և այն ձեռատունկ անտառներից, որոնց մէջ Մուրադը իր պատանեկութեան հասակում, իբրև փախստական, ապաստան գտաւ: Որչէս տեսանք այդ յիշատակարանի սկզբում, այն ժամանակ նա վարում էր բառական կասկածաւոր կեանք իր երեք ընկերների՝ Կարօի, Ալանի և Սագօի հետ: Այնտեղ ապէտաւոր հանգամանքները բաժանեցին այդ փոքրիկ սրիկաներին և ձգեցին կեանքի տարբեր ճանապարհների վրա: Թափառելով աչխարհից աչխարհ, երկրից երկիր, և անցնելով զանազան զառն փորձերի միջից, տան և երկու տարվայ անջատումից յետոյ,—վաղեմի ընկերները կրկին հանդիպում են միմեանց մի և նոյն մինարէթի մէջ, որ մանկութեան հասակում նրանց թագստի տեղն էր, նրանց սիրելի որջն էր: Երկու օր մնացին այնտեղ, իսկ երրորդ օրը մինարէթը դարձեալ դատարկ էր, դարձեալ ամայի էր: Ի՞նչ եղան նրանք, ուր գնացին,—այդ կը տեսնէ ընթերցողը մեր մի այլ աչխատութեան—«Կայծերի» մէջ...



150 r. -

18687

2013